Հայաստան տեղափոխվող սիրիահայերի թվի ստվարացմանը զուգընթաց նրանց աճող կարիքներին աջակցելու նպատակով «Հալէպ» ՀԲՀԿ-ի շուրջ համախմբված աշխատակազմն ու կամավորները գործակցել և նյութական ու բարոյական աջակցություն են ստացել Հայաստանում գործող տեղական և միջազգային տարբեր կազմակերպություններից, ինչպես նաև՝ անհատ գործարարներից: Աջակցող կառույցներից են՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, ՀՀ սփյուռքի նախարարությունը, Ամերիկայի «Հայ օգնության ֆոնդը», Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի սոցիալական ծառայությունը, Եկեղեցիների համաաշխարհային խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամը, Հայ օգնության և զարգացման ընկերակցությունը, Հայ քրիստոնյա բժիշկների ընկերակցությունը, Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցությունը, Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության Միջազգային համագործակցության ինստիտուտի Հայաստանյան գրասենյակը, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը, Միավորված մեթոդիստների օգնության կոմիտեն, Հայաստանի Հայ օգնության միությունը, «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամը, «Համաաշխարհային տեսլականը»¹² և այլ կազմակերպություններ:

Տակավին նորաստեղծ «Հալէպ» ՀԲՀԿ-ն առաջին օգնությունը ցուցաբերել է պատերազմից տուժած սիրիաբնակ իր հայրենակիցներին՝ որպես երախտագիտություն Հայոց ցեղասպանությունից մազապուրծ հայերին սիրիացի արաբների կողմից հյուրընկալության: Այդ նպատակով 2013 թ. դեկտեմբերին հանգանակվել և նոր տարվա կապակցությամբ Սիրիայում գործող Հայկապահայության շտապօգնության գործադիր մարմնի միջոցով 10.000 ԱՄՆ դոլար է առաքվել 250 հայկապահայ կարիքավոր ընտանիքներին¹³:

Այդուհանդերձ, կազմակերպության ծրագրերն ու գործունեությունը գերազանցապես ուղղվել են Հայաստան փոխադրված հայրենակիցների օժանդակությանը:

¹¹ «Տեղեկագիր», 2015, № 1, մարտ-մայիս, էջ 4:

¹² “Newsletter”, 2015, № 2, June-August, p. 7, «Տեղեկագիր», 2015, № 1, մարտ-մայիս, էջ 1:

¹³ Financial Aid for Syrian-Armenians, 2014, January 14. – <https://aleppo-ngo.org>.

Սիրիայից հայրենադարձների աջակցությունն ուղղված «Հալէպ» ՀԲՀԿ-ի ծրագրերն ու գործունեությունը

2013 թ. դեկտեմբերին «Հալէպ» ՀԲՀԿ-ն իրականացրել է «Տաքուկ Ամանոր» նախաձեռնությունը, որի ընթացքում Արարատի մարզի Դարբնիկ գյուղում հաստատված սիրիահայ 29 ընտանիքի տրամադրվել է առաջին անհրաժեշտության աջակցություն և դրամական օգնություն¹⁴: Ծրագրի շրջանակում «Հալէպ» ՀԲՀԿ-ի շահառու 8–11 տարեկան 5–6 տասնյակ սիրիահայ երեխաների համար ամեն տարի կազմակերպվել է Նոր տարվա միջոցառում, նվերների բաշխում¹⁵ և այլն:

2014 թ. սկզբից «Հալէպ» ՀԲՀԿ-ն համահայկական և միջազգային մի շարք կազմակերպությունների ու հիմնադրամների գործակցությամբ իրականացրել է «Տաքուկ ձմեռ» ծրագիրը՝ սիրիահայ կարիքավոր ընտանիքներին ամբողջ տարվա ընթացքում տրամադրելով ձմեռային հագուստ, սնունդ և առաջին անհրաժեշտության պարագաներ: Փոխհատուցվել են ձմռան ընթացքում վճարված կոմունալ ծախսերը ևս: Հայաստանում սիրիահայերի թվի ստվարացմանը զուգընթաց աճել է նաև ցուցաբերվող մարդասիրական օգնությունը: Ընդհանուր առմամբ, ծրագրից օգտվել է շուրջ 1.100 սիրիահայ կարիքավոր ընտանիք¹⁶: Ամանորից բացի, սիրիահայերին սոցիալական աջակցություն է ցուցաբերվել նաև ողջ տարվա ընթացքում: Անհատ բարերարները ևս օժանդակել են կազմակերպությանը:

«Հալէպ» ՀԲՀԿ-ի շահառուներին աջակցել են նաև սիյուռքի մեր հայրենակիցները: Այսպես, 2016 թ. «Հալէպ» ՀԲՀԿ-ի՝ ԱՄՆ-ում գտնվող համանուն աջակից կառույցի գործադիր մարմնի ներկայացուցիչները հանգանակել են շուրջ 15.000 դոլար, 2016 թ. նյութապես օգնել է նաև Դանիայի հայ համայնքը¹⁷:

Կազմակերպությունը հովանավորների և դրամահավաքների միջոցով անվճար հիմունքներով ներառական կրթություն, խնամք, մտավոր և ֆիզիկական թերապիա է ապահովել հաշմանդամություն ունեցողների համար՝ նպատակ ունենալով «դյուրացնել նրանց առօրյան և աջակցել նրանց ներգրավվածությանը հասարակական կյանքում»¹⁸: Այդ նպատակով դեռևս 2000-ական թվականի սկզբին Հալէպում ստեղծված «Արևիկ» կենտրոնն արդեն 2014 թ. հոկտեմբերի 1-ին վերաբացվել է Հայաստանում որպես «Արևիկ-Հայաստան» կենտրոն: Այն մասնագիտական ծառայություն է մատուցել

¹⁴ «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ի վիճակահանությունը «Տաքուկ Ամանոր»-ի շրջանակներում, 2014, 28 հունվարի, «Տաքուկ Ամանոր» նախաձեռնություն, 2014, 26 հունվարի. – <https://aleppo-ngo.org>.

¹⁵ «Հալէպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ» (Երևան), 2015, դեկտեմբեր, էջ 5–6:

¹⁶ «Տեղեկագիր», 2015, № 1, մարտ-մայիս, էջ 4:

¹⁷ «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ի բարեգործական միջոցառումը Նյու Ջերսիում, 2016, 20 նոյեմբերի, Դանիայի հայ համայնքն իր աջակցությունն է բերում սիրիահայ համայնքին Հայաստանում, 2016, 13 դեկտեմբերի. – <https://aleppo-ngo.org>.

¹⁸ «ՀԱԼԷՊ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպություն. Արևիկ-Հայաստան կենտրոն. – <https://aleppo-ngo.org>.

մեկ տասնյակից ավել անդամի: Դասընթացներն իրականացվել են մի խումբ նվիրյալ սիրիահայ ուսուցիչների ու աշխատակազմի կողմից¹⁹:

«Հալէպ» ՀԲՀԿ-ը դասընթացներ, հավաքներ, տարբեր միջոցառումներ ու քննարկումներ է իրականացրել սիրիացի երեխաների և պատանիների համար, սկզբնական շրջանում նաև կազմակերպել է արաբերենի, ապա՝ արևմտահայերենի ուսուցման դասընթացներ, ինչպես սիրիահայ, այնպես և տեղացի սկսնակ մի քանի տասնյակ երիտասարդների ու մասնագետների համար՝ նպատակ ունենալով հաղորդակցական հմտություններ և լեզվական գիտելիքներ զարգացնել ու ամրապնդել երիտասարդ սերնդի շրջանում, նպաստել նրանց փոխիմասերմանը: Ավելի ուշ սիրիահայերի համար կազմակերպվել են նաև արևելահայերենի ու ռուսերենի անհատական դասընթացներ²⁰: 2014 թ. մեկնարկել են «Հալէպ» ՀԲՀԿ-ի «Արաբերենի ակումբ», իսկ 2015 թ.՝ նաև «Արաբերեն լեզվի ուսուցման դասընթացներ» ծրագրերը, որոնց հաճախել են ինչպես սիրիահայ, այնպես էլ տեղացի երիտասարդներ: 2016 թ. սկսել է գործել արևմտահայերենի դասընթաց 6–17 տարեկան երեխաների և պատանիների համար: Ընդհանուր առմամբ, արևմտահայերենի և արաբերենի դասընթացներին հաճախել է ավելի քան 145 մասնակից²¹:

«Հալէպ» ՀԲՀԿ-ի հիմնադիր նախագահ Ա. Բալխյանի հավաստմամբ, Հալեպում օրեցօր ահագնացող ռազմական գործողությունների պայմաններում արդեն 2015 թ. մայիսից կազմակերպությունը Հայաստան փոխադրվելու ցանկություններ ավելի քան 600 խնդրագիր է ստացել երբեմնի հայաշատ քաղաքի իր կարիքավոր հայրենակիցներից, սակայն երկրում իրավիճակի մի փոքր խաղաղվելու հետ կապված՝ ոմանք մտափոխվել են, մինչդեռ դրություն վատթարացման հետևանքով, նրանք կրկին վերահաստատել են Հայաստան փոխադրվելու իրենց դիմումները²²:

Բացի այդ, Երևանում հաստատված մի շարք հալեպահայեր ևս, «անհանգստանալով կյանքին սպառնացող իրավիճակում հայտնված և կենցաղային լուրջ խնդիրների առջև կանգնած [իրենց] հարազատների համար», խնդրագրով դիմել են «Հալէպ» ՀԲՀԿ-ին աջակցելու հայրենակիցներին Հայաստան, «որպես ապահով երկիր» տեղափոխվելու համար, մասնավորապես՝ օգնել Հալեպից Բեյրութ, ապա՝ դեպի Երևան մեկ ուղղությամբ տոմս ձեռք բերելու հարցում²³: Ահա թե ինչու, ՀԲՀԿ-ն, «անսալով օր օրի ավելացող դիմումներին և գիտակցելով կյանքեր փրկող ծրա-

¹⁹ Նույն տեղում:

²⁰ 17.000 սիրիահայեր ապաստան են գտել Հայաստանում. ինչպե՞ս օգնել նրանց (հարցազրույց), 2016, 26 մարտի. – <http://armediam.am/arm>. «Ճանաչել: Պաշտպանել: Իրագործել» ծրագիրը աջակցություննոր հարթակ սիրիահայերի համար, 2017, 30 հունիսի. – <https://aleppo-ngo.org>.

²¹ «Տեղեկագիր», 2015, № 1, մարտ-մայիս, էջ 3, № 3, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 8:

²² 600 հայ Սիրիայից դիմել է՝ Հայաստան տեղափոխվելու. «Հալեպ» հ/կ-ի ղեկավար, 2016, 8 հոկտեմբերի. – <http://www.arevelk.am>.

²³ «Save Lives» նախաձեռնությունը մեկնարկեց, 2015, 2 հուլիսի. – <https://aleppo-ngo.org>.

գրի խիստ անհրաժեշտությունը», հանդես է եկել կոչով «խնդրելով Հայաստանում և Սիլյուսքում գտնվող բոլոր բարերարներին՝ ականջալուր լինել և հնարավորությունների սահմաններում աջակցություն ցուցաբերել նյութական և հոգեբանական դժվարին իրավիճակում գտնվող, ամեն օր կյանքի և մահու կռիվ տվող և օգնության խնդրանքով «Հալէպ» ՀԲՀԿ-ին դիմած սիրիահայերին՝ տեղափոխվելու Հայաստան որպես ապահով երկիր»²⁴: Այդպես, 2015 թ. մայիսից կազմակերպությունը սկսել է իրագործել «Փրկե՛ կեանք մը» նախաձեռնությունը²⁵: Յուրաքանչյուր անձի փոխադրման համար անհրաժեշտ գումարը կազմել է 400–500 դոլար, որը ներառել է Հալեպից Լիբանան ավտոբուսով փոխադրում, Սիրիայից Լիբանանի սահման մուտք գործելու համար ելքի արտոնագրի վճար, ապա՝ այդտեղից դեպի Բեյրութի օդանավակայան հասնելու փոխադրամիջոցի, այնուհետև՝ դեպի Հայաստան մեկ ուղղությամբ տոմսի և «Զվարթնոց» օդանավակայանից դեպի Երևան փոխադրվելու գումար²⁶:

Արդեն 2015 թ. հունիսի 26-ին «Հալէպ» ՀԲՀԿ-ի «Փրկե՛ կեանք մը» նախաձեռնությամբ Հալեպից Հայաստան է փոխադրվել առաջին Այրանջյանների ընտանիքը: Մինչև նոյեմբեր ժամանել է 60 կարիքավոր սիրիահայ, իսկ մինչև տարեվերջ՝ 119 անձ կամ 47 ընտանիք: Սիրիահայերի համար դեպի Հայաստան մեկ ուղղությամբ օդանավի տոմս ձեռք բերելու «Հալէպ» ՀԲՀԿ-ի նախաձեռնությանն աջակցել են ինչպես սիլյուսքի տարբեր հայ համայնքների (ԱՄՆ, Դանիա, Մեծ Բրիտանիա և այլն) ներկայացուցիչներ, այնպես էլ առանձին անհատներ ու կազմակերպություններ²⁷:

Հայրենադարձներին օդանավակայանում դիմավորել են «Հալէպ» ՀԲՀԿ-ի գործադիր մարմնի անդամները, ինչպես նաև՝ համագործակցող միջազգային կառույցների հայաստանյան ներկայացուցչությունների պատասխանատուները՝ տեղում տրամադրելով ֆինանսական օժանդակություն ու մարդասիրական օգնության փաթեթներ: Միաժամանակ, տասնյակ ընտանիքներ ստացել են ամենամսյա ֆինանսական օժանդակություն: Առավել կարիքավոր շահառուներին կազմակերպությունը պահել է իր մշտական հոգածության ներքո:

«Հալէպ» ՀԲՀԿ-ն Հայաստան ժամանած յուրաքանչյուր սիրիահայի տրամադրել է 100-ական դոլար, որը քիչ գումար չէր ընտանիքների պա-

²⁴ «ՀԱԼԷՊ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպության հաղորդագրությունը «Փրկե՛ կեանք մը» ծրագրի վերաբերյալ, 2016, 4 նոյեմբերի. – <https://aleppo-ngo.org>.

²⁵ «Փրկե՛ կեանք մը» նախաձեռնություն, 2015, 6 մայիսի. – <https://aleppo-ngo.org>.

²⁶ Սիրիահայերը խնդրում են իրենց տեղափոխել Հայաստան. Ավելի քան 600 սիրիահայ խնդրել է օգնել Հայաստան տեղափոխվելու հարցում, 2016, 7 հոկտեմբերի. – <https://armeniasputnik.am>.

²⁷ «Save Lives» նախաձեռնությունը մեկնարկեց, 2015, 2 հուլիսի, «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ը նշեց երկրորդ տարեդարձը, 2015, 28 հոկտեմբերի, «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ը 380 սիրիահայի տրամադրեց մեկ ուղղությամբ ինքնաթիռի տոմս դեպի Հայաստան, 2017, 10 հունվարի. – <https://aleppo-ngo.org>.

րագայում: Հայաստան ժամանած կարիքավոր ընտանիքների տան վարձի հարցերը շարունակել են հոգալ միջազգային և սիյունքյան բարեսիրական կազմակերպությունները: Բացի այդ, նորեկներին իրենց տներում հյուրընկալելու պատրաստակամությունը «Հալէպ» ՀԲՀԿ են դիմել նաև շատ ու շատ հայաստանցիներ, որոնց տվյալները գրանցվել են՝ անհրաժեշտության դեպքում նրանց աջակցությունը ևս դիմելու համար²⁸:

Իսկ արդեն 2016 թ. հոկտեմբերի 14-ին «Հալէպ» ՀԲՀԿ-ի և «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի միջև կնքված համաձայնագրով, հիմնադրամը սկսել է աջակցել Հայաստան տեղափոխվել ցանկացող սիրիահայերին մեկ ուղղությամբ ավիատոմս ձեռք բերելու հարցում: Այսպես, արդեն 2016 թ. վերջին երեք ամիսներին Հայաստան է ժամանել 126, իսկ 2017 թ. օգոստոսի վերջին՝ 133 սիրիահայ²⁹: Հիմնադրամը նաև Ֆինանսական աջակցություն է ցուցաբերել Հայաստան ժամանածներին. առավել խոցելի 8 ընտանիքի տրամադրել է Ֆինանսական օգնություն 6 ամիս ժամկետով³⁰:

Ընդհանուր առմամբ, 2015–2017 թթ. «Հալէպ» ՀԲՀԿ-ի «Փրկել կեանք մը» ծրագրով Հայաստան է տեղափոխվել 468 սիրիահայ, իսկ ընթացիկ ծախսերի համար տեղում 100-ական դուլար է ստացել Բեյրութից Երևան ժամանած 460 սիրիահայ: Սույն ծրագրին աջակցելու նպատակով կազմակերպությունն աշխարհով մեկ հանգանակել էր 181.500 դուլար³¹:

«Հալէպ» ՀԲՀԿ-ն պատերազմից տուժած տեղահանվածների խոցելի խմբերին ապաստան ու կենցաղային բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով ևս իրականացրել է տարբեր ծրագրեր: Այսպես, գերազանցապես սիյունքյան անհատ բարերարների միջոցներով իրականացվել են «Հիւրընկալել ընտանիք մը» և «Որդեգրել ընտանիք մը» ծրագրերը:

Արդեն մինչև 2016 թ. «Հիւրընկալել ընտանիք մը» ծրագրի շրջանակներում բարերարները ներդրել են 15.000–25.000 դուլարի չափով գումար, բնակարաններ գնել Հայաստանում, դրանք գրանցել իրենց անուններով և ապա առանց վարձավճարի՝ 5–7 տարի ժամկետով պայմանագրային հիմունքներով տրամադրել սիրիահայ առավել կարիքավոր ընտանիքներին: Բնակարանների կահույքը տրամադրել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը՝ «Հալէպ» ՀԲՀԿ-ի հետ կնքած պայմանավորվածության համաձայն³²: 2016 թ. փետրվարի

²⁸ 600 հայ սիրիայից դիմել է՝ Հայաստան տեղափոխվելու. «Հալէպ» հ/կ-ի դեկամբար, 2016, 8 հոկտեմբերի. – <http://www.avevelk.am>.

²⁹ IDEa [Initiatives for Development of Armenia] հիմնադրամի և «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ի համագործակցությունը՝ ի նպաստ սիրիահայերի, 2016, 15 հոկտեմբերի, «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ը 380 սիրիահայի տրամադրեց մեկ ուղղությամբ ինքնաթիռի տոմս դեպի Հայաստան, 2017, 10 հունվարի. – <https://aleppo-ngo.org>.

³⁰ «ՀԱԼԷՊ» ՀԿ-ի և IDEa հիմնադրամի համագործակցությունը՝ ի նպաստ տեղահանված անձանց կենսական կարիքները հոգալուն, 2018, 4 հուլիսի. – <https://aleppo-ngo.org>.

³¹ Donation Goal for this Project is \$180,000. 2016, June 9. – <https://aleppo-ngo.org>.

³² “Newsletter”, 2015, № 2, June-August, p. 3.

վերջի տվյալներով արդեն 14 բարերարի աջակցությամբ սիրիահայ 20 ընտանիք ապահովվել է բնակարանով: 2017 թ. հունիսի տվյալներով առանց վարձավճարի բնակարանով ապահովված սիրիահայ ընտանիքների թիվը 10-ն էր, 2018 թ.՝ 15³³: Ծրագրի շրջանակներում «Հալէպ» ՀԲՀԿ-ն սիրիահայ ընտանիքներին բնակարան է տրամադրել նաև Լոռու մարզի Սպիտակ քաղաքում: 2016 թ. հոկտեմբերին այստեղ արդեն տեղավորվել էր 9 ընտանիք, ընդ որում 3 բնակարան տրամադրել էին բարերարները: Սպիտակում սիրիահայերը զբաղվում են գյուղատնտեսությամբ, հող մշակում, ընտանի կենդանիներ բուծում և իրենց ապրուստը հոգում: Նրանք ազատվել են բնակարանի վարձից, ինչպես նաև՝ կոմունալ ծախսերից³⁴:

Սիրիայի պատերազմից տուժած, տեղահանված և Հայաստանում ապաստանած առավել խոցելի սիրիահայ խմբերին աջակցելու նպատակով 2015 թ. հունիսից «Հալէպ» ՀԲՀԿ-ն իրականացրել է նաև «Որդեգրէ ընտանիք մը» առաջնային շտապ օգնության ծրագիրը: Խոցելի խմբի մեջ են ներառվել մանկահասակ երեխաներ ունեցող միայնակ մայրերը, տարեցներ ունեցող դեռահասները, անաշխատունակ, անկողնային, առողջական այլ խնդիրներ ունեցող, սիրիական հակամարտության ընթացքում գերի ընկած, խոչտանգումների ենթարկված, վիրավորված, հոգեպես տուժած ընտանիքները: Ծրագիրը նրանց համար նախատեսել է նյութական օժանդակություն բնակավարձի, սննդի և կոմունալ ծառայությունների վճարման համար՝ ամսվա, եռամսյակի, կես տարվա, տարվա կամ ավելի կտրվածքով³⁵:

«Հալէպ» ՀԲՀԿ-ի ԱՄՆ-ի ներկայացուցչությունը բարերարների միջոցով պարբերաբար օժանդակել է Հայաստանում գործող իր համանուն կազմակերպությանը Հայրենիքում հաստատված սիրիահայերին աջակցություն ցուցաբերելու գործում: Կազմակերպվել են բարեգործական միջոցառումներ ի նպաստ հայաստանյան գրասենյակի «Փրկէ կեանք մը» և «Որդեգրէ ընտանիք մը» ծրագրերի շահառուների: Եվ կամ՝ ԱՄՆ-ի Տեխասի նահանգի Հյուսթոն քաղաքի Սբ. Գևորգ հայ առաքելական եկեղեցու ծխական խորհրդի նյութական աջակցությամբ 2016 թ. փետրվարի 5-ին «Հալէպ» ՀԲՀԿ-ն նոր ժամանած 85 սիրիահայ շահառուի տրամադրել է 100-ական դոլար³⁶ և այլն:

ՀԲՀԿ-ն նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն է տրամադրել հարյուրավոր հայրենակիցների, այդ թվում՝ կանանց

³³ «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ. Հայացք «Հյուրընկալիր ընտանիք մը» բնակարանային ծրագրին, 2017, 28 հունիսի. – <https://aleppo-ngo.org>.

³⁴ 17.000 սիրիահայեր ապաստան են գտել Հայաստանում. ինչպե՞ս օգնել նրանց, 2016, մարտի 26. – <http://armedia.am>. Հայաստանում սիրիահայերի կողմից հիմնադրված հասարակական կազմակերպություններ. «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ. – <http://www.mindiaspora.am>.

³⁵ «ՀԱԼԷՊ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպություն. Որդեգրիր ընտանիք. – <https://aleppo-ngo.org>. The Fundraising Event in Support the Aleppo Compatriotic Charitable Organization, ACCO. Voice of Armenians TV NY («Սփիւռքի Զայնը»). 2016, November 18. – <https://www.youtube.com>.

³⁶ «Aleppo» CCNGO, 2015, September, p. 2, 7.

ու երիտասարդներին՝ նպաստելու «նրանց ակտիվ ներգրավմանը Հայաստանյան կյանքում»³⁷: 2015 թ. փետրվարից շաբաթական մեկ օր Սիրիայի քաղաքացիական պատերազմի հետևանքով հարազատ կորցրած և նյութական վնաս կրած անձանց շրջանում կազմակերպությունն իրականացրել է սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագիր: Սկզբում այն նախատեսված էր վեցամսյա ժամկետով, սակայն սիրիահայերի շարունակվող հուքի պայմաններում, ինչպես նաև սիրիահայ կանանց ցանկությունները շարունակական բնույթ է կրել³⁸: Ծրագրի նպատակն է՝ «օժանդակել սիրիական հակամարտության միջով անցած և ծանր հոգեբանական դրությունում հայտնված անձանց վերականգնման գործընթացին և նպաստել նրանց ակտիվ ներգրավմանը Հայաստանյան կյանքում»³⁹: «Հալէպ» ՀԲՀԿ-ի գրասենյակում սիրիական պատերազմի ողբերգական իրադարձությունների ակնատեսների հետ հաղորդակցական-վերականգնողական աշխատանքներ իրականացվել են ինչպես Հայաստանի հոգևոր դասի և տարբեր մասնազիտական ոլորտների ներկայացուցիչներ, այնպես և՛ ավելի վաղ հայրենադարձված ու Հայաստանում մասնագիտական կարողություններ ձեռք բերած և կայացած նախկին սիրիահայեր, կազմակերպությունների պատասխանատուներ, հյուրեր, որոնք իրենց կարողություններն ու գիտելիքները հաղորդել են ներկաներին՝ աջակցելով նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնմանը: Հետագայում ծրագրի շրջանակում տեղի է ունեցել մասնակից հինգ տասնյակից ավելի սիրիահայ կանանց ճանաչողական այցելություն Երևանի տեսարժան ու գեղատեսիլ վայրեր, թատրոն, համերգասրահ, թանգարան, եկեղեցիներ, ծանոթացում Հայաստանի պատմական անցյալին, դեպքերին ու դեմքերին, կինոդիտումներ, ինչպես նաև կարուձևի հմտությունների, ձեռքի աշխատանքների ներկայացում և այլ միջոցառումներ⁴⁰: Սոցիալ-մշակութային, հոգեկան, ֆիզիկական, կրթական զարգացմանը նպաստող նմանատիպ միջոցառումները միաժամանակ ուսուցողական ու համարկող ազդեցություն են ունեցել սիրիահայ հայրենադարձների վրա:

Սիրիահայ կանաց հմտություններն ու գիտելիքները զարգացնելու նպատակով կազմակերպվել են ձեռներեցության դասընթացներ, որին, ընդհանուր առմամբ, մասնակցել է 80 կին: Այսպես, «Հալէպ» ՀԲՀԿ-ն 2015 թ.

³⁷ «ՀԱԼԷՊ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպություն. Ծրագրեր, Սոցիալ-հոգեբանական աջակցություն սիրիահայ ընտանիքներին, 2016, 27 նոյեմբերի. – <https://aleppo-ngo.org>.

³⁸ Սիրիահայերին օժանդակություն տրամադրող կազմակերպությունների և ծառայությունների ցանկ: Սիրիահայերի և տեղացիների դիմակայության բարձրացում, Երևան, 2018, էջ 12:

³⁹ «Սոցիալ-հոգեբանական աջակցություն սիրիահայերին» ծրագրի կիսամյակային ամփոփիչ հանգրվումը, 2019, 12 հուլիսի, «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ. Սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրեր, 2017, 23 սեպտեմբերի. – <https://aleppo-ngo.org>.

⁴⁰ Սոցիալ-հոգեբանական աջակցությանն ուղղված հերթական հանդիպում, 2015, 15 հունիսի, «Սոցիալ-հոգեբանական աջակցություն սիրիահայերին» ծրագրի հերթական հանդիպումը՝ «Ծանօթանանք մեր արժեքերուն» շրջագծով, 2019, 3 մայիսի. – <https://aleppo-ngo.org>.

ապրիլից կյանքի է կոչել «Թաղիքագործության դասընթացներ սիրիահայ կանանց համար», մայիսից՝ «Ավանդական ասեղնագործության դասընթացներ կանանց համար», 2016 թ. մայիսից՝ «Հայկական ավանդական կարպետագործության դասընթացներ կանանց համար» տեական ծրագրերը: Դրանց նպատակն էր հաղորդած տեսական և գործնական գիտելիքներով հարստացնել սիրիահայ ձեռքի աշխատանքի հմտություններ ունեցող կանանց առօրյան՝ այն ծառայեցնելով հասարակական կյանքում նրանց ներգրավմանը, ձեռներեցության զարգացմանը, սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը: Դասընթացների ավարտին նրանց տրամադրվել են ձեռագործ աշխատանքների համար անհրաժեշտ պարագաներ, իսկ աշխատանքները ներկայացվել են ցուցահանդես-վաճառքի, որից ստացված հասույթը տրամադրվել է ընտանիքներին⁴¹:

«Հալէպ» ՀԲՀԿ-ն իր ուշադրության կենտրոնում է պահել նաև սիրիահայ երեխաների և պատանիների ազատ ժամանակի կազմակերպման հարցը: Նրանց զբաղվածությունն ու գեղագիտական դաստիարակությունն ապահովելու նպատակով «Հալէպ» ՀԲՀԿ-ն 2015 թ. հուլիսից կազմակերպել է նկարչության դասեր, ապա՝ նրանց աշխատանքների ցուցահանդես, տարաբնույթ խաղեր, ազգային երգ, ֆիլմերի դիտում, հայոց պատմության ծանոթացում և այլն: Այդ բոլորը նպատակ ունենին համախմբել ու զարգացնել հայրենաքնակ սիրիահայերի ստեղծագործական հմտությունները՝ «ի սպաս դնելով նրանց լուսավոր ապագային կառուցմանը Մայր Հայրենիքում»⁴²:

2015 թ. ստեղծվել է նաև «Սիրիահայ ուժ» կոչվող պատանիների հանձնախումբը, որն իր շուրջ համախմբել է 13–17 տարեկան սիրիահայերին՝ նպաստելու նրանց սոցիալ-մշակութային, հոգևոր ու ֆիզիկական, կրթական, գիտական զարգացմանը, առողջ ապրելակերպին և հայրենասիրական դաստիարակությանը: Շուրջ չորս տասնյակ պատանիների խումբը կազմակերպել է արշավներ դեպի Հայաստանի տեսարժան վայրեր, թանգարաններ և այլուր: Նմանատիպ միջոցառումների նպատակը կազմակերպությունը հիմնավորել է «հայրենասիրական դաստիարակության սերմանման և հայրենաճանաչողության զարգացման» անհրաժեշտությամբ⁴³: Ամառային հանգստյան օրերին, ինչպես նաև հետագա ամիսներին, «Հալէպ» ՀԲՀԿ-ն 4–9 և 10–16 տարեկան ավելի քան 50 երեխաների համար, սկսած 2016 թ. հունիսից, ամեն շաբաթ օր կազմակերպել է կրթադաս-

⁴¹ «ՀԱԼԷՊ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպություն. Մեր մասին. – <https://aleppo-ngo.org>. «Տեղեկագիր», 2015, № 1, մարտ-մայիս, էջ 2:

⁴² «Տեղեկագիր», 2015, № 1, մարտ-մայիս, էջ 2, Հայկական ավանդական ասեղնագործության դասընթացներ կանանց համար, Երևան, 2015, էջ 1:

⁴³ «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ի պատանյաց խումբը ծանոթացավ հայրենի տեսարժան վայրերին, 2016, 2 մայիսի, Մանկապատանեկան հավաքների մասնակիցներն այցելեցին Հայաստանի պատմության թանգարան, 2016, 30 հոկտեմբերի. – <https://aleppo-ngo.org>.

տիրակազմական ու մշակութային ուղղվածության անվճար մանկապատանեկան հավաքներ⁴⁴։

«Հալէպ» ՀԲՀԿ-ն հոգացել է նաև իր շահառու ընտանիքների պատանիների ամառային հանգստի մասին: 2015–2016 թթ. ավելի քան չորս տասնյակ պատանի իրաքահայ և արցախցի իրենց հասակակիցների հետ հանգստացել է Հանքավանի ու Վարդենիսի ամառային ճամբարներում՝ մասնակցելով կազմակերպված ուսուցողական, գեղագիտական, ճանաչողական և մարզական միջոցառումներին⁴⁵։

2015 թ. սեպտեմբերից «Հալէպ» ՀԲՀԿ-ում մեկնարկել է «Սիրիահայ երիտասարդները հանուն ավելի լավ ապագայի Հայաստանում» ծրագիրը, որի նպատակն է աջակցել սիրիահայ երիտասարդների սոցիալ-մշակութային, հոգևոր, ֆիզիկական, կրթական ու գիտական զարգացմանը: Արդեն մեկ ամսվա ընթացքում ծրագրին անդամակցել է սիրիահայ, ինչպես նաև՝ տեղաբնակ 110 երիտասարդ: Ծրագրի շրջանակում քննվել ու հոգ են տարվել հայրենադարձ երիտասարդների կրթական կարիքները, տրամադրել հոգեբանական և ֆինանսական աջակցություն սիրիահայ ուսանողներին, կազմակերպել տարբեր դասախոսություններ երիտասարդների ուխտագնացություններ, ամառային ճամբարներ, այցելությունները Հայաստանի մանկատներ և այլն՝ նպաստելու «նրանց զարգացմանը և հայաստանյան կյանքում ինքնաիրացմանը»⁴⁶։

2016 թ. հունիսից «Հալէպ» ՀԲՀԿ-ում սկսվել է նաև «Սիրիահայերի տնտեսական ինտեգրումը Հայաստանում» անվճար դասընթացների շարքը, որի նպատակն է խթանել Հայաստանում ապաստանած սիրիահայերի զբաղվածությունը և տնտեսական ինտեգրման գործընթացը: Արդեն 2016 թ. օգոստոսի վերջին ծրագրին մասնակցել է 76 սիրիահայ⁴⁷։

2018 թ. մարտից «Հալէպ» ՀԲՀԿ-ն իրականացրել է «Սիրիահայ երիտասարդների պայծառ ապագա» ծրագիրը, որը կոչված է «օժանդակել սիրիական հակամարտության հետևանքով տեղահանված սիրիահայ երի-

⁴⁴ «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ը նաև որպես սիրիահայ մանուկների և պատանիների հավաքատեղի, 2016, 20 նոյեմբերի, «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ում մեկնարկեցին մանկապատանեկան հավաքները սիրիահայ մանուկների համար, 2016, 22 հունիսի. – <https://aleppo-ngo.org>.

⁴⁵ Սիրիահայ պատանիները մասնակցեցին ՀՕՑ-ի կողմից կազմակերպված «Արագած» ճամբարին, 2015, 6 օգոստոսի, երիտասարդները Սիրիայից, Իրաքից և Լեռնային Ղարաբաղից մասնակցեցին ամառային ճամբարի, 2017, 28 օգոստոսի. – <https://aleppo-ngo.org>.

⁴⁶ «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ում մեկնարկեց «Սիրիահայ երիտասարդները հանուն ավելի լավ ապագայի Հայաստանում» երիտասարդական կրթական ծրագիրը, 2015, 29 սեպտեմբերի. – <https://aleppo-ngo.org>. ««Հալէպ» հայրենակցական բարեսիրական ՀԿ», 2015, հոկտեմբեր, էջ 11:

⁴⁷ «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ում մեկնարկեցին փոքր ու միջին բիզնեսի վարման անվճար դասընթացները, 2016, 27 օգոստոսի, «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ում մեկնարկեցին «Ֆինանսական համակարգը ՀՀ-ում» թեմայով անվճար դասընթացները, 2016, 30 հունիսի, «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ. Շարունակվում են անվճար ֆինանսական դասընթացներ սիրիահայ ընտանիքների համար, 2016, 26 օգոստոսի. – <https://aleppo-ngo.org>.

տասարդներին՝ ինտեգրվելու հայաստանյան կյանքին», ինչպես նաև՝ «բարելավվել սիրիահայ երիտասարդների հմտություններն ու մրցունակությունը հայաստանյան աշխատաշուկայում և հնարավորություն տալ՝ հասնելու իրենց աշխատանքային նպատակներին»⁴⁸: Սիրիահայ 16–35 տարեկան երիտասարդների համար կազմակերպվել են լեզուների դասընթացներ, հաղորդվել նոր գիտելիքներ ու հմտություններ: Հայաստանի 14 ուսումնական հաստատությունների սիրիահայ ուսանողներին և շրջանավարտներին տրամադրվել է կրթաթոշակ ու Ֆինանսական աջակցություն⁴⁹: Մեկ տարվա ընթացքում այս ծրագրում արդեն ընդգրկվել է սիրիահայ և տեղաբնակ ավելի քան 180 երիտասարդ: 2018 թ. մարտից մինչև 2019 թ. դեկտեմբեր սիրիահայ, ինչպես նաև իրաքահայ և տեղացի ավելի քան 280 երիտասարդ մասնակցել է ծրագրի տարբեր դասընթացներին ու միջոցառումներին, ինչպես նաև՝ ուսանողական մասնագիտական փորձառությունն անցել հայաստանյան համապատասխան գրասենյակներում ու ձեռնարկություններում՝ կատարելագործելով իրենց մասնագիտական կարողությունները, խորացնելով գիտելիքները և ձեռք բերելով աշխատանքային փորձ ու հմտություն⁵⁰:

Միաժամանակ, «Հալէպ» ՀԲՀԿ-ն իր հովանու տակ է վերցրել կյանքից անժամանակ հեռացած ծնողների զավակներին՝ բարեսիրական այլ կազմակերպությունների միջոցով հոգալով անչափահաս երեխաների ապրուստի ու ուսման հարցերը, ինչպես նաև նվիրատուների հանգանակություն չհնարհիվ կարողացել է հոգալ իր շահառուների առողջական ծախսերը⁵¹:

«Հալէպ» ՀԲՀԿ-ը, կարևորելով հայաստանյան իրականության մեջ սիրիահայ հայրենադարձների ինտեգրման գործընթացի արդյունավետության համար բնակարանային հարցի լուծման խնդրին զուգընթաց նաև աշխատանքով ապահովելու խնդիրը, մշակել է մի շարք ծրագրեր, որոնք ուղղված կլինեն Հայաստանում սիրիահայերի զբաղվածության ապահովմանը՝ Ֆինանսական աջակցության միջոցով աշխատատեղերի ստեղծմանը: Հաշվի առնելով սիրիահայերի, մասնավորապես կանանց խոհարարական հմտությունները և նպատակ ունենալով ապահովել նրանց զբաղվածությունն ու տնտեսական-սոցիալական զարգացումը Հայաստանում՝ «Հալէպ» ՀԲՀԿ-ն հիմնել է արևելյան ուստեստների խոհանոց⁵²:

⁴⁸ Սիրիահայերին օժանդակություն տրամադրող կազմակերպությունների և ծառայությունների ցանկ: Սիրիահայերի և տեղացիների դիմակայության բարձրացում, էջ 12:

⁴⁹ «ՀԱԼԷՊ» ՀԲՀԿ-ն և ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղանը մեկնարկում են «Սիրիահայ երիտասարդների պայծառ ապագա» ծրագիրը, 2018, 14 մարտի, Արձագանքելով սիրիահայ ուսանողների կրթաթոշակային կարիքներին, 2018, 22 նոյեմբերի. – <https://aleppo-ngo.org>.

⁵⁰ Մասնագիտական պրակտիկայի մեկնարկը՝ «Սիրիահայ երիտասարդների պայծառ ապագա» ծրագրի շրջանակներում, 2019, 10 դեկտեմբերի. – <https://aleppo-ngo.org>.

⁵¹ We Saved Krikor’s Life and We Did It Together! 2020, March 26. – <https://www.youtube.com>.

⁵² 17.000 սիրիահայեր ապաստան են գտել Հայաստանում. ինչպե՞ս օգնել նրանց (հարցազրույց), 2016, մարտի 26. – <http://armediam.am>.

Այդ ծրագրի շրջանակներում էր, որ ԱՄՆ-ի հայ համայնքի ներկայացուցիչների աջակցությամբ 2018 թ. Հայաստանի համար խորհրդանշական նոյեմբերի 29-ին⁵³ Երևանում վերջնականապես բացվել է «Ալեպպո Քուլիզին» կենտրոնը⁵⁴, որը կոչված էր առաջիկա 5 տարվա ընթացքում աշխատատեղերով ապահովել Հայաստանում ապաստանած 70–90 սիրիահայերի, առավելապես՝ կանանց՝ հաշվի առնելով նրանց խոհարարական հմտությունները և առկա գործազրկության բարձր ցուցանիշը: Կենտրոնից ստացված շահույթն ուղղվելու էր հակամարտության հետևանքով Հայաստանում ապաստանած սիրիահայերի համար նոր աշխատատեղեր հիմնելուն և սիրիահայ ընտանիքներին մարդասիրական օգնություն տրամադրելուն⁵⁵:

Ընդհանուր առմամբ, 2018 թ. հոկտեմբերի տվյալներով «Հալէպ» ՀԲՀ-ն աջակցել է սիրիահայ ավելի քան 6.200 անհատի կամ շուրջ 1.850 ընտանիքի՝ համագործակցելով ավելի քան 50 տեղական ու միջազգային կառույցների հետ և իրականացնելով ավելի քան 40 արտակարգ ու երկարատև ծրագիր, նախագիծ, իրավապաշտպան և ֆոնդ-հայթայթման արշավ⁵⁶:

Եզրակացություն

«Հալէպ» ՀԲՀ-ն, որպես սիրիահայերից բաղկացած կառույց, ներսից ծանոթ լինելով նրանց խնդիրներին ու ակնկալիքներին՝ մշակել է տեղական ծրագրեր, որոնք Հայաստանի պետական ու միջազգային կառույցների հետ համագործակցությամբ, բարերարների ու հանգանակությունների միջոցով կարողացել է իրականացնել: Իր գործունեությամբ օրինակելի և օպերատիվ այս կառույցը կազմակերպել է Սիրիայից հայերի տարահանումն ու վերաբնակեցումը Հայաստանում, անհատույց բնակարաններ տրամադրել կարիքավորներին, մարդասիրական օգնություն և վարձակալական փոխհատուցում՝ շահառուներին, հիմնել աշխատատեղեր սիրիահայ կանանց համար, նաև նպաստել է Հայրենիքում սիրիահայ տարբեր սերնդի ներկայացուցիչների սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ու ընտելացմանը, նրանց հոգևոր, ֆիզիկական, մշակութային և կրթական զարգացմանը:

⁵³ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվել են խորհրդային կարգեր: Այդ տարելիցը հիշարժան է նաև սփյուռքահայ մեր հայրենակիցներից ոմանց համար:

⁵⁴ Սիրիահայերին օժանդակություն տրամադրող կազմակերպությունների և ծառայությունների ցանկ: Սիրիահայերի և տեղացիների դիմակայության բարձրացում, էջ 12:

⁵⁵ Հայաստանում սիրիահայերի կողմից հիմնադրված հասարակական կազմակերպություններ, «ՀԱԼԵՊ» ՀԲՀ. – <http://www.mindiaspora.am>. «Ալեպպո Քուլիզին» կենտրոն. սիրիահայերի համար նոր աշխատավայրի առաջին նախաբացումը, 2018, 13 փետրվարի. – <http://www.arevelk.am>.

⁵⁶ Թափուր աշխատատեղ: Գրասենյակի համակարգող, 2019, 14 հունվարի: Նամակ՝ ուղղված ՀՀ Միգրացիոն ծառայության պետ Արմեն Ղազարյանին, 2020, 29 մայիսի. – <https://aleppo-ngo.org>.

Քնարիկ Ավագյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմությունից և ինստիտուտի հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ԱՄՆ-ի հայ համայնքի, հայ սփյուռքի պատմություն: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 140 հոդվածի: lira777@yahoo.com

REFERENCES

- ““Aleppo” Compatriotic Charitable NGO” (Yerevan), 2015, September.
- “Arevelk” Iratuakan. 2016, 8 hoktemberi; 2018, 13 petrvari.–<http://www.arevelk.am> (In Armenian).
- “Armedia” Information, analytical agency. 2016, 26 marti. – <http://armedia.am> (In Armenian).
- “Armenia Sputnik” Iratvakan. 2016, 7 hoktemberi. – <https://armeniasputnik.am> (In Armenian).
- “Halep” hayrenaktsakan baresirakan hasarakakan kazmakerputyun. – <https://aleppo-ngo.org> (In Armenian).
- ““Halep” hayrenaktsakan baresirakan HK” (Yerevan), 2015, hoktember, dektember (In Armenian).
- “Hayastani Hanrapetutyun”, 20. IX. 2017 (In Armenian).
- Haykakan avandakan aseghnagordsutyun dasentatsner kanants hamar, Yerevan, 2015 (In Armenian).
- HH spyurki nakhararutyun, 2017. – <http://www.mindiaspora.am> (In Armenian).
- Human Dimension Implementation Meeting. Working Session 12. Rights of Migrants. Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia. 2018, September 28.
- “Newsletter” (Yerevan), 2015, № 2, June-August.
- Siriahayerin ozhandakutyun tramadrogh kazmakerputyunneri ev dsarayutyunneri tsank. Siriahayeri ev teghatsineri dimakayutyun bardzratsum, Yerevan, 2018 (In Armenian).
- “Teghekagir” (Yerevan), 2015, № 1, mart-mayis, № 3, september-hoktember (In Armenian).
- Voice of Armenians TV NY (“Spyurki dzayne”). 2016, November 18. – <https://www.youtube.com>.
- We Saved Krikor’s Life and We Did It Together! 2020, March 26. – <https://www.youtube.com>.

ПОДДЕРЖКА ЗЕМЛЯЧЕСКОЙ БЛАГОТВОРИТЕЛЬНОЙ
ОБЩЕСТВЕННОЙ ОРГАНИЗАЦИИ
«АЛЕППО» РЕПАТРИАНТОВ ИЗ СИРИИ
(2013–2018 гг.)

КНАРИК АВАКЯН

Резюме

Ключевые слова: война в Сирии, армянская община, репатриация, Армения, земляческая благотворительная общественная организация «Алеппо».

Начиная с марта 2011 г., с эскалацией военных действий исламистских террористов в Сирии, число сирийских армян, желающих репатриироваться в Армению, увеличилось. В общей сложности, с начала войны до 2018 г. на Родину прибыло 22 000 сирийских армян.

В Армении были созданы четыре сирийско-армянские организации: «Центр по координации проблем сирийских армян» (2012 г.), земляческая благотворительная общественная организация «Алеппо» (2013 г.), общественная организация «Союз сирийских армян» (2013 г.) и земляческое объединение «Кесаб» (2014 г.).

Основанная в 2013 г. и действующая по сей день организация «Алеппо» (председатель – Ани Балхян) как сирийско-армянское объединение, глубоко осознавая проблемы и ожидания своих соотечественников, разработала продолжительные программы, которые смогла успешно осуществить, сотрудничая с государственными структурами Армении, международными и диаспоральными организациями, а также с помощью благотворителей и пожертвований.

Своей деятельностью эта образцовая, для всех времен, организация смогла оперативно осуществить эвакуацию и переселение необеспеченных армян из Сирии в Армению, предоставила нуждающимся бесплатное жилье, гуманитарную помощь и субсидии на аренду жилья, создала рабочие места для сирийско-армянских женщин и лиц с ограниченными возможностями, а также содействовала социально-психологической реабилитации и адаптации представителей разных поколений сирийских армян на Родине, их духовному, физическому, культурному и образовательному развитию.

Кнарик Авакян – к. и. н., ведущий научный сотрудник отдела истории армянских общин и диаспоры Института истории НАН РА. Научные интересы: история армянской общины США и армянской диаспоры в целом. Автор 1 монографии и около 140 статей. lira777@yahoo.com

THE SUPPORT OF THE “ALEPPO” COMPATRIOTIC
CHARITABLE NON-GOVERNMENTAL ORGANIZATION
TO THE REPATRIATES FROM SYRIA
(2013–2018)

KNARIK AVAGYAN

S u m m a r y

Key words: War in Syria, Armenian Community, Repatriation, Armenia, “Aleppo” Compatriotic Charitable Non-Governmental Organization.

Beginning from March, 2011, along with the escalation of hostilities by Islamist terrorists in Syria, the number of Syrian-Armenians wishing to repatriate to Armenia increased. Totally, from the beginning of the war till 2018, 22,000 Syrian Armenians arrived to Motherland.

Based on the vision of preserving in the Motherland the lives and safety of its compatriots, affected by the war in Syria, four Syrian-Armenian organizations were created: “Center for Coordination of the Problems of Syrian-Armenians” (2012), “Aleppo” Compatriotic Charitable Non-Governmental Organization (2013), “Union of Syrian Armenians” Non-Governmental Organization (2013) and “Kessab” Compatriotic Union (2014).

Founded in 2013 and operating till today, the “Aleppo” Compatriotic Charitable Non-Governmental Organization (Chairwoman: Ani Balkhian), as a Syrian-Armenian union, being aware of the problems and expectations of its compatriots, has developed sustainable programs, which were able to realize in cooperation with state structures of Armenia, with international and Diasporan organizations, as well as with the help of benefactors and donations.

This exemplary organization, of all times, has promptly organized the evacuation and resettlement of vulnerable Armenians from Syria to Armenia, provided free housing to the needy ones, humanitarian aid and rental subsidies to its beneficiaries, created jobs for Syrian-Armenian women and people with disabilities, as well as promoted social-psychological rehabilitation and adaptation of the representatives of different generations of Syrian-Armenians in the Motherland, their spiritual, physical, cultural and educational development.

Knarik Avagyan – Candidate of Sciences in History, Leading Researcher at the Department of History of the Armenian Communities and Diaspora of the NAS RA Institute of History. Scientific interests: history of the Armenian Community of the USA and the Armenian Diaspora in general. Author of 1 monograph and around 140 articles. lira777@yahoo.com

«ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ԻՏԱԼԻԱՅԻ
ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ
(1860–1865 թթ.)*

ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ «Մասյաց աղավնի», Գ. Այվազովսկի, Իտալիա, անկախութիւն, պատերազմ, Ջ. Գարիբալդի, Կ. Կավուր, Վիկտոր Էմմանուէլ II, Պիեմոնտ, Թագավորութիւն, Վենետիկ, Հռոմ, միավորում:

Նախաբան

Ապենինյան թերակղզու իտալական պետութիւնները՝ քաղաքական մասնատվածութեան վերացման և միասնական Իտալական թագավորութեան կազմավորման համար XIX դարում ծավալված ազգային շարժումն ու ազատագրական պայքարը լայն արձագանք են գտել ժամանակի հայ հասարակական մտքում և պարբերական մամուլում: Եվրոպական քաղաքական կյանքի այդ կարևորագույն իրադարձութիւններին իրենց ուսումնասիրութիւններում ու հրատարակումներում անդրադարձել են մասնավորապէս Վենետիկի Միխիթարյան միաբանութեան անդամներ Ղուկաս վարդապետ Ինճիճյանը, Ղևոնդ վարդապետ Հովնանյանը, Պողոս վարդապետ Հովնանյանը, Ամբրոսիոս վարդապետ Գալֆայանը, Գրիգոր վարդապետ Գովրիկյանը, Գաբրիէլ վարդապետ Այվազովսկին և ուրիշները: Ազգային միավորման և ազատութեան համար իտալացիների պայքարը, հատկապէս 1840–1860-ական թվականների անկախութեան համար մղված պատերազմները, լայնորեն լուսաբանվել է հայ պարբերական մամուլում: Այդ պարբերականների հրատարակումներից հետևում է, որ դրանք, անկախ իրենց գաղափարական ուղղվածութիւնից, մեծ հետաքրքրութիւն են դրսևորել իտալական ազգային, ազատագրական պայքարի նկատմամբ: Այս իմաստով առանձնանում է հատկապէս արևմտահայ մամուլը, որը 1850–1860-ական թվականներին արևմտահայութեան ազատագրութեան հույսերը մասամբ կապում էր եվրոպական ազգային-ազատագրական շարժումների հաղթանակի հետ: Իտալական ազատագրական պայքարը որոշակի արձագանք է գտել նաև ուղտահայ պարբերական մամուլում՝ հատկապէս Թեոդոսիայում հրատարակվող «Մասյաց աղավնի» ամսագրում:

Հայ պարբերական մամուլի պատմութեան մեջ այս ամսագիրն իր ուրույն տեղն ունի: Պարբերականի հիմնադիրն ու տնօրէն ղեկավարը հայ ազգային-պահպանողական հոսանքի երևելի դեմքերից Գաբրիէլ վարդապետ Այվազովսկին (1812–1880) էր: Նա 1855–1858 թթ. ամսագիրը հրատարակում էր Փարիզում, իսկ 1860–1865 թվականներին՝ Թեոդոսիայում:

* Ներկայացվել է 30. VII. 2020 թ., գրախոսվել է 09. X. 2020 թ., ընդունվել է տպագրութեան 16. X. 2020 թ.:

«Մասյաց աղավնու» գաղափարական ուղղվածությունը, լույս տեսած հրատարակումների բովանդակությունը տպագրության առաջին փուլում մեզանում ընդհանուր գծերով ուսումնասիրված է¹, ինչը չի կարելի ասել 1860-ական թվականների մասին, որը հիմնարար ուսումնասիրություն կարիք ունի: Ի թիվս բազմաթիվ հարցեր՝ բացահայտված է, մասնավորապես, ամսագրի դիրքորոշումը XIX դարի երկրորդ կեսի իտալական ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ:

Իտալիայի միավորման համար պայքարը «Մասյաց աղավնու» գնահատմամբ

Իտալական ազատագրական պայքարի վերաբերյալ «Մասյաց աղավնու» քաղաքական հրատարակումները «ցույց են տալիս, որ Այվազովսկին չի դավաճանել իր հիմնական հայեցողությանը»²: Նա հավատարիմ մնաց իր համոզմունքներին և անթաքույց արտահայտեց համակրանքն ազատության ու անկախության համար պայքարի ելած իտալացիների նկատմամբ: Ինչպես «Բազմավեպ»-ում տպագրած հոդվածում, այնպես էլ «Մասյաց աղավնու» հրատարակումներում նա իտալացիների ազատագրական պայքարի հիմնական պատճառը իրավացիորեն համարում է Ավստրիական միապետության կողմից նրանց նկատմամբ մշտապես իրականացվող քաղաքական և տնտեսական բռնությունները, ճնշումն ու շահագործումը³: Գ. Այվազովսկու համոզմամբ՝ հատկապես Լոմբարդո-Վենետիկյան նահանգում Ավստրիայի «բռնած կառավարության կերպը, Իտալիոյ միացեալ տէրութեանց վերայ ըրած պահանջմունքները»⁴ իտալացիներին ստիպեցին անկախության համար պատերազմ սկսել:

Գ. Այվազովսկին իրավացի էր. ավստրիական կայսրության ոչ մի երկրամաս այնքան տնտեսապես չէր շահագործվում, որքան Լոմբարդիան և Վենետիկը: Ավստրիական գանձարանի մեկ քառորդն ապահովում էր Լոմբարդո-Վենետիկյան նահանգը, թեպետ դրա բնակչությունը կազմում էր կայսրության բնակչության մեկ յոթերորդը: Դրամական գանձումները տարեցտարի անշեղորեն ավելանում էին՝ չնայած ավստրիական իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում էին նահանգի տնտեսության և արդյունաբերության զարգացմանը: Միայն Լոմբարդիան 1846 թ. ավստրիական գանձարանին վճարեց 59 մլն լիվր, որը կազմում էր նահանգի ֆինանսական եկամուտների 75 տոկոսը⁵: Լոմբարդիան միայն ֆինանսապես չէր կողոպտվում. նահանգում մշտապես գտնվում էր ավստրիական կայսրը, որի զինվորականները ոստիկանության հետ անասելի բռնություններ էին կիրառում իտալացիների նկատմամբ: Ավստրիական

¹ Տե՛ս Ա. Կարինյան. Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Երևան, 1960, էջ 378–430:

² Նույն տեղում, էջ 378:

³ Տե՛ս История Италии, т. 2. Под ред. К. Ф. Маззиано, М., 1970, с. 152, 163–164; История XIX века, т. 5. Под ред. Лависса и Рамбо, М., 1938, с. 257–258.

⁴ «Մասյաց աղավնի» (Թեոդոսիա), 1860, հունվար, թիվ Ա, էջ 18:

⁵ История Италии, с. 140; Дж. Канделоро. История современной Италии, т. 5. М., 1971, с. 21–60.

Շպիլբերգ ամրոցում հազարավոր իտալացի քաղաքանտարկյալներ էին տառապում: Լոմբարդացիներին Ավստրիայի կայսր Ֆրանց Ի-ը ցինիկորեն հայտարարում էր. «Նվաճման իրավունքով դուք պատկանում եք ինձ և պիտի մոռանաք, որ լոմբարդացի եք»⁶:

Իտալական ազատագրական պայքարի ընթացքին Գ. Այվագոլսկին պարբերաբար անդրադառնում է ամսագրի՝ «Տեսութուն արտաքին քաղաքական և անցից» խորագրի հրատարակումներում: Նա, վերլուծելով 1859 թ. եվրոպայում ստեղծված քաղաքական վիճակը, գրում է. «Իտալական խնդիրը այս միջոցիս եւրոպական քաղաքականութեան բոլոր ուրիշ խնդիրները գրեթե մոռացուց»⁷:

Իտալական խնդրին քաջատեղյակ՝ Վենետիկի ազատութեան համար պայքարի անմիջական ակնատես Գ. Այվագոլսկին ամսագրի հայ ընթերցողներին հայտնում է, որ իտալացիների զենք վերցնելու և պատերազմ սկսելու խնդիրն ինքնին նոր չէ: Իտալացիներն իրենց «ատելութիւնը Աւստրիոյ դէմ» ցույց են տվել մինչ 1848 թ. պատերազմը և «քանի մը անգամ անկէ առաջ»: Ամեն անգամ նրանք պարտութիւն են կրել, որի հետեանքով «խեղճ Իտալիան ծայրէ ի ծայր տակն ու վրայ եղած է»⁸:

Գ. Այվագոլսկին իտալական ազատագրական պայքարի լավագույն գիտակ էր: Նա «մինչ 1848 թ. պատերազմը» ասելով՝ նկատի ուներ ավստրիական տիրապետութեան դեմ 1815–1820 թթ. կարբոնարների գաղտնի ընկերությունների ծավալած շարժումը, 1820–1821 թթ. նրանց զինված պայքարը Նեապոլում ու Պիեմոնտում, 1831 թ. քաղաքական պայքարը Կենտրոնական Իտալիայում, 1833–1834 թթ. Ջուզեպպե Մացցինիի և 1844 թ. Բանդիերա եղբայրների գլխավորած ապստամբությունները, որոնք անհաջող վախճան ունեցան⁹: Գ. Այվագոլսկին այնուհետև փաստում է, որ 1848 թ. Ավստրիական կայսրության դեմ մղած ազատագրական պատերազմում պարտություն կրած իտալական պետությունների թվում միայն Սարդինական (Պիեմոնտի) թագավորությունն ազատ մնաց Ավստրիայի ազդեցությունից: Այդ ժամանակից սկսած՝ Սարդինական թագավորությունը «Ավստրիայի դէմ միշտ թշնամութիւն կը ցուցնէր և պատերազմի կպատրաստուէր: Ասով Սարտենիան գրեթե բոլոր իտալացի ազգասիրաց սիրտը գրավեց»¹⁰:

«Մասյաց աղավնու» խմբագիրը քաջատեղյակ էր, որ իտալական խնդիրը 1848 թ. ազատագրական պայքարից հետո կրկին եվրոպական առաջատար երկրների ուշադրության առարկա դարձավ Ղրիմի (Արևելյան) պատերազմի ավարտից հետո: 1856 թ. Փարիզում կայացած եվրոպական երկրների գագաթնաժողովում Պիեմոնտի վարչապետ կոմս Կամիլլո Կավուրը նիստերից մեկում պատվիրակությունների ղեկավարներին ներկա-

⁶ История международного рабочего и национально-освободительного движения. М., 1962, с. 79; А. Лурье. Гарибальди. М., 1957, с. 20.

⁷ «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ Ա, էջ 16:

⁸ Նույն տեղում, էջ 18:

⁹ История Италии, с. 86–152.

¹⁰ «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ Ա, էջ 18:

յացրեց իտալական պետություններում տիրող հեղափոխական վիճակը, որը վտանգավոր էր համարում Եվրոպայի համար: Նա առաջարկեց Պիեմոնտի թագավորությունը միացնել Պարմայի և Մոդենայի դքսությունները՝ որպես փոխհատուցում դաշնակիցների հետ Ղրիմի (Արևելյան) պատերազմին մասնակցելու համար, բայց աջակցություն չստացավ¹¹:

Այս մասին քաջատեղյակ «Մասյաց աղավինին» համառոտ ներկայացնելով իտալական հարցի նախապատմությունը՝ այն որոշակիորեն կապում է 1856 թ. Փարիզի բազմաթիվաժողովում կայացած քննարկումների հետ: Ամսագիրը նշում է, որ իտալական հարցի քննարկման ժամանակ եվրոպական պետությունների ներկայացուցիչները մտավախություն էին հայտնել, որ Իտալիայի «անհանդարտութեան պատճառով Եվրոպայի հանգստությունը նորէն վրդովի»¹²:

Ըստ ամսագրի՝ եվրոպական երկրները, չնայած ջանքեր գործադրեցին քաղաքական հավասարակշռություն պահպանելու ուղղությամբ, այնուամենայնիվ նոր պատերազմից խուսափել չկարողացան: «Մասյաց աղավինին» բավական հավաստի ներկայացնում է Ավստրիայի դեմ Ֆրանս-իտալական դաշինքի պատերազմ սկսելու նախապատմությունը¹³ և նշում, որ եվրոպական պետություններն այդ հարցում տարբեր դիրքորոշում ունեին: 1859 թ. հունվար-փետրվարին, երբ կողմերը պատերազմական նախապատրաստություններ էին տեսնում, Անգլիան փորձում էր ղեկնապահիտական ճանապարհով խնդիրը կարգավորել: Ռուսաստանն առաջարկում էր իտալական հարցով եվրոպական հինգ երկրների վեհաժողով հրավիրել և այնտեղ քննարկել «նոր ծագած խնդիրները»¹⁴: Բացի Ավստրիայից՝ մնացած չորս պետություններն այդ առաջարկությունն ընդունեցին և որոշեցին ապրիլի 30-ին վեհաժողով անցկացնել: Չորս երկրները Պիեմոնտին և Ավստրիային առաջարկեցին իրենց զորքերը սահմանից հետ քաշել ու զինավթափվել: Պիեմոնտն ապրիլի 20-ին ընդունեց այս պայմանը, իսկ Ավստրիան Պիեմոնտից պահանջեց երեք օրում զինավթափվել: Վերջինս պատասխանեց, որ չորս պետությունների պահանջով արդեն զինավթափվել է և նոր բան չունի անելու: Դրանից վիրավորված՝ Ավստրիան իր զորքերը շարժեց դեպի Պիեմոնտ, որոնք ապրիլի 26-ին անցան սահմանը: Նույն օրը Ֆրանսիան 20 հազար զորք մտցրեց Ջենովա¹⁵:

Ֆրանսիան և Պիեմոնտը հասան իրենց նպատակին, որ պատերազմն առաջինը սկսի Ավստրիան: Բանն այն է, որ Գերմանական միություն Սահ-

¹¹ Տե՛ս А. Дебидур. Дипломатическая история Европы 1815–1870, т. 2. Ростов-на-Дону, 1995, с. 132–134; Дж. Канделоро. *Նշվ. աշխ.*, էջ 208, Д. Берти. Россия и итальянские государства в период Рисорджименто. Пер. с ит. М., 1959, с. 560–571; История XIX века, с. 264–265.

¹² «Մասյաց աղավինի», 1860, հունվար, թիվ Ա, էջ 16:

¹³ Տե՛ս նաև А. Дебидур. *Նշվ. աշխ.*, էջ 162–163:

¹⁴ «Մասյաց աղավինի», 1860, հունվար, թիվ Ա, էջ 16:

¹⁵ Նույն տեղում, էջ 17:

մանադրությունն Ավստրիային իրավունք էր տալիս միությունից ռազմական օգնություն ստանալ, եթե պաշտպանողական պատերազմ մղելիս լինեն: Եթե Ավստրիան անգամ ձևականորեն հանդես գար որպես հարձակվող կողմ, ապա զրկվում էր միության օգնությունից¹⁶: «Մասյաց աղավնին» եվրոպական մամուլից տեղեկացված էր, որ Անգլիայի վարչապետ լորդ Դերբին Ավստրիային զգուշացրել է, որ պատերազմի դեպքում Անգլիան պահպանելու է չեզոքություն: Պրուսիան ապրիլի 10 (22)-ին գերմանական պետություններին հղած շրջաբերականում «պարսավել» է Ավստրիային պատերազմ սկսելու համար և դրա հետևանքների ամբողջ պատասխանատվությունը «իր վրայեն մեկզի կձգեր»: Ըստ ամսագրի՝ այսպես է սկսվել Ավստրո-իտալական պատերազմը, որը «օր է օր սաստկանալու վրայ է»¹⁷:

Հավաստի ներկայացնելով պատերազմի սկիզբը՝ «Մասյաց աղավնին» իրատեսորեն վերլուծում է նաև պատերազմի մեջ ներքաշված պետությունների հետապնդած նպատակը: Ամսագրի համոզմամբ՝ Պրեմոնտի թագավորությունը հոժարություն մտել է պատերազմի մեջ, որը ցանկալի է բոլոր իտալացիներին: Տարակույս չկա, գրում է «Մասյաց աղավնին», որ Պրեմոնտի թագավորության արտաքին քաղաքականության հիմքում ընկած է «ազատասիրական հոգին, որով Իտալիոյ ազատութեանը սրտանց կփափագի»: Ընդհատ ընկալելով իտալացիների պայքարի ազատագրական բնույթը՝ ամսագիրը միաժամանակ բացահայտում է Պրեմոնտի վերջնական նպատակը: Նրա կարծիքով Պրեմոնտը ձգտում է «օտարազգի լուծեն ազատվեն Իտալիոյ հյուսիսային նահանգները ու իրեն տերութեան հետ միանան և այնպես Եվրոպայի առաջնակարգ տերութիւններուն կարգը անցնի ...»¹⁸:

«Մասյաց աղավնին» նույնքան իրատեսորեն ներկայացնում է Ֆրանսիայի պատերազմի մեջ մտնելու գլխավոր պատճառը, որը համարում է «Նափոլեոնեան քաղաքականութեան ավանդութիւնները»¹⁹: Գ. Այվազովսկին դա բացատրում է նրանով, որ Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ի վարած քաղաքականության պայմաններում պատերազմը և պատերազմական փառքը ցանկացած բանից «ավելի հարմար են գաղղիացվոց միտքը զբաղեցնելու»: Նա ճիշտ է նկատում, որ Ղրիմի պատերազմից հետո Ֆրանսիայի ներքին քաղաքականությունում փոփոխություններ տեղի ունեցան²⁰: Ֆրանսիացիների «միտքը ներքին քաղաքական խնդիրներու զբաղած էր, հարկ էր այն անախորժ խնդիրներէն անոնց միտքը դարձնել, որ Նափոլեոնի կառավարութեան կերպին համեմատ չէին»²¹: Այդ նպատակով Նապոլեոն III-ը, ամսագրի համոզմամբ, «չատ ճարտարութեամբ իր օգտին գործածեց» իտալական խնդիրը և Սարդինական թագավորության հետ դաշինք կնքեց Ավստրիայի դեմ պատերազմելու համար: «Մասյաց

¹⁶ Տե՛ս История Италии, с. 220; История дипломатии. Сост. А. Лактионов. М., 2009, с. 520.

¹⁷ «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ Ա, էջ 17:

¹⁸ Նույն տեղում, էջ 18:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Տե՛ս նաև История Франции, т. 2. Отв. ред. А. 3. Манфред, М., 1973, с. 348–350.

²¹ «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ Ա, էջ 19:

աղավնին» նկատի ունի 1858 թ. հուլիսի 20-ին ֆրանսիական Պոմբյեր առողջարանում Նապոլեոն III-ի և Պիեմոնտի կառավարության ղեկավար կոմս Կամիլլո Կավուրի կնքած գաղտնի պայմանագիրը: Դրանով Ֆրանսիան պարտավորվում էր Պիեմոնտի հետ դաշնակցած պատերազմ սկսել Ավստրիայի դեմ, ազատագրել Լոմբարդիան և Վենետիկը ու դրանք հանձնել Պիեմոնտի թագավորությանը: Իր հերթին Պիեմոնտը պետք է Ֆրանսիային զիջեր երկու գավառ՝ Սավոյան և Նիցցայի դքսությունը²²: «Մասյաց աղավնու» խմբագիր Գ. Այվազովսկին հասկանում էր, որ Սարդինական թագավորությունը միայնակ ի վիճակի չէր պատերազմել Ավստրիայի դեմ և Ֆրանսիայի օգնության կարիքն ուներ: Նա հստակ բացահայտում է նաև Նապոլեոն III-ի հետապնդած նպատակը, ով ձգտում էր Ավստրիային դուրս մղել Ապենինյան թերակղզուց ու սատարել իտալական պետությունների միավորմանը Ֆրանսիայի հովանու ներքո²³:

Գ. Այվազովսկու իրատեսական գնահատականով²⁴ Ֆրանսիայի կայսրը օգնություն ցույց տալով փոքրիկ Պիեմոնտին՝ դրանով «ինքը զենքը անուանեց պաշտպան Իտալական ազգայնութեան, առաջուց գուշակելով թե ընկճեալ ազգի մը ազատութեան համար հրատարակած պատերազմովը ժողովրդին առջևը մասնավոր փառք մը կունենա և Իտալացի ազգասիրաց սիրտը կորսայ, և միանգամայն Գաղղիոյ ներքին քաղաքական խնդիրները կցրուին ու կըվերանան»²⁵:

Ամսագիրը նույնքան իրատեսորեն վերլուծում է նաև եվրոպական մյուս պետությունների դիրքորոշումը պատերազմի նկատմամբ²⁶: «Մասյաց աղավնու» համոզմամբ՝ Անգլիան թեև արտաքուստ հանդես է գալիս «Իտալիոյ ազատութեան» օգտին, բայց չի ցանկանում «Իտալիոյ մէջ Ավստրիոյ տիրապետութեան տեղը Գաղղիոյ տիրապետութիւնը բռնե», իսկ Պրուսիան մտավախություն ունի, որ Իտալիայում հաջողության հասնելուց հետո Ֆրանսիան Հռենոսում պատերազմ կսկսի և իր «սահմանները Գերմանիոյ մէկ մասին վրան ալ տարածուին»²⁷:

Անդրադառնալով 1859 թ. ապրիլի 29-ին սկսած պատերազմին՝ «Մասյաց աղավնին» գրում է, որ ավստրիացիներն անցան Լոմբարդիան և Սարդինական թագավորությանը բաժանող Տիչինո և Պո գետերը: Ֆրանսիացիներն էլ անցան Ալպյան լեռներն ու իրենց նավատորմն ուղարկեցին Վենետիկ: Ֆրանս-իտալական դաշինքի և Ավստրիայի միջև պատերազմում «Մասյաց աղավնու» անթաքույց համակրանքն իտալացիների կողմն է: Ամսագիրը գոհունակությամբ գրում է, որ 1859 թ. մայիս-հունիս ամիսներին ֆրանս-սարդինական զորքերը միմյանց հետևից հաղթանակներ տարան Մոնտեբելոյի, Պալեսթրոյի, Սան-Մարտինոյի, Մաջենտայի ու

²² Տե՛ս նաև История дипломатии, с. 519–520; История Италии, с. 219–220; История Франции, с. 351.

²³ Е. П р и с т е р. Краткая история Австрии. М., 1952, с. 405.

²⁴ Տե՛ս նաև История Франции, с. 351; История Италии, с. 220–221.

²⁵ «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ Ա, էջ 19:

²⁶ Տե՛ս նաև А. Дебидур. Նշվ. աշխ., էջ 168–169, История Италии, с. 220–221; История дипломатии, с. 502–503.

²⁷ «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ Ա, էջ 19:

Սուֆերինոյի մոտ և այդ «տեղերուն անունները անմահացուցին պատմութեան մէջ»²⁸: Ամսագիրն իրավացիորեն կարեւորում է հատկապես հունիսի 4-ին Մաջենտայի և հունիսի 24-ին՝ Սուֆերինոյի ճակատամարտերը, որտեղ ավստրիացիները բանակի հրամանատար կոմս Գյուլայի ապաշնորհութեան պատճառով մեծ կորուստներ ունեցան²⁹: Մաջենտայի պարտութեան արդյունքում «ավանակի հրամանատարութեան տակ կռիւղ ավստրիական առյուծները»³⁰ հունիսի 8-ին հանձնեցին Միլանը, իսկ Սուֆերինոյի հաղթանակից հետո, «Մասյաց աղավնու» կարծիքով, «Նապոլեոնը կարող էր այնուհետև մինչև Վենետիկ էրթալ մտնել»³¹:

Մինչ ֆրանսիական զորքը ցամաքով շարժվում էր դեպի Մինչիո գետը, իսկ նավատորմը սպառնում էր Վենետիկին, Ֆրանսիայի և Ավստրիայի կայսրերը հուլիսի 8-ին ձեռք բերեցին համաձայնութիւն զինադադար հաստատելու մասին, իսկ երեք օր անց հանդիպելով Վիլլաֆրանկա բնակավայրում՝ համաձայնեցին հաշտութեան պայմանագրի նախնական պայմանները³²: Եվրոպական մամուլից այս մասին ճիշտ տեղեկացված «Մասյաց աղավնին» ամիսոսանքով նշում է. «Իտալական պատերազմը որ այնչափ փառաւորութեամբ սկսեր էր, անակնկալ կերպով մը վերջացաւ առանց Իտալիոյ ազատութեան խնդիրը որոշելու»³³: Իրավացիորեն փաստելով իտալական պատերազմի անակնկալ ավարտը և Պիեմոնտի թագավորի թիկունքին ուխտադրժորեն Վիլլաֆրանկայում հաշտութեան պայմանագիր կնքելու վերաբերյալ երկու կայսրերի համաձայնութիւն ձեռք բերելը՝ «Մասյաց աղավնին» գրում է, որ հաշտութեան պայմանավորվածութեան համաձայն Լոմբարդիան անցնում է Սարդինական թագավորութեանը, Վենետիկը մնում է Ավստրիային, իսկ «իտալական միւս տէրութիւնները դաշնակցութիւն մը պիտի ձևանան՝ Գերմանական դաշնակցութեան նման»³⁴: Ամսագրի դիտարկմամբ՝ Վիլլաֆրանկայի համաձայնութիւնից «իտալացիք գոհ չեղան», իսկ համայն «Եվրոպա զարմացավ, վասնզի իտալական պատերազմը իր նպատակին չհասածի պես էր»³⁵:

«Մասյաց աղավնին» իրատեսորեն է գնահատում պատերազմի ավարտը, քանի որ եվրոպական պետութիւնները զարմացած էին ոչ միայն անակնկալ հաշտութեան պայմանագրի համար, այլև՝ Նապոլեոն III-ի առաջարկութիւնից: Պայմանագրի կնքումից հետո նա առաջարկեց եվրոպական մեծ տերութիւնների վեհաժողով հրավիրել և վերանայել 1815 թ. Վիեննայի վեհաժողովի որոշումը Իտալիայի վերաբերյալ: Վիլլաֆրանկայի համաձայնութիւնից իտալացիներն իսկապես դժգոհ էին, քանի որ

²⁸ «Մասյաց աղավնի», 1860, փետրվար, թիվ Բ, էջ 37:

²⁹ История Италии, с. 222; А. Дебидур. Նշվ. աշխ., էջ 172, История XIX века, т. 5, с. 275.

³⁰ Е. Пристер. Նշվ. աշխ., էջ 405:

³¹ «Մասյաց աղավնի», 1860, փետրվար, թիվ Բ, էջ 37:

³² История Италии, с. 223; История Франции, с. 351; А. Дебидур. Նշվ. աշխ., էջ 173:

³³ «Մասյաց աղավնի», 1860, փետրվար, թիվ Բ, էջ 37:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում:

Վենետիկը չէր միավորվում Պիեմոնտին, Տոսկանայի և Մոդենայի դքսերը վերադառնում էին իրենց գահերին, իսկ Հռոմի պապի գլխավորությամբ ստեղծվելու էր Իտալական համադաշնությունը³⁶: «Մասյաց աղավնին» ճիշտ էր տեղեկացված, որ Պիեմոնտի վարչապետ կոմս Կ. Կափուրը, դժգոհ մնալով համաձայնության պայմաններից, որպես բողոքի նշան, հուլիսի 13-ին հրաժարական է տվել: 1859 թ. ամռանը ընտրություններով ձևավորված Տոսկանայի, Մոդենայի ու Պարմայի ասամբլեաները հայտարարեցին, որ «այսուհետև իրենց դուքսերը չեն ընդունիր», իսկ Ռոմանիա նահանգն իրեն անկախ հռչակեց Հռոմի պապի իշխանությունից ու նրանք բոլորը «ուղեցին, որ Սարդինիոյ թագավորին հպատակ ճանչցուին»³⁷:

«Մասյաց աղավնու» խմբագիրը լավ գիտեր իտալական խնդրի էությունը: Նա իրավացիորեն գրում է, որ Վիկտոր Էմանուել II-ը վերոհիշյալ դքսությունների և նահանգի խնդրանքը ցանկանում է բավարարել միայն եվրոպական տերությունների համաձայնությունը ստանալուց հետո: «Մասյաց աղավնին» ճիշտ է կռահում Պիեմոնտի թագավորի մտադրությունը, ով այդ կապակցությամբ հարցրեց Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ի կարծիքը: Վերջինս Վիկտոր Էմանուել II-ի կողմից Փարիզ ուղարկված պատվիրակ Ֆ. Արեզեին հայտնեց, որ դեմ է այդ միավորմանը³⁸: «Մասյաց աղավնին» եվրոպական լրատվության վերլուծությունից եզրակացնում է, որ Նապոլեոն III-ը ցանկանում է իտալական խնդիրը վճռել Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում հրավիրված վեհաժողովում: Ավստրիան դեմ է եվրոպական վեհաժողով հրավիրելուն, իսկ Անգլիան մտադիր է հանդես գալ Վիրլաֆրանկայի համաձայնագրի դեմ ու պահանջել «Իտալիոյ ինքնագլուխ ազատությունը»: Ամսագրի խմբագրի կարծիքով Անգլիան շահագրգռված է, որ Իտալիայի հյուսիսում «գորաւոր և անկախ թագավորութիւն մը հաստատուի և պապին տերութեան մեջ արմատական բարեկարգութիւններ լինեն, այսինքն՝ պապին ձեռքեն ժամանակաւոր իշխանութիւնն առնուի»³⁹: Դրան դեմ են Ֆրանսիան ու Ավստրիան: Այս հարցը, թերևս, լուծվի եվրոպական դեսպանաժողովում, որի կայացումը «տարակուսանքի տակ» է: Շատերը գտնում են, որ այն առհասարակ տեղի չի ունենա: Անգլիական լրագրերն իտալացիներին խորհուրդ են տալիս, որ «դեսպանաժողովին վրայ յույս չունենան, այլ իրենց զենքովը միայն որոշեն իրենց խնդիրը»⁴⁰:

Ավստրիական կայսրության քաղաքական իրավիճակին քաջատեղյակ «Մասյաց աղավնու» խմբագիր Գ. Այվազովսկին գրում է, որ Ավստրիան այսպիսի ծանր կացություն ունեցել է նաև 1848 թ., բայց կարողացել է վտանգից խուսափել: Նրա կարծիքով 1859 թ. պատերազմը ցույց տվեց Ավստրիայի զինուժի տկարությունը: Դրա պատճառը Գ. Այվազովսկին հա-

³⁶ История Италии, с. 223; А. Дебидур. *Նշվ. աշխ.*, էջ 173, История XIX века, с. 276.

³⁷ «Մասյաց աղավնի», 1860, փետրվար, թիվ Բ, էջ 37:

³⁸ История Италии, с. 224; А. Дебидур. *Նշվ. աշխ.*, էջ 175:

³⁹ «Մասյաց աղավնի», 1860, փետրվար, թիվ Բ, էջ 37:

⁴⁰ Նույն տեղում, էջ 37–38:

մարում է այն, որ Ավստրիան պատերազմում է օտար երկրի տարածքում, երկու-երեք զորավոր բանակների դեմ, բայց «բուն գլխաւոր պատճառը» Ավստրիական կայսրութունում ապրող «զանազան ազգաց դժգոհութիւնն է»։ Ավստրիայի 37,3 մլն բնակչութունից 7,9 մլն՝ գերմանացիներ են, 15 մլն՝ սլավոններ, 5,4 մլն՝ հունգարացիներ, 5,4 մլն՝ իտալացիներ, մնացածները՝ այլ ազգեր։ Մոտ 500 հազարանոց զորքում միայն 128 հազարն են գերմանացիներ։ Ճշգրիտ տվյալներ ներկայացնելով ավստրիական բազմազգ կայսրության բնակչության և զորքի թվի մասին՝ «Մասյաց աղավնու» խմբագիրը զարմանք է հայտնում, թե ինչպե՞ս է Ավստրիան վստահում իր կազմում ապրող ժողովուրդներից հավաքագրած օտարազգի զինվորներին և «զանոնք առնուլ գործիք՝ իւր հպատակ ազգերը ընկճեալ պահելու համար»⁴¹։

Իտալական ազատագրական պատերազմի ընթացքը լուսաբանելիս «Մասյաց աղավնին» բազմիցս նշում է, որ իտալական խնդրի «մեծ դժվարութիւնը» Հռոմի պապին աշխարհիկ իշխանութունից զրկելը և Հռոմը Պիեմոնտի թագավորությանը միավորելն է։ Այդ նպատակին հասնելն իրավացիորեն համարելով իտալական ժողովրդի բաղձանքը⁴² «Մասյաց աղավնին» համերաշխութուն է արտահայտում իտալացիների հետ՝ նշելով, որ «ճշմարտութիւնը նոցա կողմն է»⁴³։ Ամսագիրն անթաքույց դրվատում է իտալացիների արդարացի նպատակների իրականացման համար ծավալած պայքարը և համաձայնվում նաև նրանց հետ, ովքեր պահանջում էին Ռոմանիա նահանգը դուրս բերել Պիոս IX պապի իշխանութունից և միացնել Պիեմոնտին, որպեսզի «Հռովմը միայն գերի մնայ պապին»⁴⁴։

1859 թ. օգոստոսի 10-ին իտալական դքսութիւնները և Ռոմանիան միավորվեցին ու կազմեցին Կենտրոնական Իտալիայի Ռազմական լիգա, որն ընդհանուր բանակ հավաքագրեց։ Սեպտեմբերի 3–24-ը Վիկտոր Էմմանուել II-ն ընդունեց դքսութիւնների պատվիրակութիւններին, տեղեկացավ հանրաքվեի արդյունքների մասին և չհայտարարելով, որ ճանաչում է դքսութիւնների միավորումը Պիեմոնտի հետ, պարտավորվեց պաշտպանել նրանց բնակչության պահանջը մեծ տերութիւնների առաջ։ Սեպտեմբերի 26-ին Հռոմի պապը դքսութիւնների հետ խզեց դիվանագիտական կապերը և սպառնաց կրոնական բանադրանքով։ Սեպտեմբերին Կենտրոնական Իտալիա եկած Ջուզեպպե Գարիբալդին ու Ջուզեպպե Մացցինին համախմբեցին հայրենասիրական ուժերը Պապական պետութիւն և Հարավային Իտալիա արշավանք իրականացնելու համար⁴⁵։

Ջ. Գարիբալդի զորավարի «կենդանագիրը տեսնելու ու պատմութիւնը գիտնալու» նպատակով «Մասյաց աղավնին» տպագրում է նրա գծանկարը և բավական հավաստի ներկայացնում կենսագրութիւնը։ Ամսագիրը գովաբանում է Սարդինիայի պատվավոր գերդաստաններից մեկից սերող

⁴¹ «Մասյաց աղավնի», 1860, ապրիլ, թիվ 7, էջ 69:

⁴² Տե՛ս նաև История Италии, с. 232, 245; А. Дебидур. Նշվ. աշխ., էջ 201:

⁴³ «Մասյաց աղավնի», 1860, ապրիլ, թիվ 7, էջ 69:

⁴⁴ «Մասյաց աղավնի», 1860, մայիս, թիվ 6, էջ 76:

⁴⁵ История Италии, с. 224; А. Дебидур. Նշվ. աշխ., էջ 176:

անվանի գործավարի «բնական ու բարոյական քաջութիւնը ու անխռով բարութիւնը», ընդգծում՝ «Հայրենեացն ազատութեան» համար նրա մասնակցութիւնը 1834 թ. ապստամբութեանը և 1848 թ. պայքարին: 1859 թ., երբ նորից սկսվեց «Իտալիոյ անկախութեան պատերազմը», Գ. Գարիբալդին իսկույն «խոփն ու մաճը թողուց, թուրը ձեռք առավ ու վազեց իւր հայրենեացն ազատութեանը օգնական լինել»⁴⁶:

1860 թ. հունվարի 21-ին Պիեմոնտի կառավարութիւնը կրկին գլխավորած Կ. Կավուրն ակտիվ բանակցութիւններ վարեց մեծ տերութիւնների հետ և կարողացավ համոզել Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ին Կենտրոնական Իտալիան Պիեմոնտին միավորելու հարցում: Դրա դիմաց պահանջեց Ֆրանսիային զիջել Նիցցան և Սափոյան: 1860 թ. մարտի 12–14-ը կայացած բանակցութիւններում Վիկտոր Էմմանուել II-ը և Նապոլեոն III-ն այդ մասին գաղտնի համաձայնագիր կնքեցին: Մարտին Կենտրոնական Իտալիայում, իսկ ապրիլին՝ Նիցցայում և Սափոյայում ֆրանսիական զորքի ճնշման տակ անցկացված հանրաքվեները տեղի «բնակչութեան կամքով» հավանութիւն տվեցին երկու միապետերի պայմանավորվածութեանը:

Իտալական տարածքները Ֆրանսիային զիջելը մեծ դժգոհութիւն առաջ բերեց իտալական հայրենասերների շրջանում: Ֆրանսիայի հետ կայացած գործարքի համար Զ. Գարիբալդին Իտալիայի Պատգամավորների պալատում պահանջեց Կ. Կավուրին պաշտոնանկ անել և պատասխանատվութեան ենթարկել, սակայն պալատում մեծամասնութիւն կազմող չափավոր լիբերալները հավանութիւն տվեցին Ֆրանսիայի հետ ձեռք բերված համաձայնութեանը⁴⁷:

1860 թ. ապրիլի 4-ին Պալերմոյում, իսկ 7-ին՝ Ջենովայում հայրենասիրական ուժերն ապստամբութիւն բարձրացրին, որը ըստ «Մասյաց աղավնու», Իտալիան կրկին պլեկոծեց: Ապրիլի 15-ին Ջենովա եկած Զ. Գարիբալդին, հաղթահարելով Պիեմոնտի կառավարութեան հարուցած խոչընդոտները, արշավանք ձեռնարկեց դեպի Սիցիլիա: «Մասյաց աղավնին» գրում է, որ Սիցիլիայում նրա գլխավորած ապստամբութիւնը գնալով մեծացավ, և «Եվրոպայի նշանաւոր քաղաքական դիպլոմատներուն կարգը անցավ»⁴⁸: Ամսագիրը դա բացատրում է նրանով, որ ոչ միայն հասարակ ժողովուրդը Զ. Գարիբալդու կողմն անցավ, այլև ազնվականներն ու եկեղեցականները: Չանդրադառնալով Զ. Գարիբալդու «Հազարյակի» արշավանքի մանրամասնութիւններին՝ «Մասյաց աղավնին» փաստում է «Իտալիոյ ազատութեան սիրովը վառուած» Զ. Գարիբալդի գործավարի հաղթանակները Սիցիլիայում և Նեապոլի թագավորի 50 հազար կանոնավոր զորքի նկատմամբ, որը փախուստի է դիմել: Իտալացիների պայքարին ուշադրութեամբ հետևող խմբագրի բնութագրմամբ՝ պատերազմում «այնչափ քաջութիւնն ու հնարագիտութիւն» դրսևորած Զ. Գարիբալդին «զարմանալի ազդեցութիւն ունի զորաց վրա իւր վիթխարհի հասակովն և ուժովը,

⁴⁶ «Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ Գ, էջ 52:

⁴⁷ История Италии, с. 226; А. Дебидур. *Նշվ. աշխ.*, էջ 180–183, История XIX века, с. 278–279.

⁴⁸ «Մասյաց աղավնի», 1860, հունիս, թիվ Զ, էջ 103:

արիական կերպարանքով»⁴⁹: Նա ճիշտ է նկատում, որ Ջ. Գարիբալդին այս անգամ իր հայրենակիցներին հորդորում է Պիեմոնտի թագավորի հետ միաբանվել⁵⁰, որովհետև իրենց պայքարը «Իտալիոյ թշնամաց դեմ և Իտալիոյ համար է»: Անգամ Ջ. Մացցինին, շարունակում է ամսագիրը, որ Իտալիան հանրապետություն հռչակելու կողմնակից է, «այժմ ամենքը կյորդորե ոտքի ելլելու Փիեմոնթին հետ միանալու մտքով»⁵¹: Ճիշտ ընկալելով, որ Ջ. Գարիբալդու Սիցիլիական արշավանքն ընթացավ «Իտալիա և Վիկտոր Էմմանուել» կարգախոսով⁵² «Մասյաց աղավնին» ընդգծում է իտալական ժողովրդի ոգևորությունը: «Բոլոր Իտալիան, – գրում է ամսագիրը, – անպատմելի ցնծութեան ու շարժման մէջ է Կարիպալտին ունեցած հաջողութեանց վրայ և մինչև Նափոլիի բնակիչներն անգամ գրկաբաց կսպասեն նորա գալուն»⁵³:

Ըստ ամսագրի՝ Ջ. Գարիբալդու անակնկալ հաջողությունից հետո կարծիք տարածվեց, որ դա տեղի ունեցավ Պիեմոնտի թագավորի հորդորով և օգնությամբ: «Մասյաց աղավնին» իրավացիորեն գրում է, որ կոմս Կավոլերը պաշտոնապես հերքեց այդ կարծիքը⁵⁴ և միաժամանակ հավատացրեց Ֆրանսիայի կայսրին, որ Պիեմոնտը չի խրախուսում Ջ. Գարիբալդու արարքը՝ «բայց անոր արգելք ընել այլ չկրնար»⁵⁵:

«Մասյաց աղավնու» դիտարկմամբ՝ եվրոպական պետություններից ամենից շատ Անգլիան է խրախուսում Ջ. Գարիբալդու պայքարը: Անգլիացիները, հիրավի, ամեն կերպ օգնություն են ցույց տալիս նրան, «թեպետ հայտնի է, թե առանց իրենց շահը մտածելու չեն աշխատիր այս բանիս մեջ»⁵⁶: Ընդհանուր առմամբ՝ ճիշտ ընկալելով անգլիական կառավարության դիրքորոշումը Ջ. Գարիբալդու արշավանքի և իտալացիների պայքարի նկատմամբ⁵⁷, «Մասյաց աղավնին» ցավով արձանագրում է, որ Իտալիան կրկին հայտնվել է պատերազմի հորձանուտում. «Դարձեալ պատերազմի որոտմունքներն ու կայծակները կգոռան այն գեղեցիկ երկնքին երեսը և դարձեալ նորա որդիքը իրենց արեամբ կոռոզեն Իտալիոյ դաշտերը»⁵⁸:

Սիցիլիան ազատագրելուց հետո անդրադառնալով Իտալիայում ստեղծված վիճակին՝ «Մասյաց աղավնին» գրում է, որ ներկայումս Նեապոլի բնակիչներն ու իտալական ողջ ժողովուրդը «հենց աչքը և հույսը դարձուցած էին իրենց հրաշալի ազատարարի՝ այսինքն Կարիպալտին վրայ»⁵⁹:

⁴⁹ «Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ 9, էջ 52:

⁵⁰ *Տե՛ս նաև* История Италии, с. 229–236; А. Дебидур. *Նշվ. աշխ.*, էջ 189, 191–192:

⁵¹ «Մասյաց աղավնի», 1860, հունիս, թիվ 2, էջ 103:

⁵² *Տե՛ս* История Италии, с. 228; А. Дебидур. *Նշվ. աշխ.*, էջ 194:

⁵³ «Մասյաց աղավնի», 1860, հունիս, թիվ 2, էջ 105:

⁵⁴ История Италии, с. 232–233; А. Дебидур. *Նշվ. աշխ.*, էջ 189, 192–193:

⁵⁵ «Մասյաց աղավնի», 1860, հունիս, թիվ 2, էջ 103:

⁵⁶ *Նույն տեղում*:

⁵⁷ А. Дебидур. *Նշվ. աշխ.*, էջ 190–191:

⁵⁸ «Մասյաց աղավնի», 1860, հունիս, թիվ 2, էջ 103:

⁵⁹ «Մասյաց աղավնի», 1860, հոկտեմբեր, թիվ 6, էջ 165:

Ամսագիրը հիացմունքով է պատմում Ջ. Գարիբալդու մասին, ով, կարճ ժամանակում սակավաթիվ գործով, մեծ դժվարություններ հաղթահարելով, տիրեց Սիցիլիային և սկսեց «Մարտենիոյ թագավորին հետ անոր մեկ հավասարին պէս բանագնացութիւն ու թղթակցութիւն ընել»⁶⁰: Ամսագիրն իրավացի է. Վիկտոր Էմմանուել II-ը «հանուն Իտալիայի շահի» Ջ. Գարիբալդուց պահանջեց հրաժարվել Նեապոլի վրա արշավանքի մտադրութիւնից: Վերջինս չենթարկելով թագավորի հորդորին՝ նրան հղած նամակում գրում է. «Եթե ես հիմա, իտալական ժողովրդի կամքին հակառակ, տատանում դրսևորեմ, ապա կըավաճանեմ իմ պայքարին և կվնասեմ Իտալիայի սուրբ գործին»⁶¹:

«Մասյաց աղավինին» հստակ հասկանում էր Ջ. Գարիբալդու մտադրութիւնը, ով Իտալիայի սուրբ գործը համարում էր երկրի ամբողջական միավորումը և միասնական Իտալական պետութիւն ստեղծումը: Ըստ ամսագրի՝ դա բոլոր իտալացիների ցանկութիւնն էր: «Ամեն իտալացի միտքը դրած էր, — գրում է «Մասյաց աղավինին», — և դրած է, որ Կարիպալտին յաղթական ընթացքը այն ժամանակը միայն պիտի վերջանայ, երբոր Հռոմն ալ առնու, երբոր Վենետիկոյ ալ տիրէ և այսքան ժամանակէ ի վեր փափաքելի եղած Իտալիոյ միութիւնն ու կատարյալ ազատութիւնը վերջապէս տեսնուի»⁶²: Ամսագիրը միանգամայն ճիշտ ներկայացնում է իտալացիների պայքարի վերջնական նպատակը և կռահում, որ Վիկտոր Էմմանուել II-ը ցանկանում է օգտվել Ջ. Գարիբալդու հաղթանակից ու ազատագրված Սիցիլիան միացնել Պիեմոնտին, այնուհետև նաև՝ «Իտալիոյ ուրիշ կտորները»⁶³:

Իրեն Սիցիլիայի բռնապետ հռչակած Ջ. Գարիբալդին, կռահելով թագավորի մտադրութիւնը, Սիցիլիայից վտարեց նրա ներկայացուցիչ Ջ. Լա Տարինային⁶⁴ և, ականջալուր չլինելով Վիկտոր Էմմանուել II-ի ու Կ. Կավուրի հորդորներին, արշավանք ձեռնարկեց Նեապոլի վրա: Ջարմանային այն է, գրում է ամսագիրը, որ Ջ. Գարիբալդին ազատութիւն ձեռք բերելու իտալացիների հույսն «ամենայն յաջողութեամբ և փառաւորութեամբ կատարելու հետ է»⁶⁵: Պարբերականը պատմում է, որ Ջ. Գարիբալդին գրավեց Ռեջիո քաղաքը և շարունակելով իր հաղթարշավը՝ սեպտեմբերի 9-ին «փառավորապէս մտավ Նեապոլ»:⁶⁶ Դրանից երկու օր առաջ Նեապոլի Տրանցիակ II թագավորը «հուսահատաբար» քաշվել էր Գաետա ամրոցը՝ «իր տկարութիւնը ազատական զորավարին քաջութեանը հետ չափելով»⁶⁶: «Մասյաց աղավնու» տեղեկութեամբ՝ Նեապոլի բնակիչները ուրախութիւնից երեք օր ու գիշեր այնպիսի հանդիսութիւններ⁶⁷ և ցնծութիւններ էին անում, որոնք երբեք չէին եղել քաղաքում Բուրբոնների տիրապե-

⁶⁰ Նույն տեղում:

⁶¹ История Италии, с. 233.

⁶² «Մասյաց աղավնի», 1860, հոկտեմբեր, թիվ Ժ, էջ 165:

⁶³ Նույն տեղում:

⁶⁴ История Италии, с. 232; Дж. Канделоро. Նշվ. աշխ., էջ 149:

⁶⁵ «Մասյաց աղավնի», 1860, հոկտեմբեր, թիվ Ժ, էջ 165:

⁶⁶ Նույն տեղում, էջ 162:

⁶⁷ Տե՛ս նաև История Италии, с. 235; История XIX века, с. 282.

տուլթյան տակ անցնելուց հետո: Ամսագրի համոզմամբ՝ Նեապոլի ազատագրումից հետո Ջ. Գարիբալդին անպայման պիտի արշավի Հռոմի վրա, որի կապակցությամբ լուրջ տարաձայնություններ ունի Վիկտոր Էմմանուել II-ի հետ: Պարբերականը ճիշտ է կռահում Ջ. Գարիբալդու մտադրությունը, ով առաջվա պես ցանկանում է Իտալիան ազատագրել առանց Ֆրանսիայի օգնության, ապա Վիկտոր Էմմանուել II-ին հանձնել «բոլոր Իտալիոյ թագավորութիւնը»: Մինչդեռ Պիեմոնտի թագավորը, ոգևորված Նապոլեոն III-ի՝ «Fate prosto» «Գործեք արագ» հորդորից⁶⁸, «Կիտլթար օր մը առաջ իր ձեռքն առնելու Կարիպալտիին սկսած արշավանքին պտուղները, Գարիբալդի օգնութեամբ, հավանութեամբն ու պաշտպանութեամբը»⁶⁹:

«Մասյաց աղավնին», անդրադառնալով իտալական խնդրի շուրջը ստեղծված իրադրությունը, գրում է, որ եթե գործերի ընթացքն այդպես շարունակվի, ապա Ավստրիան կարող է կորցնել Վենետիկը: Ֆրանսիան Հռոմի մեջ ավելացնում է իր գորքի քանակը, բայց Նապոլեոն III-ի «բուն միտքը ինչ լինելը դեռ հայտնի չէ»: Անգլիան առաջվա պես հանդես է գալիս Իտալիայի ազատության օգտին, բայց և այնպես ցույց է տալիս, որ «Վենետիկոյ ազատիլը իրեն բանին ձեռք չիտար»: Ամսագիրը գրում է Եվրոպայի հյուսիսային պետությունների դիրքորոշումը, պարզ կղառնա առաջիկայում Վարշավայում կայանալիք հանդիպման ժամանակ: Սակայն այդ պետությունների կողմից ինչ էլ որ որոշվի, եզրակացնում է «Մասյաց աղավնին», «այս հայտնի է, որ Եվրոպայի այժմուս վիճակեն մեծամեծ փոփոխություններ կգուշակեն»⁷⁰:

Բավական իրատեսորեն ներկայացնելով եվրոպական պետությունների դիրքորոշումը իտալական խնդրի հարցում⁷¹ «Մասյաց աղավնին» նկատում է, որ 1860 թ. նոյեմբերի 7-ին Սարդինական թագավորության զորքերի Նեապոլ մտնելով, «Եվրոպան շարժ ելավ»: Ամսագրի հոգևածագիրը դա բացատրում է նրանով, որ մինչ այդ Իտալիայի հարավում պայքարողը միայն Ջ. Գարիբալդին էր, իսկ Սարդինական թագավորությունը «ոչ խուսքով և ոչ գործով» Իտալիայում տեղի ունեցած իրադարձություններին չէր խառնվում: Սակայն, երբ Վիկտոր Էմմանուել II-ը, դիվանագիտական կանոններն անտեսելով, միաբանվեց գարիբալդիականների հետ և «իտալական հեղափոխութեան ամեն գլխավոր թելերը ձեռք առավ», եվրոպական պետությունները սկսեցին խոսել այն մասին, թե Սարդինական թագավորությունը դրանով եվրոպական պետությունների դաշնագրություններն ավերեց ու նրանց «իրավունքները ոտքի տակ առավ»⁷²:

Ի հակադրություն եվրոպական պետությունների այդ հայտարարությունների՝ «Մասյաց աղավնին» մեջբերում է Պիեմոնտի խորհրդարանում կոմս Կ. Կավուրի ճառից մի հատված: Նա նշում է, որ Նեապոլի և Հռոմի մեջ տեղի ունեցած դեպքերը չի կարելի գնահատել դիվանագիտության

⁶⁸ История XIX века, с. 283; А. Дебидур. Նշվ. աշխ., էջ 194:

⁶⁹ «Մասյաց աղավնի», 1860, հոկտեմբեր, թիվ Ժ, էջ 165:

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ Տե՛ս А. Дебидур. Նշվ. աշխ., էջ 186–190:

⁷² «Մասյաց աղավնի», 1860, նոյեմբեր, թիվ ԺԱ, էջ 181:

մեջ ընդունված կանոններով, քանի որ Նեապոլի թագավորն առանց պատերազմելու լքել է մայրաքաղաքն ու փախել, իսկ նրա կառավարությունը բարոյապես մահացել է: Ամսագրի գնահատմամբ՝ իրադարձություններն այն աստիճան էին հասունացել իտալիայում, որ Սարդինական թագավորությունը «կամ ազգային շարժման դէմ պիտի կենար և անով բոլոր իտալիան իրեն դէմ պիտի հաներ և կամ ազգին գլուխը պիտի անցներ ու պիտի առաջնորդներ անոր մեծ նպատակին հասնելու, որ էր իտալիոյ միութիւնը: Սարտենիան հարկավ այս երկրորդը պիտի ընտրեր»⁷³:

«Մասյաց աղավին» հերթական անգամ անաչառ գնահատական է տալիս իտալական ժողովրդի ազգային պայքարին: Ամսագիրն արդարացնում է Վիկտոր Էմմանուել II-ի գործողությունները, ով ազգի գլուխ կանգնած՝ իտալացիներին առաջնորդում է ազգային միավորման, որը նրանց մեծ նպատակն է: Այս միտքը հիմնավորելու համար պարբերականը հղում է անում նաև կառավարության ղեկավար Կ. Կավուրին, ով խորհրդարանում հայտարարել էր. «Մեր ջանքն ու աշխատությունն այս է, որ Հռոմը մայրաքաղաք ընեմք իտալիոյ թագավորութեանը»⁷⁴:

Ամսագիրն իրավացի է Կ. Կավուրի դիրքորոշման հարցում, քանզի իտալիայի միավորման անհրաժեշտությունը նա բազմիցս հիմնավորում էր ոչ միայն խորհրդարանում, այլև՝ 1860 թ. նոյեմբեր-դեկտեմբերին քաղաքական մի քանի գործիչների հղած նամակներում: Այս հարցում նա կարևորում էր իտալական խորհրդարանի դերը⁷⁵:

«Մասյաց աղավնու» խմբագիր Գ. Այվազովսկու կարծիքով Պիեմոնտի ղեկավարներն այդպիսի համարձակ հայտարարություններ չէին անի, եթե վստահ չլինեին, որ Ֆրանսիան և Անգլիան «կհավնեն իրենց բռնած ճամբուն»: Եվրոպական պետություններից միայն Ավստրիան կարող է հանդես գալ Պիեմոնտի դեմ և «հարկավ առիթի կնայի, որ իւր վրեժը առնու, եթե կարենա»⁷⁶: Գ. Այվազովսկին հասկանում էր, որ ստեղծված իրավիճակում իտալիայի միավորման ջերմեռանդ կողմնակից Ջ. Գարիբալդին իր հայրենակիցներին ուղղորդում է համախմբել Պիեմոնտի թագավորի շուրջը: Նա տեղեկացված էր Նեապոլի ազատագրումից հետո Կապրերա կղզի քաշված Ջ. Գարիբալդու՝ 1860 թ. նոյեմբերի 5-ին իր հայրենակիցներին հղած նամակի բովանդակությունից: Գրում էր. «Վիկտոր Էմմանուել թագավորը ամենահարկավոր է իտալիոյ համար», և բոլոր նրանք, ովքեր ցանկանում են «Իտալիոյ միութիւնը պետք է նորա ետևեն երթայ»⁷⁷: Ջ. Գարիբալդին ի սրտե փափագում էր, որպեսզի բոլոր իտալացիները իր նման ցանկանան, որ մինչև 1861 թ. մարտ ամիսը Վիկտոր Էմմանուել II-ը 500 հազար զորքի գլուխ կանգնի: Ջ. Գարիբալդու այս խոսքերից «Մասյաց աղավին» եզրակացնում է, որ «նա և Վիկտոր Էմմանուելը մտադիր չեն

⁷³ Նույն տեղում:

⁷⁴ Նույն տեղում:

⁷⁵ Дж. Канделоро. Նշվ. աշխ., էջ 141–148:

⁷⁶ «Մասյաց աղավին», 1860, նոյեմբեր, թիվ ԺԱ, էջ 181:

⁷⁷ «Մասյաց աղավին», 1861, 15 հունվարի, թիվ Բ, էջ 22:

իրենց գեները վայր դնելու, մինչև որ Հռոմա և Վենետիկոյ խնդիրները չլուծուին չվերջանան»⁷⁸:

Ամսագիրը Իտալիայի միավորման խոչընդոտները համարում է Հռոմի, Վենետիկի խնդիրները և Նեապոլի թագավորի շարունակվող դիմադրությունը: Ըստ ամսագրի՝ Հռոմի խնդիրն այն է, որ Պապը չի ցանկանում հրաժարվել իր աշխարհիկ իշխանությունից: Վենետիկի խնդիրը Հռոմից բարդ է, որովհետև Ավստրիան չի պատրաստվում Վենետիկից հրաժարվել կամ այն վաճառել: Ամսագիրը ցավում է, որ Գաետա ամրոցում փակված Նեապոլի Ֆրանցիսկ II թագավորը շարունակում է «անօգուտ դիմադրություն» ցույց տալ, քանի որ դրանից «խեղճ Իտալիոյ ... ուժը զուր տեղը կպակասի և որդուց արիւնը վայրապար կլթափի»⁷⁹: «Մասյաց աղավնին» բացահայտ ցանկություն է հայտնում, որ Նեապոլի թագավորը դադարեցնի դիմադրությունը և «անիմաստ խռովությունը» երկրի մյուս գավառներում, որտեղ նրա լրտեսները գրգռում են ժողովրդին: Ամսագրի կարծիքով՝ չնայած թագավորն իր իշխանությունը պահելու համար պատրաստ է մինչև վերջին շունչը պատերազմել, բայց և այնպես «չատ տարակուսական» է, որ թագավորական Գաետա ամրոցի անկումով Իտալիայում խաղաղություն կհաստատվի: 1861 թ. փետրվարի 13-ին Գաետա ամրոցի անձնատուր լինելը Պիեմոնտի ուժերին⁸⁰ «Մասյաց աղավնու» կարծիքով իտալական խնդրի վերջնական լուծումը չէ, քանի դեռ Հռոմի և Վենետիկի կարգավիճակը ճշտված չէ: Պարզ չէ, թե այդ խնդիրը ինչպես պետք է լուծվի՝ «խաղաղութեամբ ու խոհեմութեամբ, թէ՛ գեներով ու արեան հեղեղներով»: Հետևաբար, եզրակացնում է ամսագիրը, շատ դժվար է, որ «կատարեալ հանդարտութիւն գտնի Իտալիան, մանավանդ բոլոր Եվրոպան»⁸¹:

«Մասյաց աղավնին» 1859 թ. իտալական պատերազմի ամենից «գեղեցիկ պտուղը» համարում է «Իտալիոյ ազատիլը՝ զօրանալը և միանալը ընդ գաւազանաւ հայրենասէր թագաւորին»⁸²: Իտալական ազատագրական պայքարում ամսագիրը կարևորում է Վիկտոր Էմմանուել II-ի դերը, ով «թշվառ պարագաներու մէջ» ստանձնեց գահը, արիաբար տարավ «հայրենաց աղետքները», չվհատվեց և ստանձնեց հայրենիքը կործանումից փրկելու գործը: Ամսագրի բնութագրմամբ՝ լավ դաստիարակված, կրթված, «սուր գործածելու գիտություն» ունեցող Վիկտոր Էմմանուել II-ը «ժամանակիս ամենէն անուանի թագաւորներէն մեկն է, որոյ անունը Եւրոպիոյ արդի պատմութեանը մեջ պատուաւոր տեղի մը պիտի ունենայ»⁸³:

1861 թ. հունվարի 27-ին ձևավորված իտալական խորհրդարանը մարտի 17-ին Վիկտոր Էմմանուել II-ին ընտրեց Իտալիայի թագավոր⁸⁴, որը «Մաս-

⁷⁸ Նույն տեղում:

⁷⁹ «Մասյաց աղավնի», 1861, 1 փետրվարի, թիվ 9, էջ 35:

⁸⁰ St'ս Дж. Канделоро. Նշվ. աշխ., էջ 155, История XIX века, с. 284; А. Дебидур. Նշվ. աշխ., էջ 200:

⁸¹ «Մասյաց աղավնի», 1861, 1 մարտի, թիվ 6, էջ 58:

⁸² «Մասյաց աղավնի», 1861, 15 մայիսի, թիվ 4, էջ 119:

⁸³ Նույն տեղում, էջ 117:

⁸⁴ История Италии, с. 237; Дж. Канделоро. Նշվ. աշխ., էջ 153–158, История XIX века, с. 286; А. Дебидур. Նշվ. աշխ., էջ 182:

յաց աղավնին» համարում է տարվա «անմոռանալի անցքերեն մեկը»⁸⁵: Գոհունակություն հայտնելով, որ Վիկտոր Էմմանուել II-ի թագավորությունը ճանաչել են եվրոպական մի շարք երկրներ՝ պարբերականը համոզմունք է հայտնում իտալական թագավորության հետագա հզորացման կապակցությամբ: «Տարակոյս չկա, – գրում է ամսագիրը, – որ Իտալիոյ նոր թագաւորութիւնը հետզհետէ աւելի ալ զօրանայ և բոլորովին միանայ՝ յաղթանակելով Աւստրիոյ տէրութեան և Հռովմայ պապին ըրած յամառութեանցը վրայ: Զայս կյուսան իտալացիք և այսմ կփափագին ամենայն ազատասերք»⁸⁶:

Իտալական թագավորության հռչակումով տեղի ունեցավ Ապենինյան թերակղզու պետությունների քաղաքական միավորում, բայց հայրենիքի վերականգման խնդիրը մնաց չլուծված: 1861 թ. մարտի 27-ին Կ. Կավուրը թեև խորհրդարանին դրդեց Հռոմը հայտարարել Իտալիայի մայրաքաղաքը⁸⁷, այնուամենայնիվ, Պիոս IX պապը չէր պատրաստվում հրաժարվել իր տիրույթից: Հռոմի և Վենետիկի հարցը մշտապես հուզում էր «Մասյաց աղավնուն»: Ամսագրին մտահոգում էր, թե ինչպես են իտալացիները հաղթահարելու Հռոմի պապի համառությունը, և ինչ ճանապարհով պիտի ազատագրվի Վենետիկը՝ խաղաղությամբ ու խոհեմությամբ, թե պատերազմով և արյուն թափելով: Քանի դեռ Հռոմի խնդիրն անորոշ վիճակում է գտնվում, Իտալիայի խորհրդարանում շարունակում է ամսագիրը՝ «զորավոր ձայներ կբարձրանան անդադար», որպեսզի Հռոմը հայտարարվի Իտալիայի մայրաքաղաք, ու Ֆրանսիական զորքերը դուրս բերվեն այնտեղից: Ամսագիրը վկայակոչում է կոմս Կ. Կավուրին, ով այս կապակցությամբ խորհրդարանում հայտարարել է. «Կերթամք մենք Հռոմ, անտարակույս, բայց Գաղղիոյ հավանությունն ընդունելեն ետև»⁸⁸:

«Մասյաց աղավնու» պատկերավոր արտահայտությամբ՝ 1861 թ. գարնան դռները բացվելով «Եվրոպայի քաղաքական մթնոլորտը չբացվեց», որովհետև Հռոմի ու Վենետիկի խնդիրը չլուծվեց: Ամսագիրն ափսոսանքով հայտնում է, որ իր կյանքը «ազատ, միացեալ և զօրաւոր ընելու Իտալիային նվիրած» կոմս Կ. Կավուրը չտեսավ այդ օրն ու 1861 թ. հունիսի 2-ին կնքեց իր մահկանացուն: «Մասյաց աղավնին» Կ. Կավուրին անվանում է «իտալական ինքնիշխանութեան գլխաւոր պատճառներէն մէկը»: Իտալիայի յուրաքանչյուր քաղաք ու գյուղ այս օրերին սգում է այդ «հռչակաւոր մարդու մահը», իսկ բոլոր լրագրերը գովաբանում են «այն հայրենասէր քաղաքագետին, այն խոհական խորհրդականին, այն գործունեայ անխոնջ իշխանավորին»⁸⁹:

«Մասյաց աղավնու» խմբագիր Գ. Այվազովսկու համոզմամբ՝ Դանթեի, Մաքիավելլու, Գալիլեյի հայրենիք Իտալիայում երբեք «ոչ տաղանդաւոր մարդիկ կպակասին և ոչ հայրենասիրութիւն ու հասարակաց օգտին համար անձնանուէր նահատակութիւն»: Նա այդպիսին համարում է

⁸⁵ «Մասյաց աղավնի», 1862, 15 հունվարի, թիվ Բ, էջ 21:

⁸⁶ «Մասյաց աղավնի», 1861, 15 մայիսի, թիվ Ժ, էջ 119:

⁸⁷ Տե՛ս История XIX века, с. 286.

⁸⁸ «Մասյաց աղավնի», 1862, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 130:

⁸⁹ «Մասյաց աղավնի», 1861, 1 հունիսի, թիվ ԺԳ, էջ 156:

վարչապետի պաշտոնում Կ. Կավուերին փոխարինած «մեծանուն քաղաքագետ» Բեստոլինո Ռիկազոլին: Ըստ ամսագրի հավաստի լրատվության⁹⁰ իտալացիները շատ են ուրախացել, որ նա պաշտոնապես հայտարարել է. «Իտալիան իրաւունք ունի իւր միութիւնը ամբողջացնելու»⁹¹:

«Մասյաց աղավնին» վարչապետի հայտարարութիւնն ընկալում է Վենետիկն ու Հռոմը Իտալիային միավորելու ուղերձ և հույս հայտնում, որ այդ գործն այնպես պետք է իրականացնել՝ «ոչ Իտալիան վրդովի և ոչ Եւրոպան»: Այնուհետև, շարունակում է ամսագիրը, հարկավոր է Փրանսիայից պահանջել ժամ առաջ իր զորքը դուրս բերել Հռոմից⁹²: «Մասյաց աղավնին» չնայած համոզված էր, որ վարչապետ Բ. Ռիկազոլին կշարունակի Իտալիայի միավորման գործը, բայց նոր իրավիճակում դարձյալ մեծ հույսեր է կապում Ջ. Գարիբալդու հետ: Գ. Այվազոլիսին մտորում է, թե արդյոք առաջիկայում Ջ. Գարիբալդին պայքար կսկսի Վենետիկի համար: Նա համոզված էր՝ իտալացիները պատրաստ են «իրենց դիւցազնին մէկ խօսքովը նորա ետևէն ամեն տեղ երթալու», բայց Պիեմոնտի կառավարութիւնը գտնում է, որ «դեռ պատերազմը սկսելու ժամանակը չէ»⁹³:

«Մասյաց աղավնին» կարծիք է հայտնում, որ 1861 թ. Հռոմի և Վենետիկի միավորվելը Իտալական թագավորութիւնի հետ չի կայանա Անգլիայի վարած արտաքին քաղաքականութիւնի պատճառով: Ամսագիրն այս հետևութիւնը հանգում է՝ ելնելով Անգլիայի վարչապետ լորդ Պալմերսթոնի այն հայտարարութիւնից, որ Եվրոպայում առկա խնդիրները կարող են լուծվել միայն հինգ-վեց պատերազմների և արյուն թափելու գնով: Իտալական խնդրի լուծումը կապելով այդ հինգ-վեց պատերազմներից մեկի հետ՝ ամսագիրը եզրակացնում է, որ Անգլիայի այս քաղաքականութիւնի պատճառով Հռոմի և Վենետիկի՝ «Իտալիայի հետ միանալուն խնդիրը դադրեցաւ՝ հակառակ Կարիպալտիին կուսակիցներուն, այսինքն գրեթե բոլոր Իտալացւոց բաղձանացը»⁹⁴:

Առանց Հռոմի ու Վենետիկի Իտալիայի միավորումը և «մեկ հզոր թագաւորութիւն մը ձևանալը» «Մասյաց աղավնին» համարում է «մեծ գործողութիւն»⁹⁵, որը չի ավարտվում Հռոմի պապի դիմադրութիւնի ու Ավստրիայի՝ զինված նախապատրաստութիւններ իրականացնելու պատճառով: Ըստ ամսագրի՝ Ավստրիան, անտեսելով կայսրութիւնի ներքին լարված վիճակը, Վենետիկն ամեն գնով ամրացնում է, իսկ իտալացիները Վենետիկն ազատագրելու համար «մեծամեծ պատրաստութիւններ» են տեսնում, «ուստի զարմանք չէ թէ որ յանկարծ սկսի լսուիլ Եւրոպայի մէջ զէնքի շառաչմունքը»⁹⁶: Ամսագրի դիտարկմամբ՝ Իտալիան շարունակում է մնալ «մեծ անհանգստութիւնի մեջ», քանի որ Հռոմի պապը իշխանութիւնից չի հրաժարվում, Փրանսիական զորքը Հռոմից դուրս չի գալիս, իսկ

⁹⁰ Տե՛ս նաև Д.ж. Канделоро. Նշվ. աշխ., էջ 180:

⁹¹ «Մասյաց աղավնի», 1861, 1 հունիսի, թիվ ԺԳ, էջ 156:

⁹² Նույն տեղում:

⁹³ «Մասյաց աղավնի», 1861, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 130:

⁹⁴ «Մասյաց աղավնի», 1861, 15 հունիսի, թիվ ԺԲ, էջ 144:

⁹⁵ «Մասյաց աղավնի», 1862, 15 հունվարի, թիվ Բ, էջ 21:

⁹⁶ «Մասյաց աղավնի», 1861, 1 հունիսի, թիվ ԺԳ, էջ 156:

Ավստրիան Վենետիկը չի զիջում: Ստեղծված իրադրությունում իտալացիներն իրենց «կատարյալ ազատությունը» սպասում են Կապրերայում գտնվող Ջ. Գարիբալդուց: Զարմանալի մարդը, գրում է ամսագիրը, իր հայրենակիցներին կոչ է արել գեներ վերցնել և խոստացել, որ առաջիկայում իրենց «ազատութեան տօնը կտօնեն»⁹⁷:

Վերլուծելով Իտալիայից ստացված լուրերը՝ «Մասյաց աղավինին» գրում է, որ Բ. Ռիկազոլիի փոխարեն Ուրբանո Ռատացցիի վարչապետ դառնալն Իտալիայի ներկա և գալիք գործողությունների համար այնքան նշանակություն չունի, որքան Ջ. Գարիբալդու շրջագայությունը երկրի տարբեր քաղաքներում, որի ժամանակ նա պատերազմական հռետորաբանություն է անում⁹⁸: Քանի որ Ջ. Գարիբալդին «Իտալիոյ ազատութեանը և միութեանը կաշխատի», եզրակացնում է ամսագիրը, Իտալիայում ցանկացած պահի կարելի է սպասել «կարգե դուրս պատահմունքներ և սաստիկ արյունահեղություններ»⁹⁹:

«Մասյաց աղավինու» կանխատեսումը ճիշտ դուրս եկավ. 1862 թ. հունիսի 27-ին Ջ. Գարիբալդին մի խումբ զինակիցների հետ Կապրերան լքեց ու կրկին նավարկեց Սիցիլիա՝ նպատակ ունենալով աշխարհագորային ջոկատ հավաքագրել և արշավել Հռոմի վրա¹⁰⁰: Այս մասին քաղատեղյակ «Մասյաց աղավինին» տպագրում է իր հայրենակիցներին մի վերջին անգամ պատերազմելու կոչ անող Ջ. Գարիբալդու նամակները և նշում, որ Սիցիլիայում պայքար սկսած հայրենասեր զորավարը ստեղծված նոր իրադրությունում կովում է «Հռոմ կամ մահ» կարգախոսով: Ջ. Գարիբալդու արշավանքի կապակցությամբ Վիկտոր Էմմանուել II-ը դատապարտող հայտարարություն է արել, բայց նրա անունը չի հիշատակել: Նա իտալացիներին հորդորել է համբերատար լինել՝ «խոստանալով որ երբ այն մեծ գործողութեան ժամանակը հասնի, ինքը պատրաստ է իսկոյն ձայնը հանելու»¹⁰¹:

Հավաստի տեղեկություններ տալով Ջ. Գարիբալդու նոր արշավանքի և կարգախոսի մասին¹⁰², «Մասյաց աղավինին» գրում է, որ Ջ. Գարիբալդին թագավորի հորդորն անտեսել է, իր կամավորներով շարժվել Մեսինա, Ասպրոմոնթե լեռան վրա ընդհարվել է գնդապետ Պալլավիչինիի ղեկավարած թագավորական զորքի հետ և պարտություն կրել¹⁰³: Ընդհանրապես կայացնելով 1862 թ. օգոստոսի 29-ի Ասպրոմոնթեի կռիվը և Ջ. Գարիբալդու վիրավորվելն ու գերի ընկնելը¹⁰⁴, «Մասյաց աղավինին» ցավով գրում է.

⁹⁷ «Մասյաց աղավինի», 1862, 1 ապրիլի, թիվ 5, էջ 81:

⁹⁸ «Մասյաց աղավինի», 1862, 1 մայիսի, թիվ 10, էջ 104:

⁹⁹ «Մասյաց աղավինի», 1862, 1 հունիսի, թիվ 14, էջ 128:

¹⁰⁰ История Италии, с. 245; Дж. Канделоро. *Նշվ. աշխ.*, էջ 219, История XIX века, с. 287.

¹⁰¹ «Մասյաց աղավինի», 1862, 1 օգոստոսի, թիվ 16, էջ 177:

¹⁰² Տե՛ս նաև История Италии, с. 245; Дж. Канделоро. *Նշվ. աշխ.*, էջ 219–221:

¹⁰³ «Մասյաց աղավինի», 1862, 1 օգոստոսի, թիվ 16, էջ 177–178:

¹⁰⁴ Տե՛ս նաև История Италии, с. 245–246; Дж. Канделоро. *Նշվ. աշխ.*, էջ 222, История XIX века, с. 288.

«Իտալիան ազատողն ու Վիկտոր Էմմանուելին ձեռքը տուողը այնքան վեհանձնութեամբ, նոյն միջոցին նոյն թագաւորին զորացը ձեռքը գերի բռնուեցալ խեղճութեամբ»¹⁰⁵: «Մասյաց աղավնու» խմբագիր Գ. Այվագովսկին Ջ. Գարիբալդու պարտությունը և գերի ընկնելը համարում է «անակնկալ դիպված» և հավաստի ներկայացնում նրա բանտարկությունը Վարինյանո բերդում ու Սպեցիա կղզում¹⁰⁶:

Ի տարբերություն շատերի, որոնք դրա հետևանքով «Իտալիոյ այժմու վիճակը անորոշ» էին համարում՝ «Մասյաց աղավնին» չի կորցնում հավատը Ջ. Գարիբալդու և նրա ձեռնարկած մեծ գործի նկատմամբ: Ըստ ամսագրի՝ դժվար է գուշակել, թե Ջ. Գարիբալդու անակնկալ ձերբակալությունը ինչ հետևանքներ կունենա իտալական պայքարի հետագա ընթացքի վրա: Չնայած դրան՝ պարբերականի կարծիքով տեղի ունեցածը «իտալական մեծ թատերգութեան չորրորդ արարածն» է, որը հինգերորդ արարում «աւելի փառաւոր կամ ահաւոր կերպով պիտի լուծուի վերջին կնճիտը»¹⁰⁷:

1863 թ. պատմելով Կապրերա կղզում վերքերից ապաքինվող Ջ. Գարիբալդու մասին՝ «Մասյաց աղավնին» դարձյալ կրկնում է իր համոզմունքը. Ասպրոմոնթեի հաղթողը «հարկաւ հանգիստ պիտի չառնու՝ մինչև որ փառաւորագույն յաղթութեամբ մը իւր աղօտացեալ փառացը վրէժը չառնու»¹⁰⁸:

«Մասյաց աղավնու» վստահությունն առ այն, որ մի օր անպատճառ վենետիկն ու Հռոմը պիտի միավորվեն Իտալական թագավորությանը, գալիս էր Ջ. Գարիբալդու նկատմամբ ունեցած հավատից և իտալացիների ազատության ու միավորման բաղձալի փափագից: Ամսագիրը Ջ. Գարիբալդուն անվանում է «դյուցազն», «Իտալիայի փրկիչ», «մեծ ազատարար», «հայրենիքի ազատության սիրով վառված զորավար», ով պատրաստ է հանուն Իտալիայի միավորման անել հնարավոր ամեն բան: «Մասյաց աղավնին» հավատում էր, որ իտալիացիներն անպայման հասնելու են իրենց նպատակին: Այս հարցում իր համոզմունքը երբեք չկորցրած խմբագիր Գ. Այվագովսկին դեռևս 1861 թ. իտալիական պետութայնների մասնակի միավորումից հետո հավատում էր Իտալիական նոր թագավորութայն ամբողջացմանը: Նա չէր տարակուսում, որ նոր կազմավորված թագավորութայնը հետզհետե հզորանալու է, մի օր անպայման հաղթելու է Ավստրիային, հաղթահարելու է Հռոմի պապի դիմադրութայնը և համարելու է եվրոպական «առաջնակարգ տերութայնների շարքը»¹⁰⁹: Մինչ Ջ. Գարիբալդու հռոմեական արշավանքը՝ Գ. Այվագովսկին հավատում էր, որ «Հռոմ քաղաքը՝ իբրև Իտալիոյ սիրտը՝ երբեք չէ պիտի միանայ իտալական թագավորութայն հետ և անոր մայրաքաղաքը պիտի լինի»¹¹⁰: Նույնիսկ հռոմեական արշավանքի անհաջողութայնից հետո ամսագիրը չկորցրեց

¹⁰⁵ «Մասյաց աղավնի», 1862, 15 սեպտեմբերի, թիվ ԺԸ, էջ 214:

¹⁰⁶ *St' u nas* История Италии, с. 246; Дж. Канделоро. *Նշվ. աշխ.*, էջ 222–223:

¹⁰⁷ «Մասյաց աղավնի», 1862, 15 սեպտեմբերի, թիվ ԺԸ, էջ 214:

¹⁰⁸ «Մասյաց աղավնի», 1863, 15 հունվարի, թիվ 1–2, էջ 27:

¹⁰⁹ «Մասյաց աղավնի», 1862, հունվար, թիվ Ա, էջ 27:

¹¹⁰ «Մասյաց աղավնի», 1861, 1 սեպտեմբերի, թիվ ԺԵ, էջ 203:

րեց հավատը իտալացիների պայքարի նկատմամբ: 1863 թ. ամռանը, երբ Իտալիական թագավորությունում հարաբերական անդորր էր, «Մասյաց աղավինին» շարունակում էր հավատալ, որ «Իտալիա՝ պատերազմական հոգևով լցուած, ազգային ազատութեան կրակովը վառուած»¹¹¹ սպասում է Հռոմի և Վենետիկի ազատագրմանը:

Ամսագրի դիտարկմամբ՝ իտալացիները մեծ հույսեր են կապում հատկապես 1864 թ. հետ և անպայման կձգտեն ձեռք բերել իրենց «երկու մեծամեծ ազատութիւնները ..., այսինքն՝ «Վենետիկն ազատեն Աւստրիոյ ձեռքէն և Հռոմը պապին տիրապետութենէն ու Գաղղիոյ պաշտպանութենէն: Աստուած չամբջջընէ»¹¹²:

1864 թ. իտալացիների հույսերը չարդարացան, նրանց հայրենիքի լիակատար միավորում տեղի չունեցավ, իսկ «Մասյաց աղավինու» սպասումները չիրականացան: Բայց դա ամենևին չխաթարեց ամսագրի հավատն առ այն, որ Իտալիան երբևէ միավորվելու է: 1864 թ. իտալացիներին սպասվող երկու մեծագույն ազատութիւնը «Մասյաց աղավինին» շարունակում է համարել Վենետիկը՝ ավստրիական, իսկ Հռոմը՝ Պիոս IX պապի աշխարհիկ իշխանութիւնից ազատագրելը և Ֆրանսիական կայսրորդի դուրս բերումը¹¹³:

«Մասյաց աղավինին» չդարձավ իր կանխատեսման իրականացման ժամանակակիցը, քանի որ 1865 թ. սեպտեմբերին ամսագիրը դադարեց լույս տեսնել: Իտալիայի միավորումն ավարտվեց 1866 թ. Ավստրիայի դեմ իտալապրուսական պատերազմի արդյունքում: Իտալիան այդ պատերազմում չնայած պարտություն կրեց, բայց դաշնակից Պրուսիան 1866 թ. հուլիսի 3-ին Սադովայի ճակատամարտում վճռական հաղթանակ տարավ: Հոկտեմբերի 3-ին Վիեննայում կնքված հաշտության պայմանագրով Վենետիկն անցավ Ֆրանսիային՝ պատերազմում պահպանած չեզոքության դիմաց, որը Նապոլեոն III-ը հանձնեց Իտալիային: Հռոմի միավորումը Իտալիայի հետ տեղի ունեցավ 1870 թ. Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ, երբ Ֆրանսիական կայսրորդ Հռոմից դուրս բերվեց, որտեղ սեպտեմբերի 20-ին մտան Վիկտոր Էմմանուել II-ի զորքը և իտալական կամավորական ջոկատները, իսկ Պիոս IX պապը հրաժարվեց աշխարհիկ իշխանութիւնից: Հոկտեմբերի 2-ին անցկացված հանրաքվեի արդյունքում Հռոմը նույնպես միավորվեց Իտալիային և 1871 թ. դարձավ երկրի մայրաքաղաքը¹¹⁴: Իտալիայի միավորման անխուսափելիությունն ու անհրաժեշտությունը, որի մասին տարիներ շարունակ գրում էր «Մասյաց աղավինին», իրականություն դարձավ:

¹¹¹ «Մասյաց աղավինի», 1863, 15 հուլիսի, թիվ 13–14, էջ 224:

¹¹² «Մասյաց աղավինի», 1864, 15 հունվարի, թիվ 1, էջ 18:

¹¹³ Նույն տեղում, էջ 17:

¹¹⁴ История Италии, с. 251; Дж. Канделоро. Նշվ. աշխ., էջ 418–424, История XIX века, с. 304; Е. Пристер. Նշվ. աշխ., էջ 406:

Եզրակացություն

«Մասյաց աղավնի» ամսագրի խմբագիր Գ. Այվազովսկին Հայ Հասարակական մտքի և պարբերական մամուլի պատմության մեջ այն եզակի խմբագիրներից է, ով ոչ միայն մեծ հետաքրքրություն է դրսևորել XIX դ. իտալական ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ, այլև այդ խնդրի լավագույն գիտականներից մեկը: Նա հանգամանորեն լուսաբանել է իտալացիների պայքարի ամբողջ ընթացքը՝ հիմք ունենալով եվրոպական մամուլի լրատվությունը: «Մասյաց աղավնու» հրատարակումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց հիմնական հեղինակ Գ. Այվազովսկին կառչած չի մնացել ստացված պաշտոնական լուրերից և իր լրատվության աղբյուրներից: Հայ ազգային պահպանողական հոսանքի գաղափարախոս խմբագիրն իր գրչակիցներից ոմանց նման որքան էլ ջանացել է իտալացիների պայքարն արտաբուստ ներկայացնել անկողմնակալ և անաչառ, այնուամենայնիվ, չի թաքցրել իր համակրանքը իտալացիների ազատաբաղձության ու անկախության ձգտման նկատմամբ: Ամսագրի խմբագիրը համոզված էր, որ իտալացիների արդարացի պայքարը վաղ թե ուշ պսակվելու է հաջողությամբ, երկիրը միավորվելու է, իսկ Հռոմը դառնալու է պետության մայրաքաղաքը:

Ֆելիքս Մովսիսյան – պ. գ. դ., պրոֆ., Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ XVIII–XIX դդ. ամերիկյան, եվրոպական հեղափոխություններ, ազգային ազատագրական շարժումներ և դրանց վերաբերյալ Հայ Հասարակական մտքի ու պարբերական մամուլի գնահատական, արևմտահայ հասարակական կազմակերպություններ, մասոնության պատմություն: Հեղինակ է 4 մենագրության և 80-ից ավելի հոդվածի: felmov@mail.ru

REFERENCES

- Berti D. Rossiya i italyanskije gosudarstva v period Rissorjimento. Per. s it. M., 1959 (In Russian).
 Debidur A. Diplomaticeskaya istoriya Evropi 1815-1870, t. 2. Rostov-na-Dony, 1995 (In Russian).
 Eritsyan A. Venetiki Mkhitareanq, Tiflis, 1883 (In Armenian).
 Istoriya diplomatii. Sost. A Laktinov. M., 2009 (In Russian).
 Istoriya Francii, t. 2. Otv. Red. A. Z. Manfred. M., 1973 (In Russian).
 Istoriya Italii, t. 2. Pod red. K. F. Maziano. M., 1970 (In Russian).
 Istoriya XIX veka, t. 5. Pod. Red. Lavissa i Rambo. M., 1938 (In Russian).
 Istoriya mezhdunarodnogo rabochego i natsional'no-osvoboditel'nogo dvizheniya. M., 1962 (In Russian).
 Kandeloro Drh. Istoriya sovremennoy Italii, t. 5. M., 1971 (In Russian).
 Karinyan A. Aknarkner hay parberakan mamuli patmutyan, h. 1, Yerevan, 1960 (In Armenian).
 Lurye A. Garibaldi. M., 1957 (In Russian).
 Prister E. Kratkaya istoriya Avstrii. M., 1952 (In Russian).

«Masyac aghavni» (Teodosia), 1860, hunvar, tiv A, petrvar, tiv B, mart, tiv G, april, tiv D, mayis, tiv Ye, hunis, tiv Z, hoktember, tiv Zh, noyember, tiv ZhA; 1861, 15 hunvari, tiv B, 1 petrvari, tiv G, 1 marti, tiv Ye, 1 hulisi, tiv ZhG, 15 mayisi, tiv Zh, 1 hunisi, tiv ZhA, 15 hunisi, tiv ZhB; 1862, 15 hunvari, tiv B, 1 aprili, tiv E, 1 mayisi, tiv T, 1 hunisi, tiv ZHA, 15 hunisi, tiv ZhA, 1ogostosi, tiv ZHYe, 15 septemberi, tiv ZhY; 1863, 15 hunvari, tiv A-B 15 hulisi, tiv ZhY, 1864, 15 hunvari, tiv 1 (In Armenian).

ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ»)
ОБ ОБЪЕДИНЕНИИ ИТАЛИИ
(1860–1865 гг.)

ФЕЛИКС МОВСИСЯН

Резюме

Ключевые слова: «Масьяц агавни», Г. Айвазовский, Италия, независимость, война, Дж. Гарибальди, К. Кавур, Виктор Эммануил II, Пьемонт, королевство, Венеция, Рим, объединение.

Итальянская национально-освободительная борьба XIX в. нашла широкий отклик в журнале «Масьяц агавни» («Масисский голубь»). Журнал издавался в Феодосии в 1860–1865 гг. под редакцией Габриэла архимандрита Айвазовского – видного представителя армянского национально-консервативного течения. «Масьяц агавни» был одним из немногих периодических изданий, проявивших подчеркнутый интерес к борьбе итальянского народа за свободу, независимость и национальное объединение. Весь ход борьбы итальянцев журнал освещал регулярно, проявляя достаточную осведомленность и приводя, в основном, достоверные данные, основу которых составляли многочисленные публикации в европейской прессе, официальные известия и сообщения. «Масьяц агавни» не ограничивался простым воспроизведением полученных новостей. На страницах журнала Г. Айвазовский публиковал также аналитические статьи, делал выводы и даже прогнозировал возможные последствия этой борьбы. В своих многочисленных публикациях он постоянно подчеркивал, что борьба итальянского народа против австрийского владычества является справедливой. По мнению редактора «Масьяц агавни», целью борьбы зажженных пламенем свободы итальянцев является свержение чужеземного ига, обретение независимости, сплочение вокруг Пьемонтского королевства и создание объединенного Итальянского государства. В этой борьбе периодическое издание особо выделяло роль короля Пьемонта Виктора Эммануила II, премьер-министра К. Кавура и героя итальянской борьбы Дж. Гарибальди. Журнал справедливо отмечал, что после присоединения Ломбардии и итальянских герцогств к Пьемонтскому королевству, итальянский вопрос полностью не был решен. Согласно «Масьяц агавни», итальянцы достигнут своей завет-

ной мечты только в том случае, когда Венеция и Рим также будут освобождены и присоединятся к новому Итальянскому королевству. «Масьяц агавни» не сомневался, что объединение Италии рано или поздно произойдет. За несколько лет до окончательного объединения Италии Г. Айвазовский предвидел, что устремления итальянцев осуществляются, их родина объединится, приобретет могущество и станет одной из ведущих стран Европы.

Феликс Мовсисян – д. и. н., проф., заведующий кафедрой истории Ванадзорского государственного университета им. Ов. Туманяна. Научные интересы: американские, европейские революции XVIII–XIX веков, национально-освободительные движения и их оценка в армянской общественной мысли и периодической печати, западноармянские общественные организации, история масонства. Автор 4 монографий и более 80 статей. felmov@mail.ru

THE MAGAZINE “MASYATS AGHAVNI” (“THE DOVE OF MASIS”)
ON THE UNIFICATION OF ITALY
(1860–1865)

FELIX MOVSISYAN

Summary

Key words: “Masyats Aghavni”, G. Ayvazovsky, Italy, independence, war, G. Garibaldi, K. Kavour, Victor Emmanuel II, Piemont, kingdom, Venice, Rome, unification.

The liberation struggle of the 19th century was widely reflected in the magazine “Masyats Aghavni” (“The Dove of Masis”). The magazine was issued in Theodosia in 1860–1865 under the editorship of Archimandrite Gabriel Ayvazovsky – one of the prominent representatives of Armenian national conservative current. “Masyats Aghavni” was one of the few periodicals which manifested stressed interest towards the struggle of the Italian people for their freedom, independence and national unification. The magazine elucidated the whole process of the struggle of the Italians manifesting enough awareness and presented mainly trustworthy data based on numerous publications, official news and information of various European press. “Masyats Aghavni” was not limited with the reproduction of the received information. In the pages of the magazine G. Ayvazovsky also published analytical articles, drew conclusions and even predicted the possible consequences of that struggle. In his numerous publications he always underlined the very fact that the Italian people’s struggle against the Austrian dominion was fair. According to the editor of “Masyats Aghavni”, the goal of the struggle of Italians, who were ignited by the flames of freedom, was to overthrow the foreign yoke, gain independence, unite around the Kingdom of

Piedmont and create a united Italian state. In this struggle the periodical especially highlighted the roles of Victor Emmanuel II, King of Piedmont, Prime minister K. Kavour, as well as G. Garibaldi – the national hero of Italian struggle. The magazine fairly noted that the Italian problem had not been fully solved after the unification of the Kingdom of Piedmont, Lombardia and Italian dukedoms. According to “Masyats Aghavni”, Italians would achieve their cherished dream in case Venice and Rome were also liberated and united with the new Italian Kingdom. “Masyats Aghavni” had no doubt that the unification of Italy would sooner or later happen. Several years before the final unification of Italy G. Ayvazovsky foresaw that the aspirations of the Italians would come true, their homeland would be united, gain power and become one of the leading countries in Europe.

Felix Movsisyan – Doctor of Sciences in History, Professor, Head of the Chair of History of Vanadzor State University after Hovh. Tumanyan. Scientific interests: American and European revolutions of the 18th–19th centuries, national-liberation movements and their estimation in the Armenian social thought and periodic press, Western-Armenian public organizations, history of Masons. Author of 4 monographs and over 80 articles. felmov@mail.ru

II

ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱԼԲՈՍԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՆՐԱ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ *

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովհ. Թումանյան, անձնական և ստեղծագործական հոգեբանություն, պահ և հավերժություն, իդեալ և իրականություն, բարի և գեղեցիկ, ցավ, սեր, մենակություն:

Նախաբան

Հովհ. Թումանյանի քնարերգության մեջ առանձին շարք են կազմում, այսպես կոչված, ալբոմային բանաստեղծությունները, որոնք երբևէ չեն արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը. մեկ-երկուսին անդրադարձել են միայն առիթից առիթ այլ խնդիրների բերմամբ: Մինչդեռ դրանք, առանձին-առանձին կամ լրացնելով մեկը մյուսին, բացահայտում են բանաստեղծի ստեղծագործական հոգեբանության, գեղագիտական նախասիրությունների, անձնական հոգաշխարհի ու մտաշխարհի շատ էական կողմեր: Ուստի հետաքրքիր է դրանք դիտարկել իբրև որոշակի համակարգ ներկայացնող ամբողջություն՝ բանաստեղծի ստեղծագործության միասնական համատեքստում:

Թումանյանի ալբոմայինների աշխարհում

Ալբոմային բանաստեղծությունն սկզբունքորեն չի տարբերվում քնարական մյուս ժանրատեսակներից, միայն միշտ ունենում է որոշակի հասցեատեր: Դրանով էլ պայմանավորվում է դրանց յուրահատուկ բնույթը՝ չմիջնորդավորված ուղղակի հաղորդակցություն հասցեատիրոջ հետ, չափածո նամակ, որ նամակագիրը իր ձեռքով է հանձնում հասցեատիրոջը՝ առանց պատասխանի ակնկալության: Այն, ինչ բանաստեղծը սովորաբար ենթատեքստով է հաղորդում իր ընթերցողին, այստեղ ասվում է բաց տեքստով. բանաստեղծն ու մարդը երևում են հայելային հստակությամբ:

Թումանյանի ալբոմայիններն աչքի են ընկնում խոհերի ու ապրումների, ինչպես նաև՝ արտահայտության ձևերի բազմազանությամբ: Դրանք որոշակի առիթով հանպատրաստից գոյավորված հոգեբանական պահի քնարական ձեպանկարներ են, որոնք հաճախ միանգամայն ամբողջական ու ավարտուն կառույց են ներկայացնում¹: Դրանց մի մասն ընդունված

* Ներկայացվել է 15. VII. 2020 թ., գրախոսվել է 20. VII. 2020 թ., ընդունվել է տպագրության 24. IX. 2020 թ.:

¹ Պատահական չէ, որ դրանցից մի քանիսը բանաստեղծը ժամանակին տպագրել է մամուլում կամ ժողովածուներում: Քնարական այդ ենթաժանրին նա առանձին կարևորություն է տվել՝ երբեմն նույնիսկ հանդիմանելով իր մոտիկներ-

կարգին՝ պատշաճ սիրալիր հաճոյախոսություններ են այլոսի տիրուհուն՝ թուամանյանական ժպտահարույց հումորով, սրամտություններով ու շոյող պերճախոսությամբ: Օրինակ՝ Մ. Վարդազարյանի այլոսում գրած այս երկու քառատողը.

Նայում եմ քեզ ... միտս է գալիս,
Որ տեսել եմ ուրիշ մի տեղ
Կապուտաչյա, թարմ ժպտալիս
Ու գարդարված այսպես շքեղ:

Հա՛ ... դու չէիր. այն քեզ նման
Մի ծաղիկ էր, որ ես տեսա ...
Ես այն տեսա վաղ մի գարնան ...
Է՛հ, դու ծաղկիր ... թումել է նա ... (Հ. 1, էջ 197):

Այս դեպքերում էլ հաճախ մտքի անսպասելի թռիչքով բանաստեղծն ընթերցողի ուշադրությունը շեղում է այլ ուղղությամբ, ինչպես այստեղ: Վերջին տողն արդեն պարզ հաճոյախոսություն չէ. գործ ունենք ամեն ինչի անցողիկության մասին թուամանյանական կենսափոխակերպության յուրօրինակ դրսևորման հետ: Հիշենք «Թմկաբերդի առում»-ի հայտնի քառատողը.

Անցավ անտես ու աննրման
Էն սիրունը աշխարհից,
Ինչպես ծաղիկն անցած գարնան,
Որ չի ծաղկել էլ նորից (Հ. 4, 1991, էջ 57):

Այլոսայինների մեծ մասը, սակայն, խորհրդածության տեղիք տվող ինքնաբացահայտումներ են, ինչպես, օրինակ, 1893-ին Օսան Գիրգիդյա-

րին, որ իրենց այլոսներում տեղ են տալիս ամեն տեսակ գրություն: Օրինակ՝ Մարիամ Վարդազարյանի այլոսում կարգալով իր մտերիմ ընկերներ Ա. Զարգարյանի և Փ. Վարդազարյանի արձակ գրությունները՝ դրանց կողքին գրում է.

Երբ թույլ եք տալիս, որ Ձեր այլոսում
Անշնորհքները գրեն և արձակ,
Ինձ այնուհետև էլ ի՞նչ է մնում,
Եթե ոչ այսպես ասել համարձակ,–
Ինչո՞ւ Ձեր այլոսն, ազնիվ օրիորդ,
Դուք բաց եք անում ամեն մեկի մոտ,
Որոնք ոչ ցանկալ, ոչ հայտնել գիտեն
Եվ այլոսն իզուր պիտի մրոտեն (Հ ո վ Հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու, Հ. 1, Երևան, 2018, էջ 379):

Մեջբերումները Թուամանյանի «Երկերի լիակատար ժողովածուի» ակադեմիական տասնհատորյակից (1988–1999 թթ.) կամ առաջին երեք հատորների լրամշակված հրատարակությունից (2018–2019 թթ.) են: Այսուհետ ժողովածուների հատորներն ու էջերը կնշվեն մեջբերումներին կից:

նի ալբոմում արված մի վեցատող ոտանավոր գրառում, որը, թերևս, երիտասարդ Թումանյանի առաջին ալբոմայինն է:

Ինչ ես ուզում, որ թողնեի
Քո ալբոմում հիշատակ,
Սիրո հրդեհ փոթորկալի,
Ուրախություն, թե՞ տանջանք:

Դու ուզում ես, բայց որի՞ց,
Սիրոս լիքն է բոլորից (հ. 1, էջ 148):

Քառատող մասը, բնորոշ ալբոմային շեշտադրությամբ, որևէ անակնկալ չի ենթադրում: Վերջին երկտողը միանգամից փոխում է տրամադրության շեշտը՝ «Սիրոս լիքն է բոլորից»: Կատակ է սա, ինքնաճանաչման հասած երիտասարդ բանաստեղծի հավաստում, թե՞ ինքնաճանաչման փնտրտուք: Վերջին ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ նա արդեն բանաստեղծական երկու ժողովածուների հեղինակ էր, ճանաչված էր հրապարակում, բայց իր իսկ արտահայտություններում դեռ «չէր գտել իր տեղը»²: Պատահական չէ, որ երկրորդ ժողովածուից (1892 թ.) հետո ավելի քան մեկ տասնամյակ նոր ժողովածուով հանդես էր գալիս: Այդպես է մեծերի ճակատագիրը. նրանք կարող են անընդհատ բարձրանալ ու բարձրանալ, բայց որքան մոտենում են իրենց երազած «Վեր»-ին, նա այնքան հեռանում է³:

Հանձին կնո՞ջ այդ երիտասարդ ազգականուհու, Թումանյանը հավանաբար հայտնաբերել էր մեկին, որի հետ կարող էր հաղորդակցվել: Գուցե և դա է պատճառը, որ նրա ալբոմում կատարած բոլոր գրառումները, իրոք, հեռուն գնացող մտորումների տեղիք են տալիս⁴:

² Անգամ 1918 թ., երբ արդեն ապրում էր իմաստուն քառյակների բուն շրջանը, Թումանյանը մի առիթով այսպիսի խոստովանություն է անում. «... ինչպես իմ նմանները չեն գտել իրենց տեղը, էնպես էլ ես իմ տեղը չեմ գտել, չեմ նստել ու իմ գործը չեմ սկսել, այլ դեռ պատրաստվում եմ: Սրա պատճառը կասեի, եթե մեկը լիներ ...» (հ. 7, Երևան, 1995, էջ 487): Ուսումնասիրողները, սովորաբար, դա կապում են միայն բանաստեղծի հասարակական զբաղվածությունը և ընտանեկան հոգսերի հետ: Դա, իհարկե, կար: Բայց հիմնականը ստեղծագործական-հոգեբանական էր:

³ Մաթեմատիկայում ասիմպտոտիկ կորի հասկացությունն է: Դա անընդհատ շարունակվող կորագիծն է, որը կարող է անվերջ մոտենալ առանցքային ուղղուն, բայց երբեք չհասնի նրա հետ: Այդպիսին է բոլոր մեծերի ճգտումը դեպի կատարյալը: Նրանք անընդհատ կարող են մոտենալ այդ սահմանին, բայց երբեք չեն կարող հասնել այն, որտեղից այլևս գնալու տեղ չկա:

⁴ Օ. Գիրգիլյանի ալբոմում Թումանյանը տարբեր ժամանակներում ևս երեք այդպիսի չափածո գրություն է թողել:

Ատելուս համար
Դեռ չեմ գղջացել,
Բայց սիրուս համար
Շատ եմ ողբացել (1893, մարտի 24) (հ. 1, էջ 150):

Թուամանյանի այլբոսանքների շարքում առանձին ուշադրություն էն արժանի 1916–1919 թթ. ընթացքում դուստրերի այլբոսանքում արված չափածո գրառումները⁵: Իմաստային տարողությունը դրանք, իհարկե, հասարարարժեք չեն. սովորական «ձեռագ» հորինվածքների կողքին կան նաև պայծառատեսություն ակնթարթի կատարյալ պտուղներ, որտեղ բովանդակությունը՝ ձևավորվում, ձևը բովանդակավորվում է միաժամանակ: Դրանց իրական աստուղ բացելու համար հաճախ ենթատեքստային պեղումներ են հարկավոր: Բնորոշ օրինակ կարող է լինել դուստրերից առաջինը՝ Նվարդի այլբոսում 1916 թ. հոկտեմբերի 27-ին գրած «Իմ Արուսյակին» վերնագրով բանաստեղծությունը: Նվարդը հիշում է, որ նույն թվականին Բորժոմում հանգստանալիս հայրը հաճախ երեկոները իրենց հավաքում էր պատշգամբում, միասին դիտում էին աստղադարձ երկինքը, և աղջիկներից ամեն մեկն իր համար մի աստղ էր ընտրում⁶: Այդպիսի մի գիշերվա մասին է բանաստեղծությանը կից հեղինակային ծանոթագրությունը. «Ու աղջիկներից ամեն մեկը մի աստղ ընտրեց կամ համաստեղություն. Նվարդն էլ ընտրեց Վեներան, Լուսաստղը, Արուսյակը»⁷: Դա էլ հենց անմիջական ազդակ է ծառայել մտահղացման համար: Բայց ինչո՞ւ հենց Նվարդի ընտրությունն է հանկարծակի լուսավորել բանաստեղծի միտքը, ի՞նչ զգացմունքներ են արթնացել այդ պահին նրա հոգում:

Հայտնի է՝ լույսի ու խավարի խորհրդանշանները, որ ծագումնաբանորեն կապվում են բանահյուսական ավանդույթի հետ, հիմնարար գոր-

ել չեմ կարող գրել «ձեռագ»,

Սիրտս վաղուց է մեռած (1899, ապրիլի 18) (նույն տեղում, էջ 393):

... Ամեն բան երկրում ունի մի սահման,

Որտեղից որ նա ետ է նահանջում.

Աննահանջ է միայն սիրտը սիրահար,

Սերը չէ միմիայն սահման ճանաչում ... (1890-ական թվականներ)

(նույն տեղում, էջ 395):

⁵ Այլբոսային կամ այլ առիթներով հանպատրաստից ոտանավորներ Թուամանյանը նվիրել է բոլոր դուստրերին՝ բացի Սեդայից. նրա անունով այդպիսի որևէ գրություն մեզ չի հասել: Մի մասը սևագիր է և բանաստեղծի կենդանության օրոք չի տպագրվել: Սակայն դրանք նրա համար սովորական գրչախաղեր չեն եղել: Այդ մասին է վկայում դրանց հետ կապված ուշագրավ մի փաստ: 1922 թ. ամռանը նկարիչ Տարագրոսը նամակով Թուամանյանին հայտնել է նրա մի քանի գործեր նկարագրողումներով հրատարակելու իր մտադրության մասին՝ ընտրությունը թողնելով բանաստեղծին: Վերջինս իր մշակած ժողովրդական լեգենդների և քառյակների կողքին հիշում է նաև դուստրերի այլբոսներում գրած իր բանաստեղծությունները. «Ես աղջիկներիս նվիրած մի տասը ոտանավոր ունեմ, որ առանձին–ինտիմ մի այլբոս են կազմում – գուցե էս» (հ. 10, Երևան, 1999, էջ 430):

⁶ Տե՛ս ն. Թ ու մ ա ն յ ա ն. Հուշեր և գրույցներ, Երևան, 1987, էջ 147:

⁷ Ըստ հին հավատալիքի՝ աստղերը մահացածների հոգիներն են, որոնք տնօրինում են ապրողների ճակատագիրը: Երեխաների մոտ սովորություն կար նայել աստղային երկինքին և իրենց համար բխտի աստղ ընտրել: Իմ սերնդի մանկության տարիներին այդ հավատալիքը դեռ գործում էր:

ծառույթներով հաճախ են հայտնվում Թումանյանի բանաստեղծական կառույցներում: Բայց եթե հեքիաթներում դրանց բանահյուսական բնույթը չի փոխվում, ապա բանաստեղծություններում դրանք կապվում են ժամանակակից պատկերացումների հետ, որոնց համաձայն՝ տիեզերքի կենսագործունեության հիմքը հակադիր ուժերի հավիտենական փոխբացասումն ու փոխհաստատումն է: Աստղային գիշերը բանաստեղծին ներկայանում է որպես ասպարեզ առկայծող լուսատուների ու համատարած մութի հակամարտություն, որն ավարտին է մոտենում Լուսաստղի ծագումով և Արեգակի ծնունդով: Այդ պահի ոգեշունչ բանաստեղծականացումն է «Իմ Արուսյակին» ալբոմայինը:

Հին հեթանոս արևորդիների ցնծությունը է բանաստեղծը դիմավորում լուսաբացն ավետող աստղի ծագումը.

Լուսապլասակ
Իմ Արուսյակ,
Ի՛նչ գեղատես
Ու ի՛նչ զըվարթ
Վառվրում ես
Աստեղագարդ ,
Պայծառ ու պերճ
Գիշերվա մեջ,
Երկնից վըրա
Ու ճառագում
Մինչ ահարկու
Անդունդները
Իմ խոր հոգու⁸:

Տպագրության պատրաստելիս (1921 թ.) բանաստեղծը ձեռագիր բնագրում հական փոփոխություններ է կատարել: Նախ՝ բերված հատվածից, որ բանաստեղծության առաջին մասն է, վերջին հինգ տողն ամբողջապես դուրս է թողել, որովհետև դրանք ինչ-որ չափով իջեցնում են նախորդ տողերի ցնծագին փառաբանական տոնը: Վեցերորդ տողի «աստեղագարդ» մակդիրը փոխել է «իմ աստղագարդ» կապակցությամբ, որը գիշերվա անդեմ պատկերին հաղորդում է անձնավորված փոխաբերական բնույթ:

Ձեռագրի երկրորդ՝ վերջին մասում՝

Այո՛, թեև
Ձեղավ արև
Ոչ իմ կյանքում,
Ոչ իմ հոգում,
Բայց բյուր արեգ
Ու բյուր ցերեկ

⁸ Հովհ. Թումանյանի թանգարան, գլխավոր գույքամատյան (այսուհետ՝ ԹԹԳԳ), 860/2, նվարդի ալբոմ:

Историко-филологический журнал
2020 № 3
Պատմալեզանիայի հանդես

Միշտ արժեք
 էսքան շքեղ,
 Հըրաչազեղ
 Մի գիշեր ...⁹

երրորդ և չորրորդ տողերի դիմավորի ձևերին փոխարինել են համապատասխանաբար «էս պաղ կյանքում» և «ու երկնքում» անդեմ կապակցությունները: Ստացվել է այն, ինչ-որ իբրև կանոնիկ տարբերակ տեղ է գտել ակադեմիական տասնհատորյակում (հ. 1, էջ 307):

Կատարված փոփոխությունները էապես փոխել են մտահղացման նախնական բովանդակությունը: Ձեռագիր տարբերակում բանաստեղծական իրադրության սահմանային եզրերում հեղինակն ու երկնային լուսատուն են, տպագիր բնագրում վերջինիս փոխարինում է նրա անունն ընտրած դուստրը: Ի դեմս Արուսյակի լուսերգությունն իբրև բանաստեղծական աշխարհատեսության կերպ, պահպանում է քնարական իրադրության իր կազմակերպիչ գործառույթը, բայց փոխում է ուղղվածությունը՝ դեպի մարդկային ներաշխարհի գուտ անձնական շերտեր: Այդ «չքեղ», «հրաչազեղ» գիշերները՝ դուստրերի հետ, բանաստեղծին տրամադրում են նայել իր ներսը, զննել հոգու «ահարկու անդունդները»՝ գտնելու համար սփոփանքի լուսավոր մի անկյուն: Եվ գտնում է: Վերևում ճաճանչափայլ Արուսյակն է՝ բացվող օրվա ավետաբերը, ներքևում՝ իր շուրջը, իրենից սերված երկրային հրաշքները՝ դուստրերը: Հրճվանքի այդ գիշերային պահերը՝ թեև կարճատև, բայց «միշտ», «բյուր արեզ» ու «բյուր ցերեկ» արժեն, քանի որ հոգին բեռնաթափում են «ահարկու» մթություններից: Լուսի հաղթանակի այդ պահերին բանաստեղծը դառնում է մարդ՝ գուտ մարդկային երջանկության գիտակցություն, մարդը վերստին դառնում է բանաստեղծ՝ տիեզերքի հետ հաղորդակցվելու, արարչության սկզբին հասնելու վերամարդկային մղումով: Գուցե հենց այդպիսի մի պահի է ծնվել Հայտնի քառյակը.

Աստեղային երազների աշխարհքներում լուսակաթ.
 Մեծ խոհերի, խորհուրդների հեռուններում անարատ,
 Անհիշելի վերհուշերի մըշուշներում նըբաղոս՝
 Երբեմն, ասես, ըզգում եմ ես, թե կըհասնեմ Նըրա մոտ ...
 (հ. 2, 2018, էջ 55):

Կամ մի² թե պատահական է, որ Արուսյակի տեսիլը բանաստեղծի մտորումների տիրույթում վերստին հայտնվել է կյանքի վերջին ամիսներին՝ ոգեշնչելով նրա կարապի երգը¹⁰:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Մեզ միայն սևագիր հասած այս բանաստեղծության՝ միջնադարյան լուսերգերի հետ ունեցած կապի մասին ժամանակին ուշագրավ դիտարկումներ է արել Թադևոս Ավդալբեկյանը (տես հ. 1, էջ 760–761):

Թումանյանի ալբոմայինները հաճախ մտահղացվում ու գրվում են բանաստեղծության հետ կապ չունեցող, նույնիսկ բացահայտ պրոզայիկ հանգամանքներում, որն առհասարակ բնորոշ է այդ ժանրատեսակին: Օրինակ՝ բնակարան վարձելու մասին խոսակցություններ մեկ անգամ էլ, որ եղել են բանաստեղծի ընտանիքում: Անկասկած, այդպիսի խոսակցություններից մեկն էլ ազդակ է ծառայել 1917 թ. հունիսի 17-ին Աշխենի ալբոմում գրված երկու քառատողերի համար.

Մայրըդ էն օրն ասում էր ինձ,
Թե զուր թողիր տունը ձեռից,
Էնքան էժան ու էնքան հեշտ,
Էնքան հարմար, անհրաժեշտ ...

Նա տակավին չի իմանում,
Թե աշխարհքն էր ինձ պատկանում.
Նույնիսկ ձրրի, առանց փողի,
Սիրտըս չուզեց – ձեռից թողի ... (հ. 1, էջ 313):

Պոեզիայի տեսաբաններն ու ստեղծագործական հոգեբաններն ամենատարբեր բացատրություններ են տալիս, թե ինչպես է տեղի ունենում առօրյա կենցաղայինի և անտեսանելի հոգեկանի զուգավորման այն հրաշքը, որն անսպասելի թուխք է տալիս ստեղծագործողի մտքին ու երևակայությանը¹¹: Գուցե դա հենց այն է, ինչ բանաստեղծը համարում է «իրավամբ աստվածային», որ լիովին հասու է բանականությանը, կարող է կռահվել միայն զգացմունքով ու ենթագիտակցությամբ: Իրական արդյունքը, սակայն, լինում է բացատրելի: Այս դեպքում գործ ունենք Թումանյանի ստեղծագործական հոգեբանության երկու էական կողմերի հետ՝ իր մեծությունից գիտակցում, որ հազվադեպ է տեսանելի նրա ստեղծագործության մեջ և «տեղը» չգտնելու ստեղծագործական դրամա՝ արդեն հաճախաբար է երևան գալիս նրա ամենատարբեր ժանրի ստեղծագործություններում:

Չափածո գրառումներ ամենից շատ Թումանյանը կատարել է Արփիկի ու Անուշի ալբոմներում¹²: Այդ ոտանավորներից երևում է, որ բանաստեղծի համար դուստրերից ամենասիրվածն այդ երկուսն են եղել: Նրանց մոտ նկատելի ու գնահատելի է նաև խոհուն միտք և զգայուն հոգի, այլապես հենց նրանց առջև չէր բացի իր անձնական աշխարհի ամենաթաքուն խորհերն ու նվիրական անկյունները:

Արփենիկին նվիրված չորս ալբոմային է հասել մեզ՝ բոլորն էլ գրված 1917 թ. ընթացքում: Դրանցում նկատելի միտում կա ներկայացնելու դստեր կերպարը՝ զվարթ ու կայտառ վառվուռն բնավորությամբ: Մի դեպքում, ինչպես «Արփենիկին» ութատող ոտանավորում, դա զուգահեռվում է «վայրենի, շքեղ» բնությունը, ուր «այծյամներ, ժայռեր», ամեն ինչ մշտապես «կանգնած են ու կան»:

¹¹ Հ. Էդոյան. Պոեզիայի երկակի տեսողությունը, Երևան, 2020, էջ 365:

¹² Արփենիկի ալբոմը՝ ԹԹԳԳ, 860/4, Անուշինը՝ ԹԹԳԳ, 860/3:

Историко-филологический журнал
Պատմափիլոսոփայական հանդես 2020 № 3

Ու հիշում են միշտ էն գիժ աղջրկան,
Որ իր կուսական գվարթ աղմուկով,
Աշխույժ ծիծաղով, ճիչով ու երգով
Լըցնում էր անտառն իրենց շըրջակա –
Ու ... հիմա չըկա՛ ... ու հիմա չըկա՛ ... (հ. 1, էջ 311):

Ուտանավորը յուրօրինակ ձոն է դստերը և հիշված չորսից մեկն է, որ գրված է այբոմից դուրս հունվարի վերջին օրը: Ինչո՞ւ է բանաստեղծը ձմեռվա կեսին հանկարծ հիշել ամառային Բորժոմը, որտեղ մի ժամանակ հանգստացել են դստեր հետ: Ինչո՞ւ է վայրի բնությունը՝ իր կենդանի և անկենդան բոլոր գոյություններով, հիշում «այն գիժ աղջկան» և ափսոսում, որ «հիմա չկա»: Այս ամենը պետք է ընդունել միայն որպես սովորական բանաստեղծական հնարա՞նք, թե՞ ուրիշ խորհուրդ փնտրել դրանց հետևում, այսինքն՝ թե բնությունը իր վայրի գեղեցկությամբ թերի կլիներ առանց մարդու ներկայության: Վերջապես հայտնի է, որ բնությունը, տիեզերքը լիարժեք ինքնագիտակցության հասնում են միայն մարդկային բանականությամբ: Սա, հավանաբար, նոր երանգ է թումանյանական բնապաշտության մեջ, որ արժանի է հատուկ ուշադրության:

Մի այլ դեպքում, ինչպես «Իմ Արփիկին» այբոմայինում, հայրական սիրո խնդագին զգացումը զուգադրվում է հոգում թանձրացած մթություններին.

Բայց դու փայլիր, խաղա, շողա,
Կյանքը լինի քեզ եղեմ,
Ցոլա, ժլպտա, հուր բոց տեղա
Արևմուտքի մութի դեմ:

Տիեզերք է իմ մեծ հոգին,
Դու իր արփին բոցավառ,
Սև անդունդներ ունի մըթին,
Դու անըստվեր ու պայծառ (նույն տեղում, էջ 442):

Գոյության հավերժական ուղեկից այս տարամետ արժեքները, որոնք կյանքում անհամատեղելի են, բանաստեղծ հոգիներում չեն հակադրվում՝ այլ համադրվելով հաստատում են մշտապես հանգչող ու վերստին բռնկվող լինելության հրաշափառ խորհուրդը: Թումանյանական անդնդախոր հոգու սև մթությունները հազար ու մի իրական ակունքներ կարող են ունենալ, բայց նրա կենսահայեցողության կառուցողական հիմքն այդ խորհրդի գիտակցումն է:

Հասկանալի այս զգացումներով շնչող քնարական մթնոլորտում նորից անսպասելիորեն հայտնվում են թումանյանական ծանոթ խոհերը մարդկային կյանքի վաղանցիկության ու տիեզերքի հավերժության մասին: Հարցը ծագում է անմիջապես՝ ինչո՞ւ, պատահակա՞ն է դա, թե՞ ունի իր որոշակի տրամաբանությունը: Տեքստային ուշադիր զննությունը ցույց է տալիս, որ այբոմայինը պարզապես ամանորյա (գրված է հունվարի 1-ին) մաղթանք է դստերը՝ իր դեռափիթիթ գարունն ապրելու կենսածիծաղ ու

լիովի՝ առանց մտածելու, թե իր նման քանի՛, քանի արև-արփիներ են եղել, որ այժմ հանգչում են հողի տակ¹³: Թող նրա «լույս ու կույս, շաղով, շողով» արևածագը կյանքի հաղթանակը լինի «արևմուտքի մութի», այսինքն՝ մահվան դեմ: Իսկ ինքը բանաստեղծ է, նախախնամովյան կամքով է սահմանված, որ բոլոր գոյությունների փոխարեն մշտապես պիտի կրի նրանց «հավերժական կսկիծը», ինչպես կասեր Ավետիք Իսահակյանը:

Արփիկի հետ Թումանյանի հոգեգրույցներում, ինչպես «Արփենիկի ալբոմում» բանաստեղծության մեջ, պատահում է՝ բանաստեղծը մոռացվում է, բացվում է տառապող մարդը և բազմազավակ հայրը, որն ուղղակի բաց տեքստով բացատրում է դատերը, թե ինչու է ինքն «անբուժելի տխուր».

– Ինչ ունեի լավ ու պայծառ՝
Ընկան, հանգա՛ն մի-մի, մի-մի,
Օրորանս էլ՝ միակ, որ կար,
Արնոտ եղավ ու թըշնամի ... (Տ. 1, էջ 312):

Անշուշտ, նկատի ունի հոր մահը և Ռոստոմ եղբոր սպանությունը: Երկուսի ցավն էլ մինչև մահ ծխացել է բանաստեղծի հոգում: Իսկ առաջին ամիսներին պատերազմի հետ կապված հույսերի փլուզումը, եղեռնից մազապուրծ հազարավոր փախստականների հետ անցկացրած մղձավանջային շաբաթները էջմիածնում բանաստեղծին հաճախ հասցնում էին հուսահատություն: Խորտակված հոգու համար միակ սփոփանքը մնում էր արդեն ավելի ու ավելի սակավադեպ դարձող բանաստեղծական ներշնչանքը և զավակները: Այդ է, որ ցավով խոստովանում է Արփիկին.

– Մըթնեց հոգուս երկինքն անհուն,
Սիրտըս պատեց մեծ շափառուկ.
Մեռա՛ն, կորա՛ն շուրջս ու հեռուն,
Քընարս է լոկ մընացել ... և դուք ... (նույն տեղում):

Հատկանշական է, որ Արփիկին նվիրված չորս ոտանավորներից բանաստեղծի կենդանություն ժամանակ տպագրվել է միայն այս մեկը, այն էլ՝ ընդամենը երկու տողում մի-մի բառի փոփոխությամբ (նույն տեղում, էջ 513): Ուրեմն բանաստեղծն առանձին կարևորություն է տվել դատեր հետ այս սրտաբաց մենագրույցին:

Դուստրերի ալբոմներում Թումանյանի չափածո գրառումների համար ընդհանուրը, իհարկե, հայրական սիրո զեղումներն են և հոգուն ծանրա-

¹³ Կյանքի անցողիկության թախծալի խոհերը բանաստեղծության առաջին ու վերջին քառատողերում են: Ալբոմային ձեռագրում բանաստեղծը հետագայում ջնջել է այդ երկու քառատողերը, որոնք ակադեմիական հրատարակության երկրորդ հատրում վերականգնված են ուղղանկյուն փակագծերով: Հատկապես վերջին քառատողը գրեթե բառացի հիշեցնում է «Նոսայմն ասավ իր սիրուհուն ...» հայտնի քառյակը, որ գրված է 1920-ին: Կարելի է ենթադրել, որ ալբոմային ձեռագրում ուղղումները բանաստեղծը կատարել է հենց այդ ժամանակ:

ցած ցավերին նրանց հաղորդակից դարձնելով՝ սփոփվելու փորձերը: Յուրաքանչյուր առանձին դեպքում, սակայն, դրանք իմաստավորվում են նոր, երբեմն՝ անակնկալ կողմերով, ինչպես՝ «Երկար, երկար ման եկա ...» ալբոմայինում, որ գրված է նախորդ երեքից ամիսներ անց¹⁴: Դժվար է ասել, թե այդ ընթացքում բանաստեղծի հոգեբանությունն մեջ ու մտաշխարհում ինչ փոփոխություններ են կատարվել, բայց որ բանաստեղծության ենթատեքստում հայտնվել են բովանդակային նոր շերտեր ու շեշտադրություն, ակնհայտ է: Հայրական խանդաղատանքի ու դրանով սփոփվելու պահն առկա է նաև այստեղ.

Դըստրիկ, դըստրիկ իմ անգին,
Դու գեղեցիկ ու բարի,
Աշխույժն, աշխույժն իմ կյանքի
Ու իմ վըշտոտ քընարի (Վ. 1, էջ 316):

Սա բանաստեղծության հինգ քառատողերից երրորդն է, որը կառուցվածքային հանգույցի դեր է կատարում առաջին և վերջին երկուական քառատողերի միջև: Առաջինները խոստովանանք են սիրած դասերը, թե «չար ու դժվար էս կյանքում» «ոտքով, մտքով» երկար փնտրտուքներից հետո գտել է «երկու բան»:

Առաջինը՝

Վաղո՛ւց, վաղուց կար աստված,
Բայց կյանք տըվի ես բառին.

Երկրորդը՝

Դարձավ, դարձավ ինձ աստված
Գեղեցիկը ու բարին (նույն տեղում):

Այսինքն՝ աստված մարդկանց համար վաղուց ի վեր անկենդան բառ է եղել միայն, ինքը կյանք է տվել բառին՝ բացահայտելով դրա իրական բովանդակությունը, այն, որ աստծու էությունը գեղեցիկն է ու բարին: Եթե հավելենք դրան նաև ճշմարիտը, կատացվի, որ Թումանյանը նոր բան չի ասում: Նորն այն է, որ դրանք նույնպես կմնան անբովանդակ հնչյուն, քանի դեռ չեն դարձել մարդկանց երկրային կեցություն: Վերջին երկու քառատողերում ավելի առարկայական է դառնում այս գաղափարը.

Նայի՛ր, նայի՛ր սըրտաբաց
Էս լեն արձակ աշխարհին,
Առատ, առատ տարածված
Գեղեցիկը ու բարին:

¹⁴ Նախորդները գրված են տարեսկզբին մեկ ամսվա ընթացքում՝ հունվարի 1-ին, 31-ին և փետրվարի 5-ին, այս վերջինը՝ դեկտեմբերի 20-ին:

Էսքան, էսքան մոտ ու շատ
Բախտը փրոված մեր կյանքում,
Մարդը, մարդը՝ միշտ անբախտ,
Որոնում է երկնքում (նույն տեղում, էջ 316):

Թումանյանական կենսափիլիսոփայության հիմնային գաղափարն է սա, որ տարբեր ձևերով ու նույն բովանդակությամբ արտահայտվել է նրա ստեղծագործության շատ էջերում և բյուրեղացվել քառյակներում: Բերենք վերջիններից միայն մեկը, որ ավելի ուղղակիորեն է առնչվում այս երկու քառատողերին.

Ազատ օրը, ազատ սերը, ամեն բարիք իր ձեռքին,
Տանջում, տանջվում, որոնում է ու դժբախտ է նա կըրկին.
Էյ անխելք մարդ, ե՞րբ տի թողնես ապրողն ապրի սըրտալի,
Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի:
(Տ. 2, էջ 41):

Մարդու համար Աստծուն՝ իր արարչին միանալու իրական «բախտը», այսինքն՝ ճշմարիտ ճանապարհը նրա ստեղծած «լեն արձակ աշխարհում» ազատ և «սրտալի» ապրելն է, ամենուր «առատ, առատ տարածված գեղեցիկը ու բարին» վայելելը: Մարդու փրկությունը ինքն իրենից այս պարզ ճշմարտության լրակատար գիտակցության մեջ է: Փրկությունը երկնքից սպասելը մոլորություն է: Այս հավատով ապրեց ու ամեն օր հուսախաբ եղավ բանաստեղծ հոգին, բայց չվհասավեց վերջին շնչի հետ հետնորդներին ուղղելով իր քաջալերության խոսքը՝ «Ղոչաղ կացեք»¹⁵:

Թումանյանը լավ էր ճանաչում իր դուստրերին՝ ամեն մեկին սիրելով ու գնահատելով յուրովի: Եթե Արփենիկը նրա «վշտոտ քնարին» սիրփանք էր աշխույժ ու կենսաթրթիռ աղջկական տարերքով, ապա Անուշը գրավում էր խոհուն ու խորհոգի նկարագրով: Ահա թե ինչ է գրում նրա մասին ավագ դստերը՝ Աշխենին. «Դու իսկի գիտե՞ս, թե ինչ է մեր Անուշը, երբ որ սիրտը բացում է:

Մի քանի անգամ նա ինձ էնպես է զարմացրել, էնքան սրտալիություն, էնքան հրապուրանք, էնքան խելացիություն ու ճաշակ, նրբություն է հանդես բերել, որ ես հաճախ ուզում եմ միմիայն վերհիշել ու վերապրել էդ ժամերը ու լիովի երջանկություն եմ վայելում՝ մտածելով, թե էդ մեր Անուշն է» (Տ. 10, էջ 359): Այս առիթով հարկ է հիշել նաև այս նամակից երկու տարի առաջ Անուշի ավրոմում արված մի քառատող չափածո գրառում՝ «Գրագ Աստծու և պոետի» վերնագրով.

Գըրագ եկան ու տըվին
Երկու Անուշ – երգ ու կին.

¹⁵ Տե՛ս ն. Թումանյան. նշվ. աշխ., էջ 315:

Պոետն աշխարհ հիացրեց¹⁶,
Աստված՝ իրեն – պոետին (հ. 1, էջ 323):

Անուշի հանդեպ այս հատուկ վերաբերմունքով է պայմանավորված, որ նրա այբումում գրառումները բնույթով ու բովանդակությամբ որոշակիորեն տարբերվում են Արփիկի այբումում եղածներին. այս վերջիններում չեղտադրությունն առավելապես անմիջական զգացմունքային է, Անուշի առջև բանաստեղծի հոգին բացվում է ավելի խորքային շերտերով: Ծննդյան տարեդարձի առթիվ այբումային «ՅԵՍՐՈՄԵՄ»-ն, օրինակ, հայրական մաղթանք լինելուց բացի, նաև ձգտում է շնորհաշատ դասերը տրամադրելու դեպի իր հոգին թևավորող «վեր»-ի աշխարհը.

Իմ Անուշը, իմ ողջը թանկ,
Իմ խնդրություն, իմ թարմ հըրճվանք,
Առ քրնարս ... լանջիդ վրա,
Աստղի փայլով ցուլա թող նա,
Եվ երբ կյանքում պատի գիշեր,
Ճամփա ցույց տա միշտ դեպի վեր (նույն տեղում, էջ 445):

Երրորդ տողի կախման կետերը մի բան կարող են նշանակել. եթե այլ պարագաներում, ինչպես Արփիկի այբումում, դուստրերն էին սփոփանք բանաստեղծի «վշտոտ քնարի» համար, ապա այս դեպքում քնարն է նրանց համար բախտի ուղեցույց: Այլ խոսքով մոտիկից շփվելով իր փայփայած գեղեցիկ իդեալների հետ՝ նրանք կսովորեն «արևի նման նայել աշխարհին» (հ. 7, էջ 33)¹⁷: Անուշի հետ բանաստեղծը, հավանաբար, հաճախ է գրուցել այս թեմայով և միշտ էլ, որ լիովին հասկանալի է եղել նրան: Այդ մասին է վկայում բերված «ՅԵՍՐՈՄԵՄ»-ից ընդամենը չորս օր առաջ դասեր այբումում մի այլ քառատող գրառում.

Ափսո՛ս, որ չես տեսնում բընավ
Տազնապն հոգուս խոր ու վեհ.
Հազար անգամ ափսոս ու ցավ,
Որ պիտ տեսնես՝ երբեք ... (նույն տեղում, էջ 444):

Բավական անթափանց այս ակնարկի վերաբերյալ որոշ կռահումների հիմք կարող է տալ պոեմի հերոսուհի Անուշին նվիրված մի սևագիր ոտանավոր¹⁸: Դիմելով «անդարձ ճամփան» գնացող իր հերոսուհուն՝ բա-

¹⁶ Սա այն եզակի դեպքերից է, երբ բանաստեղծը թույլ է տալիս իրեն այսպես անվերապահ արտահայտվել սեփական ստեղծագործության մասին:

¹⁷ Այս խորհուրդն էր տալիս Թումանյանը պատանի գրասերներին:

¹⁸ Զեռագիրն անթվակիր է: Ակադեմիական տասնհատորյակում մոտավոր ժամանակը նշված է 1900-ական թվականներ: Բայց դատելով բովանդակությունից՝ ավելի հավանական է, որ գրված լինի ավելի ուշ՝ Անուշի այբումում կատարված գրառումների շրջանում՝ 1910-ական թվականների վերջերին:

նաստեղծը ներկայացնում է այն «վայրերը անմահական», ուր «մարդն ապրում է հոգիացած» ու «միշտ երջանիկ»: «Լույս ճամփան» դեռ մանկուց է «քաջածանոթ» իրեն.

Քանի անգամ հրրաթև
Անցել եմ ես, ոտներս ամպոտ,
Հասել աշխարհն էն եղեմ –
Բայց միշտ, ավա՛ղ, կարճատև (նույն տեղում, էջ 434):

Այդ «եղեմ աշխարհի» հեռապատկերով է հրապուրում բանաստեղծին իր դուստր Անուշին, բայց ոչ թե երկնքում, այլ երկրի վրա, ինչպես տեսանք Արփենիկի ալբոմայիններում՝ «Երկար, երկար ման եկա ... » ոտանավորի առիթով: Արփենիկի հետ բանաստեղծը խոսում է բաց տեքստով, Անուշին ինքնուրույն կուսումների տեղ է թողնում՝ վստահելով նրա ներքնատեսությունը:

Դուստրերի ալբոմներում Թումանյանը հաճախ է ակնարկում իր մենակության մասին: Բայց, եթե այլ պարագաներում այդ զգացողությունը գուտ անձնական հիմք ուներ, ապա Անուշի հետ ալբոմային զրույցներում մենակության զգացումը բանաստեղծ հոգիների անբաժան ուղեկիցն է. ծնվում է նրանց հետ ու նրանց հետ էլ մահանում.

Երազեցի շարունակ
Իմ կյանքի մեջ ես մանկուց,
Ու մընացի միշտ մենակ
Պատրանքի մեջ՝ ես մանկուց:

Ես չըգտա ոչ մեկին
Երազներից իմ շքեղ,
Եվ ոչ մի մարդ, ոչ մի կին
Հերոսներից իմ շքեղ (նույն տեղում, էջ 309):

Այս է պատճառը, որ բանաստեղծները հաճախ մեկուսանում են իրականությունից, ստեղծում են իրենց հոգու աշխարհը՝ այնտեղ սիրովիվելու համար կյանքի ցավերից, ինչպես Թումանյանը «Բարձրից» բանաստեղծության վերջում¹⁹: Անուշի ալբոմում այս խոստովանությունը ցույց է տալիս, որ հանձին նրա՝ բանաստեղծը գտել էր իր հոգու աշխարհի հետ հաղորդակցվելու ունակ մեկին: Դա երևում է նաև 1920 թ. հոկտեմբերի 9-ին դատերը գրած նամակից²⁰: Գիշերվա կեսին տանը մենակ մնացած բանաստեղծը պահանջ է զգում «զրույց անել» դատեր հետ. «էսպես այժմ ես մենակ եմ կաբինետում – մտածեցի քեզ հետ մի քիչ զրույց անեմ»:

¹⁹ Այս մասին տե՛ս տողերիս հեղինակի «Թումանյանի «Բարձրից» բանաստեղծությունը (տեքստային վերլուծության փորձ)» վերնագրով հոդվածը [«Գրականագիտական հանդես» (Երևան), 2014, էջ 118]:

²⁰ Անուշն այդ ժամանակ երևանում էր՝ Աշխենի մոտ:

Եվ զարմանալին ինչն է: Զարմանալին էն է, որ հենց էս բուսերին միաժամանակ մտածում եմ թե նույնիսկ էս հաճույքն էլ, որ հեռվից զրույց եմ անում քեզ հետ – պիտի անցնի:

Լսողը կարող է կարծել, թե էդ միտքը կթունավորի հենց էս հաճույքն էլ, բայց ո՛չ, էդպես չի ինձանում: Ընդհակառակը, ավելի խորացնում է ու գեղեցկացնում, որովհետև անցնելուց ես չեմ սարսափում, ես լավ գիտեմ, որ պիտի անցնի, ես հաշտված եմ դրա հետ: Թեպետև, իհարկե, մի խորին վիշտ ասեմ թե ավստոսանք էլ հետն ունեմ միշտ:

Ուզում էի երկար խոսել, բայց գալիս են արդեն: Բարի գիշեր, Անուշ Զան» (հ. 10, էջ 363):

Այս բովանդակությամբ զրույցներ, որոնք թումանյանական կենսափոխությունների միջոցով են, բանաստեղծը դուստրերից ոչ մեկի հետ չի ունեցել: Մասնավորապես կյանքի վաղանցիկության մասին ակնարկներ, որոնք ամեն անգամ առնչվում են այլևայլ կենսական խնդիրներին, կան Անուշի այբումում պահպանված գրեթե բոլոր ոտանավորներում: Հատկանշական է, որ դրանցից միայն մեկը՝ ամենաառաջինն է բանաստեղծը հարկ համարել տպագրել «Անուշի այբումից» վերնագրով²¹ մնացածները համարելով իր և դստեր հոգու սեփականություն: Այնուամենայնիվ, դրանցից երկուսին տարբեր առիթներով գրականագիտությունն անդրադարձել է:

Դրանցից մեկը հանրահայտ երկու քառատողերն են.

Կանցնեն օրերն, Անուշ Զան,
Կանցնի քո հորն, Անուշ Զան,
Ու կըտանի իրեն հետ
Իր ցավն ու սերն, Անուշ Զան:

Ցավը՝ անտակ ծովի պես,
Սերը՝ անհագ սովի պես.
Ծովի միջին ու սովի՝
Անբախտ Սայաթ-Նովի պես (հ. 1, էջ 314):

«Անտակ ծովի պես» ցավի և «անհագ սովի պես» սիրո ենթատեքստում ուսումնասիրողները սովորաբար միայն որոշակի սոցիալական բովանդակություն են տեսնում²²: Այդ դեպքում ի՞նչ իմաստ ունի հիշեցնելու, թե անցնող օրերի պես ինքն էլ կանցնի՝ հետը տանելով իր «ցավն ու սերը»՝ ինչպես «անբախտ» Սայաթ-Նովան: Արդյոք դա չի՞ նշանակում, թե մարդն անցնողական է, ցավն ու սերը՝ հավիտենական, ինչպես աշխարհը: Դրանք բանական գոյի անբաժան ուղեկիցներն են: Մեկի տառապանքն ու մյուսի հրճվանքը բանաստեղծ հոգիների կեցության եր-

²¹ Տե՛ս «Գեղարվեստ» (Թիֆլիս), 1921, թիվ 7, էջ 66:

²² Խ. Գյուլնազարյանն այս քառատողերի մասին գրում է. «Նույնիսկ, այսպես կոչված, «այբումային» բանաստեղծություններում իրար կողքի մեծ ուժով արտահայտվում են հասարակական վիշտն ու անհատական զգացումը: «Ցավը անտակ ծովի պես, սերը անհագ սովի պես» – ահա մարդկային հոգու հանճարեղորեն բացված գաղտնիքը (տե՛ս հ. 1, էջ 552):

կու երեսներն են: Նրանցից յուրաքանչյուրն այդ ցավն ու սերն ապրում է յուրովի և իր ապրածն էլ հետը տանում: Սա չէ՞, որ մտահոգում էր Թումանյանին, թե իրեն չհասկացան և, հավանաբար, երբեք էլ չեն հասկանա: Սա ոչ հոռետեսություն է, որից աշխատենք ձերբազատել բանաստեղծին, ոչ էլ լավատեսություն, որի համար ծափահարենք նրան: Դա հենց ինքը՝ կյանքն է: Իսկ թե այդ կյանքը գեղեցիկ ապրելու ինչ պատգամ էր հղում բանաստեղծը «դժբախտ» մարդուն, տեսանք Արփենիկի ալբոմից «Երկար, երկար ման եկա ...» բանաստեղծությանն անդրադառնալիս:

Այս դատողությունները կարող են տպավորություն ստեղծել, թե անտեսվում են սոցիալական ու քաղաքական իրականության այն ճշմարտացի պատկերները, որոնք Թումանյանական «ահավոր թախծի» և «հայոց վշտի» առարկայական հիմքն են: Սակայն իրականության ճշմարտացի արտացոլումն ամեն մի իսկական ստեղծագործողի գլխավոր խնդիրն է: Նրանք միմյանցից տարբերվում են գլխավորապես նրանով, թե իդեալի ինչ հեռավորությունից են դիտում ու իմաստավորում այդ իրականությունը: Այս տեսակետից Թումանյանը եզակի տեղ է զբաղեցնում իր ժամանակակիցների շարքում (հ. 2, էջ 504–510)²³:

Դիտարկված քառատողերի քնարական տրամադրությունը շարունակվում է դարձյալ «Անուշի ալբոմում» դրանցից ընդամենը մի քանի օր անց գրված «Քոչաքարում ես վազել եմ ...» բանաստեղծության մեջ²⁴, որը մի տեսակ քառյակային կառույց է հիշեցնում. ինչպես քառյակում տողերից յուրաքանչյուրը, այնպես էլ այստեղ չորս քառատող տներից ամեն մեկը կառուցվածքային հանգուլցի իր որոշակի դերն ունի հեղինակային ճարտարապետության մեջ:

Առաջին քառատողը մտահղացման ելակետային պահն է, կառույցի նախադրությունը.

Քոչաքարում ես վազել եմ
Եղնիկի հետ երազ, Անուշ,
Ջրմրուխտ սարում երազել եմ
Չնաշխարհիկ երազ, Անուշ (հ. 1, էջ 315):

Հայրենի բնաշխարհի՝ մանկության հիշողություններում մշտավառ տպավորությունների մասին մեկ անգամ չէ, որ անդրադարձել է բանաստեղծն իր՝ տարբեր ժանրի գործերում: Այս դեպքում ընդամենը չորս տողում երկու անգամ դատերը հականե-հանվանե դիմելու փաստը, որը նրա ուշադրությունն անընդհատ լարված պահելու նպատակ ունի, հուշում է այլ իմաստ փնտրել մանկական հիշողության մեջ: «Երազ եղնիկի» ու «չնաշխարհիկ երազի» մասին ակնարկն ավելի է հիմնավորում այդ ենթադրությունը, որն արդեն տեսանելի իրողություն է դառնում երկրորդ քառատողում.

²³ Այս մասին ավելի հանգամանորեն տես՝ «Վերահրատարակության խմբագրության կողմից» վերնագրով հոդվածը:

²⁴ Մեկը գրված է 1917 թ. նոյեմբերի 7-ին, մյուսը՝ նոյեմբերի 20-ին:

Զըմրուխտ սարը ամպ է պատել,
 Իմ արևի լույսը վատել,
 Աստծուն խնդիրք արի շատ էլ՝
 Ինձ չըտըվեց մուրազ, Անուշ (նույն տեղում):

Մանկուլթյան «չնաչխարհիկ երազի» և իրական կյանքի հակադրուկթյան այս ցավագին գիտակցութունը, որը Թումանյանի աշխարհը բացելու ու մեկնաբանելու հիմնական բանալին է բոլոր ուսումնասիրողների համար՝ հատկապես սոցիալ-գաղափարական պլանում, այս դեպքում խորապես անձնական է և ավելի լայնախորհուրդ: Այս նույն «մուրազով» հազար տարի առաջ աստծու արդարամտությանը «խնդիրք» էր անում նաև Գրիգոր Նարեկացին՝ միայն մի տարբերությամբ, որ եթե «մեծ աղոթասաց բանաստեղծի» պաղատանքը հույսի ու հավատի լուսավոր հիմք ուներ, ապա նույն հոգեվիճակում հայտնված նրա հեռավոր հետնորդը մերժումի ցավ է ապրում: Բայց դժգոհության ու բողոքի ոչ մի երանգ արդեն չկա այդ ցավի մեջ: Մնում է միայն ամսոսանքով հիշեցնել.

Իմ մուրազը շատ էր շքեղ,
 Դըրախտ պիտեր քաղաք ու գեղ.
 Երգը հոսեր հառաչքի տեղ,
 Սերն ու բարին՝ Արազ, Անուշ (նույն տեղում):

Դարձյալ վերադարձ երկնքից երկիր, ինչպես տեսանք «Երկար, երկար ման եկա ...» բանաստեղծության մեջ՝ Արփիկի ալբոմից: Միայն եթե այնտեղ շեշտվում էր ամսոսանքի դառնութունը, որը մարդիկ չեն կարող տեսնել ու վայելել իրենց շուրջը՝ «առատ, առատ տարածված գեղեցիկը ու բարին», ապա այստեղ, ինչպես տեսանք վերևում՝ «Կանցնեն օրերն, Անուշ ջան ...» երկքառատող ալբոմայինում, իրերի այդպիսի դրվածքը կրկին ընդունվում է իբրև մարդու կյանքից մշտապես անբաժան իրողութուն.

Շատ են եկել էսպես անցել,
 Հազար ամսոս էն մարդկանց էլ.
 Ես էլ կերթամ, վեր եմ կացել
 Էսքան վաղ ու վրուզ, Անուշ (նույն տեղում):

Սերնդեսերունդ անցնող այդ «տանջող ցավի» գիտակցութունը մտահոգում էր դեռևս 18-ամյա բանաստեղծին, երբ գրում էր «Հին օրհնության» հազներգական մաղթանքը. «Ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրեք ...»: Ուսումնասիրողները հաճախ են վկայակոչում վաղուց արդեն ժողովրդականացած այս օրհնանքը և համարյա միշտ «Գութանի երգի» հետ՝ նկատի ունենալով միայն դրանց պատմականորեն որոշ սոցիալական բովանդակութունը: Բայց դրանով շատ չէ՞նք նեղացնում պատանի հանճարի մտահոգման շրջանակները, չէ՞ որ հենց պատանեկան այս ներշնչումների մեջ է սաղմնավորվել Թումանյանական «շքեղ երազը», որ

տասնամյակների ընթացքում պիտի ծավալվեր ու ծավալվեր մինչև երկրային և երկնային կյանքերի ներդաշնակության իդեալը:

Ուրեմն ինչպես²⁵ պիտի հասկանալ բանաստեղծին՝ ըստ բերված քառատողի. մի՞թե նա անիմաստ է համարում կյանքն առհասարակ, ինչպես հոռետես փրկաստիճաններից շատերը, մի՞թե իզուր էր վերջին շնչով պատգամում զավակներին, թե՛ «ղոչազ կացեք»: Այս հարցի դիպուկ պատասխանը գտնում ենք Դանիել Վարուժանի «Նեմեսիս»-ում.

Ո՛հ, ի՞նչ փուլթ կյանքը մեռնող,
Երբոր երազը կ'ապրի
Երբոր երազն անմա՛հ է²⁵:

Այս տողերը բնաբան կարող են լինել Թումանյանի ամբողջ ստեղծագործության համար: Այո՛, մարդ անհատը, սերունդները գալիս են ու գնում, բայց կյանքը հավերժատե է, կարող է կանգ առնել միայն, եթե մեռնի երազը: Այսինքն՝ գոյության իմաստը մարդու, մարդկության անվերջանալի երազ-ձգտումն է դեպի ավելի ու ավելի լավ կյանք ու աշխարհ: Այս իմաստության գիտակցումն է, որ բանաստեղծին հաշտեցնում է մահվան հետ, ինչպես նա գրում էր Անուշին ուղղված նամակում: Այս գիտակցությունն է իր քառամանյա տարեդարձի օրը լուսավորել Մետեխում բանտարկված բանաստեղծի միտքը՝ հայտնի «Վայրէջքի» ավարտին գրելու.

Եվ ես իմաստուն ու բեռս թեթև,
Անհոգ ծիծաղով,
Երգով ու տաղով,
Իջնում եմ զըվարթ իմ լեռան ետև (հ. 1, էջ 261):

Թումանյան բանաստեղծի, ինչպես, հավանաբար, ամեն մի մեծ ստեղծագործողի համար հատկապես կյանքի վերջին տարիներին կենսական պահանջ է դառնում մարդկանց ներկայանալ նաև իրենց անձնական աշխարհի թաքուն երեսներով, բայց միշտ չէ, որ գտնում են հաղորդակից հոգի: Չհասկացվածության այդ ցավն ամբողջ կյանքում տանջել է մանավանդ Թումանյան մարդուն: Դա սրտաբաց անմիջականությամբ արտահայտվել է 1917 թ. հունվարի 8-ին Աշխենի ալբոմում գրված «Երեխի նման» ոտանավորում: Ինքը «Երազուն ու խենթ երեխի նման» անմնացորդ նվիրվել է մարդկանց, բայց բոլորը, անգամ «ընկեր, մերձավոր, և եղբայր, և կին» «խեթ» են նայել իր անմեղ «հաճույքներին», ծաղրել են «երազ, և սեր, և հավատ»: Ու դիմում է դուստրերին.

²⁵ Դ. Վ ա Ր ու ժ ա ն. Երկերի լիակատար ժողովածու երեք հատորով, հ. 1, Երևան, 1986, էջ 75: Բելգիայի Գենտի համալսարանում, որտեղ սովորել է Վարուժանը, կա մի անկյուն՝ նրա բարձրաքանդակ դիմապատկերով ներքևում մակագրված այս տողերը:

Եվ ահա էսպես՝ հոգնած ու վշտոտ,
Դադարգուն եղա, ամենքից փախա.
Ամենքից փախած գալիս եմ ձեզ մոտ,
Եվ դուք էլ, ավա՛ղ, ինձ պես երեխա (նույն տեղում, էջ 443):

Հետագայում ձեռագրի վրա ուղղումներ կատարելիս վերջին տողի «ավա՛ղ»-ը բանաստեղծը ջնջել է ու թեև տեղը նոր բառ չի դրել, բայց առանց դրան էլ հասկանալի է, որ նաև դուստրերի «երեխա» լինելու մասին ակնարկին ոչ թե ափսոսանքի նշան է, այլ գոհունակության, որովհետև երեխան երեխային ավելի լավ է հասկանում, քան հասուն մարդիկ իրար: Սա թուժամանյանի բանաստեղծական բարոյափիլիսոփայության հիմնարար արժեքներից է, որ ենթատեքստային մակարդակով առկա է նրա բազմաժանր ստեղծագործության շատ էջերում և բացեիբաց տեսանելի է դուստրերի այլբոմների չափածո գրառումներում: Հավանաբար, սխալված չենք լինի, եթե ասենք, որ այս ոտանավորը գրելիս բանաստեղծը հիշել է Արթուր Շոպենհաուերի հանրահայտ միտքը. «Յուրաքանչյուր երեխա ինչ-որ չափով հանճար է, և յուրաքանչյուր հանճար՝ ինչ-որ չափով երեխա»:

Եզրակացություն

Հովհ. Թուժամանյանի այլբոմային բանաստեղծությունները նրա բազմաժանր ստեղծագործության բացառիկ միասնական ու ներդաշնակ կառույցում անկապտելի հանգույց են ներկայացնում: Դրանց համակողմանի ու սուժամասիրությունը մեծապես կօգնի ճիշտ ու արագ կողմնորոշվել բանաստեղծի՝ «աչքի նման պարզ ու աչքի նման բարդ» աշխարհում: Միաժամանակ այլբոմայինների հուզական մթնոլորտի ինչ-ինչ անկյուններ մոլթ կմնային, եթե չփորձեինք դրանք լուսավորել հեղինակի բանաստեղծական բարոյափիլիսոփայության հեռվից:

Վլադիմիր Կիրակոսյան – բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի թուժամանյանագիտական խմբի ղեկավար: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարակազմի արևմտահայ պոեզիա, թուժամանյանագիտություն: Հեղինակ է 3 մենագրության և ավելի քան 80 հոդվածի: vladimirkirakosyan1936@gmail.com

REFERENCES

- Edoyan H. Poeziayi erkaki tesoghutyune, Yerevan, 2020 (In Armenian).
 “Gegharvest” (Tiflis), 1921, tiv 7 (In Armenian).
 “Grakanagitakan handes” (Yerevan), 2014 (In Armenian).
 Tumanyan Hovh. Yerkeri liakatar joghovatsu, h. 1, Yerevan, 2018; h. 2, Yerevan, 2018; h. 4, Yerevan, 1991; h. 7, Yerevan, 1995; h. 10, Yerevan, 1999 (In Armenian).

Hovh. Tumanyan Tangaran, gkhavor guykamatian, 860/1; 860/2; 860/3; 860/4 (In Armenian).

Tumanyan N. Husher ev zruytsner, Yerevan, 1987 (In Armenian).

Varujan D. Yerkeri liakatar joghovatsu erek hatorov, Yerevan, 1986 (In Armenian).

АЛЬБОМНЫЕ СТИХОТВОРЕНИЯ ОВ. ТУМАНЯНА В КОНТЕКСТЕ ЕГО ТВОРЧЕСТВА

ВЛАДИМИР КИРАКОСЯН

Резюме

Ключевые слова: Туманян, личная и творческая психология, мгновение и вечность, идеал и реальность, добрый и красивый, боль, любовь, одиночество.

Альбомные стихотворения великого армянского поэта Ов. Туманяна составляют в его лирике своеобразный целостный цикл, по его выражению, «отдельный – интимный альбом». Исследователи косвенно касались одного-двух из них только в связи с другими вопросами. Между тем детальные текстовые анализы показывают, что они могут стать ключом для раскрытия многих существенных граней жизненной философии и творческой психологии поэта, которые зачастую трудно объяснимы в других произведениях. С этой точки зрения особый интерес представляют стихотворные записи, сделанные Туманяном в альбомах дочерей. Они с особенной глубиной и непосредственностью раскрывают внутренний мир Туманяна – человека и творца, с самыми затаенными и заветными его уголками. Многие альбомные стихотворения Туманяна, несмотря на то, что написаны экспромтом, являются настоящими плодами внезапного творческого озарения.

Владимир Киракосян – д. филол. н., проф., научный руководитель туманяноведческой группы Института литературы им. М. Абегамяна НАН РА. Научные интересы: западноармянская поэзия начала XX века, туманяноведение. Автор 3 монографий и более 80 статей.
vladimirkirakosyan1936@gmail.com

HOVH. TUMANYAN'S ALBUM POEMS IN THE
CONTEXT OF HIS OEUVRE

VLADIMIR KIRAKOSYAN

Summary

Key words: Tumanyan, personal and creative psychology, moment and eternity, ideal and reality, kind and beautiful, pain, love, loneliness.

The album poems of great Armenian poet Hovh. Tumanyan are original complete series, “a separate - intimate album” in his lyric. The researchers have identified only one or two of these works not deeply when researching other issues. Meanwhile, the detailed text examination of these works shows that they can be a key to discover very important aspects of the poet's personal and creative psychology, which are often difficult to explain in other works. In this point of view the verse notes made by Tumanyan in his daughters' albums are of particular interest, which with special depth and directness open the inner world of Tumanyan as a creator and as a human, with the most secret and cherished corners. Though the majority of Tumanyan's albums are written by improvisation, nevertheless, they are the real fruits of sudden creative clairvoyance.

Vladimir Kirakosyan – Doctor of Sciences in Philology, Professor, Scientific Supervisor of the Tumanyan studies' research group at the Institute of Literature after M. Abeghian of the NAS RA. Scientific interests: Western Armenian poetry of the beginning of the 20th century, Tumanyan studies. Author of 3 monographs and around 80 articles. vladimirkirakosyan1936@gmail.com

ՅՈՂԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՄԻ «ՉԱՅԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ»
ԾՐԱԳԻՐԸ *

ՀՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Յո. Լեփսիուս, «Գերմանահայկական ընկերություն», Մ. Քրիշչյան, «Հայկական ակադեմիա», աստվածաբան, կրթություն, եկեղեցի, պատարագ, արխիվ, գրադարան, հայագիտություն, մշակույթ:

Նախաբան

1923 թ. հայ ժողովրդի մեծ բարեկամ Յոհաննես Լեփսիուսը (1858–1926) պատրաստվում էր Գերմանիայում ստեղծել ուսումնական և գիտամշակութային մի կենտրոն կամ, այսպես կոչված, «Հայկական ակադեմիա», որն իր ավանդը կունենար հայագիտության զարգացման հարցում ու կնպաստեր գերմանահայկական հոգևոր-մշակութային, եկեղեցական-կրոնական կապերի շարունակմանը և զարգացմանը:

«Հայկական ակադեմիայի» ծրագիրը

Ըստ Յո. Լեփսիուսի ծրագրի՝ «Հայկական ակադեմիան» պետք է ծառայեր Հայ առաքելական և մյուս հին քրիստոնեական եկեղեցիներին պատկանող ուսանողների կրթության ու մասնագիտականների շրջանում գործելու համար քարոզիչներ պատրաստելու նպատակներին¹: «Մենք պետք է «հոգևոր» աշխատանքի միջոցով նպաստենք հին քրիստոնեական եկեղեցիների ամրապնդմանն ու մասնագիտականների շրջանում քարոզչական գործունեության վերականգնմանը»², – գրում էր Յո. Լեփսիուսը: Բայց քանի որ ուսանողների աջակցության ծրագիրը կապված էր դժվարությունների նյութական արգելքների հաղթահարման հետ, Յո. Լեփսիուսը նախատեսում էր նախևառաջ զբաղվել «Հայկական ակադեմիայի» որպես հայագիտական կենտրոնի ձևավորման հարցերով: Այդ տեսանկյունից նա իր առաջնահերթ խնդիրը համարում էր իրականացնել ժնեկի «Հայասերների միջազգային լիգայի» (“Ligue Internationale Philarmenie”)³

* Ներկայացվել է 14. VIII. 2020 թ.: ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: Հոգևածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. դ. Ա. Հայրունին (08. IX. 2020 թ.): Ընդունվել է տպագրության 14. IX. 2020 թ.:

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Ա. Հայրունի. Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002:

² R. Schäfer. Geschichte der Deutschen Orient–Mission. Potsdam, 1932, S. 258.

³ «Հայասերների միջազգային լիգան», որի նախագծի հեղինակը Յո. Լեփսիուսն էր, հիմնադրվել է 1920 թ. Ժնևում: Լիգայի նպատակը ցեղասպանությունը վերապրած հայ ժողովրդի կրած կորուստների արդարացի հա-

կանոնադրությունն այն կետը, որով նախատեսվում էր «ստեղծել արխիվ, որում պետք է մեկտեղվեին քաղաքական կամ կենսագրական տեղեկատվությունն պարունակող բոլոր այն փաստաթղթերը, որոնք վերաբերում էին Հայկական Հարցի պատմությանը, աքսորի կազմակերպմանն ու իրագործմանը, Համաշխարհային պատերազմի ընթացքում իրականացված կոտորածների բնույթին ու չափին և դրանց հետևանքներին, որպեսզի այդ ամենից հայ ժողովրդի համար ապագայի դասեր քաղվեին»⁴: «Իմ ցանկությունն է, – մի առիթով գրում է Լեփսիուսն ակադեմիայի վերաբերյալ, – կապ ստեղծել հայկական ու գերմանական գիտությունների միջև այնպես, ինչպես աստվածաբանության բնագավառում նույնը հաջողություններ իրականացնում էր Ռադեի, Ռոհրբախի ու Շիբիրի «Անհրաժեշտ օգնություն»-ը (“Das Notwendige Liebeswerk”-ը)⁵ պատերազմից առաջ: ... Բայց առայժմ մենք ուզում ենք սահմանափակվել հայոց նորագույն պատմության վերաբերյալ փաստաթղթերի հավաքածուի ստեղծման, Բեռլինի կոնգրեսից ի վեր Հայկական Հարցի վերաբերյալ գրականությունն պարունակող գրադարանի հիմնադրման, հայագիտական նյութեր պարունակող տարեգրքերի հրատարակության աշխատանքներով ... »⁶:

Քանի որ Յո. Լեփսիուսը լուսաբանել էր արևմտահայության դեմ տեղի ունեցած եղբրական հանցագործությունների Համաշխարհային պատե-

տուցմանը նպաստելն էր (տե՛ս A. Meißner. Martin Rades “Christliche Welt” und Armenien. Bausteine für eine internationale Ethik des Protestantismus, Band 22. Berlin, 2010, S. 272):

⁴ A. Meißner. Die Armenische Akademie in Potsdam.–“Logos im Dialogos. Auf der Suche nach der Orthodoxie. Gedenkschrift für Hermann Goltz (1946–2010)” [A. Briskina–Müller, A. Drost–Abgarjan, A. Meißner (Hg.)]. Berlin, 2011, S. 236.–<https://books.google.am>.

⁵ 1897 թ. Պառլ Ռոհրբախի, Մարտին Ռադեի ու Էվալդ Շիբիրի գործնական ջանքերի շնորհիվ ստեղծված «Անհրաժեշտ օգնություն» ֆոնդը, որի հիման վրա հետագայում ձևավորվեց նույնանուն միությունը, նյութապես ապահովում էր Հայ եկեղեցուն պատկանող ուսանողների աստվածաբանական կրթությունը Գերմանիայում: 1898–1920 թթ. «Անհրաժեշտ օգնության» կրթաթոշակով Գերմանիայում կրթություն է ստացել 5 հայ ուսանող (այս մասին մանրամասն տե՛ս R. G. Hacı. Die Reformbestrebungen in der Armenisch–Apostolischen Kirche im Ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts. Göttingen, 1996, S. 42–52; նաև՝ A. Meißner. Martin Rades “Christliche Welt” und Armenien, S. 340–433): Սակայն խորհրդահայ պատմագրության մեջ շրջանառության է դրվել ու հետագայում բազմաթիվ հեղինակների կողմից ընդօրինակվել Պ. Ռոհրբախի մասին այն տեսակետը, թե նա խորհուրդ էր տալիս թուրքերին, որ պետք է հայերին տեղահանել Արևմտյան Հայաստանից և վերաբնակեցնել Միջագետքում Բաղդադի երկաթուղու երկայնությամբ: Դա, սակայն, չի համապատասխանում պատմական իրականությանը, քանի որ այն ներկայացնող հեղինակներից ոչ մեկը չի նշում ապացուցող որևէ սկզբնաղբյուր (մանրամասն տե՛ս Ա. Հայրունի. Պառլ Ռոհրբախը և Հայաստանը. – «Վէմ», 2011, թիվ 4, էջ 138–139):

⁶ Տե՛ս A. Meißner. Die Armenische Akademie in Potsdam, S. 241.

րագմի շրջանը⁷, խնդրո առարկա ժամանակաշրջանում նա մտադիր էր ամփոփել 1919–1923 թթ. իրադարձություններն ու այդպիսով ամբողջացնել վերջին 10 տարիների՝ 1914–1923 թթ., հայ ժողովրդի ողբերգական պատմությունը: Նա նախատեսում էր այդ ծրագրում ներգրավել 2–3 հայ, որոնց պարտականությունը լինելու էր առաջնակարգ բոլոր աղբյուրների տեսակավորումն ու գերմաներեն թարգմանությունը⁸:

Անցնելով գործնական քայլերի իրականացմանը՝ 1923 թ. վերջին Յո. Լեփսիուսն ուղերձ⁹ հղեց հայ ժողովրդի բոլոր բարեկամներին՝ խնդրելով «հայոց նորագույն պատմության վերաբերյալ» իրեն նյութեր փոխանցել, սկսեց փնտրել աջակիցներ ինչպես Գերմանիայում, այնպես էլ՝ արտերկրում:

Ահավասիկ, հայ ժողովրդի օժտված զավակներից մեկին՝ դր. Մելքոն Քրիշչյանին (1921 թ. նոյեմբերին նշանակվել էր Բեռլինում Խորհրդային Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության քարոզչության բաժնի վարիչ ու ապրում էր Պոտսդամում), ով Ռապալոյի պայմանագրի ստորագրումից ու 1923 թ. ամռանը Բեռլինում Խորհրդային Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության լուծարումից հետո դարձել էր գործազուրկ և ստիպված էր հանապազօրյա իր հացը վաստակել պատահական աշխատանքների միջոցով, Յո. Լեփսիուսը, ով «այլևս չէր կարող տեսնել, թե ինչպես են հայ մտավորականներն օտարանում իրենց ժողովրդից ու հոգևոր մշակույթից»¹⁰, առաջարկեց «ստանձնել իր կողմից ծրա-

⁷ Deutschland und Armenien 1914–1918. Sammlung diplomatischer Aktenstücke (Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius). Potsdam, 1919.

⁸ Տե՛ս A. Meißner. Die Armenische Akademie in Potsdam, S. 236.

⁹ «Քանի որ Անտանտի պահանջով զինադադարից հետո գերմանական զորքերը պետք է հեռանային Թուրքիայից, – նշված էր ուղերձում, – հայ ժողովրդի ճակատագրի վերաբերյալ տեղեկությունները, որ ես կարողացել եմ հավաքել վերջին 4 տարիների ընթացքում, բնականաբար, թերի են: ... Համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1914–1918 թթ., Թուրքիայի ներքին իրադարձությունների ու Եվրոպայի արևելյան քաղաքականության վերաբերյալ գերմանական տեղեկագրերն անփոխարինելի սկզբնաղբյուրներ էին: 1919–1923 թթ. համար արժանահավատ կարող են լինել միայն պատմական իրադարձությունների՝ հայ ու արտասահմանցի ականատեսների կողմից գրված տեղեկագրերն ու դրանց ամփոփումները: Այժմ ես դիմում եմ հայ ժողովրդի բոլոր բարեկամներին, ինչպես նաև՝ հայ գաղթականներին՝ խնդրելով անձնական տպավորությունների հիման վրա արված գրառումները կամ նշված շրջանի ուսումնասիրությունների արդյունքները հասանելի դարձնել ինձ՝ ուղարկելով բնագրերի պատճենները կամ դրանց հրատարակված լինելու դեպքում տպագիր տեքստերը, որպեսզի ես կարողանամ արժանահավատ նյութի հիման վրա շարադրել այդ շրջանի պատմությունը (1919–1923 թթ.– Ն. Ս.) ... : Ես երախտապարտ կլինեմ, եթե հնարավորություն ունենամ տրամադրությունս տակ ունենալ Թուրքիայում հայ ժողովրդի արտաքսման ընդհանուր պատմության վերաբերյալ հնարավորինս ամբողջական նյութ» [տե՛ս J. Lepsius. Eine Bitte. –“Der Orient” (Potsdam), 1923, № 5, S. 41]:

¹⁰ M. Krischtschian. Erinnerungen eines Armeniers an Johannes Lepsius.–“Der Orient”, 1935, № 5, S. 104.

գրված ու գրեթե իրագործման շեմին գտնվող «Հայկական ակադեմիայի» ղեկավարությունը, իսկ մինչև ակադեմիան կսկսեր իր աշխատանքները, արդեն իսկ անդամագրվել դրա կառույցին՝ որպես գիտաշխատող»¹¹: Իր հուշերում Մ. Քրիշչյանը գրում է. «Հայկական ակադեմիայի» ծրագիրը նոր չէր, ես այն գիտեի: Դա նրա (Յո. Լեփսիուսի – Ն. Ս.) վաղեմի գաղափարն էր. երբ բժշկվեին Հայի մարմնի վրա բացված վերքերը, երբ այլևս ստիպված չլինեիր կերակրել սովածներին ու հանդերձավորել մերկերին, այդուհետև նա աջակցություն էր ցուցաբերելու հայերին մշակութային-հոգևոր-կրոնական ոլորտներում: Այդ նրանց անհրաժեշտ է, որպեսզի նրանք, լինելով անապավեն, իրենց թշնամիների կողմից կուլ չգնան»¹²:

Թեև «Հայկական ակադեմիայի» ծրագիրը տպավորել էր Մ. Քրիշչյանին, բայց նա, հաշվի առնելով Յո. Լեփսիուսի առողջական վատթար վիճակը, կարծում էր, որ այն կյանքի կոչել այլևս հնարավոր չէ: Այդուամենայնիվ, նա չառարկեց և ընդունեց առաջարկը, քանի որ «տարիներ շարունակ նվիրվածությունը ու խնամքով մշակված ծրագրի ձախողումը կարող էր Լեփսիուսին հոգեկան խանգարման հասցնել»¹³:

Կայացած համաձայնություններից հետո՝ սկիզբ առան Մ. Քրիշչյանի բազմակի այցելությունները Յո. Լեփսիուսին: Այդ հանդիպումների ընթացքում Լեփսիուսը, ըստ Մ. Քրիշչյանի, «երիտասարդական խանդավառություն» ներկայացնում էր «Հայկական ակադեմիայի» ծրագիրը, մանրամասնում էր, թե ինչպես պետք է ստեղծվի այդ «հոգևոր վերակենդանացման անցամաքելի աղբյուրը մի շնորհալի ժողովրդի համար, ինչպիսին հայն է, հոգևոր մշակույթի մի կենտրոնում, ինչպիսին Գերմանիան է»¹⁴: Ըստ Մ. Քրիշչյանի՝ «Լեփսիուսը մտածում էր ոչ թե գերմանական կողմից հայկական մշակույթի միակողմանի (այսինքն՝ միայն աստվածաբանական տեսանկյունից) հովանավորության մասին, այլ նա մտադիր էր ողբերգական պատմություն ունեցող ու աշխարհով մեկ սփռված հին քրիստոնյա ժողովրդի՝ Հայի անասան մտավոր ու հոգևոր ներուժը նոր ծաղկման հասցնել»¹⁵: Նրա կողմից ծրագրված «Հայկական ակադեմիան» «հայ ժողովրդի համար լինելու էր հոգևոր-մշակութային, եկեղեցական-կրոնական միջնաբերդ եվրոպայում: Օժտված հայ երիտասարդները պետք է աջակցություն ստանային դրա կողմից՝ իրենց ազգային մշակույթը գերմանական-եվրոպական մշակութային բարձր արժեքներով պարարտացնելու համար»¹⁶:

Յո. Լեփսիուսը նախատեսում էր ծրագրի ֆինանսավորումն ապահովել գերմանահայկական համագործակցության միջոցով: Նա համոզված էր, որ կկարողանա այդ գործում ներգրավել արտասահմանում ապրող ունևոր հայերի: Ինչ վերաբերում է ծրագրին գերմանական կողմի ֆինանսական մասնակցությանը, ապա այն պետք է ապահովվեր «Դր.

¹¹ Նույն տեղում, էջ 105:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, էջ 105–106:

Լեփսիուսի արևելյան առաքելություն» կազմակերպության հասցեին կատարված նվիրաբերությունների հաշվին: Ըստ այդմ՝ նվիրատու բարեկամների թվաքանակի ընդլայնման ու, հետևաբար, նվիրաբերվող գումարների աճի համար նախատեսվում էր «ընդարձակել» նշված կազմակերպությունը, այսինքն՝ «այն պետք է հետզհետե ստանար հոգևոր-մշակութային կերպարանք ու դադարեր լինել որպես զուտ բարեգործական կազմակերպություն»¹⁷: Այդ «ընդարձակումը» պետք է իրականացվեր մի կողմից «պարբերական-գրավոր» հրատարակումների, մյուս կողմից՝ «բանավոր» քարոզչության միջոցով: «Գրավոր» հրատարակումները կատարվելու էին “Der Orient” պարբերականում, իսկ «բանավոր» քարոզչությունը պետք է իրականացվեր մեծաթիվ բանախոսների շրջիկ դասախոսությունների միջոցով¹⁸: Ի դեպ, ընթերցվող դասախոսությունները բացառապես նվիրված էին լինելու Հայկական հարցին: Մ. Քրիշչյանը պետք է բանախոսներին հանգամանորեն ներկայացներ հարցի խնդիրների շրջանակը և նյութեր պատրաստեր դասախոսությունների համար: «Հայոց նորագույն պատմության արխիվն իմ մյուս խնդիրն էր՝ մինչև կատեղծվեին նյութական հնարավորություններ բուն ծրագրի իրականացման («Հայկական ակադեմիայի» որպես գիտամշակութային ու կրթական կենտրոնի ձևավորման – Ն. Ս.) համար»¹⁹, – իր հուշերում գրում է Մ. Քրիշչյանը:

Որպես «Հայկական ակադեմիայի» շենք նախատեսվում էր վարձակալել Պոտսդամում Յո. Լեփսիուսի տանը մերձակա Պֆինգստբերգյան պալատը²⁰:

Յո. Լեփսիուսն ամբողջ ավյունով ձգտում էր հիշյալ ծրագիրն իրականացնել, բայց գնալով նրա առողջական վիճակը վատթարանում էր: Չնայած դրան՝ հայանվեր գործիչը չէր պատրաստվում հրաժարվել հայ ժողովրդի հետ կապված ծրագրերից ու հավատարմորեն շարունակում էր իր առաքելությունը: Ուշագրավ է, որ 1925 թ. սկզբին “Der Orient”-ում նա խոսում էր «իր առաջիկա մեծ անելիքների մասին», հաղորդում էր 1924 թ. Գերմանիայի տնտեսական սուր ճգնաժամի (1919–1923 թթ.) հաղթահարումից հետո, 400 հայ որբերի Ղազիրի (Լիբանան) որբանոց տեղափոխելու և Մերձավոր Արևելքում հայոգնություն աշխատանքներ իրականացնող՝ ամերիկյան “Near East Relief” (NER) կազմակերպության կառույցում նրանց խնամքը կազմակերպելու, Սիրիայում Կարեն Յեպեի՝ Մեծ եղեռնի ժամանակ թուրքերի կողմից առևանգված հայ կանանց ու երեխաների փրկագնման աշխատանքներին աջակցելու մասին²¹:

¹⁷ Նույն տեղում, էջ 106:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 107:

²⁰ Deutschland, Armenien und die Türkei 1895–1925. Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes–Lepsius–Archiv an der Martin–Luther–Universität Halle–Wittenberg, Teil 3 [G. Hermann und A. Meißner (Hg.)], Thematisches Lexikon zu Personen, Institutionen, Orten, Ereignissen. München, 2004, S. 32.

²¹ R. Schäfer. Նշվ. աշխ., էջ 117–118:

Նշված աշխատանքներին զուգահեռ՝ շարունակվում էին «Հայկական ակադեմիայի» ստեղծմանը նպատակաուղղված գործողությունները, քայլեր էին ձեռնարկվում նոր աջակիցներ ու նյութական հնարավորություններ ձեռք բերելու համար: Այսպես, օրինակ, 1925 թ. աշնանը Յո. Լեփսիուսի դուստրը՝ Բրիգիտա Վալտեր-Լեփսիուսը, կատարելով հոր հանձնարարությունը, մեկնեց Բրյուսել ու Փարիզ և գրանցեց առաջին հաջողությունը. «Հայկական ակադեմիայի» ծրագրի իրականացման համար Պողոս Նուբար փաշան 2000 մարկ հատկացրեց «Հայկական բարեգործական ընդհանուր միություն» միջոցներից ու ևս 1000 մարկ՝ իր անձնական կարողությունից²²:

«Հայկական ակադեմիայի» հիմնադրումը

Երկու տարի տևած նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1925 թ. հոկտեմբերի 23-ին՝ ժամը 16.00-ին, դր. Ջեյմս Գրինֆիլդի բեռլինյան բնակարանում՝ Շվեբիշե 7 հասցեում, տեղի ունեցավ «Հայկական ակադեմիայի» հիմնադիր նիստը, որին ներկա էին Յո. Լեփսիուսի ու Ջ. Գրինֆիլդի հետ նաև՝ Նիկոլայ Վալտերը (Յո. Լեփսիուսի փեսան), Մ. Բրիչչյանը, «Գերմանահայկական ընկերության» (այսուհետ՝ ԳՀԸ) անդամներ Վահան Զախարյանցը, Լիպարիտ Նազարյանցը: Միաձայն քվեարկությունից ակադեմիայի նախագահ ընտրվեց Յո. Լեփսիուսը, նրա տեղապահ՝ Ջ. Գրինֆիլդը, գանձապահ՝ Ն. Վալտերը, քարտուղար՝ Մ. Բրիչչյանը: Հաստատվեց 9 կետից բաղկացած «Հայկական ակադեմիայի» կանոնադրությունը: 1-ին կետով «Հայկական ակադեմիան» հայ ժողովրդի գերմանացի բարեկամների ու Գերմանիայում բնակվող հայերի գիտական միավորում էր, որի խնդիրը հայկական մշակույթի և հայոց նոր ու նորագույն պատմության ուսումնասիրությունն էր: 2–5-րդ կետերը վերաբերում էին ակադեմիային անդամակցության հարցերին: 6-րդ կետով մասնագիտական գրադարանի հիմնադրումը, ամսական զեկուլյցները կամ տարեգրքի տեսքով գիտական հրապարակումներն ու փաստաթղթերի հրատարակությունը «Հայկական ակադեմիայի» գլխավոր պարտականություններն էին: 7-րդ կետը վերաբերում էր ակադեմիայի վարչությունը: Այն ունենալու էր երկու նախագահ՝ մեկը գերմանացի, մյուսը՝ հայ, մեկ գերմանացի գանձապահ ու մեկ հայ քարտուղար: 8-րդ կետով քարտուղարի գլխավոր խնդիրն ակադեմիայի գիտական առաջադրանքների իրականացմանն աջակցելն էր: 9-րդ կետը վերաբերում էր ֆոնդի ստեղծմանը՝ ակադեմիայի ծախսերը հոգալու համար:

Տարվա մեջ 4 անգամ՝ հունվարի, ապրիլի, հուլիսի ու հոկտեմբերի 23-ին, «Հայկական ակադեմիան» նիստ էր հրավիրելու: Առաջին նիստը կայանալու էր 1926 թ. հունվարի 23-ին, իսկ բացման արարողության համար նախատեսված հրապարակային նիստը՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա նախօրեին՝ 1926 թ. ապրիլի 23-ին²³:

²² Տե՛ս A. Meißner. Die Armenische Akademie in Potsdam, S. 241–242.

²³ Նույն տեղում, էջ 242–243:

Այսպիսով, Յո. Լեփսիուսի մեծագույն բաղձանքներից մեկը կարծես թե իրականություն էր դառնում: Ցավոք, նշված ժամանակաշրջանում նրա առողջական վիճակը կտրուկ վատացել էր, և ստիպված էր բուժման նպատակով 1925 թ. հոկտեմբերի 28-ին մեկնել Իտալիայի Մերանո քաղաք: Այնտեղ, չկարողանալով հաղթահարել ծանր հիվանդությունը՝ շաքարախտը, 1926 թ. փետրվարի 3-ին մեծ հայասերը վախճանվեց²⁴, իսկ փետրվարի 5-ին հուղարկավորվեց տեղի ավետարանական եկեղեցու գերեզմանատանը²⁵:

Յո. Լեփսիուսի մահով «Հայկական ակադեմիայի» ծրագրի իրագործումը կիսատ մնաց: Հավելենք, որ նա 1926 թ. հունվարի 28-ին, զգալով իր մոտալուտ վախճանը, չեղարկել էր Պֆինգստբերգյան պալատի վարձակալության պայմանագիրը²⁶:

ԳՀԸ-ի, «Դր. Լեփսիուսի արևելյան առաքելություն» կազմակերպության ու Բեռլինի հայ համայնքի միացյալ նախաձեռնությամբ՝ 1926 թ. ապրիլի 6-ին՝ առավոտյան ժամը 8-ին, Բեռլինի «Նոր եկեղեցում» տեղի ունեցավ հանգուցյալի հիշատակին նվիրված պատարագ²⁷, որին ներկա էին պետական ու եկեղեցական բազմաթիվ անվանի գործիչներ: Հանդես եկան Լեփսիուս ընտանիքի մեծ բարեկամ պրոֆ. Ալբերտ Վեկեսարը, Ավգուստ Վիլհելմ Շրայբերը («Գերմանիայի ավետարանական եկեղեցիների հանձնաժողով»), պրոֆ. Ադոլֆ Դայսմանը (Բեռլինի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետ), Պաուլ Ֆրայշմանը («Դր. Լեփսիուսի արևելյան առաքելություն»), է. Շթիրը, Պ. Ռոհրբախն ու Ջ. Գրինֆիլդը (ԳՀԸ)²⁸:

«Հայկական ակադեմիայի» ծրագիրը կենսագործվեց 2011 թ., երբ հայ ժողովրդի մի խումբ գերմանացի բարեկամների միջնորդությամբ Յո. Լեփսիուսի՝ Պոտսդամում գտնվող առանձնատունը («Լեփսիուսի տուն») գերմանական կառավարության միջոցներով նորոգվեց ու վերածվեց գիտա-մշակութային կենտրոնի, որն այսօր իր շուրջն է համախմբում ոչ միայն գերմանական, առհասարակ, միջազգային հայագիտական ամբողջ ներուժը, և զբաղվում է հայերիս համար ոչ միայն գույն գիտական, այլև՝ արդիական հնչեղություն ու պատմաքաղաքական նշանակություն ունեցող հիմնա-

²⁴ Stéu R. Schäfer. Նշվ. աշխ., էջ, 118–120:

²⁵ P.F.Rösler. Die Geschichte der Deutsch–Armenischen Gesellschaft. – “75 Jahre Deutsch–Armenische Gesellschaft. Festschrift” (hg. von der Deutsch–Armenischen Gesellschaft). Mainz, 1989, S. 86.

²⁶ H. Goltz. Zwischen Deutschland und Armenien. Zum 125. Geburtstag des evangelischen Theologen Dr. Johannes Lepsius (15. 12. 1858–03. 02. 1926). – “Theologische Literaturzeitung” (Jahrgang), 1983, № 12, S. 881.

²⁷ Gedächtnisfeier für D. Dr. Johannes Lepsius, 6. April 1926, Das Evangelische Zentralarchiv in Berlin; նաև՝ Lepsius-Archiv in Potsdam (այսուհետ՝ LAP), № 12371.

²⁸ Gedächtnisreden bei der Feier in der Neuen Kirche zu Berlin, am 6. April 1926, LAP, № 17037, S. 9–25.

խնդիրներով. հանգամանք, որը լիովին բնութագրական է հենց իր՝ Յո. Լեփսիուսի գործունեությունը²⁹:

Եզրակացություն

«Հայկական ակադեմիան», լինելով գիտաուսումնական և մշակութային կենտրոն Գերմանիայում, որի ստեղծմանը ձեռնամուխ եղավ հայանվեր գործիչ Յո. Լեփսիուսը կյանքի մայրամուտին, պետք է աջակցեր ցեղասպանություն վերապրած հայություն հոգևոր «վերակենդանացմանը»:

Հրանուշ Սահակյան – 2018 թ. Գերմանիայում՝ Էռլանգեն-Նյուրնբերգի համալսարանում, զբաղվել է գիտահետազոտական աշխատանքով: Հեղինակ է 10 հոդվածի: hranush.sahakyan@mail.ru

REFERENCES

- Deutschland und Armenien 1914–1918. Sammlung diplomatischer Aktenstücke (Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius). Potsdam, 1919.
- Deutschland, Armenien und die Türkei 1895–1925. Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes-Lepsius-Archiv an der Martin-Luther-Universität Halle-Wittenberg, Teil 3 [G. Hermann und A. Meißner (Hg.)], Thematisches Lexikon zu Personen, Institutionen, Orten, Ereignissen. München, 2004.
- Gedächtnisfeier für D. Dr. Johannes Lepsius, 6. April 1926, Lepsius-Archiv in Potsdam, № 12371.
- Gedächtnisreden bei der Feier in der Neuen Kirche zu Berlin, am 6. April 1926, Lepsius-Archiv in Potsdam, № 17037.
- Goltz H. Zwischen Deutschland und Armenien. Zum 125. Geburtstag des evangelischen Theologen Dr. Johannes Lepsius (15. 12. 1858 – 03. 02. 1926). –“Theologische Literaturzeitung” (Jahrgang), 1983, № 12.
- Hacik R. G. Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im Ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts. Göttingen, 1996.
- Hayruni A. Lepsiusi tune – tseghaspanagitutyun ev hayagitutyun karevor kentron. – “Hayagitutyun hartser” (Yerevan), 2014, tiv 2 (In Armenian).
- Hayruni A. Yohannes Lepsiusi arakelutyune, Yerevan, 2002 (In Armenian).
- Hayruni A. Paul Rohrbakhe ev Hayastane. –“Vem”, 2011, tiv 4 (In Armenian).
- Krischtschian M. Erinnerungen eines Armeniers an Johannes Lepsius. – “Der Orient” (Potsdam), 1935, № 5.
- Lepsius J. Eine Bitte. –“Der Orient” (Potsdam), 1923, № 5.
- Meißner A. Die Armenische Akademie in Potsdam. –“Logos im Dialogos. Auf der Suche nach der Orthodoxie. Gedenkschrift für Hermann Goltz (1946–2010)” [A. Briskina-Müller, A. Drost-Abgarjan, A. Meißner (Hg.)]. Berlin, 2011. – <https://books.google.am>.

²⁹ Ա. Հայրունի. Լեփսիուսի տունը՝ ցեղասպանագիտության և հայագիտության կարևոր կենտրոն. – «Հայագիտության հարցեր» (Երևան), 2014, թիվ 2, էջ 236–240:

- Meißner A. Martin Rades “Christliche Welt” und Armenien. Bausteine für eine internationale Ethik des Protestantismus, Band 22. Berlin, 2010.
- Rösler P. F. Die Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft. – “75 Jahre Deutsch-Armenische Gesellschaft. Festschrift” (hg. von der Deutsch-Armenischen Gesellschaft). Mainz, 1989.
- Schäfer R. Geschichte der Deutschen Orient-Mission. Potsdam, 1932.

ПРОГРАММА «АРМЯНСКОЙ АКАДЕМИИ»
ИОГАННЕСА ЛЕПСИУСА

ГРАНУШ СААКЯН

Резюме

Ключевые слова: И. Лепсиус, «Немецко-армянское общество», М. Кришян, «Армянская академия», теолог, образование, церковь, литургия, архив, библиотека, арменоведение, культура.

Великий друг армянского народа доктор И. Лепсиус (1858–1926) в конце своей жизни планировал создать образовательный, научный и культурный центр или так называемую «Армянскую академию» в Германии, чтобы обучать учеников Армянской Апостольской и других христианских церквей и готовить проповедников для работы среди мусульман. Однако реализация программы поддержки студентов была связана с трудностями в преодолении материальных барьеров. Поэтому до того, как были решены финансовые проблемы, и программа поддержки студентов была поставлена на практическую основу, И. Лепсиус планировал работать над формированием «Армянской академии» как центра арменоведения. Работа в этом направлении началась в конце 1923 года. После двух лет подготовки, 23 октября 1925 года, в берлинской квартире доктора Джеймса Гринфилда состоялось учредительное собрание «Армянской академии». Президентом академии был избран И. Лепсиус, его заместителем – Дж. Гринфилд, казначеем – Николай Вальтер, секретарем – Мелкон Кришян. После смерти И. Лепсиуса (3 февраля 1926 г.) проект «Армянской академии» остался незавершенным и возобновился только в 2011 году, когда особняк И. Лепсиуса в Потсдаме был отремонтирован и преобразован в центр арменоведения при финансовой поддержке правительства Германии.

Грануш Саакян – аспирантка кафедры истории армянского народа факультета истории ЕГУ. В 2018 году занималась научно-исследовательской работой в Германии, в университете Эрлангена-Нюрнберга. Автор 10 статей. hranush.sahakyan@mail.ru.

THE PROGRAM OF THE “ARMENIAN ACADEMY”
BY JOHANNES LEPSIUS

HRANUSH SAHAKYAN

S u m m a r y

Key words: J. Lepsius, “German-Armenian Society”, M. Krishchyan, “Armenian Academy”, theologian, education, church, liturgy, archive, library, Armenology, culture.

The great friend of the Armenian people, Dr. J. Lepsius (1858–1926), at the end of his life planned to create an educational, scientific and cultural center or the so-called “Armenian Academy” in Germany to train disciples of the Armenian Apostolic and other Christian churches and to prepare preachers for work among Muslims. However, the implementation of the student support program was associated with difficulties in overcoming material barriers. Therefore, before the financial problems were resolved and the student support program was put on a practical basis, J. Lepsius planned to work on the formation of the “Armenian Academy” as a center for Armenology. Activities in this direction began at the end of 1923. After two years of preparation, on October 23, 1925, the constituent assembly of the “Armenian Academy” was held in the Berlin apartment of Dr. James Greenfield. J. Lepsius was elected president of the academy, J. Greenfield as his deputy, Nikolai Walter as treasurer, Melkon Krishchyan as secretary. After the death of J. Lepsius (February 3, 1926), the project of the “Armenian Academy” remained incomplete and only resumed in the 21st century, when his Potsdam mansion was renovated and transformed into an important center of Armenian studies with the financial support of the German government.

*Hranush Sahakyan – PhD student at the Chair of Armenian History of the YSU Faculty of History. In 2018 she was engaged in research work in Germany, at the University of Erlangen-Nürnberg. Author of 10 articles.
hranush.sahakyan@mail.ru.*

ՀՅՈՒՄՆԱԿԱՅԻՆ ԳՈՂԹՆԻ ՄԻՋԲԱՐԲԱՌԸ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՍԱՊԱՏԿԵՐՈՒՄ *

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ բարբառ, միջբարբառ, խոսվածք, բարբառային համապատկեր, բարբառային միավորներ, բարբառային հատկանիշներ, բազմահատկանիշ վիճակագրական դասակարգում, Նախիջևանի տարածք, Ագուլիսի, Արարատյան, Արցախ-Սյունիքի, Խոյի, Մարաղայի, Ջուղայի բարբառներ, ձահուկ-Վայքի, Հյուսիսային Գողթնի միջբարբառ:

Նախաբան

Նախիջևանի տարածքը, ընդգրկելով պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի Գողթն և Նախճավան, Այրարատ աշխարհի Շարուր, Սյունիք աշխարհի ձահուկ և Երնջակ գավառները, լինելով ազգագրական տարբեր շրջանների խաչմերուկ, բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային բռնի տեղաշարժերի, օժտված է եղել բարբառային խիստ բազմազանությամբ:

1918–1920 թթ. իրադարձությունների նախօրյակին¹, երբ բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմում էին հայերը, Նախիջևանի տարածքն ընդգրկում էր շուրջ յոթ տասնյակ հայաբնակ քաղաքներ և գյուղեր: Անցյալ դարասկզբի Նախիջևանի հայ բնակչության վերաբերյալ առկա վիճակագրական-տեղագրական ուսումնասիրությունների, մասնավորապես՝ պատմաբան ու վիճակագիր Ա. Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) «Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թթ.)» հայտնի աշխատանքի² ընձեռած տվյալների և տարածքում առկա խոսվածքների վերաբերյալ տարիների հավաքչական աշխատանքների հիման վրա կազմել ենք Նախիջևանի գավառների հայ բնակչություն ունեցող բնակավայրերի բարբառների համապատկերը:

Նախիջևանի հայ բնակավայրերի բարբառները

1605 թ. Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթի հետևանքով գրեթե ամայանալուց հետո, մի քանի տասնամյակ անց, աստիճանաբար հայերի

* Ներկայացվել է 14. VIII. 2020 թ., գրախոսվել է 25. VIII. 2020 թ., ընդունվել է տպագրության 03. IX. 2020 թ.:

¹ Նկատի ունենք 1918 և 1920 թթ. Արևելյան Հայաստանի դեմ Թուրքիայի գավթողական պատերազմները, 1919 թ. թուրքական բանակի զինվորների ու նրանց միացած ազրբեջանցի խառնամբոխի կողմից Ագուլիսում և շրջակա գյուղերում իրականացված հայ բնակչության կոտորածները, փրկվածների արտագաղթն ու հետագայում նրանց վերադարձին խոչընդոտելը Խորհրդային Ազրբեջանի իշխանությունների կողմից:

² Ա. Դոյ (Յ. Տեր-Մարտիրոսյան). Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թթ.). փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով, Երեւան, 1907, էջ 64–67:

կողմից մասամբ վերաբնակեցվելուց, ապա՝ 1828 թ.՝ Արևելյան Հայաստանի կազմում Ռուսաստանին միանալուց հետո, հայերի թիվը գերակշիռ դառնալուց հետո՝ 1918 թ. վիճակով, Նախիջևանի հայ բնակչության մեծ մասը խոսում էր 1828 թվականից տարածքում հաստատված վերաբնակներին՝ Խոյի և Մարաղայի բարբառներով: Ըստ որում, Խոյի բարբառով խոսում էր 33 բնակավայր՝ Շարուր գավառի՝ Նորաշեն քաղաքը, Ալաքլու, Դաշարիս, Թագադյուղ, Խանլուխլար, Վարմագյար, Քեչտագ գյուղերը, Ճահուկ գավառի՝ Շահապոնք քաղաքը, Ճահուկ ավանը, Առինջ, Բաբոնք, Գյոմուր, Խալխալ, Կժածոր, Նորս, Նորս-Մազրա գյուղերը, Երնջակ գավառի՝ Արագին և Կզնուկ գյուղերը, Նախճավան գավառի՝ Ալագյոզ-Մագրա, Դիդուվար, Եմխանա, Խալիլու, Կարախանբեկլու, Կուլիբեկ Դիզա, Երնջակ (Յարմջա), Հաջիվար, Մամարգա Դիզա, Մոխրաբլուր (Քյուլթափա), Նազարապատ, Շմբթան, Վերին Ըզնոբա, Տամբատ (Թմբուլ) և Քյարրիբեկ Դիզա գյուղերը, իսկ Մարաղայի բարբառով 3 բնակավայր՝ Գողթն գավառի՝ արաքսամերձ Վերին Ազա, Ներքին Ազա ու Դեր գյուղերը:

Չնայած Նախիջևանի բնակչությանը վիճակված բազմաթիվ զանգվածային տեղաշարժերին՝ տարածքում, այնուամենայնիվ, պահպանվել էին նաև տեղաբնիկ բարբառներ. Ագուլիսի բարբառով խոսում էր 7 բնակավայր՝ Գողթն գավառի Վերին Ագուլիս ավանը, Ներքին Ագուլիս, Յղնա, Տանակերտ, Քաղաքիկ, Հանդամեջ և Դիսար գյուղերը, Ջուղայի բարբառով 1 բնակավայր՝ Երնջակ գավառի Ջուղա գյուղը, Արարատյան բարբառով 4 բնակավայր՝ Նախճավան գավառի Նախիջևան քաղաքն ու Այլապատ, Աստապատ և Կարմիր վանք գյուղերը, Ճահուկ-Վայքի միջբարբառով 2 բնակավայր՝ Նախճավան գավառի Ազնաբերդ և Ճահուկ գավառի Օծոփ (Բաղամյու) գյուղերը, Արցախ-Սյունիքի բարբառով 7 բնակավայր՝ Երնջակ գավառի՝ Աբրահուկ, Գյաղ, Նորաշեն, Շահկերտ, Շոռոթ և Փորաղաշտ (Փարաղաշտ) գյուղերը, Հյուսիսային Գողթնի միջբարբառով 6 բնակավայր՝ Գողթն գավառի՝ Ռամիս, Փառակա, Մեսրոպավան, Բիստ, Ողոհի (Ալահի) և Խուրստ գյուղերը: Բնակչության ներքին տեղաշարժերի հետևանքով առաջացել էին նաև միջխոսվածքներ՝ Ջուլֆայի (Ջուղայի ու Խոյի), Որդուարի (Ագուլիսի և Խոյի)³:

Ըստ հայ բարբառների ավանդական միահատկանիչ դասակարգման՝ Նախիջևանում առկա էին հայերենի բարբառների «ուսմ» և «լիս» ճյուղերի բարբառներ, որում՝ «լիս» ճյուղին պատկանում էին Խոյի ու Մարաղայի բարբառները, իսկ տեղաբնիկ բարբառները պատկանում էին «ուսմ» ճյուղին: Տարածքում առկա էին ինչպես երկաստիճան ձայնեղագուրկ, այնպես էլ եռաստիճան և քառաստիճան բաղաձայնական համակարգերով բարբառներ. ըստ որում՝ քառաստիճան համակարգ ուներ միայն Ջուղայի բարբառը, որտեղ առկա էին ձայնեղներ, խուկեր, շնչեղ խուկեր ու շնչեղ ձայնեղներ, եռաստիճան՝ Արարատյան և Ագուլիսի բարբառները (ձայնեղներ, խուկեր ու շնչեղ խուկեր), թեև Ագուլիսի բարբառ համարվող Յղնայի ենթաբարբառը վերոհիշյալ մյուս բարբառների (Արցախ-Սյունիքի, Ճահուկ-Վայքի, Հյուսիսային Գողթնի, Խոյի և Մարաղայի) նման ուներ բաղաձայնների երկաստիճան ձայնեղագուրկ համակարգ (խուկեր ու շնչեղ խուկեր):

Ըստ Գևորգ Զահուկյանի մշակած բազմահատկանիչ վիճակագրական դասակարգման՝ տարածքի բարբառները պատկանում էին հայերենի բար-

³ Ա. Վ ա ռ գ ա ն ե ա ն. Նախիջևանի բարբառային քարտեզը. «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), 2000, հ. 1–12, էջ 457–470:

բառների արևելյան խմբակցության՝ արևելյան կամ Ագուլիս-Մեղրու (Ագուլիսի, Գողթնի), հարավարևելյան կամ Խոյ-Մարաղայի (Խոյի, Մարաղայի), հյուսիսարևելյան կամ Արարատյան (Արարատյան) և ծայր հյուսիսարևելյան կամ Արցախ-Շամախու (Սյունիք-Արցախի) բարբառախմբերին:

Բարբառային այս բազմազանությունը մեջ իր հատկանիշներով առանձնանում է բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությունը գրավող՝ Ագուլիսի բարբառը կամ զոկերենը, որի առաջին տպավորությունը խիստ անհասկանալի լինելը հետևանք է ձայնավորների կրած գրեթե անճանաչելի փոփոխությունների, պարզ ձայնավորների դիմաց երկբարբառների առկայության, բայի խոնարհման առանձնահատկությունների և այլն: Ագուլիսի բարբառը վերջնականապես մարեց 1989 թ., երբ իրենց բնօրրանից՝ պատմական Գողթն գավառի նշանավոր Յղնա գյուղից, արտաքսվեցին բարբառի վերջին կրողները:

Այդուհանդերձ, Ագուլիսի բարբառը հայերենի ամենավաղ և մանրամասն ուսումնասիրված բարբառներից է, որի մասին ինչպես հայ, այնպես էլ օտարազգի լեզվաբանների կողմից հոդվածներ և ուսումնասիրություններ են հրատարակվել դեռևս XIX դ. կեսերից [Հայնրիխ Պետերման (1866՝ գերմաներեն), Քերովբե Պատկանյան (1868՝ գերմաներեն, 1869՝ ռուսերեն), սակայն Սարգիս Սարգսյանցի⁴ և Հրաչյա Աճառյանի⁵ հիմնարար աշխատանքները սպառնիչ ուսումնասիրություններ են այս բարբառի հետազոտման ուղղությամբ: Այդուհանդերձ, ուշագրավ է նաև Մարի Զաքարյանի համեմատաբար վերջերս հրատարակած «Ագուլիսի բարբառը» մենագրություն-բառարանը⁶, որը լրացնում է նախորդ աշխատանքները, մասնավորապես բառապաշարի առավել մանրակրկիտ ներկայացման առումով:

Դասական բարբառագիտությունը ժամանակին ուսումնասիրել է նաև Արարատյան, Զուղայի, Արցախի, Խոյի, Մարաղայի բարբառները: Ընդ որում, Զուղայի և Մարաղայի բարբառները կրկին ուսումնասիրել է հայ լեզվաբանություն, մասնավորապես բարբառագիտության մեծ երախտավոր Հ. Աճառյանն իր «Քննությունն Նոր Զուղայի բարբառի»⁷ և «Քննությունն Մարաղայի բարբառի»⁸ աշխատանքներում: Արցախ-Սյունիքի բարբառը «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատանքով ուսումնասիրել է Կարեն Դավթյանը⁹, որին Սյունիքի խոսվածքների առումով լրացնում է Ալեքսանդր Մարգարյանի «Գորիսի բարբառը» մենագրությունը¹⁰: Հայ բարբառագիտության վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններում (Արարատ Ղարիբյան, Ահարոն Գրիգորյան, Սիրանուշ-Բաղդասարյան-Թափալցյան և այլք) մեծ տեղ են գրավում Արարատյան բարբառին նվիրված բաժինները: Դասական բարբառագիտության մեջ Աստապատի բարբառը համարվել է Արարատյան բարբառի ենթաբարբառ:

⁴ Ս. Ս ա ռ գ ս ե ա ն ց. Ագուլեցոց բարբառը (զոկերի լեզուն), Մոսկվա, 1883:

⁵ Հ. Ա ճ ա ռ ե ա ն. Քննությունն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935:

⁶ Մ. Զ ա ք ա ը յ ա ն. Ագուլիսի բարբառը, Երևան, 2008:

⁷ Հ. Ա ճ ա ռ ե ա ն. Քննությունն Նոր Զուղայի բարբառի, Երևան, 1940:

⁸ Հ. Ա ճ ա ռ ե ա ն. Քննությունն Մարաղայի բարբառի, Երևան, 1926:

⁹ Կ. Դ ա վ թ յ ա ն. Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966:

¹⁰ Ա. Մ ա ը գ ա ը յ ա ն. Գորիսի բարբառը, Երևան, 1975:

Նախքան շահաբեասյան բռնագաղթն Արարատյան բարբառը տարածման առավել ընդգրկուն սահմաններ է ունեցել՝ Արարատյան դաշտը և Արաքսի հովիտը ներառյալ, ինչի ապացույցներից է Նախիջևանի տարածքում պահպանված հիշյալ չորս բնակավայրերի, ինչպես նաև՝ Արաքսի իրանյան ափում գտնվող Դարաշամբ գյուղի խոսվածքները: Ի դեպ, Նախիջևանի տարածքին մերձակա Արարատի մարզում նույնպես պահպանվել են տեղաբնիկ՝ Արարատյան բարբառի խոսվածքներ (Արարատ, Այգավան գյուղեր):

Համեմատաբար ուշ է ուսումնասիրվել Ճահուկ-Վայքի միջբարբառը (Վայոց ձորի շուրջ մեկ տասնյակ տեղաբնիկ գյուղեր, հյուսիսային Նախիջևանի, այժմ արդեն հայաթափ երկու բնակավայրեր՝ Նախճավան գավառի Ազնաբերդ և Ճահուկ գավառի Օծուի գյուղերը): Մինչև 1980-ական թվականներն այս խոսվածքախմբի մասին սոսկ թուուցիկ հիշատակություններ կային բարբառագիտական գրականության մեջ, որտեղ համարվում էր Արարատյան բարբառի խոսվածք: Մեր մի շարք աշխատանքներով ու մենագրություններով¹¹ պարզել ենք, որ Ճահուկ-Վայքի միջբարբառն Արարատյան բարբառի խոսվածք չէ, այլ իր հատկանիշներով միջակա դիրք է գրավում Արարատյան, Ջուղայի և Արցախ-Սյունիքի բարբառների միջև: Աշխարհագրական և լեզվական մերձավորությունների համընկնման այս փաստն էլ հաստատում է խոսվածքի տեղաբնիկ լինելու իրողությունը:

Պարզվում է, որ շահաբեասյան բռնագաղթից առաջ այս բարբառն էլ տարածման առավել ընդգրկուն սահմաններ է ունեցել, որի ապացույցներից են Երևանի մերձակայքում գտնվող Չովակչի գյուղում 1679 թ. երկրաչարժից հետո Ճահուկ գավառի Նորս (Նորք) գյուղից վերաբնակված և բնակավայրը Նորք վերանվանած հայերի խոսվածքի՝ հնչյունաբանական, բառապաշարային ու ձևաբանական հատկանիշների բազմաթիվ ընդհանրությունները Հյուսիսային Նախիջևանի և Ճահուկ գավառի տեղաբնիկ խոսվածքների հետ¹², ինչպես նաև՝ նույն տարածքի Ղարաղուշ գյուղից ու Ճահուկ ավանից XVII–XVIII դդ. Թուքիայի Բոլու քաղաք տեղափոխված կաթոլիկ հայերի խոսվածքների հետ¹³: Հենց այս նկատառումով նախկինում Վայոց ձորի միջբարբառ անվանված եզրույթը հետագայում վերանվանել ենք Ճահուկ-Վայքի միջբարբառ:

Հյուսիսային Գողթնի միջբարբառը

Նախիջևանի տարածքի վերջին չուսումնասիրված բարբառային միավորը պատմական Գողթն գավառի՝ Ռամիս, Փառակա, Մեսրոպավան,

¹¹ Ա. Վ ա ռ դ ա ն յ ա ն. Վայոց ձորի միջբարբառը, Երևան, 2004:

¹² Ա. Վ ա ռ դ ա ն յ ա ն. Նորքի խոսվածքի և Նախիջևանի տարածքի որոշ խոսվածքների բառապաշարային ընդհանրությունները. – «Հայերենագիտության արդի խնդիրներ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2018, էջ 92–98:

¹³ V. Samuelian. Le dialecte des Arméniens de Bolou (Turquie): Etat des recherches en cours. – Հայ բարբառագիտության միջազգային համագումարի նյութեր, Ստեփանակերտ, 2001, էջ 2:

Բիստ, Ողոհի գյուղերի՝ լեզվական բավական սերտ առնչություններ կայացնող խոսվածքախումբն էր:

Վերջին տարիների ուսումնասիրություններում այս 5 խոսվածքների հանդեպ նույնպես կիրառել ենք Գ. Զահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքը: Աղյուսակի առաջին 50 կետերի՝ հնչյունաբանական հատկանիշների արդյունքներով հիշյալ խոսվածքները միմյանցից տարբերվում են նվազագույնը՝ 3 և առավելագույնը՝ 6,5 միավորով¹⁴:

Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչյունաբանական հատկանիշների ներքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բնակավայր	Բիստ	Մեսրոպավան	Ողոհի	Ռամիս	Փառակա
Բիստ	-----	5	6,5	6	5
Մեսրոպավան	5	-----	4,5	6	3
Ողոհի	6,5	4,5	-----	4,5	4,5
Ռամիս	6	6	4,5	-----	3
Փառակա	5	3	4,5	3	-----

Ավելին, խոսվածքները միմյանց նկատմամբ առավել նվազ տարբերություններ են դրսևորում Գ. Զահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման աղյուսակի երկրորդ 50 կետերի՝ ձևաբանական հատկանիշների համեմատության արդյունքում՝ տարբերվելով նվազագույնը՝ 1 ու առավելագույնը՝ 4,5 միավորով:

Հյուսիսային Գողթնի խոսվածքների ձևաբանական հատկանիշների ներքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բնակավայր	Բիստ	Մեսրոպավան	Ողոհի	Ռամիս	Փառակա
Բիստ	-----	4	3	2	2
Մեսրոպավան	4	-----	3,5	3	4,5
Ողոհի	3	3,5	-----	1	4
Ռամիս	2	3	1	-----	3,5
Փառակա	2	4,5	4	3,5	-----

¹⁴ Ա. Վ ա ղ ա ն յ ա ն. Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչյունական առանձնահատկությունները. – «Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ» գիտաժողովի նյութեր, Երևան, 2019, էջ 199–208:

Ընդհանրացնելով այս երկու աղյուսակների նյութը՝ ստացել ենք հետևյալ պատկերը.

Գողթնի խոսվածքների բարբառային հատկանիշների
համեմատական աղյուսակ

Բնակավայր	Բիստ	Մեսրոպավան	Ողոհի	Ռամիս	Փառակա
Բիստ	~~~~	9	9,5	8	7
Մեսրոպավան	9	~~~~	8	9	7,5
Ողոհի	9,5	8	~~~~	5,5	8,5
Ռամիս	8	9	5,5	~~~~	6,5
Փառակա	7	7,5	8,5	6,5	~~~~

Հատկանիշների տարբերությունների նման ցածր մակարդակը (ընդամենը 5,5–9,5 միավորի) վկայում է, որ Հյուսիսային Գողթնի հինգ խոսվածքները կարող են դիտվել որպես միևնույն բարբառի կամ միջբարբառի խոսվածքներ, ինչը համապատասխանում է Գ. Զահուկյանի սահմանած 0,5–22 միավորի տարբերություններով միջակայքին¹⁵:

Գ. Զահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքներից ելնելով՝ Հյուսիսային Գողթնի խոսվածքի՝ հարակից բարբառների նկատմամբ դիրքը ճշտելու նպատակով, այս խոսվածքի ընդհանրացված-միջին բարբառային հատկանիշները (գուգաբանությունները) համեմատել ենք հարակից բարբառների հատկանիշների հետ: Որպես համեմատության եզրեր ընտրել ենք Հյուսիսային Գողթնին աշխարհագրորեն առավել մոտ տարածքներ ընդգրկող ավանդական բարբառները՝ Ագուլիսի, Արցախ-Սյունիքի և Մեղրու: 100 հայտնի բարբառային հատկանիշների¹⁶ համեմատության արդյունքները վկայում են, որ Հյուսիսային Գողթնի խոսվածքն ամենամերձավոր առնչություն ունի ինչպես Արցախ-Սյունիքի բարբառի (տարբերությունները կազմում են 21,5 միավոր, որը գրեթե խոսվածքից բարբառի անցման սահմանն է), այնպես էլ՝ Մեղրու բարբառի (տարբերությունները կազմում են 23 միավոր) և Ագուլիսի բարբառի (տարբերությունները՝ 25 միավոր) հետ:

¹⁵ Գ. Զահուկյան. Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 127:

¹⁶ Նույն տեղում, էջ 41:

Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչյունաբանական հատկանիշների արտաքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բարբառային միավոր	Ագուլիսի	Արցախ-Սյունիքի	Հյուսիսային Գողթնի	Մեղրու
Ագուլիսի	---	16	13,5	11,5
Արցախ-Սյունիքի	16	---	12	12
Հյուսիսային Գողթնի	13,5	12	---	12
Մեղրու	11,5	12	12	---

Հյուսիսային Գողթնի խոսվածքների ձևաբանական հատկանիշների արտաքին առնչությունների համեմատական աղյուսակ

Բարբառային միավոր	Ագուլիսի	Արցախ-Սյունիքի	Հյուսիսային Գողթնի	Մեղրու
Ագուլիսի	---	10,5	11,5	11
Արցախ-Սյունիքի	10,5	---	9,5	11,5
Հյուսիսային Գողթնի	11,5	9,5	---	11
Մեղրու	11	11,5	11	---

Եզրակացություն

Հատկանիշների նմանօրինակ մերձավորությունները թույլ են տալիս եզրահանգելու, որ Հյուսիսային Գողթնի խոսվածքն իրենից ներկայացնում է միջբարբառ՝ հայ բարբառների արևելյան խմբակցության՝ Արցախ-Շամախու կամ ծայրհյուսիսարևելյան միջբարբառախմբի Արցախ-Սյունիքի բարբառի, ու Ագուլիս-Մեղրու կամ արևելյան բարբառախմբի Մեղրու և Ագուլիսի բարբառների միջև:

Արտակ Վարդանյան – ք. գ. թ., ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Նախիջևանի և Վայոց ձորի տարածքների բարբառների ուսումնասիրություն: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 20 հոդվածի: artva@list.ru

REFERENCES

A-Do (Y. Ter-Martirosean). Hay-turkakan endharume Kovkasum (1905–1906 tt). pastakan, vijakagrakan, teghagrakan lusabanutyunnerov, Yerevan, 1907 (In Armenian).

Պատմաբանական-փիլոլոգիական հանդես 2020 № 3 Историко-филологический журнал

- Ajaryan H. Knnutivn Agulisi barbari, Yerevan, 1935 (In Armenian).
- Ajaryan H. Knnutivn Maraghayi barbari, Yerevan, 1926 (In Armenian).
- Ajaryan H. Knnutivn Nor Jughayi barbari, Yerevan, 1940 (In Armenian).
- Davtyan K. Lernayin Gharabaghi barbarayin karteze, Yerevan, 1966 (In Armenian).
- Jahukyan G. Hay barbaragitutyun neradsutyun, Yerevan, 1972 (In Armenian).
- Margaryan A. Gorisi barbare, Yerevan, 1975 (In Armenian).
- Samuelian V. Le dialecte des Arméniens de Bolou (Turquie): Etat des recherches en cours. – Hay barbaragitutyun mijazgayin hamagumari nyuter, Stepanakert, 2001.
- Sargseants S. Aguletsots barbare (zokeri lezun), Moskva, 1883 (In Armenian).
- Vardanyan A. Nakhijevani barbarayin karteze. – “Handes amsorya” (Vienna), 2000, h. 1–12 (In Armenian).
- Vardanyan A. Vayots dzori mijbarbare, Yerevan, 2004 (In Armenian).
- Vardanyan A. Norki khosvadski ev Nakhijevani taratski vorosh khosvatskneri barapasharayin endhanrutyunnere. – “Hayerenagitutyun ardi khndirner” gitakan hodvatsneri zhoghovadsu, Yerevan, 2018 (In Armenian).
- Vardanyan A. Hyusisayin Goghtni khosvadskneri hnchyunakan arandznahatkutyunnere.– “Hayots lezvi patmakan usumnasirutyan ardi khndirner” gitazhoghovi nyuter, Yerevan, 2019 (In Armenian).
- Zakaryan M. Agulisi barbare, Yerevan, 2008 (In Armenian).

МЕЖДИАЛЕКТ СЕВЕРНОГО ГОХТНА В ДИАЛЕКТНОЙ ПАЛИТРЕ НАХИДЖЕВАНА

АРТАК ВАРДАНЯН

Р е з ю м е

Ключевые слова: диалект, междиалект, говор, диалектная палитра, диалектные единицы, диалектные признаки, многопризнаковая статистическая классификация, территория Нахиджевана, агулисский, араратский, арцах-сюникский, хойский, марагинский, джугинский диалекты, джаук-вайкский междиалект, междиалект Северного Гохтна.

В канун событий 1918–1920 гг., когда большинство населения составляли армяне, территория Нахиджевана охватывала около семи десятков армянонаселенных городов и сел. Преобладающая часть населения говорила на диалектах переселенцев, обосновавшихся на территории с 1828 года – хойском диалекте (33 поселения) и на марагинском диалекте (3 поселения). Сохранились также местные диалекты – агулисский (7 поселений), джугинский (1 поселение), араратский (4 поселения), арцах-сюникский (7 поселений), джаук-вайкский (2 поселения), говоры Северного Гохт-

на (6 поселений). Вследствие внутренних перемещений населения образовались также межговоры – джюльфинский (джугинский-хойский), ордубадский (агулисский-хойский).

Согласно традиционной однопризнаковой классификации армянских диалектов, диалекты Нахиджевана принадлежат к ветвям «ум» и «лис» армянских диалектов – с двухстепенными, трехстепенными и четырехстепенными консонантными системами, а согласно разработанной Г. Джаукяном многопризнаковой статистической классификации – восточной (агули-мегринской), юго-восточной (хой-марагинской), северо-восточной (араратской) и крайне северо-восточной (арцах-шамахинской) диалектным группам восточной группировки армянских диалектов.

В этом многообразии выделяется агулисский (зокский) диалект, кажущаяся с первого взгляда крайняя непонятность которого является следствием почти неузнаваемых изменений гласных, наличия дифтонгов против простых гласных, особенностей спряжения глагола и др. Агулисский диалект окончательно угас в 1989 г., когда из его колыбели – села Цхна исторической провинции Гохтн, были изгнаны последние носители диалекта.

Последняя неисследованная диалектная единица территории Нахиджевана – группа говоров северных сел исторической провинции Гохтн – Бист, Месропаван, Вохохи, Рамис, Парака, представляющая довольно близкие языковые отношения.

Применение к этим пяти говорам Северного Гохтна разработанного Г. Джаукяном принципа многопризнаковой статистической классификации выявляет достаточно тесную близость фонетических и морфологических признаков упомянутых говоров. Низкий уровень разниц между признаками (всего 5,5–9,5 единиц) свидетельствует, что их можно рассматривать как говоры того же диалекта или междиалекта, что полностью соответствует установленному Г. Джаукяном интервалу 0,5–22 разниц единиц.

Говоры Северного Гохтна имеют самое близкое отношение как с арцах-сюникским диалектом (разницы составляют 21,5 единиц, что почти является границей перехода говора к диалекту), так и с мегринским (разницы – 23 единицы) и агулиским (разницы – 25 единиц), следовательно, являются междиалектом Северного Гохтна.

Артак Варданян – к. филол. н., старший научный сотрудник отдела диалектологии Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: исследование диалектов территорий Нахиджевана и Вайоц Дзора. Автор 1 монографии и около 20 статей. artva@list.ru

THE INTERDIALECT OF NORTH GOGHTN
IN DIALECTAL PALETTE OF NAKHIJEVAN

ARTAK VARDANYAN

Summary

Key words: dialect, interdialect, subdialect, dialectal palette, dialectal units, dialectal signs, multi-sign statistical classification, territory of Nakhijevan, Agulis dialect, Ararat dialect, Artsakh-Syunik dialect, Khoy dialect, Maragha dialect, Jahuk-Vayk interdialect, North Goghtn interdialect.

On the eve of the events of 1918–1920, when the majority of the population were Armenians, the territory of Nakhijevan covered about seven dozen Armenian-settlements cities and villages. The overwhelming majority of the population spoke the dialects of the settlers who had settled in the territory since 1828 – the Khoy dialect (33 settlements), as well as the Maragha dialect (3 settlements). Local dialects have also survived – the Agulis dialect (7 settlements), the Jugha dialect (1 settlement), the Ararat dialect (4 settlements), the Artsakh-Syunik dialect (7 settlements), the Jahuk-Vayk interdialect (2 settlements), the subdialects of North Goghtn (6 settlements). As a result of internal displacements of the population, inter-subdialects were also formed – Julfa (Jugha-Khoy), Ordubad (Agulis-Khoy).

According to the traditional single-feature classification of Armenian dialects, the dialects of Nakhijevan belong to the “um” and “lis” branches of the Armenian dialects – with two-degree, three-degree and four-degree consonant systems, and according to the multi-characteristic statistical classification developed by Gevorg Jaukyan, the Eastern (Meghri-Agulis), southeastern (Khoy-Maragha), northeastern (Ararat) and extremely northeastern (Artsakh-Shamakhi) dialect groups of the eastern grouping of Armenian dialects.

In this dialect variety, the Agulis (Zok) dialect, which attracts the attention of numerous researchers, is distinguished by its features, the seemingly extreme incomprehensibility of which at first glance is a consequence of almost unrecognizable changes in vowels, the presence of diphthongs against simple vowels, peculiarities of verb conjugation, etc. The Agulis dialect finally faded away in 1989 when the last speakers of the dialect were expelled from their cradle – the village of Tsgzna in the historical province of Goghtn.

The last unexplored dialectal unit of the territory of Nakhijevan is a group of dialects of the northern villages of the historical province of Goghtn – Bist, Mesropavan, Vohoghi, Ramis, Paraka, representing a rather close linguistic relationship.

In our research, we applied to these five dialects the principle of multi-characteristic statistical classification developed by Gevorg Jahukyan and found out that the phonetic and morphological features of the dialects mentioned show quite close proximity. The low level of differences between the signs (only 5,5–9,5 units)

indicates that these five dialects of North Goghtn can be considered as dialects of the same dialect or interdialect, which fully corresponds to the interval of 0,5–22 unit differences specified by G. Jahukyan.

North Goghtn have the closest relationship both with the Artsakh-Syunik dialect (the difference is 21,5 units, which is almost the border of the dialect transition to the dialect), and with the Meghri dialect (the difference is 23 units) and Agulis (the difference is 25 units), therefore, they present the interdialect of North Goghtn.

Artak Vardanyan – Candidate of Sciences in Philology, Senior Researcher at the Department of Dialectology of the Institute of Language named after H. Acharyan of the NAS RA. Scientific interests: research of dialects of the territories of Nakhijevan and Vayots Dzor. Author of 1 monograph and more than two dozen scientific articles. artva@list.ru

«ВЕСЕЛЫЕ ПОХОРОНЫ» – АРМЯНСКАЯ ВЕРСИЯ
КАРНАВАЛА*

ЭММА ПЕТРОСЯН

Ключевые слова: карнавал, «веселые похороны», мнимый покойник, пародийный обряд, ряженье, воскресение, потопление, жертвоприношение, веселье, танец.

Вступление

Похороны – часть традиционного ритуала армян. В отличие от реального похоронного обряда с трагическим элементом, в фольклорном театре он имеет вид инсценировки комического содержания и типологически восходит к карнавалу. В среде индоевропейских народов основная схема карнавала – это сцена суда с перекалыванием вины на «козла отпущения» (фармака), расправа с ним и очищение-веселье. Дошедшие до нас варианты карнавала, известного как «Шах/Паша/Хан», были проанализированы выдающимся этнографом В. А. Бдяном, доказавшим сохранность основного стержня ритуала в армянской традиции¹. Продолжая реконструкцию фольклорного театра, предлагаем четыре варианта сюжетов, типологически восходящие к карнавалу, но в этом аспекте ранее не рассматривавшиеся.

1. Пародийный обряд отпевания мнимого покойника и его воскресение.

2. Прибытие из преисподней Сатаны, Бобо, Баба Ягурт (Дед Кислое молоко), Портолоза, Шута и их бегство назад.

* Представлена 17. VII. 2020 г., рецензирована 11. VIII. 2020 г., принята к печати 25. IX. 2020 г.

¹ Վ. Հ. ԲԴՅԱՆ. Հայ ժողովրդական խաղեր, հ. 1, Երևան, 1963, էջ 68–69, 71, 79, 84, 86, 89, 92, 94, 97, 100, 107, 109, 113: См. также: Հ. Մ. ԱՐԶԱՐՈՒՆԻ. Հայ ժողովրդական թատերախաղեր, Երևան, 1961, էջ 55, Ա. ՕԳԱԲԱՆՅԱՆ. Ամանորը Հայ ժողովրդական տոնացույցում. – Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 9, Երևան, 1978, էջ 27, Л. А. АБРАМЯН. Первобытный праздник и мифология. Ереван, 1983, с. 45–51; Հ. Վ. ՀՈՎՏԱՆՆԻՍՅԱՆ. Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը, Երևան, 1990, էջ 171–173, Э. Х. ПЕТРОСЯН. Армянский вариант Сатурналий (Шах) и его генетические истоки. – Зрелищно-игровые формы народной культуры. Ред. Л. Ивлева. Л., 1990, с. 21–33; Ժ. ԽԱՀԱՏՐՅԱՆ. Պարի, ծեսի ու թատերական գործողությունների փոխկապը Վարդան Մամիկոնյանի ցույցմունքում. – Պար, երաժշտություն, Երևան, 2000, էջ 75–86, Э. Х. ПЕТРОСЯН. Праздники армян в контексте европейской культуры. Ереван, 2011, с. 82–139.

3. Театрализованные сцены смерти и воскресения ряженных в образы зооморфных существ: обезьяны, медведя, верблюда, козла.

4. Функции обрядовых кукол Аклатиз, Вички Арус, Нури/Коти, их похороны, «разоблачение» и потопление.

Карнавал в армянской и европейской традиции приурочен к Барекендану (Масленице), реже – к свадьбе. Он известен в двух вариантах: уличные процессии или игрища в помещении, завершающиеся всеобщим весельем и танцами.

Пародийный обряд отпевания мнимого покойника и его воскресение

Этот обряд дошел до нас в нескольких записях, относящихся к XIX – XX вв. Известный общественный деятель Каджберуни (Габриел Тер-Ованнисян), будучи приглашенным на свадьбу в Шатин (ныне область Вайоц дзор) в 1875 г. (?), описал театрализованный похоронный обряд, который он озаглавил «Покойник и его воскресение»: «Была спокойная, тихая ночь. Вдруг, спросонья, я услышал звук похоронного песнопения. Победив тяжелый сон, я на минуту забыл о нем. Но не прошло и нескольких минут, как пение шаракана снова разбудило меня. Песнопение постепенно приближалось к нашему дому. Разноголосое число певцов все увеличивалось. Это сборище со смехом, пением, переговариваясь, вошло во двор нашего дома, и через 2–3 минуты дверь нашей комнаты открылась, стукнувшись об стену. Я и те, кто спали, сели на своих постелях, потирая глаза.

Вошли мужчины с зажженными свечами, за ними – дьякон с книгой и священник в клобуке, а за ними – более десяти человек. Держа за углы носилки, они внесли покойника и положили его на середину стола.

Священник, который, по-видимому, особой роли не играл, стал в голове покойника. Дьякон стал обходить стол, где лежал покойник, отпевая его. Один из сопровождающих с поднятым в руках кнутом стал возле трупа, пристально смотря на его лицо.

Оказывается, если покойник не хотел получить удары кнута, то он не должен был двигаться или открывать глаза. Но дьякон вдруг командовал палачам пустить в ход кнут на присутствующих в комнате. Те, покоряясь предводителю, стали незамедлительно хлестать сидевших на своих постелях.

Кто может устоять против побоев?! Кто может выдержать или обидеться на это?! Полураздетые, беззащитные, мы предстали перед ними. Смысл прояснился. Гости свадьбы объединились и, обходя дома вместе с присоединившимися другими гостями, всех также избивая, разбудили и, составив одну группу, пошли к благопочтенному дьякону, взяв его в исподнем, как покойника. В его одежду обрядили сельского

судью, чтобы он, как дьякон, совершил панихиду. А тело благопочтенного дьякона, в саване, как покойника, с хором певчих стали носить по домам.

Потом вошли в дом настоятеля храма Даралагяза. Но, соблюдая его сан, взяли только его рясу и надели ее на одного из участников процессии.

И вот, вся ватага со своим дьяконом, священником и покойником появилась в нашей комнате. «Позовите зурначи и дхолчи!» – крикнул новоиспеченный святой отец. Подчиненные сразу выбежали, и через несколько минут в комнате уже звучала зурна.

«Покойник» получил приказ воскреснуть. Пришедшие стали разбрасывать в разные стороны на присутствующих подушки и одеяла. Человек с кнутом начал безжалостно хлестать всех без разбора, требуя, чтобы плясали.

Стараясь избегнуть побоев, полуобнаженные и полусонные люди начали подпрыгивать на полу, другие – на постели. Самозванец дьякон и священник тоже начали плясать. Одним словом, действо было очень забавным (здесь и далее переводы цитат наши – Э. П.)»².

Не исключено, что требование плясать являлось средством принуждения всех приобщиться к «веселым похоронам». В заключение Каджберуни пишет: «Кто был на сельской свадьбе, тот, несомненно, знает о подобных веселых сценах. Простой народ свои театральные способности проявляет в это значительное торжество»³.

Трудно выявить, когда пародийные похороны перешли также в свадебный репертуар, свидетелем которого был Каджберуни. Возможно, это довольно позднее явление, хотя между свадебным и похоронным обрядом много общего. Приведенные ниже полевые записи указывают, что чаще в армянской традиции покойницкие игры имели место на Барекендан – быломu дохристианскому празднику, который позже был приурочен к праздничному христианскому календарю.

Еще одно свидетельство опубликовано в 1899 г. под названием «Мертвец сатаны»: «Игры молодежи чаще всего бывали на праздники весеннего цикла до начала полевых работ. По решению игроков кидали жребий, и кому он выпадал, ложился и притворялся мертвым. Другие на его рот, ноги, ладони клали камни и, стуча камень о камень, обходили покойника, крича: «Приходи, Сатана», «Похорони этого мертвеца». При этом слове покойник мгновенно вскакивал и, собирая положенные на него камни, ударял всех, призывая его похоронить»⁴.

² Քաջբերունի (Քաբրիել Տեր-Հովհաննիսյան). Ճանապարհորդական նկարագրություններ, Երևան, 2003, էջ 171–172:

³ Там же, с. 172.

⁴ Վ. Հ. Բրոյան. Указ. раб., с 179.

Важный момент: в финале обоих «похорон» – всеобщее избиение и веселье.

Другой сюжет «веселых похорон» с мнимым покойником опубликован в том же 1899 г. очевидцем священнослужителем Вааном Тер-Минасяном. Это финальный эпизод монастырского праздника Абегатох⁵ – Либералии, отмечающегося в последний день Барекендана в армянской конгрегации в Иерусалиме. Действо условно можно назвать «Похороны Лазаря». Поскольку церковь является строгим хранителем традиции, особенно в диаспоре, то Абегатох следует считать одним из самых архаичных вариантов карнавала.

Духовенство после роскошного пиршества, песен, танцев всеобщим голосованием выбирало Предводителя процессии. Его короновали разноцветной бумажной короной, накидывали бумажную рясу, сажали на трон, давали в руки сплетенный из сухих трав посох. Процессия двигалась по территории армянского сектора Иерусалима. Когда шествие останавливалось, дьякон вопрошал: «Когда этот храм воздвигли, построили ограду, где ты был?». Предводитель отвечал: «В аду!». Дьякон: «Ага, значит ты убежал из ада и явился сюда! Ты должен быть наказан!». И иноки с шумом, гамом переворачивали трон. Тогда Предводитель притворялся умершим. Его снова клали на носилки и двигались к кладбищу с погребальными песнопениями, якобы хоронили. На кладбище его бросали в заранее подготовленную могилу. Епископ, дьякон или кто-либо из священников, притворяясь, что не знали о готовящейся участи, попевали на кладбище и, видя, что Предводителя сбросили в яму, поднимали галдеж, приказывая: «Лазарь, выходи, вставай, исчезни!». Лазарь сразу вылезал из могилы, почти голый, только обернутый в саван, и убежал, как считалось, назад в преисподнюю, а присутствующие, якобы испугавшись, устремлялись в храм. Так завершался праздник Абегатох⁶.

Отметим, что в архаичном карнавале после принятия христианства произошла замена имен персонажей (Предводитель, фармак, стал именоваться Лазарем), но не функций. По Евангелию от Иоанна (гл. 12), за шесть дней до Пасхи пришел Иисус в Вифанию, где был умерший Лазарь, которого он воскресил из мертвых. «Согласно преданию, Лазарь – единственный человек, побывавший в аду и вернувшийся из преисподней, рассказал о виденных им тайнах загробного мира и царившей там разгульной жизни»⁷.

⁵ Абегатох – по арм. дословно «отпускание (грехов) инока».

⁶ Վառնան վարդապետ Տէր-Մինասյան. Անդիր դպրութիւն եւ Առակք, Կ. Պոլիս, 1893, էջ 67–70:

⁷ «Согласно одной древней легенде, Лазарь во время пира Христа у Симеона Прокаженного рассказал о тайнах загробного мира. В конце XV в.

Приведем другие примеры пародийных похорон.

Чудовище хоронить. Вариант «веселых похорон» чудовища записан нами в 1984 году⁸. Организаторы игры – юноши, которые собираются на Барекендан у кого-либо дома. Одного из парней заворачивают в одеяло, якобы это чудовище-покойник. Другой юноша накидывает на себя покрывало, исполняя роль попа. Несколько парней ставят «покойника» на плечи и под пародийное пение похоронного ритуала начинают шествие по селу. К ним, нарочито грустной процессией, присоединяются юноши, девушки и дети. Когда доходят до кладбища, парни раскрывают одеяло, и все, якобы удивляясь обману, начинают смеяться и веселиться.

Похороны Карагеза. В армянском фольклорном театре теней «Карагез» является одним из самых типичных спектаклей, в котором разыгрывается сюжет «смерти и воскресения»⁹. Карагез – кукла, но в спектакле он выступает как реальный человек. Представление состоит из пяти эпизодов. В последнем из них Араб убивает Карагеза. Лежащего Карагеза громко оплакивает кукла-тень Аджиде Айваз. Он приглашает евреев и ребе, которые после торга, за плату начинают текстом-абракадаброй комично отпевать «покойника». Далее Карагеза кладут на носилки под громкие причитания и трагические возгласы Аджиде Айваз и двигаются похоронной процессией. Вдруг Карагез поднимается и, сидя на носилках, весело обращается к зрителям, хвастаясь, что удобно устроился (рис. 1). Далее он соскакивает с носилок и начинает избивать хоронивших его евреев.

Персонажи кукольного представления «Карагез» имеют двойственную функцию. Как участники теневого театра – это нереальные персонажи, тени, обитатели иного мира, преисподней. В то же время они, согласно тексту представления, воспринимаются как реальные люди, хотя это куклы. В данном случае куклы теневого театра сближаются с обрядовыми куклами календарного цикла.

В литературе, посвященной русскому народному театру, известно большое количество полевых записей и трудов этнографов В. Чичеро-

фигура Лазаря проникает в мистерии о рассказавшем пиршественный рассказ» (М. М. Бахтин. Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и ренессанса. М., 1990, с. 223). Армянам эта легенда была известна из Евангелия, но, как видим, разыгрывалась в Иерусалиме, а может быть, и не только там.

⁸ Полевые материалы автора (далее – ПМА), 1984, Артикский р-н, с. Ариндж.

⁹ Չ. Կ. Խ ա չ ա տ ը յ ա ն. Ղարադըղ (ստվերների թատրոն). – Հայ ազգագրութիւն և բանահյուսութիւն, հ. 7, Երևան, 1975, էջ 120:

ва¹⁰, В. Проппа¹¹, В. Гусева¹², Н. Савушкиной¹³, писателя С. Максимова¹⁴ и многих других, обращавшихся к сюжету мнимых похорон.



Рис. 1. Похороны Карагеца [ժ. Կ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Ղ ա ր ա գ յ ո գ (ստ-վ ե ր ն ե ր Ի Թ ա տ ր ո ն ն), ն Կ. № 8].

М. Бахтин приводит описание гротескного празднества карнаваль-ного типа в Руане в 1541 г. Здесь во главе процессии, изображавшей пародийные похороны, несли знамя с анаграммой имени Рабле, а затем во время праздничного пира один из участников в одежде монаха читал с кафедры вместо Библии «Хронику Гаргантюа»¹⁵.

Понятно, что пародийные похороны в определенной степени пов-торяют реальные, но не в трагическом, а в юмористическом, фарсовом ключе. Приведем пример «веселых похорон» из русской традиции: «Одетого в саван «мертвеца» укладывали на доски или салазки и с воем и плачем вносили в избу. Присутствующих заставляли прощаться с ним. У мнимого покойника были огромные зубы, вырезанные из карто-фелины или репы. Похоронная процессия включала и причет попа в рогоже с «кадиллом» – горшком с куриным пометом; дьякона, певчих. Сценки (их называли «кудесами») сопровождалась исполнением шу-точных непристойных песен, причитаний, молитв. В конце игры «покойник» оживал и убегал, пугая присутствующих.

¹⁷ Նույն դարաշրջանի պարսկական մզկիթներում հաճախ տեսնում ենք նշված առաջաստների առավել բարդ տարբերակը, երբ շեղանկյունների շարքին վերից նոր շարքեր ավելացնելով (երբեմն՝ տասնյակից ավելի) վարպետները ստանում էին գեղեցիկ լուսաստվերային միջավայր:

¹⁸ Ա. Թումանովն արևմտյան ճակատին սխալմամբ նշում է երկու լուսամուտ (А. Туманов. Монастырь Св. Фомы, с. 150)՝ չնկատելով արևմտյան զանգակատան ետևում քողարկված երրորդ լուսամուտը:


յամբ գլանային թաղով ծածկված սենյակներ: Դրանցից հյուսիսակողմյանը ծառայել է որպես հոգևորականների զգեստապահոց և ձեռագրատուն¹⁹, միևնույն ժամանակ այս ավանդատան հյուսիսարևմտյան անկյունային հատվածում կառուցված քարե աստիճաններով հնարավոր էր բարձրանալ նախ ավանդատան վերնահարկ, այնտեղից էլ՝ տանիք²⁰: Հարավակողմյան ավանդատանը եղել է վանքի թանգարանը, որտեղ պահվել են Ս. Հակոբ Մծբնեցու փայտյա Ս. Նշանը՝ Նոյան տապանից, Ս. Վարդան սպարապետի Ս. Նշանը՝ Տիրոջ խաչափայտից (Կենաց փայտի մասունք), Ս. Թովմա առաքյալի աջը, Հռիփսիմեանց Ս. Նշանն ու այլ մասունքներ²¹, գարդեր, հին մետաղադրամներ և այլն: Ըստ Ա. Այվազյանի՝ աղոթասրահում եղել են նաև վեց (երեքական՝ հյուսիսային և

¹⁹ Ս. Թովմա տաճարի ձեռագրատունը տարածաշրջանի խոշորագույն գրապահոցներից է եղել: XIX դ. վերջի դրուժյամբ այստեղ պահվել են 90-ից ավելի ձեռագրեր (հնագույնը՝ 1290 թ. Կիրիկիայի Դրագարկ քաղաքում գրված Ավետարանը), որոնք վանահայր Գրիգոր վրդ. Տեր-Ստեփանյանի կարգադրությամբ 1898 թ. համարակալել է Գևորգ Կոստանյան Տեր-Ստեփանոսյանցը [Մ ե ս ը ո պ վ ը դ. Մ ա ք ս ու տ ե ա ն. Նկարագրութիւն եւ յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոց վանուց եւ եկեղեցեացն Վերին Ագուլեաց. եկեղեցւոյն Տանակերտ գեղջ եւ անձանց մասնաւորաց. – «Արարատ» (Էջմիածին), 1911, հ. Բ, էջ 117]: Հետագա տարիներին անհայտ պատճառներով ձեռագրերի թիվը սկսում է պակասել. Ա. Թումանովը տաճարի ձեռագրատանն արձանագրում է 70 ձեռագիր (А. Туманов. Армянские древние рукописи монастыря Св. Фомы. – Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Тифлис, 1901, вып. XXIX, отд. I, с. 2), Ե. Լալայանը՝ 50 ձեռագիր (Ե. Լալայեան. Օրդուբադի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան եւ կամ Գողթն. – «Ազգագրական հանդէս», գիրք XII, 1904, էջ 155–171): Վերջին անդրադարձը կատարել է 1906–1907 թթ. այստեղ վանահայր եղած Մեսրոպ վրդ. Մաքսուդյանը, որի օրոք վանքում եղել է 58 ձեռագիր (Մ ե ս ը ո պ վ ը դ. Մ ա ք ս ու տ ե ա ն. նշվ. աշխ., էջ 117, հիշատակարանները տե՛ս «Արարատ», 1911, հ. Բ, էջ 118–126, հ. Գ, էջ 218–224, հ. Դ, էջ 314–318, հ. Ե, էջ 384–388, հ. Զ, էջ 460–465, հ. Է, էջ 562–568, հ. Թ, էջ 759–766, հ. Ժ, էջ 846–854, հ. ԺԲ, էջ 1003–1012, «Արարատ», 1914, հ. ԺԱ, էջ 1032–1036, հ. ԺԲ, էջ 1114–1118, «Արարատ», 1915, հ. Ա, էջ 69–78, հ. Դ–Ե, էջ 381–388):

²⁰ Ա. Այվազյան. Ագուլիս, էջ 28:

²¹ ՄՄ Հ^Բ 8205 ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ երբ 1632 թ. իսախանությունը վարդապետը ստանձնել է Գողթնի հոգևոր առաջնորդությունը, նշված մասունքները արդեն իսկ եղել են վանքում (Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 740): Մ. Փափազյանցը թանգարանում նշում է նաև Ս. Հակոբի աջի և տապանաձև տախտակի մեջ դրված Գայանեանց մասունքի մասին, որոնցից երկրորդը հավանաբար նույն վերոնշյալ Հռիփսիմեանց մասունքն է (Մ. Փափազեանց. նշվ. աշխ., էջ 40): Տե՛ս նաև А. Туманов. Монастырь Св. Фомы, с. 151–152, Ե. Լալայեան. Նախիջևանի գաւառ, էջ 310–311:

հարավային պատերի արևելյան հատվածներում), ավագ խորանում՝ յոթ, երկու ավանդատներում՝ երկուական որմնապահարաններ²²:



Նկ. 2. Ա. Տաճարի հատակագիծն ըստ Ա. Թումանովի նշված աշխատության չափագրության, 1890-ական թվականների սկիզբ (А. Туманов. Монастырь Св. Фомы, табл. 14), Բ. տաճարի հատակագիծն ըստ Ա. Այվազյանի նշված աշխատության չափագրության, 1970-ական թվականներ (Ա. Այվազյան. Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, գծ. 1):

Տաճարն ունեցել է նաև քառամույթ երեք զանգակատուն: Արևմտյան ու հյուսիսային զանգակատները կառուցվել են տաճարի պատերին կից՝ գույգ մույթերով և գույգ որմնամույթերով, հարավայինը՝ պատից մոտ մեկ մետր հեռավորության վրա, հարավային շքամուտքի ու արևմտյան պատի միջև: Արևմտյան զանգակատունը, ըստ յուսանկարիչ Ջավեն Սարգսյանի՝ մեզ տրամադրած լուսանկարի, եղել է մույթերն իրար կապող չորս կամարների և առագաստների վրա նստած առագաստային թաղով կառույց: Նմանատիպ հորինվածք է ունեցել նաև հարավային զանգակատունը, որտեղ, սակայն, աղյուսաշեն ծածկը (հավանաբար հետագա վերանորոգման արդյունք էր) հենված էր մույթերն իրար կապող կամարների և անկյուններում տեղավորված փոքրիկ տրոմպների վրա (ենթադրում ենք, որ նույն հորինվածքն է ունեցել նաև հյուսիսային զանգակատունը):

²² Աղոթասրահի (ըստ Ե. Լալայանի նկարագրության) և ավագ խորանի (ըստ Ա. Հովհաննիսյանի լուսանկարների) որմնապահարանները պահպանված են եղել նշտարածև կամարներով, որոնք «բաւականին տգեղացրել են ընդհանուր, գեղեցիկ տեսքը» (Ե. Լալայան. Նախիջևանի գաւառ, էջ 310):

գակատունը): Հարավային ու հյուսիսային զանգակատների տանիքներին եղել են հովհարածև վեղարով վեցասյուն փոքրիկ ուտոնդաներ:

Արևմտյան զանգակատունը, Ե. Լալայանի հավաստմամբ, կառուցվել է 1825 թ. պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի ծախքով, սակայն մի քանի տարի անց քանդվել. 1831 թ. Հախումյանների ծախքով տեղում կառուցվել է նոր զանգակատուն (ըստ նկ. 1-ի դա եղել է աղյուսաչեն կառույց)²³: Ինչ-ինչ պատճառներով այս զանգակատունը 1904 թ. ևս քանդվում է և տեղում սրբատաշ քարերով կառուցվում նոր զանգակատուն (երկու վերակառուցված շինություններն էլ իրենց արտաքին տեսքով համահունչ չեն եղել տաճարին)²⁴: Հյուսիսային և հարավային զանգակատների կառուցման մասին տեղեկություններ չեն պահպանվել²⁵:

Տաճարն Ագուլիսի՝ երբեմնի տասներկու եկեղեցիներից հիրավի ամենավեհաշուքն էր: Կառույցին առանձնահատուկ վեհություն էին հաղորդում երկգույն քարերի շերտավոր շարվածքով կառուցված արտաքին ճակատները և, անշուշտ, բարձր թմբուկը՝ ուղղանկյուն խորշերում գետեղված տասներկու լուսամուտներով: Մ. Փափազյանցի լուսանկարում (նկ. 1) երևում է, որ լուսամուտների բացվածքներն ի սկզբանե ավելի բարձր ու լայն են եղել և հետագայում փոքրացվել են, սլաքածև վերնամասերն էլ դարձվել են շրջանածև: Լուսամուտների չափսերի այս փոփոխությունը տեղի է ունեցել շինարարության ավարտից՝ 1695 թ. շատ չանցած, մինչև տաճարի որմնանկարումը²⁶, իսկ պատճառը, մեր կարծիքով, եղել է ոչ այնքան թմբուկին ավելի գեղատեսիլ տեսք հաղորդելը (ձևափոխման արդյունքում թմբուկի տեսքը միայն խաթարվել է. տե՛ս նկ. 3), որքան զուտ տեխնիկական խնդրի լուծումը. լուսամուտների լայն բացվածքները վերից եկող ծանրությունից առումով մտավախություն են ստեղծել, և բացվածքները նեղացնելով՝ շինարարները ստեղծել են զմբեթի ու վեղարի համար ավելի հուսալի հենարան:

Ս. Թովմա տաճարը հետաքրքիր է եղել իր գեղարվեստական հարդարանքով. արտաքին ճակատներն ու ավագ խորանի բեմառաջը զարդարված են եղել հարթաքանդակներով, իսկ արևմտյան շքամուտքի ճակտո-


²³ Նույն տեղում, էջ 308, Մ. Փափազյանց. նշվ. աշխ., էջ 36:

²⁴ Ե. Լալայան. Նախիջևանի գալուս, էջ 309, Հ. Ոսկեան. նշվ. աշխ., էջ 678–679:

²⁵ Հարավային զանգակատունը, ըստ տաճարի պատերին հարիւր երկգույն շերտավոր շարվածքի, ենթադրաբար ժամանակակից է եղել եկեղեցու կառուցմանը: Ենթադրվում է, որ այս զանգակատան տակ է գտնվել 1664 թ. վախճանված Խաչատուր վարդապետի՝ հին եկեղեցու հիմնադրի շիրիմը, որի վրա նրան հաջորդող Պետրոս վարդապետը «տաշած քարով մեծ մատուռ շինեց» (Զարթառ Ագուլիցի. Օրագրություն, Երևան, 1938, էջ 63–64, տե՛ս նաև Ա. Այվազյան. Ագուլիս, էջ 31):

²⁶ Ըստ երևույթին, լուսամուտները ձևափոխելու ընթացքում քարերն անփութորեն են շարվել: Նկ. 12-ում պարզ երևում է որմնանկարչական հիմնաշերտի՝ ճիշտ լուսամուտների փոքրացված մակերեսով առանձնացումը, ինչը վերոնշյալ հատվածներում անորակ աշխատանքի արդյունք էր:

նապատն (տիմպանոն) ու աղոթասրահը՝ վեհաշուք որմնանկարներով: Թե՛ հարթաքանդակները և թե՛ որմնանկարները, չհաշված նկարագրական բնույթի մի քանի ակնարկները (որոնց կանգրադառնանք ստորև), երբևէ գիտական ուսումնասիրության առարկա չեն եղել:



Նկ. 3. Ա. Տաճարի թմբուկը փոքրացված լուսամուտներով (դրվագ նկ. 1-ից), Բ. տաճարի թմբուկն իր նախնական տեսքով՝ մինչև լուսամուտների փոքրացումը (վերակազմությունը մերն է):

Հարթաքանդակներ

Տաճարի արտաքին ճակատներում տեղ են գտել ինչպես զարդաքանդակներ, այնպես էլ պատկերաքանդակներ: Ծակատների երկարությունը, մոտավորապես պատերի միջնամասով, ձգվում էր «սելջուկյան շղթան»²⁷, որը տաճարի խաչաթևերի առանցքում բարձրանում էր (արևելյան ու արևմտյան ճակատներում՝ աստիճանաձև), շրջանցում լուսամուտները (միաժամանակ վերջիններիս համար հանդիսանալով շրջակալ) և ճակտոնների հատվածում՝ դառնում խաչաքանդակ: Պատերի հատման հատվածներում «շղթաներն» ավարտվում էին և արդեն որպես միմյանց զուգահեռ զույգ գլանիկներ՝ ուղղահայաց իջնում մինչև գետնախարխիս: Պատերի հատման չորս ուղղահայաց գծերով, գլանիկների զույգերի միջով

²⁷ Այս թյուր անվանումը, ցավոք, վաղուց հաստատվել է գիտություն մեջ: Իրականում, որպես զարդատարր՝ այն ոչ շղթա է, ոչ էլ առավել ևս սելջուկյան: Ըստ կառուցման սկզբունքի՝ այն երկթեղ գծային հյուսվածագարդ է, իսկ սելջուկյան է կոչվում ընդամենը «սելջուկյան ճարտարապետական հուշարձաններում» տարածված լինելու պատճառով, մինչդեռ այս զարդանախշը շատ ավելի հին պատմություն ունի: Հայկական ճարտարապետության մեջ այն հանդիպում է ամենաուշը XI դ. սկզբից նախքան Հայաստանում սելջուկ-թուրքերի տիրապետության հաստատումը (Անիի Գագկաչեն տաճար, 1001–1010 թթ., Փրկչի եկեղեցի, 1036 թ.) և այնուհետ լայն տարածում գտնում ինչպես ճարտարապետական կառույցների զարդարանքում, այնպես էլ խաչքարերում ու տապանաքարերում:

3/4 սյան տեսքով գետնախարսից վեր էին բարձրանում կրկնակի ավելի լայն գլանիկներ և շղթաների հանդիպման հատվածից քիչ վերև ավարտվում գլուխները համապատասխան պատերի ուղղությամբ ուղղած երկ-գլխանի կենդանաքանդակներով, որոնց գոյության մասին մինչ այժմ և ոչ մի ուղեգրող կամ հետազոտող չի հիշատակել: Ցավոք, պահպանված լուսանկարներում երևում են միայն արևմտյան պատի երկու անկյունների կենդանաքանդակները (նկ. 1, 4), որտեղ հստակ տարբերակվում են երախը լայն բացած օձ-վիշապների գլուխները (հարավարևմտյան անկյան հարավակողմյան կենդանաքանդակը խիստ մշուշոտ է երևում. այդուհանդերձ հստակ է, որ ներկայացնում է այլ կենդանու, ամենայն հավանականությամբ ցլի):

Օձաքանդակի վերաբերյալ նշենք, որ նրա հայտնվելը եկեղեցու պատերին XVII դարում նորութունն էր: Օձը կամ օձակերպ վիշապը, սկսած ամենաուշն ուրարտական շրջանից, հայ արվեստում պատկերվել է որպես «կենաց ծառի» կամ, առհասարակ, սրբազան տարածքի պահպան, ինչը, կապված է հայոց մեջ հնուց եկող «կենսատարածքի և կենսարնթացի ազդային ընկալման» (որը քրիստոնեական շրջանում վերաձևակերպվեց որպես կորուսյալ դրախտ) ու նրա պահպանման խորհրդի հետ²⁸: Նույն պահպանման խորհրդով օձ-վիշապներին տեսնում ենք նաև միջնադարյան եկեղեցական և աշխարհիկ կառույցների պատերին: Առնջուց վանքի շրջապարիսպի մուտքի բարավորին (ենթադրաբար XII–XIII դդ.), Անիի հյուրանոցի հարավային շքամուտքի վերնամասում (XII–XIII դդ.) և Տիգրան Հոնենցի կառուցած եկեղեցու որմնախորշում (1215 թ.) տեսնում ենք միմյանց նայող օձ-վիշապներ, Անիի Շանուշի ու Մամխաթունի աշտարակներին (երկուսն էլ վերակառուցված 1210-ական թվականներին)²⁹ երկու օձերի միջև քանդակված ցլեր²⁹, իսկ Մրենի տաճարի (640 թ.) արևելյան յուսամուտն ու Եղեգիսի Ս. Նշան եկեղեցու (XIII դ.) հարավային յուսամուտը «գրկել» են միմյանց «կապված» և գլուխները դեպի հակառակ կողմերն ուղղած օձեր: Օձային-վիշապային հորինվածքների նկատմամբ հետաքրքրությունն աճում է հատկապես XVII դարում ի դեմս Դարաշամբի Մաղարդավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու (Թմբուկի նիստերը բաժանող գալարածև տասնվեց սյուները պսակվում են օձերի հակառակ ուղղությամբ թեքած երկու գլուխներով, 1643–1655 թթ.), Էջմիածնի Մայր տաճարի արևմտյան կամ մեծ զանգակատան (1654–1658 թթ.), Քանաքեռի Ս. Հակոբ եկեղեցու (արևելյան ճակատի վերնամասում քանդակված է օձերով պաշտպանվող դրախտային այգին, 1695 թ.) և այլ կառույցների որմնաքանդակների: Նշվածներից առանձնապես հետաքրքիր է Էջմիածնի Մայր տաճարի մեծ զանգակատունը, որն ուղղակի «հեղեղված» է վիշապաքանդակների տարբեր հորինվածքներով: Այստեղ Ս. Հրեշտակապետաց խո-

²⁸ Այս խորհրդի պատկերազրական ակունքների մասին մանրամասն տե՛ս Հ. Պետրոսյան. Հայաստան – դրախտ կորուսյալ. հայ ինքնության մի հարցույցի ձևավորման ակունքները. – Ինքնության հարցեր, Երևան, 2002, էջ 160–162:

²⁹ Հորինվածքը պատկերազրական առումով հիշեցնում է Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու (895–906 թթ.) քանդակները, որտեղ ցլերին փոխարինում են կանացի դիմաքանդակները: Վերջիններիս ականջներին ձգվող օձերի դեպքում, սակայն, պահպանիչ լինելը միանշանակ չէ:

րանի Հյուսիսային ու Հարավային լուսամուտներին տեսնում ենք երկու կողմերից խաչը պահող վիշապներին, զանգակատան երկրորդ Հարկի մույթերին՝ դրախտային պարտեզը պահպանող վիշապներին, իսկ առաջին Հարկի մույթերի անկյունային հատվածների պարուրաձև սյուները պսակված են առյուծների, ցլերի, արծիվների և օձերի գլուխներով: Վերջին երեքի ներկայությունը, կարծես, հուշում է Մարկոս, Ղուկաս և Հովհաննես ավետարանիչների խորհրդանիշների մասին, սակայն օձերի առկայությունը (հրեշտակի փոխարեն) իսկույն հերքում է այդ վարկածը հօգուտ ներկայացվածների՝ պահպանիչ լինելու տարբերակի, առավել ևս, որ թե՛ առյուծին, թե՛ ցլին և թե՛ արծիվին հատուկ է պահպանիչ բնույթը:

Ի դեպ, Մայր տաճարի մեծ զանգակատան նշված կենդանաքանդակները հայ արվեստում պահպանյալ կենդանիների՝ կառուցչի պատերի անկյունային հատվածներում քանդակված և հստակ թվագրություն ունեցող վաղագույն նմուշներն են: Նույն չորս կենդանիներին տեսնում ենք նաև Յղնայի Ս. Աստվածածին եկեղեցու պատերի անկյունային հատվածներին³⁰, որի կառուցման տարեթիվը թեև հստակ չէ, այդուհանդերձ այն կառուցվել է կամ 1653 կամ 1683 թթ., և հաշվի առնելով վերջինիս ու Ս. Թովմա տաճարի բավական մերձ լինելը (թե՛ Փիզիկական հեռավորության և թե՛ կառուցման ժամանակի առումով), մեծ հավանականությամբ կարող ենք ասել, որ Ս. Թովմա տաճարի անկյունային կենդանաքանդակների համար նախադեպ են ծառայել Յղնայի Ս. Աստվածածին եկեղեցու նույն հատվածների քանդակները, և Ս. Թովմա տաճարի մյուս երեք անկյուններին էլ քանդակված են եղել առյուծներ, արծիվներ ու ցլեր:

Տաճարի երեք շքամուտքերն էլ ունեցել են քանդակագործ ձևավորում: Իր շքեղությունը առանձնանում էր հատկապես արևմտյան շքամուտքը (նկ. 5), որը բաղկացած էր դռան բացվածքից³¹, նրա վրա նստած բարավորի մեծածավալ երկարավուն քարասալից (այն կրում էր շինարարական գլխավոր արձանագրությունը), վերջինիս վրա ավելի փոքրածա-

³⁰ Յղնայի Ս. Աստվածածին եկեղեցու քանդակներին նվիրված երկու ուսումնասիրություններում էլ պատերի անկյունային հատվածներին նշվում են երեք կենդանիներ՝ առյուծ, ցուլ և արծիվ (Ա. Այվազյան. Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, էջ 38, Լ. Կարապետյան. Յղնայի Սբ. Աստվածածին եկեղեցու քանդակային հարդարանքը. — ՊԲՀ, 2019, № 3, էջ 108–110): «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի» կողմից մեզ տրամադրված անտիպ լուսանկարներում, սակայն, նկատեցինք նաև չորրորդին՝ օձ-վիշապներին: Փաստորեն, այստեղ ևս կիրառվել է նույն էջմիածնական իմաստաբանական հայեցակարգը: Վերոնշյալ լուսանկարներում նաև նկատեցինք, որ կենդանիները տեղաբաշխված են «սիմետրիկ կերպով», այսինքն մեկ պատի երկու կողմերում նույն կենդանիներն են քանդակված (արևելյան պատին՝ օձերը, հարավայինում՝ առյուծները, հյուսիսայինում՝ ցլերը, արևմտյանում՝ արծիվները) և, ըստ երևույթին, նույն «սիմետրիան» գործել է նաև Ս. Թովմա տաճարի անկյունային քանդակների դեպքում:

³¹ Հիշատակելի է արևմտյան շքամուտքի փայտյա գեղեցիկ դուռը, որը, ըստ վերնամասի արձանագրության, 1694 թ. տաճարի համար պատվիրել է ազուլեցի Աստվածատուրի և Խաթունջանի որդի Խոջա Սեթը: 1980-ական թվականներին այն թեև խիստ քայքայված վիճակում, սակայն դեռ իր տեղում է եղել (Ա. Այվազյան. Ազուլիս, էջ 30):

վալ սալերով շարված ճակտոնապատից և այս ամենը գոտևորող կամարային վերնամասով շրջակալից, որն իրենից ներկայացնում էր պատի հարթությունից դուրս չեկող ու աստիճանաձև դեպի խորքը գնացող տրա-



Նկ. 4. Տաճարի հյուսիսարևմտյան անկյան օձաքանդակը (դրվագ Զ. Սարգսյանի լուսանկարից, 1980 թ., հրատարակվում է առաջին անգամ):



Նկ. 5. Տաճարի արևմտյան շքամուտքը (լուս.՝ XX դ. սկիզբ):

մատավոր և քանդակագործ երեք գոտիներից կազմված երիզվածք: Առաջին ներքին զարդագոտին, որն ամենալայնն էր, իրենից ներկայացնում էր XVII դ. հայ դեկորատիվ արվեստին խիստ բնորոշ քառաչարք շթաքարային (ստալակտիտային) գոտի, որտեղ վերին երեք շարքերը կազմում են շթաքարի քառանկյուն մանր «բջիջները», ստորին շարքը «փնջերը»: Միջին զարդագոտին ներկայացնում էր ստորին մասում ծոպերով ավարտվող պարուրաձև պարանիկի տեսքով 3/4 գլանիկ, վերին զարդագոտին՝ քառաթեղ գծային հյուսվածագործ: Հարավային և հյուսիսային շքամուտքերն ունեցել են պարզ ձևավորում. երկու դեպքում էլ տեսնում ենք երկու շրջակալներ՝ ներքինն՝ ակոսավոր գլանիկի ու արտաքինը՝ պարուրաձև պարանիկի տեսքով:

Արևմտյան շքամուտքի նշված հարդարանքն իրենից ներկայացնում է XVII դ. հայկական եկեղեցիների համար գրեթե տիպական դարձած հորինվածք, և քանի որ մինչ այժմ այն համակարգային չի ուսումնասիրվել, հարկ է դրան անդրադառնալ մի փոքր ավելի մանրամասն:

Եզրակալի նշված երեք զարդագոտիներն առանձին-առանձին բավական հին պատմություն ունեն³², սակայն դրանք շքամուտքերի ձևավոր-

³² Շթաքարը, որպես ճարտարապետական հարդարանքի տարր, հայ ճարտարապետության մեջ ներմուծվեց XI դ.՝ ի դեմս Անիի «Մանուչեի մզկիթ» կոչվող շինությունից առաստաղային հատվածի ձևավորման (С. М н а ц а к а н я н. Армянские сталактиты.– «Известия АН АрмССР», 1950, № 9, с. 56–57), և հետագա

Историко-филологический журнал
2020 № 3
Պատմափիլիսոփայական հանրեւ

ման տիպական հորինվածքի տարրեր դարձան հենց XVII դ.: Մեր նախնական դիտարկումներով դրանում մեծ դեր խաղացին վերոնշյալ Մաղարդավանքի Ս. Ստեփանոս եկեղեցին և էջմիածնի Մայր տաճարի արևմտյան զանգակատունը, որոնց գեղարվեստական հարդարանքում լայնորեն օգտագործվել են նշված զարդատարրերը, իսկ որպես շքամուտքի հարդարանքի տիպական դարձած հորինվածքի տարրեր՝ երեք զարդագոտիները սկսեցին լայնորեն կիրառվել 1660-ական թվականներից: Շքամուտքերում այս երեքին միանում են այլ զարդագոտիներ (Լորի Ս. Գևորգ եկեղեցու հարավային շքամուտք, 1666 թ., Մուղնու Ս. Գևորգ եկեղեցու արևմտյան և հարավային շքամուտքեր, 1664–1670 թթ. և այլն), որոշ դեպքերում կարող են կիրառվել դրանցից մեկը կամ երկուսը, սակայն քիչ չեն դեպքերը, երբ, ինչպես Ս. Թովմա տաճարում ենք տեսնում, ամբողջ շքամուտքի հարդարանքը նշված երեքով էլ սահմանափակվում է, ընդ որում՝ նույն հերթականությամբ (Ագուլիսի Ս. Քրիստափոր եկեղեցու արևմտյան ու հարավային շքամուտքեր, 1671–1675 թթ., Ս. Ստեփանոս եկեղեցու հարավային շքամուտք, XVII դ. վերջին քառորդ, Նորագավիթի Ս. Գևորգ

դարերում կիրառվեց հիմնականում գավիթների երգիկների, շքամուտքերի ծածկերի և բարավորների կամարային եցրակայների հարդարանքում:

Հայկական ճարտարապետության մեջ պարուրաձև պարանիկի տեսք ունեցող զարդագոտին իր արմատներով գնում է ամենաուշը մինչև VII դար [Ա. Ղ ա գ ա ր յ ա ն. Զարնջայի եկեղեցին և հովհարաձև կամարները. – «Անի» (Երևան), 1992, № 3–4, էջ 47–48, Ն ու յ ն ի՝ Кафедральный собор Сурб Գագառի и восточнохристианское зодчество IV–VII веков. М., 2007, с. 98–99]: XII դարից այն ներառվում է նաև շքամուտքերի հարդարանքում (Սանահինի վանքի գրատուն, Պեմգաշենի Մակարավանք և այլն): Այս շրջանի՝ մեզ հայտնի հուշարձաններից միայն Անիի Ս. Առաքելոց եկեղեցու գավթի (XII դ.) և հյուրանոցի (XII–XIII դդ.) շքամուտքերն են, որ ամբողջովին գոտեկրված են պարուրաձև զարդագոտիով, որոնց էլ հորինվածքային առումով կարելի է XVII դ. լայն տարածում գտած շքամուտքերի պարուրաձև զարդագոտիների նախաօրինակները համարել: Ընդ որում՝ հարկ է նշել, որ հայ արվեստում հենց XVII դարից սկսեց ընդգծվել նշված զարդագոտու «պարանային բնույթը»՝ ի դեմս ծոպավոր ծայրերի, որոնք նախորդ դարերում չէին հանդիպում: Նույն դարում նկատվող հորինվածքային առանձնահատկությունն էր նաև պարանի թելերի ուղղության փոփոխությունը, որը որոշ դեպքերում կարող էր փոփոխվել յուրաքանչյուր քարի հետ (Ս. Թովմա տաճարի արևմտյան շքամուտքի դեպքում ընդամենը երկու անգամ է փոփոխվում): Իսկ թե խորհրդաբանական առումով պարանի տակ ինչ ծիսական իմաստ է թաքնված (եթե, իհարկե, այդպիսին առկա է)՝ առայժմ դժվար է ասել:

Հայ արվեստում գծային հյուսիկն զարդագոտին ևս հանդիպում է վաղ միջնադարից սկսած (ոսկյա խաչ Դվինից, VI–VII դդ., Հայաստանի պատմության թանգարան): Զարգացած միջնադարի հայ զարդարվեստում տարածում են գտնում առավելապես եռաթել ու քառաթել տարբերակները, որոնց թելերը հիմնականում բաղկացած են երկու կամ երեք մանրաթելերից: Ամբողջական թելերից կազմված քառաթել հյուսիկն զարդագոտիները, որի օրինակ է և Ս. Թովմա տաճարի արևմտյան շքամուտքի նշված զարդագոտին, տարածում ստացան XVII դարից սկսած:

եկեղեցու արևմտյան շքամուտք, 1690-ական թթ., Քանաքեռի Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան շքամուտք, 1695 թ. և այլն):

Ս. Թովմա տաճարը թե՛ գեղարվեստական արտաքին հարդարանքի միջոցներով ու թե՛ ճարտարապետական մանրամասների առումով ամենաշատը հարազատ է Յղնայի Ս. Աստվածածին եկեղեցուն: Անշուշտ, երկու եկեղեցիներն՝ գմբեթավոր բազիլիկ տիպին պատկանելուն կամ շքամուտքերի միատեսակ ձևավորում ունենալուն (Ս. Աստվածածին եկեղեցու շքամուտքերում կիրառվել են Ս. Թովմա տաճարի երեք զարդագոտիները՝ գումարած ալլք) կարելի էր բնավ ուշադրություն չդարձնել, եթե այլ մանրամասներում նմանությունները պարզապես աչքի չզարնեին: Երկու դեպքում էլ տեսնում ենք արտաքին ճակատներով ձգվող, խաչաթևերի հատվածում աստիճանաձև բարձրացող, լուսամուտները շրջանցող և ճակտոնի հատվածում խաչաքանդակով պսակվող «սելջուկյան շղթան», արտաքին պատերի անկյունային հատվածների կենդանաքանդակները, իսկ ճարտարապետական մանրամասների առումով հատկանշական են հյուսիսային ավանդատնով տանիքի հյուսիսարևելյան հատված դուրս գալու գաղտնուղին ու ավագ խորանի խաչաձև լուսամուտները (Ս. Աստվածածին եկեղեցու դեպքում կրկնակի լուսամուտներ են): Միով բանիվ, եթե նույնիսկ երկու եկեղեցիները միևնույն ճարտարապետի ստեղծած կառույց չհամարենք, ապա Ս. Թովմա տաճարի դեպքում առնվազն կարող ենք խոսել Յղնայի Ս. Աստվածածնի հորինվածքը որպես ելակետ ընտրելու մասին:

Ինչպես նշեցինք, Ս. Թովմա տաճարի ճակատները զարդարել են նաև պատկերաքանդակները: Արևմտյան, հարավային և հյուսիսային շքամուտքերի ճակտոնապատերին (բարավորների արձանագիր սալերի ու կամարների միջև) համապատասխանաբար տեղ են գտել «Թովմայի անհավատությունը» և Պետրոս ու Պողոս առաքյալների հարթաքանդակները:

Պետրոս առաքյալը (նկ. 6) պատկերված է կարճ մագերով և մորուքով, լուսապսակով, հագին՝ քիտոն ու մինչև գետին հասնող թիկնոց: Ըստ Ա. Այվազյանի (միակն է, որ հիշատակում է այս հարթաքանդակի մասին)՝ Պետրոս առաքյալը «ձախ ձեռքում բռնել է բավական մեծ կշեռքի քանդակ, որը ևս խորհրդանշել է»³³: Իրականում Պետրոսի ձախ ձեռքին երկու բանալիներ են՝ նրա ամենատարածված պատկերագրական կերպարի հիմնական տարրերը, որոնք խորհրդանշում են դրախտի և դժոխքի դարպասները³⁴:

³³ Ա. Այվազյան. Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, էջ 31: Նախորդ հրատարակման մեջ Այվազյանը քանդակված անձին նշել էր որպես հին եկեղեցու հիմնագիր Խաչատուր վարդապետ [նույնի՝ Ագուլիսի և Յղնայի պատկերաքանդակները. — «Գաբուն» (Երևան), 1981, № 8, էջ 83]:

³⁴ Պետրոս առաքյալի՝ բանալի(ներ) բռնած պատկերագրական կերպարը ծագում է Մատթեոսի Ավետարանից (Մատթ. 16:18–19): Նույն բանալիներով պատկերագրական կերպարով է Պետրոսը հանդես գալիս նաև «Ահեղ դատաստան» տեսարանում, որտեղ արդարներին առաջնորդում է դեպի դրախտ (տե՛ս

Պողոս առաքյալը (նկ. 7) պատկերված է դարձյալ լուսապսակով և նույնպիսի զգեստներով, սակայն երկար մագերով ու մորուքով: Ըստ Մ. Փափազյանցի՝ Պողոսի «մի ձեռին գալազան է և միևս ձեռին գիրք»³⁵, նույնպես և ըստ Ե. Լալայանի՝ «մի ձեռքին գալազան է, միևսին՝ ալեստարան»³⁶, իսկ Ա. Այվազյանի՝ «ձախ ձեռքին բռնել է գավազան-խաչափայտը, իսկ աջ ձեռքում՝ օձ և թևի տակ ունի Ավետարան»³⁷: Պողոսի աջ ձեռքին գիրք է, սակայն այն ոչ թե Ավետարանն է խորհրդանշում, այլ



Նկ. 6. Հարավային շքամուտքի Պետրոս առաքյալի հարթաքանդակը (լուս.՝ Ա. Այվազյանի, 1970-ական թվականներ):



Նկ. 7. Հյուսիսային շքամուտքի Պողոս առաքյալի հարթաքանդակը (լուս.՝ Ա. Այվազյանի, 1970–1980-ական թվականներ):

Պողոսի գրած 14 առաքելական թղթերը, որոնք ուղեցույց են համարվում Ընդհանրական եկեղեցու համար և գրվել են Ավետարաններից ավելի վաղ³⁸: Իսկ ձախ ձեռքով Պողոսն իրականում բռնել է ոչ թե գավազան, այլ գետնին հենած թուրը (Պողոսի պատկերագրության հիմնական տարրերից է), որը մի կողմից խորհրդանշում է նրա վախճանը, մյուս կողմից հղում է եփեսացիներին ուղղված թղթի տողերին՝ «Եւ առէ՛ք զսաղաւարտն փրկութեան, եւ զսուսեր հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ» (Եփես. 6:16): Ինչ վերաբերում է «օձին», ապա լուսանկարում (նկ. 7) պարզ երևում է, որ ոչ

նաև J. H a l l. Dictionary of Subjects and Symbols in Art. New York, 1974, pp. 239–240):

³⁵ Մ. Փ ա փ ա զ ե ա ն ց. նշվ. աշխ., էջ 37:

³⁶ Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Նախիջևանի գալառ, էջ 309:

³⁷ Ա. Ա յ Վ ա զ յ ա ն. Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, էջ 31, տե՛ս նաև ն ու յ ն ի՝ Ագուլիսի և Յղնայի պատկերաքանդակները, էջ 83:

³⁸ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 84:

մի օձ էլ պատկերված չէ, այլ ընդամենն առաքյալի զգեստի՝ վեր բարձրացված ծալքն է:

Պետրոս և Պողոս առաքյալները քրիստոնեական ուսմունքի տարածման առանցքային գործիչներ են: «Գլխավոր առաքյալներ» համարվող այս անձինք խորհրդանշում են նաև քրիստոնեական եկեղեցու երկու հիմքերը. Պետրոսը եկեղեցու հիմքի հուղայական տարրն է, Պողոսը՝ հեթանոսական: Հատկանշական է, որ, ըստ ավանդույթյան, երկուսն էլ Հռոմում կտտանքներ են կրել ու մահապատժի ենթարկվել նույն օրը. Պետրոսն իր իսկ ցանկությունը մահապատժի է ենթարկվել գլխիվայր (նրա խորհրդանշաններից է շրջված խաչը), իսկ Պողոսի համար, քանի որ հռոմեական քաղաքացի էր, առավել մեղմ պատիժ է ընտրվել՝ գլխատումը (այստեղից էլ թուրը՝ որպես նրա պատկերազրույթյան տարր)³⁹:

Քրիստոնյա աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում, երկու առաքյալների այս կապը նշանավորվում է ինչպես նրանց նվիրված տոներով և եկեղեցիների անվանակոչությամբ, այնպես էլ՝ արվեստի բազմաթիվ հուշարձաններով, որտեղ նրանք պատկերվում են կամ երկուսով⁴⁰, կամ այլ կերպարների հետ⁴¹, կամ էլ, ինչպես Ս. Թովմա տաճարի դեպքում է՝ առանձին, սակայն նույն «համատեքստում»⁴²:

Թեմատիկ առումով ավելի հետաքրքիր է «Թովմայի անհավատությունը» հարթաքանդակը (նկ. 8)⁴³, որն այնքան էլ հաճախ չի հանդիպում հայ արվեստում, և, թերևս, մի կողմից այդ, մյուս կողմից՝ եկեղեցու «գլխավոր» հարթաքանդակ հանդիսանալու պատճառով կարելի է բացատրել այն հանգամանքը՝ ի տարբերություն Պետրոսի ու Պողոսի, այս հարթաքանդակը (նույնպես և դրան կից որմնանկարները) վանք այցելած ուղեգրողների կամ հետազոտողների հիշատակություններում ավելի հաճախակի է նշվել⁴⁴:

³⁹ J. H a l l. Նշվ. աշխ., էջ 237:

⁴⁰ Էջմիածնի Ավետարանի (ՄՄ, Հ^ր 2374 ձեռ.) փղոսկրյա կազմի ստորին փեղկի կենտրոնական տեսարան (VI–VII դդ.), Բագարանի Ս. Թեոդորոս տաճարի (624–631 թթ., չի պահպանվել) հյուսիսային աբսիդ, Աղձոց Ս. Ստեփանոս վանքի Ս. Պողոս–Պետրոս եկեղեցու (1270 թ.) արևմտյան ճակատ, Յղնայի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային շքամուտքի ճակտոնապատ:

⁴¹ Մրենի տաճարի (640 թ.) արևմտյան շքամուտքի բարավոր, Հովհաննավանքի թևավոր խաչքար (այժմ՝ Էջմիածնում, 1173 թ.), Կարմրաշենի որմնափակ խաչքար (քանդակված են միայն գլուխները, 1291 թ.), Ամաղուի Նորավանքի Բուրթելաշեն եկեղեցու (1339 թ.) երկրորդ հարկի շքամուտքի բարավոր, նույն եկեղեցուն կից կանգնեցված Բուրթել իշխանի խաչքար (1318 թ.):

⁴² Այս խմբին են դասվում նաև Էջմիածնի Մայր տաճարի արևմտյան շքամուտքի երկու կողմերում, Ս. Գայանե եկեղեցու նախասրահի երկու մուկթերին և Մեղրիի Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ավագ խորանին կից երկու որմնամուկթերին պատկերված Պետրոսի ու Պողոսի որմնանկարները:

⁴³ Տեսարանի համար հիմք է ծառայել Հովհաննեսի Ավետարանի համապատասխան դրվագը (Հովհ. 20:19–29):

⁴⁴ B. C h a n t r e. A travers L'Arménie Russe.– “Le Tour Du Monde” (Paris), 1891, deuxième semestre, p. 270; Մ. Փ ա փ ա գ ե ա ն ց. Նշվ. աշխ., էջ 36–37, A. T y m a n o v. Монастырь Св. Фомы, с. 150; Ե. Լ ա լ ա յ ե ա ն. Նախիջևանի

Ի տարբերություն Պետրոսի և Պողոսի հարթաքանդակների՝ «Թովմայի անհավատությունն» առնված է ուղղանկյուն շրջանակի մեջ: Աջ կողմում տեսնում ենք Քրիստոսին՝ ձախ ուսին գցած և գոտկատեղին փաթաթած հիմատիոնով, աջ ձեռքը՝ օրհնության շարժմունքով վեր պարզած⁴⁵, իսկ ձախով՝ բռնած խաչափայտը: Ձախ կողմում պատկերված է ծնկաչոք, դեպի Քրիստոսը հակված և աջ ձեռքով վերջինիս խոցված կողը շոշափող Թովմա առաքյալը: Նա պատկերված է լուսապսակով, գանգուր մագերով ու կարճ մորուքով, հագին՝ երկարաթև քիտոն և հիմատիոն: Երկու ֆիգուրներն էլ կերտված են շատ պլաստիկ և արտահայտիչ:

«Թովմայի անհավատությունը» տեսարանը համաշխարհային արվեստում հանդիպում է արդեն իսկ IV դարից: Խոսելով տեսարանի պատկերազրույթյան մասնավորապես գլխավոր երկու անձանց փոխհարաբերությունը պայմանավորող Քրիստոսի ձեռքի դիրքի մասին՝ կարելի է առանձնացնել հիմնականում չորս պատկերատիպ: Առաջին՝ Հնագույն պատկերատիպում Քրիստոսը, ցանկանալով Թովմային ցույց տալ վիրավոր կողը, աջ ձեռքը բարձրացրել է և հպել գլխին⁴⁶: Երկրորդում՝ Քրիստոսի ձեռքն ուղղված է առաջ⁴⁷, ամեն էլ կարող է լինել ինչպես բաց, այնպես էլ՝ օրհնության շարժմունքով: Երրորդում՝ Քրիստոսը կարծես խլել է Թովմայի ձեռքը և մոտեցնում է իր կողին⁴⁸: Չորրորդում

գալառ, էջ 307, Հ. Ոսկեան. նշվ. աշխ., էջ 677, Ա. Այվազյան. Ազուլիսի և Յղնայի պատկերաքանդակները, էջ 82, նույնի՝ Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, էջ 31:

⁴⁵ Ձեռքի «օրհնության շարժմունքը կամ ժեստը» (կոչվում է նաև «պապական շարժմունք», իտալ.՝ “Mano Pantea”, բառացի՝ «ամենաստվածուհու ձեռք») ճկույթն ու մատնեմատը ծալած, և միջնամատը, ցուցամատն ու բուլթը պարզած շարժմունքն է, որ ծագելով հելլենիստական շրջանից՝ հատկապես տարածված է կաթոլիկ եկեղեցու պատկերազրույթյան մեջ:

⁴⁶ Հնագույն օրինակներ են համարվում Բրեսկիայի Սանտա Զուլիա թանգարանի օնիքսե սարկոֆագի (ենթադրաբար IV դ.) և Միլանի Սանտա Մարիա (Ս. Յելսիա) եկեղեցու սարկոֆագի (IV–V դդ.) հարթաքանդակները: Կա տեսակետ, որ այս պատկերատիպի համար հիմք են ծառայել հելլենիստական շրջանում տարածված վիրավոր ամազոնուհիների քանդակները, որտեղ ևս վերքը ցուցադրելու համար առկա է ձեռքի նույն շարժմունքը (P. R. Crowley. Doubting Thomas and the Matter of Embodiment on Early Christian Sarcophagi.– “Art History” (London), 2018, vol. 41, issue 3, pp. 567–578):

⁴⁷ Հնագույն օրինակ է համարվում Լոնդոնի Բրիտանական թանգարանի ուշ հռոմեական փղոսկրե արկղի (420–430–ական թվականներ, հայտնի է որպես “The Maskell Passion Ivories” – Մասկելի՝ Չարչարանքների փղոսկրե քանդակներ) վերջին՝ չորրորդ տախտակի բարձրաքանդակը [F. Harley – McGowan. The Maskell Passion Ivories and Greco–Roman art: notes on the iconography of crucifixion.– “Envisioning Christ on the Cross: Ireland and the early medieval West” (Dublin), 2013, pp. 13–14]:

⁴⁸ Հնագույն օրինակներ են համարվում Ստրասբուրգի Ս. Թովմա եկեղեցու ճակատակալ քարի բարձրաքանդակն ու Միդիաթում ու Փարիզում պահվող երկու ասորական Ավետարանների մանրանկարները. բոլորն էլ XIII դ. I կես:

Քրիստոսը Թովմայի ձեռքը տեղադրում է վերքի մեջ⁴⁹: Չորս պատկերատիպերում էլ աշակերտները կարող են պատկերված լինել կամ չլինել (որպես կանոն պատկերվում են կամ Քրիստոսի երկու կողմերում, կամ ձախից՝ Թովմայի ետևում): VI դարից (Ռավեննայի Սանտ-Ապոլինարե-Նուովո եկեղեցու խճանկար) սույն տեսարանում հանդիպում են փակված դռներ (որպես կանոն՝ պատկերվում են Քրիստոսի ետևում)⁵⁰ մի կողմից հղելով Հովհաննեսի Ավետարանի տողերին («գայ Յիսուս դրաւքն փակելովք ...», Հովհ. 20:26) և մատնացույց անելով, որ Քրիստոսը մահանացուի նման չի մտել բաց դռնով, այլ հայտնվել է, մյուս կողմից՝ հղելով Եզեկիել մարգարեի խոսքերին. «Եւ ասէ ցիս Տէր. Այդ դռուն փակեալ կացցէ եւ մի՛ բացցի, եւ մի՛ ոք անցցէ ընդ դա, զի Տէր Աստուած Իսրայելի մտցէ ընդ դա, եւ եղիցի փակեալ» (Եզեկ. 44:2)⁵⁰: X դարից Քրիստոսի մյուս ձեռքին հաճախ խաչ է պատկերվում (որոշ հուշարձաններում դրա փոխարեն կարող է լինել դրոշակ կամ գալարակ):

Մեր խնդրո առարկա հարթաքանդակը հայ արվեստում սույն տեսարանի միակ քանդակային պատկերումն է և ներկայացնում է վերոնշյալ երկրորդ պատկերատիպի պարզ՝ երկֆիգուր տարբերակը⁵¹, ինչը, սակայն, հնարավորութուն չի տալիս պատկերագրական առումով գննել այն հուշարձանները, որոնք կարող էին հիմք դառնալ տվյալ հարթաքանդակի ստեղծման համար: Նշենք միայն, որ ձեռքն առաջ ուղղած այս պատկերատիպը բնորոշ է հիմնականում բյուզանդական արվեստին և հազ-

Այս պատկերատիպն ենք տեսնում նաև հայ արվեստում տվյալ տեսարանը պատկերող առաջին և մինչ այժմ լավագույն օրինակում՝ Թորոս Ռոսլինի ծաղկած 1268 թ. Մալաթիայի Ավետարանի (ՄՄ, Հ^մ 10675 ձեռ.) մանրանկարում (տե՛ս Լ. Չոլգասուգյան. Թորոս Ռոսլինի «Թովմայի անհավատությունը» մանրանկարը. - «Բանբեր Մատենադարանի», № 16, 1994, էջ 36-38, Կ. Դրամբյան. Торо Рослин. Ереван, 2015, илл. XIII):

⁴⁹ Հնագույն օրինակ է համարվում Մոնցայի Հ^մ 9 տափաշշի հարթաքանդակը (J. Lero y. Les manuscrits syriaques à peintures conservés dans les bibliothèques d'Europe et d'Orient. Paris, 1964, p. 277):

⁵⁰ Ю. Бобров. Основы иконографии памятников христианского искусства. М., 2010, с. 140-141.

⁵¹ Հայ արվեստում տվյալ տեսարանի առաջին օրինակին՝ Թորոս Ռոսլինի վերոնշյալ մանրանկարին հետևում է 1272 թ. Կեռան թագուհու Ավետարանի (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի հավաքածու, Հ^մ 2563 ձեռ.) մանրանկարը՝ կերտված Ռոսլինի աշակերտի կողմից: Երկուսն էլ բացառիկ են նախ և առաջ «Թովմայի անհավատությունը» և «Հանդիպումն Գալիլեայում» թեմաները միացնելու առումով (Լ. Չոլգասուգյան. նշվ. աշխ., էջ 32-35): Այնուհետև գալիս են Մաշտոցյան մատենադարանում պահվող և XIII դ. վերջից մինչև XVII դ. ստեղծված մի շարք ձեռագրերի մանրանկարներ (ցանկը տե՛ս Ա. Գեորգեան. Հայ մանրանկարիչներ. մատենագիտություն, IX-XIX դդ., Գահրե, 1998, էջ 759): Արտասահմանյան հավաքածուներից հիշատակելի է նաև Օքսֆորդի Բոդլիի գրադարանում պահվող 1609 թ. Ավետարանի մանրանկարը (Catalogue of the Armenian manuscripts in the Bodleian library, № 53, by the rev. S. Baronian and F. C. Conybeare F. B. A. Oxford, 1918, pp. 107-108):

վաղեպա՝ արևմտաեվրոպական հուշարձաններին, իսկ ձեռքի խաչի պատկերումը հիմնականում բնորոշ է արևմտաեվրոպական հուշարձաններին⁵²:

Ինչպես նշեցինք, հարթաքանդակներ եղել են նաև Ս. Թովմա տաճարի աղոթասրահում՝ ավագ խորանի բեմառաջքին, որի պատկերաշարի մասին հնագույն հիշատակությունը պետք է համարել 1849 թ. Հայաստանում շրջագայած գերմանացի գծանկարիչ Յու. Կեստների նկարագրությունը, որը վկայաբերում է Ալիշանը. «Քէստնէր Առաքելոց պատկերս ասէ զնկարան, զորս ի դէպ է կարծել նկարեալս ի կճափայլ որմունս խորանին ...»⁵³: Ըստ 1890 թ. վանք այցելած Ֆրանսիացի հնագետ Էրնեստ Շանտրեի՝ «Եկեղեցու ներսում գտնվում է մարմարե խորանը՝ զարդարված և նկարված պարսիկ նկարչի կողմից»⁵⁴: Մ. Փափազյանցի բնորոշմամբ՝ «Բեմի առաջը բարձրացած է մարմարեայ քարով, որոնց իւրաքանչիւրի երկարութիւնն է մօտ 2 արշին, իսկ լայնութիւնը 1 արշին, բոլոր քարերի վերին մասերում փորագրուած և ներկուած է գեղեցիկ գոյն զգոյն նկարներ, վերջին երկու ծայրերում մարմարեայ քարերի վրայ, աստիճանների տակ փորագրուած է Ս. Ստեփանոս Նախավկայի պատկերը սարկաւակի զգեստով»⁵⁵: Ըստ Ե. Լալայանի՝ «Բեմի արևմտեան երեսը մարմարիոնից է, առաքեալների պատկերներով և ծաղկանկարներով զարդարուած»⁵⁶:

Այսպիսով, Կեստների և Լալայանի նկարագրություններից պարզ է դառնում խոսքը տասներկու առաքյալների պատկերաշարի մասին է, որոնք ձևավորված են եղել ծաղկային զարդանկարներով: Փափազյանցի «փորագրուած» բառը հուշում է, որ դրանք եղել են հարթաքանդակներ (մյուսների կիրառած «պատկերներ» կամ «նկարներ» բառերը չեն հակասում սրան. դրանք միանգամայն կարող էին վերաբերել նաև հարթաքանդակներին), իսկ «երկու ծայրերում», «աստիճանների տակ փորագրուած» Ս. Ստեփանոսի պատկերը, ամենայն հավանականությամբ, եղել է ձախակողմյանը, մինչդեռ աջակողմյանը, մեր կարծիքով, եղել է Փիլիպոս սարկավագի կամ ավետարանիչի (չչփոթել Փիլիպոս առաքյալի հետ) քանդակը՝ դարձյալ սարկավագական հանդերձներով, ինչն էլ, ըստ երևույթի, չփոթեցրել է Փափազյանցին և նույնականացրել երկու կերպարները: Ս. Փիլիպոսի վարկածն առաջ ենք քաշում՝ հիմնվելով հայկական եկեղեցիների բեմառաջքների՝ XVII–XVIII դդ. որոշակի տարածում գտած հորինվածքի վրա (Էջմիածնի Մայր տաճար, Ս. Հռիփսիմեի տաճար), որտեղ կենտրոնական հատվածում պատկերվում էր Տիրամայրը մանկան հետ, նրանց երկու կողմերում տասներկու առաքյալները, իսկ ծայրերում՝ Ս. Ստեփանոս նախավկան և Փիլիպոս սարկավագը:

⁵² Լ. Չոլագասյան. նշվ. աշխ., էջ 36, 39:

⁵³ Ղ. Մ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 327:

⁵⁴ B. Chantre. նշվ. աշխ., էջ 270: Նկարչի՝ պարսիկ լինելը, անշուշտ, անհիմն է. հեղինակն այդ «եզրակացությունը» եկել է, թերևս, որմնանկարների ոճի տպավորության տակ:

⁵⁵ Մ. Փափազյանց. նշվ. աշխ., էջ 39:

⁵⁶ Ե. Լալայան. Նախիջևանի գաւառ, էջ 310: Նույն խոսքերը բառացի տեսնում ենք Ս. Ոսկեան. նշվ. աշխ., էջ 682:

Որմնանկարներ

«Թովմայի անհավատությունը» հարթաքանդակի կերտումից որոշ ժամանակ անց չքամուտքի ճակտոնապատը գեղարվեստորեն ավելի հարուստ դարձնելու նպատակով քանդակի կողային և վերին հատվածները լրացվել է որմնանկարներով, իսկ վերջում ներկվել է նաև բուն հարթաքանդակը: Չախակողմյան հատվածում տեսնում ենք ձեռքերը կրծքին խաչած Աստվածամորը, գլխավերևում՝ կանացի դեմքով արեգակ, աջակողմյան հատվածում ձեռքերը դեպի Քրիստոսն ուղղած Մարիամ Մագդաղենացին է, գլխավերևում՝ լուսին, հարթաքանդակից վեր՝ հորիզոնական շրջանակի և կամարի միջև երկու ձեռքերը տարածած Հայր Աստվածն է սպիտակամորուս ծերունու տեսքով: Պահպանվել է նկարիչ Գրիգոր (Գրիգ) Շարբաբեյանի (1884–1942)՝ սույն տեսարանը պատկերող ջրանկար-էսքիզը (նկ. 9)՝ արված, ենթադրաբար, 1913 թ.⁵⁷, որի շնորհիվ պատկերացում ենք կազմում նաև որմնանկարների գույների մասին: Աստվածամոր հագին տեսնում ենք շագանակագույն քիտոն և կանաչավուն թիկնոց ու գլխաշոր, Մագդաղենացու հագին՝ կանաչավուն քիտոն և շագանակագույն հիմատիոն ու գլխաշոր: Ի տարբերություն Աստվածամոր՝ Մագդաղենացին լուսապսակ չունի: Հայր Աստծո հագին ևս շագանակագույն հիմատիոն է: Տեսարանի վերին հատվածը ներկված է եղել մուգ կապույտով, իսկ Հայր Աստծո հատվածում կապտավուն կորերի միջոցով նկարիչը փորձել է ստեղծել սպիտակ ամպերի քուլաների պատկեր: Հարթաքանդակում Քրիստոսի և Թովմայի լուսապսակները ոսկեգույն են, Քրիստոսի հիմատիոնը ներկված է բաց շագանակագույն, Թովմայի քիտոնն ու հիմատիոնը՝ համապատասխանաբար կանաչավուն և կապտավուն:

Աստվածամայրը, Մարիամ Մագդաղենացին, արեգակն ու լուսինը⁵⁸ միաժամանակ հանդիպում են միայն խաչելության տեսարաններում, այսինքն՝ որմնանկարների ներմուծմամբ ընդհանուր տեսարանում փորձ է արվել միավորվել «Թովմայի անհավատությունը» և «Խաչելություն»


⁵⁷ Թվագրություն համար հիմք ենք ընդունել Շարբաբեյանի՝ Ագուլիսի Ս. Քրիստափոր եկեղեցու որմնանկարների ջրանկարը (պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում), որն արդեն ունի հստակ թվական՝ 1913:

⁵⁸ Ըստ Հովհաննեսի Ավետարանի՝ խաչելության ժամանակ Քրիստոսի խաչի մոտ են եղել Մարիամ Աստվածածինը, նրա քույրը՝ Կղեոպասի կին Մարիամը, Մարիամ Մագդաղենացին և Հովհաննեսը (Հովհ. 19:26–27): Խաչելության տեսարաններում, սակայն, խաչի երկու կողմերում հիմնականում պատկերվում են կամ Աստվածածինն ու Մագդաղենացին, կամ Աստվածածինն ու Հովհաննեսը: Ինչ վերաբերում է բավական հին՝ դեռևս նախաքրիստոնեական արձաններ ունեցող արեգակի և լուսնի այլաբանական պատկերներին, ապա խաչելության տեսարաններում դրանք մի կողմից խորհրդանշում են Ավետարաններում հաղորդված տեղեկությունը, ըստ որի՝ կեսօրին երկրի վրա խավար իջավ մինչև ժամը 3-ը՝ Քրիստոսի մահվան ժամը (Մատթ. 27:45, Մարկ. 15:33, Ղուկ. 13:44), մյուս կողմից՝ Հին (լուսինը) և Նոր (արեգակը) կտակարանները (տե՛ս J. Hall. Նշվ. աշխ., էջ 85–86):

Թեմաները: Մեզ հայտնի չէ նմանատիպ գեթ մեկ այլ հուշարձան, որտեղ համատեղվում են այս երկու թեմաները, ուստի գոնե հայ արվեստում գործ ունենք թեմատիկ առումով մի բացառիկ երևույթի հետ, որի իմաստաբանական բացատրությունը կլծողնենք հետագային:



Նկ. 8. Արևմտյան շքամուտքի ճակտոնապատի հարթաքանդակն ու որմնանկարը (լուս.՝ Մ. Փափազյանցի, 1891 թ.):



Նկ. 9. Արևմտյան շքամուտքի ճակտոնապատի հարթաքանդակն ու որմնանկարը Գ. Եարբաբջյանի ջրանկար-էսքիզում, ենթ. 1913 թ. (Հայաստանի ազգային պատկերասրահ):

Ինչ վերաբերում է առհասարակ հարթաքանդակի ու որմնանկարի միավորման գաղափարին, նշենք, որ հայկական հուշարձաններում ճարտարապետական առանձին մանրամասների և քանդակների ներկված օրինակները բազմաթիվ են: Հայտնի օրինակներ են Անիի Գազկաչեն տաճարի Գազիկ արքայի արձանը (XI դ. սկիզբ), Խաչենի՝ վարպետ Շահիկի կառուցած մահմեդական դամբարանի (XIV դ. I կես) կենդանաքանդակները, Սաղմոսավանքի Ս. Աստվածածին եկեղեցի-գրատան որմնամույթերի խոյակները, կարմիր ներկով ներկված բազմաթիվ խաչքարեր և այլն: Հիշատակելի են Երևանի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան շքամուտքի ճակտոնապատի հորինվածքը (1690-ական թվականներ)՝ մասնավորապես որմնանկարի վերին հատվածի «Աղոթք Գեթսեմանի այգում» տեսարանը, որտեղ խաչաքանդակի երկու կողմերից դեպի վերջինս են հակված հրեշտակն ու աղոթող Քրիստոսը⁵⁹, նաև Էջմիածնի Մայր տաճարի արևմտյան զանգակատան առաջին հարկի գեղարվեստական հար-

⁵⁹ Ա. Ենոքյան. Երևանի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարը. – Հայկական որմնանկարչություն. գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, Երևան, 2019, էջ 226–228:

դարանքը (XVII դ. երկրորդ կես—XVIII դ.), որտեղ տեղ են գտել ինչպես ֆիգուրատիվ (Պետրոսն ու Պողոսը) և դեկորատիվ որմնանկարներ, այնպես էլ՝ ներկված քերովբեների, կենդանիների ու դեկորատիվ հարթաքանդակներ: Այդուհանդերձ, որպես պատկերաքանդակի և ֆիգուրատիվ որմնանկարների միավորման օրինակ՝ Ս. Թովմա տաճարի վերոնշյալ դրվագը բացառիկ է:

Այսպիսով, ի դեմս Ս. Թովմա տաճարի արևմտյան շքամուտքի ճակտոնապատի հորինվածքի՝ գործ ունենք հայ արվեստի՝ եռակի առումով բացառիկ օրինակի հետ՝ որպես «Թովմայի անհավատություն» տեսարանի միակ քանդակային պատկերման, որպես «Թովմայի անհավատություն» ու «Նաչեղություն» թեմաները միավորող տեսարանի և որպես պատկերաքանդակ ու ֆիգուրատիվ որմնանկարներ ներառող հուշարձանի:

Տաճարը ներքուստ շատ ավելի շքեղ հարդարանք է ունեցել, քան արտաքուստ. շքեղ որմնանկարներով են պատված եղել գմբեթը, թմբուկը, ավազ խորանը, թաղային հատվածներն ու կամարները: Աղոթասարհում գտնվողի վրա այս ամենի թողած տպավորությունը ներկայացնելու համար բավական է հիշել Մ. Փափազյանցի խոսքերը. «... ոչ մի տեղում նմանը չկայ, թէ՛գուց էջմիածնայ տաճարից սկսած Մեծն Հայաստանում գտնուած մինչև ամենաառաջադուր վանք, երբէք չէ ունեցել այն գեղեցկութիւնը, պայծառութիւնը, մաքրութիւնը, պատերի, առաստաղի զարդարանքները, խաչկալի հիանալի շինուածքը, ինչ ունի Թովմայ առաքելոյ վանքը ...»⁶⁰:

Ըստ Ա. Այվազյանի՝ արդեն իսկ XVII—XVIII դդ. Ագուլիսի բոլոր տաներկու եկեղեցիներն ունեցել են որմնանկարներ, որոնցից 1980-ական թվականներին պահպանվել էին միայն Ս. Թովմայի, Ս. Քրիստափորի, Ս. Ստեփանոս (Ս. Երրորդություն) եկեղեցիների որմնանկարներն ու չնչին պատառիկներ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում⁶¹: Նշվածներից առավել

⁶⁰ Մ. Փ ա փ ա զ ե ա ն ց. Նշվ. աշխ., էջ 38: Տաճարի աղոթասրահի որմնանկարները՝ քիչ թե շատ հիմնավոր նկարագրությունը Փափազյանցիին է (նույն տեղում, էջ 38–39): Ե. Լալայանն ընդամենը նշում է, որ «քառանկիւնի, բայց եզրերը ուղիղ անկիւնով փոքր ինչ հատուած չորս սիւների վրայ բոլորում են կիսաբոլոր կամարներ, կրելով իրենց վրայ կաթոլիկէն և նոյնպէս կիսաբոլոր ձեղունը, որ ամբողջովին ծածկուած է արևելեան ճաշակի գունաւոր ծաղկանկարներով» (Ե. Լալայան. Նախիջևանի գաւառ, էջ 310), իսկ Ա. Այվազյանն իր աշխատության՝ տաճարի աղոթասրահի որմնանկարների հատվածում հիմնականում կրկնում է Փափազյանցի նկարագրությունը (Ա. Այվազյան. Նախիջևանի որմնանկարչական արվեստը, Երևան, 1998, էջ 20–22): Մեր նկարագրություններում և դիտարկումներում, բացառությամբ ավազ խորանի ու պատերի որմնանկարների, հիմնվել ենք բացառապես մեր ձեռքի տակ եղած հրապարակված և անտիպ լուսանկարների վրա (Մ. Փափազյանց, Ա. Այվազյան, Զ. Սարգսյան, Ա. Հովհաննիսյան): Ավազ խորանի որմնանկարները 1980-ական թվականներ լուսանկարներում ներկվով ծածկված են, իսկ պատերի որմնանկարները ոչ մի լուսանկարում չեն երևում, ուստի այս դեպքերում դրանց մասին միակ փաստական տեղեկությունը մնում է Փափազյանցի նկարագրությունը:

⁶¹ Ա. Այվազյան. Նախիջևանի որմնանկարչական արվեստը, էջ 19–20:

լավ և համեմատաբար ամբողջական պահպանվածը Ս. Թովմա տաճարի որմնանկարներն էին: Վերջիններս առանձնանում են նաև արխիվային նյութերի՝ մասնավորապես պահպանված լուսանկարների համեմատաբար հարուստ վիճակով, ինչը թույլ է տալիս գրեթե ամբողջովին պատկերացում կազմել տաճարի ներքին գեղարվեստական հարդարանքի մասին:

Պատերի ստորին հատվածները ներկված են եղել մարմարագույն, վերին կամարներին հարող հատվածները (ըստ Փափագյանցի՝ 3 արշին երկարությամբ, այսինքն 2,13 մ, 1 արշ. = 0,71 մ)՝ սպիտակավուն: Դատելով Փափագյանցի լուսանկարից (նկ. 10)՝ ըստ երևույթին, նույն մարմարագույնով են ներկված եղել նաև չորս մույթերը՝ մինչև կամարակալները: Թմբուկակիր չորս կամարների զարդագոտիները բաղկացած են եղել չորս տիպի սիմետրիկ զարդատարրերից: Ստորին հատվածում գոտին սկսվում էր սուր ծայրով դեպի վեր ուղղված հուլունքազարդով, այնուհետև գալիս էր փոքրիկ քառատերևը, որին հետևում էր ութթաթե երկարավուն զարդանախշը, ապա դարձյալ քառատերևը և կամարի կենտրոնում՝ երկսայր օվալաձև վարդյակ-մեղալոնը (պարսիկ վարպետներն այն անվանում են «թորանջ»): Մույթերը պատերին կապող կամարները, որոնք ավելի կարճ էին, բաղկացած էին դարձյալ սուր ծայրով դեպի վեր ուղղված նույնատիպ հուլունքազարդերից, քառատերևներից ու կամարի կենտրոնում՝ երկսայր օվալաձև վարդյակ: Բոլոր կամարներում էլ նշված զարդատարրերն ուղեկցվում էին ոլորուն դեկորատիվ ճյուղերով:

Տաճարի թաղային հատվածների որմնանկարների (նկ. 10, 11) հիմնական հորինվածքը կազմում էին թագաձև ոճավորված թևերով խաչաձև հորինվածքները (պայմանականորեն կանվանենք «քառաթևեր»), որոնք ներառում էին ծաղկատերևային ֆոնի վրա պատկերված ծաղիկներով ծաղկամաններ ու հուլունքազարդեր: Չորս «քառաթևերի» միջև պատկերված էին մեկական ծավալուն ծաղկաման՝ ծաղիկփնջով, իսկ եզրային հատվածները զբաղեցնում էին կիսված օվալաձև վարդյակները: Լուսանկարներից կարող ենք եզրակացնել, որ այսպիսի ձևավորում են ունեցել տաճարի՝ դմբեթատակ քառակուսուն կից հարավային, հյուսիսային ու արևմտյան սրահների թաղերը, իսկ արևելյան սրահի թաղային հատվածի որմնանկարներում «քառաթևերից» բացի նկատվում են օվալաձև վարդյակներ: Ինչ վերաբերում է աղոթասրահի անկյունային սրահների թաղային հատվածների որմնանկարներին, ապա Փափագյանցի լուսանկարում նկատում ենք, որ «քառաթևերի» մակերեսում ներգծված է նաև որոշակիորեն ուղղաձիգ թևերով հավասարաթև խաչ (ըստ երևույթին, դա կամ հարավարևմտյան, կամ հյուսիսարևմտյան սրահի թաղային հատվածն է), ինչը, թերևս, կարելի է բացատրել պարսկաոճ զարդանախշը եկեղեցական միջավայրին ավելի հարմարեցնելու շարժառիթով:

Առաջաստների տարբեր հատվածներում պատկերված են եղել վերոնշյալ «քառաթևի» զանազան տարբերակներ: Ստորին, համեմատաբար մեծ մակերես զբաղեցնող հատվածում պատկերված էր պոչաձև, երկարավուն ստորին թևով տարբերակը, որը ներառում էր ծաղկատերևային ֆոնի վրա պատկերված քառատերև, ծաղիկներով ու թռչնապատկերներով ծաղկաման և սուր ծայրը դեպի վար ուղղած հուլունքազարդ: Երկու շեղանկ-

յունների վրա պատկերված էին հորիզոնական ուղղությամբ ձգված «քառաթևեր», որոնք ներառում էին դարձյալ ծաղկատերևային ֆոնի վրա պատկերված քառատերև ու հուլունքազարդեր, և վերջապես վերին եռանկյունների վրա պատկերված էին «թևատարած» զարդանախշեր (որոշ չափով հիշեցնում էին երկթև քերովբեների), որոնք ներառում էին ծաղկատերևային ֆոնի վրա պատկերված քառատերև: Չորս կամարների ճակատային հատվածների ուղիղ կենտրոնում, առաջաստների միջև գիպսից և/կամ կավից քանդակված էին մեկական երկթև քերովբե (նկ. 11):



Նկ. 10. Տաճարի աղոթասրահի որմնանկարները (լուս.: Մ. Փափազյանցի, 1891 թ.):



Նկ. 11. Առաջաստների և թաղային հատվածի որմնանկարները (լուս.: Չ. Սարգսյանի, 1980 թ.):

Աղոթասրահի որմնանկարների առավել շքեղ հատվածը գմբեթն էր և դրան հարող թմբուկի ներքին մակերեսը: Թմբուկի տասներկու լուսամուտների բացվածքները շրջանակված էին ծաղկատերևային զարդագոտիներով, կամարներից անմիջապես վեր էլ պատկերված էր հուլունքազարդ ներառող և ծաղկային ֆոնով թագազարդ (նկ. 13): Յուրաքանչյուր երկու լուսամուտների միջև պատկերված էր ծաղկեփնջով ծաղկաման, քառատերև ու շեղանկյան մեջ հուլունքազարդ պարփակող և վերին հատվածում (արդեն լուսամուտների մակարդակից բարձր) ոճավորված թագով ավարտվող շքեղ զարդամոտիվ: Այնուհետև դեպի վեր իրար էին հաջորդում երեք պարսկաոճ զարդագոտիներ, որոնցից ստորինը կազմված էր քառատերևներով միմյանց կցված ութաթև երկարավուն զարդանախշերից և օվալաձև վարդյակներից, միջինը՝ միմյանց նայող նշազարդ-փեյսլիների (պարսիկ վարպետներն այն անվանում են «բոթե») կրկնվող մոտիվներից, իսկ վերինը պարզ ծաղկատերևային զարդագոտի էր, որով էլ արդեն սկսվում էր գմբեթի մակերևույթը: Վերջինս պատկերված էր որպես երկինք՝ կապույտ ֆոնով և կենտրոնից ճառագայթաձև իջնող գծերով դասավորված ոսկեգույն աստղերով (նկ. 13):

Историко-филологический журнал 2020 № 3

Պատմաբանափրայի հանդես

Գմբեթի նմանությունը, որպես կապույտ աստղալից երկինք է պատկերված եղել նաև ավագ խորանի գմբեթադրը, որի կենտրոնական հատվածում խաչկալից անմիջապես վեր, տեղ է գտել նաև ճաճանչավոր արեգակը: Անորոշ է Փափազյանցի՝ «բեմի սիւների գլխին չորս անկիւնում երևում են թևատարած չորս հրեշտակներ» արտահայտությունը⁶²: Եթե «բեմի սիւներ» ասելով հասկացվել է ավագ խորանի որմնամույթերը, ապա հրեշտակները, ամենայն հավանականությամբ, տեղ են գտել որմնամույթերի քիվերին կից՝ երկու անկյուններում (չի բացառվում, որ դրանք ևս, ինչպես թմբուկակիր կամարների քերովբեները, ոչ թե որմնանկարներ են, այլ կերտված են եղել կավից):



Նկ. 12. Թմբուկի որմնանկարները (լուս.՝ Ա. Այվազյանի, 1980-ական թվականներ):



Նկ. 13. Գմբեթային հատվածի որմնանկարները (լուս.՝ Ա. Այվազյանի, 1980-ական թվականներ):

Թե՛ որմնանկարների ստեղծման ժամանակի և թե՛ դրանց հեղինակի մասին փաստական տեղեկություններ չեն պահպանվել: Այդուհանդերձ, որոշ հետազոտողներ Ս. Թովմա տաճարի որմնանկարները վերագրել են շուրթեցի մեծ բանաստեղծ, տաղերգու և նկարիչ Նաղաշ Հովնաթանին (1661–1721 թթ.), ով 1680-ական թվականներին Ազուլխում դպիր էր ու ձեռագրեր էր ընդօրինակում⁶³:

Տաճարի որմնանկարներն առաջին անգամ Հովնաթանյաններին է վերագրել 1914 թ. վանք այցելած Մարտիրոս Սարյանը, ով իր հուշերում գրում է. «Քաղաքի կենտրոնում Սուրբ Թովմասի եկեղեցին էր՝ հրաշալի

⁶² Մ. Փ ա փ ա գ ե ա ն ց. նշվ. աշխ., էջ 38:

⁶³ 1682 թ. Ազուլխի Ս. Քրիստափորի վանքում «Յովնաթան դպրի ձեռամբ» ընդօրինակվել է Փլավիոս Եվսեբիոսի «Վասն հրեական պատերազմին» երկը (Ղ. Մ. Ա լ ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 331): Նույն թվականին ամենայն հավանականությամբ, դարձյալ Ազուլխում, Հովնաթանն ընդօրինակել է նաև մի Տաղարան (ՄՄ, Հ^մ 3628 ձեռ.):

որմանակարներով կատարված Հովնաթանյանների կողմից»⁶⁴: Արվեստաբան Եղիշե Մարտիկյանը Նաղաշին է վերագրում Ս. Թովմա տաճարի արևմտյան շքամուտքի որմնանկարները ու, հիմնվելով նրա՝ 1682 թ. Ագուլիսում լինելու փաստի վրա՝ նաև որմնանկարների ստեղծման ժամանակահատվածի վարկած է առաջ քաշում 1680-ական թվականներ⁶⁵: Այս թվագրմանն անդրադառնում է Վարազդատ Հարությունյանը՝ իրավացիորեն նշելով, որ «որմնանկարների կատարման ժամանակը՝ 1680-ական թթ., կարիք ունի վերանայման, քանի որ եկեղեցին կառուցվել է ավելի ուշ»⁶⁶: Տաճարի որմնանկարները Նաղաշին են վերագրում նաև Մ. Ղազարյանն⁶⁷ ու Ա. Այվազյանը⁶⁸: Վերջինս որմնանկարները ևս թվագրում է 1680-ականներով նշելով Ագուլիսի Ս. Քրիստափոր, Մաղարդավանքի Ս. Ստեփանոս եկեղեցիների, Էջմիածնի Մայր տաճարի ու Ս. Թովմա տաճարի «համանման որմնանկարների կողորտի և զարդամոտիվների մասին»⁶⁹: Որպես տաճարի որմնանկարների՝ Նաղաշի կողմից արված լինելու հիմնավորում Այվազյանը նշում է նաև նրա՝ «Տաղ ի վերայ զանգակատան վանից Սուրբ առաքելոյն Թովմայի, որ ի Յագուլիս» բանաստեղծությունը, որտեղ խոսվում է «գաւթի» նկարագրով մասին («գուլնգգուլն ծաղկեալ ոսկէխառն») ⁷⁰:

Այսպիսով, Նաղաշ Հովնաթանի՝ Ս. Թովմա տաճարի որմնանկարների հեղինակը լինելու հարցում առկա են լոկ ենթադրություններ, քանզի խնդրի լուծման «հիմք» են ծառայել ընդամենը 1680-ական թվականներին նրա՝ վանքում լինելու և այնտեղ ձեռագրեր ընդօրինակելու փաստն ու «Տաղ ի վերայ զանգակատան ...» բանաստեղծությունը: Անհիմն են նաև գուգահեռներն Ագուլիսի՝ Ս. Քրիստափոր, Մաղարդավանքի՝ Ս. Ստեփանոս եկեղեցիների ու Էջմիածնի Մայր տաճարի որմնանկարների հետ⁷¹:

⁶⁴ Մ. Ս ա ռ յ ա ն . Գրառումներ իմ կյանքից. գիրք առաջին, Երևան, 1966, էջ 141:

⁶⁵ Ե. Մ ա ռ տ ի կ յ ա ն . Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ա, XVII–XIX դդ., Երևան, 1971, էջ 59:

⁶⁶ Վ. Հ ա ռ ու թ յ ու ն յ ա ն . նշվ. աշխ., էջ 405:

⁶⁷ Մ. Ղ ա զ ա ռ յ ա ն . Հայ կերպարվեստը XVII–XVIII դարերում, Երևան, 1974, էջ 150:

⁶⁸ Ա. Ա յ վ ա զ յ ա ն . Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 13: Նույն միտքն Այվազյանը կրկնում է նաև հաջորդ աշխատություններում (Ագուլիս, էջ 28, Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները, Երևան, 1986, էջ 22, Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, էջ 31, Նախիջևանի որմնանկարչական արվեստը, էջ 19):

⁶⁹ Ա. Ա յ վ ա զ յ ա ն . Նախիջևանի որմնանկարչական արվեստը, էջ 20:

⁷⁰ Նույն տեղում, էջ 26, տե՛ս նաև Ն ա ղ ա շ Հ ո վ ն ա թ ա ն . Տաղեր, Երևան, 1983, էջ 208:

⁷¹ Հարկ է նկատել, որ, բացի Ս. Թովմա տաճարի որմնանկարներից, տարբեր ժամանակներում տարբեր հետազոտողների կողմից Նաղաշին են վերագրվել նաև Երևանի Ս. Պողոս–Պետրոս, Կաթողիկե, Զորավոր եկեղեցիների, Մաղարդավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու, Գողթն ու Երնջակ գավառների մի շարք եկեղեցիների և Էջմիածնի Մայր տաճարի (հին շերտ) որմնանկարները, և բոլորն էլ ենթադրության շրջանակներում (տե՛ս Գ. Լ և ո ն յ ա ն . Հովնաթանյան նաղաշ

Բնավ չբացառելով այն վարկածը, որ նշված որմնանկարները կարող էին և մեկ նկարչի վրձնին պատկանել՝ այդուհանդերձ, տարբեր եկեղեցիներում մեկ-երկու զարդանախշերի կրկնությունը չի կարելի անվերապահորեն խոսել դրանց հեղինակների նույնությունից⁷²:

Մեր ուսումնասիրած հայկական որմնանկարչական հուշարձաններից միայն մեկում է ակնհայտ Ս. Թովմա տաճարի որմնանկարների հեղինակի ներկայությունը և, որը, եթե ոչ հեղինակի ինքնություն, ապա գոնե որմնանկարների ստեղծման ժամանակի ճշգրտման հարցում կարող է որոշիչ լինել: Խոսքը Մեղրիի Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հին շերտի որմնանկարների մասին է, որոնք, ի տարբերություն Ս. Թովմա տաճարի որմնանկարների, ունեն հստակ թվագրություն՝ 1700: Երկու հուշարձաններում էլ ակնհայտ են ինչպես առանձին զարդանախշերի խիստ նմանությունն ու որոշ դեպքերում՝ պարզ կրկնությունը, այնպես էլ զարդանախշային նույն հորինվածքների կիրառումը: Դա վերաբերում է մեծ կամարների (Ս. Թովմա տաճարում դրանք գմբեթակիր չորս կամարներն են, Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում՝ կենտրոնական նավի լայնական թաղակիր երկու կամարները) զարդագոտիների հիմնական մոտիվներին՝ վերոնշյալ հուլունքազարդերին, քառատերևներին, ութաթև երկարավուն զարդանախշերին, օվալաձև վարդյակներին ու դրանց ուղեկցող ոլորուն դեկորատիվ ճյուղերին, կամարների ճակատային հատվածների՝ ալիքաձև ընթացող սղոցաձև տերևներով և ծաղիկներով զարդագոտիներին, Ս. Թովմա տաճարի կամարների երեսակների ու Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու կենտրոնական նավի թաղային հատվածների՝ ալիքաձև տերևային զարդագոտուն, երկու եկեղեցիների թաղային հատվածների «քառաթևերին», և, վերջապես, զուտ ոճական նմանություններին, ինչպիսիք են ոճավորված տերևների ու ծաղիկների զուգորդումները: Այս ամենը ոչ մի կասկած չի թողնում միևնույն հեղինակ(ներ)ի

ները հայ նկարչության պատմության մեջ. «Խորհրդային արվեստ», 1938, № 2, էջ 25, Մ. Մ կ ր տ չ յ ա ն . Նաղաշ Հովնաթան, Երևան, 1957, էջ 58, Ե. Մ ա ր տ ի կ յ ա ն . նշվ. աշխ., էջ 57–64, Մ. Ղ ա գ ա ր յ ա ն . նշվ. աշխ., էջ 150–152, 158–160, Ա. Ա յ վ ա գ յ ա ն . Նախիջևանի որմնանկարչական արվեստը, էջ 19–37): Այդ շարքում մինչ այժմ հայտնի չէ գեթ մեկ եկեղեցի, որի որմնանկարների՝ Նաղաշ Հովնաթանի կողմից ստեղծված լինելու մասին փաստական տեղեկություններ լինեն: Նաղաշի կենսագրության՝ որմնանկարչությանը վերաբերող միակ փաստական տեղեկությունն այն է, որ նա նկարազարդել է բազմաթիվ եկեղեցիներ, այդ էլ իմանում ենք նրա որդի Հակոբի՝ հոր մահվանը նվիրված ողբերգից՝ «Ուր է շնորհալից վարպետն իմաստուն, որ միշտ զարդարէր բազում սրբոց տուն ...» (Ն ա գ ա շ Հ ո վ ն ա թ ա ն . նշվ. աշխ., էջ 225):

⁷² Ս. Քրիստափոր և Ս. Ստեփանոս եկեղեցիների գմբեթային հատվածների ընդհանուր ձևավորումը իսկապես խիստ հարազատ են: Երկուսն էլ հիշեցնում են էջմիածնի Մայր տաճարի գմբեթի որմնանկարները (1780–ական թվականներին Նաղաշ Հովնաթանի թոռը՝ Հովնաթան Հովնաթանյանը, ձևափոխելով վերանկարել է հին շերտի՝ ենթադրաբար Նաղաշի կողմից արված 1721 թ. որմնանկարները): Սակայն նշված հուշարձանների զարդանախշերը խիստ տարբերվում են Ս. Թովմա տաճարի որմնանկարներից թե՛ ձևով, թե՛ ոճով:

վրձնի առկայությունը հարցում, ուստի հիմք ընդունելով Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների թվագրությունը՝ կարելի է խնդրո առարկա մեր որմնանկարները թվագրել 1695 թ. մինչև XVIII դ. սկիզբ:

Վերադառնալով Ս. Թովմա տաճարի որմնանկարների՝ Նաղաշին վերագրելու հարցին, որի օգտին է խոսում արդեն որմնանկարների ստեղծման ժամանակը, հիշատակենք նաև Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որոշ որմնանկարների մեկնողական արձանագրությունների բանաստեղծական բնույթը: Եվ, չնայած այս ամենը Նաղաշին վերագրվող մյուս եկեղեցիների որմնանկարների համեմատ առավել ծանրակշիռ հիմք են ստեղծում, այդուհանդերձ, անվերապահորեն ասել, որ նշված երկու եկեղեցիների որմնանկարներն արվել են Նաղաշ Հովնաթանի կողմից, դեռևս չենք կարող:

Մ. Փափազյանցի աշխատության մեջ խոսվում է նաև փայտաչեն խաչկալի նկարազարդումների մասին, ընդ որում «խաչկալի աջ դրան» և «ձախ կողմի դրան» արտահայտությունները վկայում են, որ ավագ խորանում եղել է ոչ այլ ինչ, քան երկու կողային դռներով նկարազարդ պատկերակալ (իկոնոստաս): Ըստ նրա՝ երկնագույն ոսկեզօծ սյուներով պատկերակալի «ամենածայրում» (հավանաբար, նկատի ունի գլխամասը) պատկերված է եղել Ս. Խաչը, վրան՝ թևատարած Փրկիչն ու երկու հրեշտակներ, որոնցից մեկի ձեռքին սկիհ էր, մյուսի ձեռքին՝ օրինաց տախտակները: Հյուսիսակողմյան դռան վերնամասում եղել են Նոր Ուխտի խորհրդանիշերը՝ Ավետարան, սկիհ, խաչ և վակաս, հարավակողմյան դռան վերնամասում Հին Ուխտի խորհրդանիշերը՝ պատվիրանների տախտակները, բրոնզե օձով զավազանը, սաղավարտ և դարձյալ վակաս: Նշվածները հայ որմնանկարչության մեջ հանդիպում են մեկ էլ Հայկավանի (Արմավիրի մարզ) Ս. Աստվածածին եկեղեցու (1875 թ.) քարե պատկերակալի որմնանկարներում, որտեղ, սակայն, հարավակողմյան դռան վերնամասում տեսնում ենք սկիհ, բրոնզե օձով զավազան և Ավետարան (հյուսիսակողմյան դռան վերնամասի որմնանկարները չեն պահպանվել): Անշուշտ, Ս. Թովմա տաճարի պատկերակալի պատկերազարդական տարբերակն ավելի պարզորոշ է ներկայացնում Հին և Նոր Կտակարանների խորհրդաբանությունը, իսկ Հայկավանի եկեղեցում, փաստորեն, խաչը փոխարինվել է բրոնզե օձով զավազանով, սակայն, չմոռանանք, որ Հին Կտակարանից եկող պղնձե օձը (Թուեր 21:4–9, Դ Թագ. 18:4) հիշատակվում է նաև Նոր Կտակարանում (Հովհ. 3:14–15), ու, թերևս, հենց այդ իմաստով էլ պատկերվել է:

Պատկերակալի պատրաստման և նկարազարդման թվականի մասին ևս որևէ տեղեկություն չի պահպանվել: Նկատենք միայն, որ չնայած Արևելյան Հայաստանի եկեղեցիներում XVIII դարում արդեն առկա էին պատկերակալներ (մեզ հայտնի հնագույն թվակիր պատկերակալը էջմիածնի Մայր տաճարի պատկերակալն է՝ 1721 թ.), սակայն դրանք լայն տարածում գտան հատկապես ռուսական տիրապետության շրջանում XIX դ., ուստի առավել հավանական է մեր պատկերակալը ևս թվագրել այդ շրջանով:

Եզրակացություն

Ագուլիսի Ս. Թովմա տաճարը, այսպիսով, հետաքրքիր գեղարվեստական հարդարանք է ունեցել: Տաճարի քանդակների, հատկապես՝ «Թովմայի անհավատությունը» հարթաքանդակի ու անկյունային հատվածների օձաքանդակների, ինչպես նաև և որմնանկարների ուսումնասիրությունը մեծ կարևորություն ունի նոր շրջանի հայ արվեստի լուսաբանման տեսանկյունից: Որմնանկարները, որոնք հասկանալի պատճառներով իրենց վրա են կրում պարսկական արվեստի հետքը, այդուհանդերձ հայ արվեստի անբաժանելի մասն են կազմում և միջմշակութային փոխազդեցութան խիստ հետաքրքիր օրինակ են:

Այսպիսին է եղել Ագուլիսի Ս. Թովմա տաճարը՝ մինչև XX դարի սկիզբը: Վանքի «սև օրերը», կարելի է ասել, սկսվեցին 1919 թ. դեկտեմբերին, երբ թուրք-թաթարական հրոսակախմբերը սրի քաշեցին քաղաքի հայ բնակչության մեծ մասին, ողջ մնացածներն էլ փախան Զանգեզուր⁷³: 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Նախիջևանը «փոխանցվեց» Խորհրդային Ադրբեջանին, և ինչպես Ս. Թովմա վանքը, այնպես էլ Նախիջևանի բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ հայտնվեցին թշվառ վիճակում: Երկրամասի հայաթափվելուն զուգահեռ (որը լայն թափ ստացավ հատկապես Հայրենական պատերազմից հետո)՝ հայկական հուշարձանները տարեցտարի ավելի անպաշտպան ու անմխիթար վիճակում էին հայտնվում: Ավելին, 1924 թ. ադրբեջանական իշխանությունների որոշմամբ Նախիջևանի ողջ տարածքը, իբրև, Թուրքիայի հետ սահմանակից շրջան, հայտարարվեց «սահմանային գոտի», և մուտքը հնարավոր էր միայն հատուկ թույլտվությամբ⁷⁴: Այդ ամենը, բնականաբար, առաջին հերթին ուղղված էր Խորհրդային Հայաստանի մշակութային գործիչների մուտքն արգելելու համար:

Խորհրդային Միության մայրամուտին՝ 1980-ական թվականների վերջին, Ս. Թովմա վանքն արդեն իսկ գտնվում էր վթարային վիճակում, իսկ Միության փլուզումից հետո այլևս ոչինչ չէր կարող խանգարել ագրբեջանական իշխանություններին՝ հողին հավասարեցնելու այն: 2000-ական թվականների սկզբին տիեզերքից արված լուսանկարներում, նաև

⁷³ Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին. Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), Երևան, 2010, էջ 189–190, Ագուլիսի 1919 թ. ողբերգություն-եղեռնը. ակնադատների և ժամանակակիցների վկայություններ, աշխ. Ա. Այվազյանի, Երևան, 2013, էջ 18, 22, 87, 107–108: Վանքն ավերի ու թալանի է ենթարկվել նաև նախորդ դարերում [Ղ ու կ ա ս Ս ե բ ա ս տ ա ց ի . Դավիթ Բեկ կամ Պատմություն դափանցոց, Երևան, 1992, էջ 68–73, Սուգ եւ կոծ ի վերայ գիւղաքաղաքին Ագուլեաց որպիսի լինելն, հեղ.՝ անհայտ. – «Մասիս» (Կ. Պոլիս), 01. III. 1886, էջ 729–730, Ղ. Մ. Ա լ ի շ ա ն . նշվ. աշխ., էջ 331–333, Ս. Մ. Մ ո ց ի կ ե ա ն . Արարատեան Հայաստանի քաղաքները, Ա. Ագուլիս. – «Հայաստանի կոչնակ» (Նյու Յորք), 15. I. 1938, էջ 58, Մ ե ս ր օ վ բ ար ք ե պ ի ս - կ ո պ ո ս Ս մ բ ա տ ե ա ն ց . նշվ. աշխ., էջ 205, Հ. Ո ս կ ե ա ն . նշվ. աշխ., էջ 721–722]:

⁷⁴ Զ. Բ ա լ ա յ ա ն . Նախիջևանը ցեղասպանության գոհն է. ոչ թե տարածք, այլ հայրենիք. – «Ազգ» (Երևան), 07. X. 2016, էջ 8:

Սյունիքի Կարճևան գյուղից արևմուտք ընկած մի բլրից, որտեղից ժամանակին անգեհն աչքով կարելի էր տեսնել Ագուլիսի բոլոր եկեղեցիները, այլևս ոչինչ չէր հիշեցնում երբեմնի վանքի գոյության մասին⁷⁵:

Ավետիս Ավետիսյան – «Որմնանկարների վերականգնման գիտահետազոտական կենտրոնի» (Երևան) արվեստաբան: Գիտական հետաքրքրությունները՝ Հայ ճարտարապետության և կերպարվեստի պատմություն: Հեղինակ է 8 հոդվածի: Avetisyan1918@gmail.com

REFERENCES

- Agulisi 1919 t. voghbergutyun-egherne. akanatesneri ev zhamanakakitsneri vkayutyunner, ashkh. A. Ayvazyani, Yerevan, 2013 (In Armenian).
- Alishan Gh. M. Sisakan, Venetik – S. Ghazar, 1893 (In Armenian).
- Akinean N. V. Movses G. Tatevatsi hayots katoghikosn ev ir zhamanake, Vienna, 1936 (In Armenian).
- Ayvazyan A. Agulis, Yerevan, 1984 (In Armenian).
- Ayvazyan A. Agulisi ev Tsghnayi patkerakandaknere.– “Garun”, Yerevan, 1981, № 8 (In Armenian).
- Ayvazyan A. Agulisi jartarapetakan hushardzannere.– HKhSH GA “Lraber hasarakakan gitutyunneri”, 1978, № 2 (In Armenian).
- Ayvazyan A. Nakhijevan. girk hushardzanats, Yerevan, 1990 (In Armenian).
- Ayvazyan A. Nakhijevani ISSH haykakan hushardzannere, Yerevan, 1986 (In Armenian).
- Ayvazyan A. Nakhijevani kotoghayin hushardzannern u patkerakandaknere, Yerevan, 1987 (In Armenian).
- Ayvazyan A. Nakhijevani patmajartarapetakan hushardzannere, Yerevan, 1978 (In Armenian).
- Ayvazean A. Nakhijevani vimagrakan zharangutivne, h. B, Agulis, Antilias, 2005 (In Armenian).
- Ayvazyan A. Nakhijevani vormnankarchakan arveste, Yerevan, 1998 (In Armenian).
- Balayan Z. Nakhijevane tseghaspanutyany zohn e. voch te taratsk, ayl hayrenik.– “Azg” (Yerevan), 07. X. 2016 (In Armenian).
- Bobrov Yu. Osnovy ikonografii pamyatnikov khristianskogo iskusstva. M., 2010 (In Russian).
- Chantre B. A travers L’Armènie Russe.– “Le Tour Du Monde” (Paris), 1891.
- Crowley P. R. Doubting Thomas and the Matter of Embodiment on Early Christian Sarcophagi.– “Art History” (London), 2018, vol. 41, issue 3.

⁷⁵ Ս. Կ ա ռ ա պ ե տ յ ա ն . Հայկական պատմական հուշարձանների վիճակը Հայաստանի հարևան երկրներում.– Հայկական մշակութային ժառանգության պահպանությունը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում. նյութերի ժողովածու, Երևան, 2009, էջ 92:

- Catalogue of the Armenian manuscripts in the Bodleian library, № 53, by the rev. S. Baronian and F. C. Conybeare F.B.A. Oxford, 1918.
- Chugaszyan L. Toros Roslini “Tovmayi anhavatutyune” manrankare.– “Banber Matenadarani”, № 16, 1994 (In Armenian).
- Drampyan I. Toros Roslin. Yerevan, 2015 (In Russian).
- Dsotsikean S. M. Araratean Hayastani kaghaknere, A. Agulis.– “Hayastani kochnak” (Nyu York), 15. I. 1938 (In Armenian).
- Enokyan A. Erevani Zoravor S. Astvadsadsin ekeghetsu vormnankare.– Haykakan vormnankarchutyun. gitakan hodvatsneri ev nyuteri zhoghovatsu, Yerevan, 2019 (In Armenian).
- Georgian A. Hay manrankarichner. matenagitutyun, IX–XIX dd., Gahire, 1998 (In Armenian).
- Ghazaryan A. Zarnjayi ekeghetsin ev hovharadzev kamarnere.– “Ani” (Yerevan), 1992, № 3–4 (In Armenian).
- Ghazaryan M. Hay kerparveste XVII–XVIII darrerum, Yerevan, 1974 (In Armenian).
- Ghukas Sebastatsi. Davit Bek kam Patmutyun ghapantsots, Yerevan, 1992 (In Armenian).
- Hall J. Dictionary of Subjects and Symbols in Art. New York, 1974.
- Harley-McGowan F. The Maskell Passion Ivories and Greco-Roman art: notes on the iconography of crucifixion. – “Envisioning Christ on the Cross: Ireland and the early medieval West” (Dublin), 2013.
- Harutyunyan V. Haykakan jartarapetutyun patmutyun, Yerevan, 1992 (In Armenian).
- Hayeren dzeragreri ZhE dari hishatakaranner, h. B, kazm. V. Hakobyan, A. Hovhannisyanyan, Yerevan, 1978 (In Armenian).
- Hayeren dzeragreri ZhE dari hishatakaranner, h. G, kazm. V. Hakobyan, Yerevan, 1984 (In Armenian).
- Hayots patmutyun, h. IV, girk arajin. Noraguyn zhamanakashrjan (1918–1945 tt.), Yerevan, 2010 (In Armenian).
- Hovhannisyanyan A. Zakaria Aguletsin ev ir zhamanake, Yerevan, 2017 (In Armenian).
- Kazaryan A. Kafedral’nyi sobor Surb Echmiadzin i vostochnokhristianskoe zodchestvo IV–VII vekov. M., 2007 (In Russian).
- Karapetyan L. Tsghnayi Sb. Astvadsadsin ekeghetsu kandakayin hardaranke.– PBH, 2019, № 3 (In Armenian).
- Karapetyan S. Haykakan patmakan hushardzanneri vijake Hayastani harevan erknerum.– Haykakan mshakutayin zharangutyun pahpanutyune Hayastani Hanrapetutyunum ev arterkrum. nyuteri zhoghovatsu, Yerevan, 2009 (In Armenian).
- Kristonya Hayastan hanragitaran, Yerevan, 2002 (In Armenian).
- Lalayan E. Nakhijevani gavar, A masn, Goghtn kam Ordubadi vostikanakan shrjan.– “Azgagrakan handes” (Tiflis), girk XI, 1904 (In Armenian).
- Lalayan E. Ordubadi kam Verin Agulisi vostikanakan shrjan ev kam Goghtn.– “Azgagrakan handes”, girk XII, 1904 (In Armenian).

- Leroy J. Les manuscrits syriaques à peintures conservés dans les bibliothèques d'Europe et d'Orient. Paris, 1964.
- Levonyan G. Hovnatanyan naghashnere hay nkarchutyany mej.– “Khorhrdayin arvest”, 1938, № 2 (In Armenian).
- Maksutean Mesrop vrd. Nkaragrutivn ev yishatakarank dzeragrats S. Tovmay arakelots vanuts ev ekeghetseatsn Verin Aguleats. ekeghetsvoyn Tanakert geghj ev andzants masnavorats.– “Ararat” (Ejmiadsin), 1911, h. B (In Armenian).
- Mashtotsyan Matenadarani dzeragrers, H^{mm} 201, 1571, 1693, 2374, 3628, 6450, 6819, 6846, 10675, 8205 dzer. (In Armenian).
- Martikyan E. Haykakan kerparvesti patmutyun, girk A, XVII–XIX dd., Yerevan, 1971 (In Armenian).
- Mayr tsutsak hayeren dzeragrats Mashtotsi anuan Matenadarani, h. E, kazm.՝ O. Eganean, Yerevan, 2009 (In Armenian).
- Mesrovb arkepiskopos Smbateants. Nkaragir Surb Karapeti vanic Ernjakay ev shrakayits nora, Tpkhis, 1904 (In Armenian).
- Mkrtchyan M. Naghash Hovnatanyan, Yerevan, 1957 (In Armenian).
- Mnatsakanyan S. Armyanskie stalaktity.– “Izvestiya AN ArmSSR”, 1950, № 9 (In Russian).
- Naghash Hovnatanyan. Tagher, Yerevan, 1983 (In Armenian).
- Papazeants M. Hnutivnq Vanorei, chorrord girk. Goghtan gavar, Vagharshapat, 1891 (In Armenian).
- Petrosyan H. Hayastan – drakht korusyal. hay inknutyan mi haratsuytsi dzevavorman akunknere.– “Inknutyany hartser”, Yerevan, 2002 (In Armenian).
- Voskean H. Vaspurakan–Vani vankere, B mas, Vienna, 1942 (In Armenian).
- Saryan M. Grarumner im kyankits. girk arajin, Yerevan, 1966 (In Armenian).
- Sug eu kods i veray giughakaghakin Aguleats vorpisi lineln, hegh.՝ anhayt.– “Masis” (K. Polis), 01. III. 1886 (In Armenian).
- Stepanos Orbelyan. Syuniki patmutyun, Yerevan, 1986 (In Armenian).
- Tavernier J. B. Les six voyages en Turquie, en Perse et aux Indes, premiere partie. Paris, 1676.
- Tovma Aguletsi. Patmutivn Tovmayi arakeloyan, K. Polis, 1734 (In Armenian).
- Tumanov A. Monastyr' Sv. Fomy.– Sbornik materialov dlya opisaniya mestnostey i plemen Kavkaza. Tiflis, 1892, vyp. XIII, otd. I (In Russian).
- Tumanov A. Armyanskie drevnie rukopisi monastyrya Sv. Fomy.– Sbornik materialov dlya opisaniya mestnostey i plemen Kavkaza. Tiflis, 1901, vyp. XXIX, otd. I (In Russian).
- Yovhannes episkopos Shahkhatuneants. Storagrutivn Katughike Ejmiadsni ev hing gavaratsn Araratay, h. erkrord, S. Ejmiadsin, 1842 (In Armenian).
- ZhD dari hayeren dzeragreri hishatakaranner, kazm.՝ L. Khachikyan, Yerevan, 1950 (In Armenian).
- Zakaria Aguletsi. Oragrutyun, Yerevan, 1938 (In Armenian).

СОБОР СВ. ФОМЫ В АГУЛИСЕ:
АРХИТЕКТУРА, БАРЕЛЬЕФЫ И РОСПИСИ

АВЕТИС АВЕТИСЯН

Р е з ю м е

Ключевые слова: Нахичеван, Агулис, монастырь Св. Фомы, собор Св. Фомы, армянская архитектура, скульптура, настенная живопись, Хачатур вардапет, Ованнес вардапет, апостолы Петр, Павел и Фома, Нагаи Овнатан, церковь Св. Иоанна Крестителя Малого квартала Мегри.

В сердце армянской исторической области Гохтн – в городе Агулис (Ордубадский район Нахичеванской Автономной Республики, ныне находящейся в составе Азербайджанской Республики) находился монастырь Св. Фомы, основанный еще в I веке и в 1990-х годах разрушенный азербайджанскими властями. В центре монастыря возвышался собор, перестроенный в 1694–1695 гг., который представлял из себя постройку типа купольной базилики с опиравшимся на четыре пилона куполом, имеющую две ризницы по бокам от главного алтаря и три портала.

Собор отличался богатым художественным оформлением. Фасады стен украшали фризы, которые в угловых частях переформировались в рельефы животных (на фотографиях видны только рельефы змей). На тимпане южного портала был барельеф апостола Петра, на тимпане северного портала – апостола Павла. На тимпане восточного портала, оформленного более роскошно, был вырезан барельеф сцены «Уверение Фомы», рядом с которым были сделаны также росписи, изображающие Бога Отца, Богородицу и Марию Магдалену. Интерьер церкви был почти полностью украшен декоративными росписями, а на фасаде главного алтаря были вырезаны двенадцать апостолов и дьяконы Стефан и Филипп. Иконостас алтаря также был расписан. И барельефы, и росписи, не считая несколько очерков описательного характера, никогда не являлись предметом научного исследования.

Представлена краткая история монастыря, архитектура собора, на базе архивных фотографий рассмотрены иконография и стиль барельефов и росписей, и наконец, проведя параллели с росписями церкви Св. Иоанна Крестителя Малого квартала г. Мегри, уточнена и дата создания росписей собора Св. Фомы – с 1695 г. до начала XVIII века.

Аветис Аветисян – искусствовед «Научно-исследовательского центра реставрации фресок» (Ереван). Научные интересы: история армянской архитектуры и изобразительного искусства. Автор 8 статей.

Avetisyan1918@gmail.com

ST. THOMAS CATHEDRAL IN AGULIS:
THE ARCHITECTURE, BARELIEFS AND MURALS

AVETIS AVETISYAN

S u m m a r y

Key words: Nakhjevan, Agulis, St. Thomas monastery, St. Thomas Cathedral, Armenian architecture, sculpture, mural painting, Khachatur Vardapet, Hovhannes Vardapet, Peter, Paul and Thomas the Apostles, Naghash Hovnatan, St. John the Baptist church in the Small quarter of Meghri.

St. Thomas monastery founded still in the 1st century and destroyed in the 1990's by the Azerbaijani government, was in the heart of Goghtn canton of historical Armenia – in Agulis town (now in the territory of Nakhchivan Autonomous Republic, the Republic of Azerbaijan). The cathedral, which was rebuilt in 1694–1695, was in the center of the monastery and was a domed basilica-type construction with a dome on four pylons, two vestries adjacent to the high altar and three portals.

The cathedral was distinguished by its rich decoration. The facades of the walls were decorated with friezes, which transformed into reliefs of animals in corner parts (we see only reliefs of snakes in photos). The tympanum of the south portal was decorated with the barelief of Peter the Apostle, and the tympanum of the north portal – the barelief of Paul the Apostle. On the tympanum of the west portal, which was decorated more gracefully, the barelief of the scene of “The Incredulity of Thomas” was carved, with the murals of God the Father, Holy Mother of God and Mary Magdalene. The interior of the cathedral was almost completely covered with decorative murals, and the frontal part of the high altar – with the bareliefs of the twenty apostles and Stephen and Philip the deacons. The iconostasis of the altar also had paintings. Neither the bareliefs, nor the murals of the cathedral, apart from a few descriptive essays, has so far been a subject of scientific study.

The article presents the brief history of the monastery, the architecture of the cathedral, the iconography and style of reliefs and murals examined on the basis of archive photos, with parallels with the murals of St. John the Baptist Church in the Small quarter of Meghri town. The date of creation of the murals is revealed as 1695 to the beginning of the 18th.

Avetis Avetisyan – Art historian at the “Research Center for Restoration of Mural Paintings” (Yerevan). Scientific interests: History of Armenian Architecture and Fine Art. Author of 8 articles. Avetisyan1918@gmail.com

ԿՈՂՄՆԱԿԱԼ (ՓՈԽԱՐՔԱ) ՔՈՒՐԴ Ա ՎԱՉՈՒՏՅԱՆԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ԻՇԽԱՆԱԿՆԻՍՏԸ*

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

Բանալի բառեր՝ Վարդենիս իշխանանիստ, Վաչուտյաններ, Քուրդ Ա, Հեթում Ա արքա, Կարակորում, Մանգու խան:

Նախաբան

1254 թ. գարնանը մոնղոլական պետության մայրաքաղաք Կարակորում Մոնղոլիայի կայսր Մանգու խանի հետ բանակցության գնացող Կիլիկիայի Հայոց պետության արքա Հեթում Ա-ն, զգեստափոխված սպասավորի հագուստով, փոքրաթիվ ուղեկիցներով, բազում ղեկավարություններ հաղթահարելով, կտրել-անցել է գրեթե ամբողջ Փոքր Ասիան, հասել Կարս քաղաք: Այդտեղ նա հանդիպել է մոնղոլական կայսեր տեղապահ Բաչու զորավարին, նրա բարձրաստիճան զորականներին, ապա անցել Այրարատի կողմնակալության-փոխարքայության փոխարքա Քուրդ Ա իշխանաց իշխանի Նիգ (Ապարան) գավառում գտնվող Վարդենիս գյուղը: Կիրակոս Գանձակեցին գրել է, որ թե՛ Կարակորում գնալուց առաջ, թե՛ Կարակորումից վերադառնալուց հետո Հեթում Ա-ի հետ հանդիպելու, նրա հետ խորհրդակցելու համար Վարդենիս ղրյակ են եկել բարձրաստիճան իշխանավորներ, հոգևորականներ, ընդ որում ոչ միայն հայեր, այլև ուրիշ քրիստոնյա ազգերի ներկայացուցիչներ. «Ապա եկին առ նա (Հեթում Ա արքայի մոտ – Տ. Պ.) եպիսկոպոսք եւ վարդապետք եւ քահանայք եւ իշխանք քրիստոնէից ... Ընդունէր զամենայն ազգաց քրիստոնեայա եւ աղաչէր սիրով կալ ընդ միմեանս»¹: Գանձակեցու հաղորդումից երևում է, որ ինքը ևս եղել է Վարդենիսի ղրյակում, այդ է հաստատում հետևյալ տողը՝ «Բազում իրս ... պատմէր նա մեզ»²:

1240–1260-ական թվականներին Այրարատի կողմնակալության-փոխարքայության իշխանանիստ եղել է Վարդենիս-Վարդենի բնակավայրը: Ապրելով Վարդենիսում՝ Այրարատի փոխարքա Քուրդ Ա իշխանաց իշխանը կնոջ՝ Խորիչահ Մամիկոնյանի աջակցությամբ 1241 թ. նորոգել է Սաղմոսավանքի Կաթողիկե եկեղեցին և գավիթը³, 1244 թ. կառուցել է Աստված-

* Ներկայացվել է 05. X. 2020 թ., գրախոսվել է 06. X. 2020 թ., ընդունվել է տպագրության 30. X. 2020 թ.:

¹ Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն Հայոց, աշխատ. Կ. Մելիք-Օհանջանեանի (այսուհետ՝ Կիրակոս Գանձակեցի), Երեւան, 1961, էջ 364–366:

² Նույն տեղում, էջ 370–372:

³ Ա. Մանուկյան. Քուրդ Ա Վաչուտյանի երկու արձանագրության վերծանություն. – YSU.am/files/03A_Manucharyan.pdf.

ընկալի Կաթողիկե եկեղեցին, մինչև 1250 թ.⁴ նաև գավիթը⁴, նույն ժամանակներում կառուցել է Եղիպատրուչի եկեղեցին ու գավիթը⁵, 1250 թ. ավարտել է Հովհաննավանքի գավիթի կառուցումը⁶, 1255 թ.՝ Սաղմոսավանքի գրատան կառուցումը⁷: Քուրդ Ա-ն պայքարել ու հասել է նրան, որ հայոց Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսը 1243 թ., ի բավարարումն Քուրդ Ա-ի պահանջի, հիմնել է Անբերդի եպիսկոպոսական անկախ թեմը՝ Հովհաննավանք կենտրոնով⁸, որի կոնդակը 1245 թ. Հովհաննավանք է հասցրել Վարդան Արևելցին: Քուրդ Ա-ին և Խորիշահին 1240 թ. հյուրընկալվել է Արցախի ինքնակալ արքա Հասան Զալալ Խաչենցին: Նա գումար է նվիրաբերել Հովհաննավանքի եկեղեցուն, որի համար «սպասաւորք սորա» պատարագ են մատուցել⁹: Վաչուտյան գույզին 1247 թ. այցելել է Վայոց Ձորի կողմնակալ-փոխարքա, իշխանաց իշխան Պուշը: Նա մոր արեւատուլթյան համար Հովհաննավանքին նվիրաբերել է մեծ գումար, որի համար «ստացել է 10 պատարագ»¹⁰: Վաչուտյան գույզին հյուր է նաև եղել Կիլիկիայի Հայոց Հեթում Ա արքան:

Պատմական հենք

Հեթում Ա արքայի՝ Կարակորում մեկնող դեսպանախմբի մեկնումից առաջ և վերադարձից հետո Վարդենիս գյուղում հանգրվանելու մասին առկա է երկու հիշատակություն: Առաջին հիշատակությունը թողել է, ինչպես արդեն նշեցինք, դեպքերի ականատես պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Նա գրել է. «Մեծահասակ և քրիստոսասէր արքայն հայոց Հեթում, որ ի կողմանս Կիլիկեցոց ... եկն ի Կարս քաղաք: Եւ տեսեալ զԲաչու-նուխին, որ զօրապետ էր թաթար զօրուն՝ որ յԱրևելս, և զայլ մեծամեծան, և պատուեալ ի նոցունց, զտեղի առ յոտն Արազածու՝ հանդէպ լերինս Արայի, ի գիւղն որ կոչի Վարդենիս, ի տանն իշխանին, զոր Քուրդ անուանէին, հայ ազգաւ, կրօնիւք քրիստոնեայ. և որդիք իւր Վաչէ և Հասան, և կին նորա Խորիշահ յազգէ Մամիկոնէից, դուստր Մարգարանայ՝ քոյր Ալան բեկին և Գրիգորոյ ...»¹¹ (ընդգծումները մերն են – Տ. Պ.):

Երկրորդ հիշատակությունն առկա է բանակցությունների գնացած Հեթում Ա արքայի եղբոր՝ զորավար, իրավագետ, պատմիչ, դեսպանախմբի

⁴ Տ. Պետրոսյանց. Աստվածընկալի վանքը. – «Էջմիածին», 1978, Գ, էջ 57–61:

⁵ Տ. Պետրոսյանց. Մուսավյան գյուղի Աստվածածին եկեղեցին և արձանագրությունները. – ՊԲՀ, 1981, № 3, էջ 289–294:

⁶ Կ. Ղաֆադարյան. Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 82–83:

⁷ Տ. Պետրոսյանց. Սաղմոսավանք. – «Էջմիածին», 1981, Դ, էջ 55–58, նույնի՝ Սաղմոսավանքի գրացուցակի գրվելու ժամանակը. – ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 1, էջ 82–84:

⁸ Կ. Ղաֆադարյան. Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 95:

⁹ Նույն տեղում, էջ 81:

¹⁰ Նույն տեղում, էջ 91:

¹¹ Կիրակոս Գանձակեցի, էջ 364–365:

անմիջական մասնակից Սմբատ Սպարապետի մոտ: Նա գրել է. «Ի թուին ՉԲ /1253/ Հեթում արքայն Հայոց փոխեաց զինքն ի կերպս սպասաւորի գրաստու, և ել յերկրէ իւրմէ Կիլիկոյ սակաւ արամբք և դէմ եղեալ զնայր յարեւելս առ ազգն նետողաց, առ խանն որ կոչէր Մանգոյ ... Եւ հասին մինչ ի սահմանս Թէոդուպոլեաց, ի տեղի ուրումն որ կոչի Վարդենի, և իջեմանեցան ի տուն ուրումն իշխանի Քուրդ անուն, և մնային ընծայիցն զոր պատրաստեալ էին խանին, զի հասուցեն յերկրէն Կիլիկոյ ...»¹² (ընդգծումները մերն են – Տ. Պ.):

Նշենք՝ Կիրակոս Գանձակեցին երկու անգամ է օգտագործել Վարդենիս անունը, իսկ Սմբատ Սպարապետը մեկ անգամ նույն բնակավայրին տվել է Վարդենի¹³ անունը: Վարդենիս-Վարդենի գյուղի այս երկու հիշատակութիւնները XIII դ. այլ հեղինակների, հիշատակարանագիրների կողմից չեն կրկնվել:

Հայ պատմաբաններից Հեթում Ա-ի՝ Վարդենիս գյուղում հանգրվանելու փաստին 1770–1780-ական թվականներին անդրադարձել է Միքայել Չամչյանը: Նա իր աշխատութիւնում ճշտությամբ շարադրել է պատմիչ Կիրակոս Գանձակեցու տեղեկատվութիւնը¹⁴ առանց անդրադառնալու Վարդենիս գյուղի տեղորոշման խնդրին: Մ. Չամչյանը անտեղյակ է եղել Սմբատ Սպարապետի կողմից նույն գյուղին տրված Վարդենի անվանը¹⁵:

Մխիթարյան միաբանութիւնի մեկ այլ անդամ՝ Ղևոնդ Ալիշանը, 1890 թ. տպագրած «Այրարատ» գրքում Նիգ (Ապարան) գավառի գյուղերը ներկայացնելիս գրել է, որ Գանձակեցու հիշատակած Վարդենիս գյուղը և Զաքարիա Քանաքեռցու¹⁶ մոտ Վարդենուց¹⁷ գյուղն օտար անունով անվանափոխված Կիլիկիէն գյուղն է¹⁸: «Այրարատ»-ը շարադրելիս մեծանուն գիտ-

¹² Ս մ բ ա տ Ս ս փ ա ր ա փ օ ւ օ ւ . Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 229–230:

¹³ Ամենայն հավանականությամբ, Սմբատ Սպարապետի հիշողութիւններից վրիպել է Վարդենիս բնակավայրի անվան վերջին ս տառը:

¹⁴ Միքայել Չամչյան. Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ տեառն 1784, Վենետիկ, 1786, էջ 248–249:

¹⁵ 1848 թ. Մ. Ֆ. Բրոսեն էջմիածնի վանքի գրադարանում հայտնաբերել է Սմբատ Սպարապետի ժամանակագրութիւնի երկու ձեռագիր օրինակ, որոնց հիման վրա 1856 թ. Ռսկան Հովհաննիսյանցը հրատարակել է «Սմբատայ Սպարապետի եղբոր Հեթմոյ առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս և Հայոց Մեծաց ըստ կարգի ժամանակաց» խորագրով գիրքը, ապա 1859 թ. Կարապետ վարդապետ Շահնազարեանցը Փարիզում լույս է ընծայել երկրորդ հրատարակութիւնը՝ «Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ» վերնագրով: Քիչ ավելի ուշ (1876 թ.) հայտնաբերվել է ևս մեկ ձեռագիր օրինակ, որը հրատարակվել է 1956 թ. Սերովբե Ագլյանի կողմից: Այս հրատարակութիւնն առավել ամբողջական է և միայն գրանում է հիշատակվել Վարդենի գյուղի անունը (տե՛ս Ս մ բ ա տ Ս ս փ ա ր ա փ օ ւ . նշվ. աշխ., էջ 230):

¹⁶ Ղ. Ալիշանը գրում է առանց աղբյուրը նշելու:

¹⁷ Զ ա ք ա ր ի ա Ք ա ն ա ք ե ո ց ի . Պատմութիւն: Կոնդակ Սուրբ ուխտին Յօհաննու վանից, աշխատ. Արմեն Վիրաբյանի (այսուհետ՝ Զաքարիա Քանաքեռցի), Երևան, 2015, էջ 180: Մեր համոզմամբ, Վարդենուց բառի վերջին ց տառը ձեռագիր և տառի սխալ ընթերցման արդյունք է. եղել է Վարդենուտ:

¹⁸ Ղ. Ալիշան. Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 253:

նականի ձեռքի տակ չի եղել 1876 թ. հայտնաբերված Սմբատ Սպարապետի ուղեգրության ձեռագիրը, և նա դրան չի անդրադարձել: Նշենք՝ «Հայապատում» գրքում Ալիշանը Հեթում Ա արքայի դեսպանախմբի պատմությունը ներկայացրել է Գանձակեցու տարբերակով և թիվ 10 ծանոթագրությունում նշել է նաև Սմբատ Սպարապետի ձեռագրի հիշատակությունը Վարդենի գյուղանունով¹⁹:

Հետագա տարիներին հայ պատմաբանները Վարդենիս բնակավայրը հիշել են միայն Հեթում Ա արքայի Կարակորում այցի հետ կապված²⁰:

Ավերված Անբերդ իշխանանիստի փոխարեն նոր Վարդենիս ոստանը 1205 թ. Զաքարե Բ շահնշահը հիմնել է Այրարատի կողմնակալությունը²¹ և կողմնակալ²² նշանակել Վաչե Ա Վաչուտյանին²³ շնորհելով նրան բարձրագույն իշխանաց իշխան²⁴ կոչում: Վերջինիս կառավարման

¹⁹ Ղ. Ալիշան. Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 461–462:

²⁰ Լ. Հ. Բաբայան. Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII–XIV դարերում, Երևան, 1964, էջ 375, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսերից մինչև XIV դ. կեսերը), Երևան, 1976, էջ 618, «Հայկական սովետական հանրագիտարան». Քուրդ Ա Վաչուտյան, հ. 11, Երևան, 1985, էջ 284, Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 782, Հ. Խաչատրյան, Տ. Պետրոսյանց. Հայկազունք: Հայ գորավարներ, ռազմական, պետական գործիչներ, դիվանագետներ: Քուրդ Ա Վաչուտյան, Երևան, 2002, էջ 683, «Հայկական համառոտ հանրագիտարան». Քուրդ Ա Վաչուտյան, հ. 4, Երևան, 2003, էջ 593, Բ. Բարսեղյան. Հեթում Ա արքան՝ միջնադարի հանձարեղ դիվանագետը, էջմիածին, 2009, էջ 84 (հեղինակը սխալմամբ Արագածոտն գավառի Վարդենիս գյուղը ներկայացրել է Սյունիքի կազմում), Տ. Հայազն (Պետրոսյանց), Հ. Պետրոսյանց. 200 Հայ գորավարներ: Շահնշահ Ա Զաքարյան, Երևան, 2011, էջ 57, Տ. Պետրոսյանց. Գիւղն, որ կոչի Վարդենիս ի նիգ գավառի, Երևան, 2018, էջ 172, Մ. Մանուկյան. Հայաստանի Հանրապետության մարզերը, քաղաքներն ու գյուղերը: Վարդենիս: Երևան, 2013, էջ 202, Գ. Գ. Микаелян. История Киликийского армянского государства. Ереван, 1952, с. 305–308; Aanie et Jean-Pierre Mahe, Histoire de L'Arme`nie des origines a nos jours. Perrin, 2012, p. 367.

²¹ Կողմնակալություն՝ ծայրագավառների կուսակալություն, կողմնապահություն, կողմնապետություն (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. III, Կ–Մ, Երևան, 1974, էջ 170):

²² Կողմնակալ՝ Հին Հայաստանում ծայրագավառների կուսակալ (տե՛ս նույն տեղում, էջ 169), համազոր՝ փոխարքա՝ պետության ծայրագավառը կառավարող բարձրաստիճան պաշտոնյա՝ մեծ լիազորություններով, տեղում փոխարինում է թագավորին և գործում նրա անունից (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. IV, Յ–Ֆ, Երևան, 1980, էջ 664):

²³ Վաչե Ա իշխանաց իշխան (գահակալել է 1205–1230-ական թվականներին) Այրարատի կողմնակալության-փոխարքայության հիմնադիր, Վաչուտի որդի, Սարգսի թոռ:

²⁴ Իշխանաց իշխան՝ երկրի, երկրամասի, քաղաքի, նահանգի կառավարիչ, դեկավար: Արաբական տիրապետության ժամանակ Բագրատունյաց տոհմի նախա-

իրավունքով տրվել է Այրարատի նահանգի տարածքը՝ Սուրբ Մարիով հանդերձ, ինչպես նաև՝ ժառանգական իրավունքով Արագածոտն, Նիգ գավառներն ամբողջությամբ, Անբերդի գավառամասը և Շիրակի գավառի հարավային հատվածը մինչև Երասխաձոր²⁵: Վաչե Ա իշխանաց իշխանը կողմնակալության իշխանանիստ է դարձրել Անբերդ բերդաքաղաքը²⁶:

1220-ական թվականների սկզբից Վաչե Ա իշխանաց իշխանին գահակցել է ավագ որդին՝ Քուրդ Ա Վաչուտյանը (գահակալել է 1233/34–1270-ական թվականներին), ով XIII դ. ամենանշանավոր պետական-ուսուցմական գործիչներից մեկն էր:

Սակայն Այրարատի երկրորդ կողմնակալ (փոխարքա) Քուրդ Ա Վաչուտյան իշխանաց իշխանը Կիրիկյան Հայաստանի Հեթում Ա արքային 1254 թ. ընդունել է ոչ թե Անբերդ բերդաքաղաքում, այլ՝ Վարդենիս գյուղում: Ինչո՞վ է պայմանավորված Անբերդի փոխարեն Հեթում Ա արքայի ընդունելությունը փաստը Վարդենիսում:

1236 թ. մոնղոլական երեսուն հազարանոց բանակը մտել է Հայք-Հայաստանի տարածք: Թշնամու բանակը ճամբար է դրել Գեղարքունյաց ծովի ափին: Պատերազմական միասնական որևէ գործողություն հայկական պետության, առանձին իշխանավորների կողմից չի ձեռնարկվել: Հիսուն տարի անկախ ապրած Հայք-Հայաստանի ճակատագիրը որոշվել է. «Չաղաղա նոյինն էառ զԼօռէ քաղաք և որք յայնը կողմանէ գաւառք: Դոլաղա նոյինն՝ զԿայէն բերդ, ուստի հանին զԱւագն տէր երկրին, և մեծն Չորմաղանն՝ զԱնի և զԿարս և զմերձակայան, Ղատաղա նոյինն՝ զկողմանս Չարեքին, զԳետաբակուց և զՎարդանաշատու: Իսկ Մոլար նոյինն ի բաժնի առեալ գբերդս գաւառաց մեծ իշխանի Վահրամայ և նախ առնու զՇամբոր հնարիւք. և Վահրամ որդուովն Աղբուղայիւ փախչի տեղուջէ ի տեղի, մինչև գիտաց, եթէ խնայեն ի հնազանդեայս՝ որք կամօք խոնարհին ի ձեռս նոցա ...» (ընդգծումները մերն են – Տ. Պ.)²⁷: Եվ Չաքարե Բ շահնշահի հիմնած հզոր, շուրջ հիսուն հազարանոց պետական և իշխանական տների մոտ քառասուն հազարանոց բանակի, նույնքան աշխարհագոր մարտադաշտ հանելու կարողություն ունեցող Հայք-Հայաստանն առանց կռվի «անվաստակ և առանց աշխատութեանց»²⁸ մոնղոլների կողմից նվաճվել է:

Այրարատի կողմնակալություն-փոխարքայությունը հարավից Անի մայրաքաղաքի դարպասն էր և նույնպես մտել է Չարմաղանի գրավելիք տարածքի մեջ: Հետևելով մեր երկրի փաստացի տիրակալներից Հայաստանի

րար, որին ամիրապետները ճանաչում էին նախարարների ավագ և հանձնում երկրի կառավարչությունը (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. II, Զ–Ծ, Երևան, 1972, էջ 344):

²⁵ Չ ա ք ա ռ ի ա Ք ա ն ա ք ե ո յ ի, էջ 183:

²⁶ Տ. Պ ե տ Ր ո ս յ ա ն ց. Անբերդի ամրոցը. – «Հայկական բանակ», 2018, թիվ 1–2, էջ 246–253, ն ու յ ն ի՝ Անբերդի ազատագրումը. – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», 2018, թիվ 2, էջ 160–167:

²⁷ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 144–145:

²⁸ Ն ու յ ն տ ե ղ ու մ:

և Վիրքի միացյալ պետության ավարեկ Ավագ Զաքարյանի²⁹, Գագի, Տավուշի, Գարդմանի, Տերունականի և այլ գավառների կողմնակալ Վահրամ Զաքարյան Գագեցու³⁰, XIII դ. ռազմաքաղաքական գործիչ, ինքնակալ³¹, արքա³², թագավոր³³, կողմնակալ³⁴ Հասան Զալալ Դուրդի և մյուս իշխանավորների օրինակին, իր տարածքներն ավերումից զերծ պահելու նպատակով, Այրարատի փոխարքա Քուրդ Ա իշխանաց իշխանը ևս հավատարմության երդում է տվել մոնղոլ զորավարին:

Մոնղոլ նվաճողները ընդունել են հայ իշխանների հպատակության երդումը, բայց նրանց պաշտպանության հնարավորությունից զրկելու նպատակով ավերել են վերջիններիս բերդ-ամրոցները, նաև՝ Այրարատի կողմնակալության-փոխարքայության Անբերդ իշխանանիստը: Ամենայն հավանականությամբ, ավերվել են նաև Աշտարակի, Կարբիի, Աստվածընկալի բերդերը: Այս դեպքերը կատարվել են 1237–1238 թթ.:

Փոխարքա Քուրդ Ա իշխանաց իշխանի առջև ծառայել է նոր ոստան ունենալու խնդիրը: Այդ նպատակով կողմնակալության-փոխարքայության հյուսիսարևելյան հատվածում՝ Նիգ (Ապարան) գավառի կենտրոնական մասում, իշխանաց իշխանի դուռն ճարտարապետները Վարդենիս-Վարդենի գյուղում 1238–1240 թթ. ընթացքում կառուցել են նոր իշխանանիստ:

Վարդենիս գյուղը

Վարդենիս գյուղի տեղադրությանն անդրադարձել է միայն Ղ. Ալիշանը³⁵: Նա գրել է, որ Կիրակոս Գանձակեցու նշած Վարդենիս ու Զաքարիա Քանաքեռցու հիշատակած Վարդենուց³⁶ գյուղերը նույնն են և «Այրարատ» գրքում գրել է. «125. Դարձցուք յաջակողմն Քասաղայ, յարեմուտս, և ի համանուն աւանն, յորմէ իբր կիսով փարսախաւ հեռի ընդ արեւելս Հր. առ գետեգերբն կայ Մուլքի գիւղ ...³⁷: Նոյնքան հեռի ի սմանէ և նովին զրիւք արեւելեան հարաւոյ, Կիւլլիճէ գիւղ իբր 35 տամբք Հայոց և Ս. Աստուածածին եկեղեցեաւ: Զսա համարիմ /Կիւլլիճէ կոչելով/ Վարդենիս կոչեցեալն ի նախնեաց կամ Վարդենուց գետը, զի չիք քան զայս դիպան և անուամբ և զրիւք՝ նշանակեալ ի Կիրակոսէ պատմչէ. «ի գիւղն, որ կոչի Վարդենիս»:

²⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 320:

³⁰ Կ. Ղաֆաղարյան. Հաղթատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963, էջ 202, տե՛ս նաև Տ. Հայազն. Տիկնայք փափկասուն Հայոց աշխարհի, գիրք Ա, Երևան, 2005, էջ 48–49:

³¹ Դիվան հայ վիմագրության, պր. 5, Արցախ, կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 38, արձ. 82, էջ 41, արձ. 85:

³² Նույն տեղում, էջ 88, արձ. 268, էջ 116, արձ. 387, էջ 120, արձ. 400: Տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության, պր. 3, Եղեգնաձորի և Ագիգբեկովի շրջաններ, կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 238, արձ. 779:

³³ Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 15, արձ. 12:

³⁴ Նույն տեղում, էջ 41, արձ. 84:

³⁵ Ղ. Ալիշան. Այրարատ, էջ 253:

³⁶ Զաքարիա Քանաքեռցի, էջ 180:

³⁷ 2007 թ. վերանվանվել է Կայք:

ուր արքայն Հեթում Ա յերթալն առ Մանգու Ղան թաթարաց՝ եկն և հանգեաւ. «ի տանն իշխանին՝ զոր Քուրդ անուանէին, Հայ ազգաւ, կրօնիւք քրիստոնեայ ... : ... Եւ զի վկայէ բանդ զՎարդենիս լինել ոստան մեծի իշխանիդ այդ Քրդի, զորոյ նախնեացն և սերընդոց բազում յիշատակս տեսաք ի կողմանս Արագածոտան ...»³⁸ (ընդգծումները մերն են – Տ. Պ.): Մեծ հայագետը, ամենայն հավանականութեամբ, Վարդենիս-Վարդենուցի և Կիւլլիճեի նույնականացման եզրահանգման է եկել պարզ վերլուծութեան արդյունքում. անվան օտարացողներն ուղղակի Վարդենիս տեղանունը թարգմանել և վերածել են Գյուլլուջայի³⁹, փաստորեն, գյուլ՝ վարդ, ուջա՝ տեղ իմաստով, այսինքն՝ Վարդենիս-Վարդի տեղ:

Ղ. Ալիշանը Վարդենիսի հետ նույնացրել է նաև Վարդենուց գյուղը, քանի որ նրան հայտնի չի եղել 1616⁴⁰ և 1644⁴¹ թթ. երկու հիշատակարան, որոնցում Նիգ-Ապարան գավառի բնակավայրերի թվում հիշատակվել է «վարդ» գոյականով սկսվող ևս մեկ բնակավայր՝ Վարդենուտ անունով⁴²: 1616 թ. հիշատակարանում տրվել է գյուղի արդեն օտարացված անունը միայն Շիրաղալա, իսկ 1644 թ. հիշատակարանում տրվել է գյուղի հայկական Վարդենուտ և գյուղի օտարացված Շիրաղալա անունը⁴³: Այդ հիշատակարանները հայտնաբերվել են 1930-ական թվականներից հետո միայն: Նրան հայտնի էր Զաքարիա Քանաքեռցու հիշատակած Վարդենուցը, որի «վարդ» արմատով սկսվելը, դրա մասին որևէ այլ տեղեկություն չունենալու հանգամանքը, որով այն կրիտիկել այլ բնակավայր, մեծ գիտնականը Վարդենիսն ու Վարդենուցը նույնացրել է:

Շուրջ հարյուր տարի Ղ. Ալիշանի կարծիքը եղել է միակը:

Վարդենիս-Վարդենի իշխանանիստը

Որտե՞ղ է գտնվել Վարդենիս-Վարդենի գյուղը:

Ճավոք, Նիգ (Ապարան) գավառի բնակավայրերի անուններից միայն հատուկենտ անուններ են հասել մեզ, ինչպես Նիգատունը (VII դարի «Աշխարհացոյց»)⁴⁴, Փառաժնակերտը՝ եզր կաթողիկոսի ծննդավայրը (VII դար)⁴⁵,

³⁸ Ղ. Ալիշան. Այրարատ, էջ 252–253:

³⁹ Այդ հնչողությամբ է այն հասել մեր օրերը և 1946 թ. հուլիսի 15-ին Հայաստանի բնակավայրերի անվանափոխության հանձնաժողովի կողմից Գյուլլուջա անունը վերանվանվել է Վարդենիս:

⁴⁰ Հայերեն ձեռագրերի ժեղ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.), հ. Ա, կազմ.՝ Վ. Հակոբյան, Աշ. Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 583:

⁴¹ Մ. Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. 2180, 416 բ թերթ:

⁴² Քանաքեռցու պատմությունից հայտնի Վարդենուց գյուղը Ղ. Ալիշանը նույնացրել է Վարդենիսի հետ, մինչդեռ Վարդենուց գյուղը վերջինիս մոտ Վարդենուտն է:

⁴³ Շիրիդ/ա/լե գյուղի անունը ևս 1946 թ. վերանվանվել է Վարդենուտ:

⁴⁴ Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»-ի: (Փորձ VII դարի Հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 72:

⁴⁵ Պատմություն Սեբեոսի, աշխատ. Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 129:

Եղիպատրուչը՝ Եսայի կաթողիկոսի ծննդավայրը (VIII դար)⁴⁶, Թեղենյաց վանքը՝ Վահան Գողթնեցու պատսպարանը (VIII դար)⁴⁷, Զինավաճառը՝ 910 թ. հայ-արաբական ճակատամարտի վայրը⁴⁸, Ափնան՝ հիշված XIII դ. կեսերին Սաղմոսավանքի արձանագրություններից մեկում⁴⁹, Վարդենիս-Վարդենին՝ Քուրդ Ա-ի իշխանանիստը, որոնք հիշատակված է Կիրակոս Գանձակեցու և Սմբատ Սպարապետի կողմից (XIII դ. կեսին):

1604 թ. շահաբասյան բռնագաղթից հետո հայկական բոլոր բնակավայրերի նման Նիգ (Ապարան) գավառի բնակավայրերի անունները ևս օտարացվել են:

Մատենադարանի 7862 թվահամարի Ավետարանի 10բ էջին 1616 թ. արձանագրվել է. «Ես՝ Տէրուն էրէցի տղայ Անտոնս, իմ մայր Մինէն, հետնայ մարդն ինչապտուրն ձախեցինք Աւետարանս Մինասին, իւր որդի տէր Դավթին, ի թվին ՌԿԵ /1616/, ի հայրապետութիւն ս. Նշանիս Սաղմոսայվանից տէր Մանուէլ արքեպիսկոպոսին, ի գ/յ/ուղն, որ կոչի Շիրաղալայ, ի ոսն Արազաձու»⁵⁰ (ընդգծումները մերն են – Տ. Պ.):

1644 թ. մի ձեռագրի գրիչ Սահակը հիշատակել է Նիգ (Ապարան) գավառի որոշ գյուղերի օտարացված և զուգահեռ հայկական պատմական անունները՝ Քասաղ, ձանճիկ, Աղբերակք, ձերմակ վանք /Ալաքուչակ/, Արագած (Թաքյալու), Խոտավետ (Բլխեր), Վարդենուտ (Շիրաղալա), Նիգատուն (Ղալաչա), Ափնագյուղ, Զորագլուխ (Գյուլաբլու), Եղիպատրուչ (Տամջու), Ծառախչեն (Մորաղատում), Երնջատուփ (Ղարաբուլաղ), Թեղենյաց վանք⁵¹: XVII դ. վերջին պատմիչ Քանաքեռցին իր պատմության Զ գլխում հիշատակել է ապարանյան մի շարք գյուղերի հայկական անուններ՝ Վարդաբլուր, Վարդենուց, Աբնագեղ, ձարձակես, Խոտավետ, Քասաղ⁵²:

Բնակավայրերի հայկական անունները մինչև օտարվելը երկարակյաց են եղել և դարերի ընթացքում գրեթե փոփոխությունների չեն ենթարկվել: Օրինակ՝ Եսայի կաթողիկոսի ծննդավայր Եղիպատրուչը հիշվել է VIII դարից և գրեթե ինը դար հետո ևս: Նույն կերպ պահպանվել են Թեղենյաց վանքի, Ափնայի անունները:

Այս անվանաշարքից մեզ հետաքրքրում են Վարդենիս-Վարդենի և Վարդենուտ անունները⁵³: Առաջին երկուսը հաստատապես միևնույն գյու-

⁴⁶ Պատմութիւն Ղեւոնդեաց Մեծի Վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 167 և հետո:

⁴⁷ Տ. Պետրոսյանց. Թեղենյաց վանքը որպես մշակութային կենտրոն. – ՊԲՀ, 1982, № 1, էջ 121–129:

⁴⁸ Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուսաղեմ, 1867, էջ 271:

⁴⁹ Տ. Պետրոսյանց. Նիգ-Ապարանի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1988, էջ 27:

⁵⁰ Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.), էջ 583:

⁵¹ ՄՄ, ձեռ. 2180, 416 բ թերթ:

⁵² Զաքարիա Քանաքեռցի, էջ 180:

⁵³ Քանաքեռցու «Պատմութիւն հայոցից» հայտնի է, որ Նիգ (Ապարան) գավառում «վարդ» գոյականով սկսվող ևս մեկ բնակավայր է առկա՝ Վարդաբլուր: Սակայն այս բնակավայրը գտնվում է գավառի հյուսիսային եզրին, Շիրակ ու

ղի անուններն են և հիշատակվում են XIII դարում ու գտնվել են «առ յոտն Արագածու, հանդէպ լերինն Արայի, ի գիւղն որ կոչի Վարդենիս»⁵⁴: Վարդենուտը հիշվում է 1616 թ. (Շիրազալա), 1644 թ. (Վարդենուտ-Շիրազալա), 1690-ական թվականներին (Վարդենուց) և նույնպես գտնվել է Արագածի փեշին, Արայի լեռան դիմաց: Աշխարհագրորեն իրականում երկու բնակավայրերն էլ գտնվել են Արագածի փեշին, Արայի լեռան դիմաց՝ իրարից 8 կմ հեռավորությամբ:

1970-ական թվականների վերջերից ուսումնասիրել ենք Վաչուտյան ընտանիքի պատմությունը⁵⁵: Ելնելով նրանց տիրույթում հիշատակված Վարդենիս-Վարդենի և Վարդենուտ գյուղանունների նմանությունից, աշխարհագրական նույնական ներկայացումից՝ 1980-ական թվականների կեսերին Վարդենիս-Վարդենին նույնացրել ենք Վարդենուտի հետ⁵⁶:

Վարդենիս գյուղի տեղադրությունը և տեղում պահպանված հուշարձանները

Ինչպես գիտենք, Քասաղ գետը հոսում է Արագած սարի արևելյան եզրով՝ Ապարանի սարահարթը բաժանելով երկու մասի: Գետի հոսանքի աջ կողմը կիսազնդածև զբաղեցնում է Արագած սարը՝ իր հսկա, կլոր հատած կոնահիմքով: Գետն արևելյան, հարավային ու հարավարևմտյան կողմերով գոտևորում է Արագածի կոնը, գետի հոսանքի ձախ կողմում, հյուսիսից հարավ մինչև Հրազդան գետը, ձգվում է Ծաղկունյաց լեռնաշղթան, հարավարևմուտք շրջադարձի դիմաց՝ Արագածի և Ծաղկունյաց լեռների միջնամասում, հանում է Արայի լեռը, որը սահմանազատում է Ապարանի սարահարթն Արարատյան դաշտից: Ծաղկունյաց լեռնաշղթայի ուղղահայաց շղթայից, իրարից որոշակի հեռավորությամբ, զուգահեռ ճյուղեր են առաջացել, որոնք մատների նման խրվելով Քասաղ գետից ձախ գտնվող սարահարթի մեջ, երբեմն հասնելով մինչև գետի հունը՝ այն բաժանել են մեծ ու փոքր հատվածների: Իրանցից առաջինը, որին տրվել է Ուղտասար անունը, մայր լեռնաշղթայից սկսվելով հասնում է տարածքի կենտրոն Քասաղ (Ապարան) բնակավայրին: Երկրորդը դրանից հեռու է մոտ 6 կմ և ավարտվում է Քասաղ գետից 2 կմ հեռավորությամբ: Երրորդ ոտքը՝ Վարդենիսը, սկսվելով մայր լեռնաշղթայից, երկրորդից հեռու է մոտ 12 կմ և հասնում է Քասաղ գետի ափը: Մի այդպիսի ոտք-ճյուղ էլ մայր լեռնաշղթայից ձգվում ու հասնում է Արա լեռան ստորոտը:

Լոռի տանող ճանապարհների խաչմերուկում և չի կարող նույնանպ Վարդենիս-Վարդենի կամ Վարդենուտ գյուղերի հետ:

⁵⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 321:

⁵⁵ Տ. Պետրոսյանց. Թեղեյաց վանքը և նրա առաջնորդները. – «Էջմիածին», 1977, Ը, էջ 48–51, նույնի՝ Վաչուտյանների իշխանական տան եկեղեցաշինական գործունեությունը. – «Էջմիածին», 1977, Թ–Ժ, էջ 84–86, նույնի՝ Աստվածընկալի վանքը, էջ 57–61, նույնի՝ Սաղմոսավանք, էջ 55–58, նույնի՝ Սաղմոսավանքի գրացուցակի գրվելու ժամանակը, էջ 82–84 և այլն:

⁵⁶ Տ. Պետրոսյանց. Քուրդ Վաչուտյանի իշխանանիստ Վարդենիս գյուղը. – «Սովետական մանկավարժ» (Երևան), 1987, № 6, էջ 53–56:

Դեպի Քասաղ գետը ձգվող ուռքերի միջնամասերում ձևավորվել են կիսակլոր գոգավոր հարթություններ: Դրանցից ամենամեծը երկրորդ-երրորդ ուռքերի արանքում եղած հատվածն է: Այդ ձվաձև տարածքը բնականից լավ պաշտպանված է և բարեբեր: Աջ կողմից Քասաղ գետ են թափվում Արագածից սկիզբ առնող Վարդենիս և Յոթվերք գետակները: Երրորդ ուռքի սկզբնամասից սկսվող մի գետակ էլ ձախ կողմից Քասաղ գետ է թափվում: Երկրորդ ուռքից սկսվող անտառաչերտն ամբողջ գոգավորությամբ ձգվում է լեռան ստորոտից գրեթե մինչև գագաթը և հասնում մինչև երրորդ ուռքի ծայրը: Գոգավորության արևելյան կողմում, մայր լեռնաշղթայի ստորոտից հանքային ջուր է բխում: Այդպիսի մի աղբյուր էլ հոսում է երրորդ ուռքի ստորոտին՝ Քասաղ գետի գրեթե ափին: Մի մեծ աղբյուր բխում է Քասաղի աջակողմյան հատվածի քարաժայռերի տակից: Այդ աղբյուրին ներկա վարդենիսցիները Լուսաղբյուր անունն են տալիս: Տարածքի ջրային աղբյուրներից ամենամեծը, նախորդից 1,5 կմ հարավ, Արագածի լեռնաբազուկի ելուստին եղած 7 աղբյուրների շարքն է, որից հարավ եղած բնակավայրը Աղբերակք (Աղբյուրների ակ) անուն էր կրում, իսկ այդ աղբյուրները և դրանցից սկիզբ առնող գետակը Յոթվերք անունով է հայտնի:

Աշխարհագրական այս հատվածն ավելի քան հինգ հազար տարի բնակելի է եղել: Հին բերդի մնացորդներ կան երկրորդ լեռնաճյուղի հիմնային մասում, որտեղ ուղղահայաց ժայռեր են, և դրանց հիմնային հատվածներում շարված պատերով, ամենափոքր միջոցներով բավականին դժվարամատչելի պաշտպանական կառույց է ստեղծվել: Դրանից հարավ դեպի Բջնի տանող ձորակի վերնամասում, լեռան ուղղանկյուն գագաթամասում եղել է հզոր կրկուպյան բերդ: Երրորդ լեռնաճյուղի դիմաց՝ Քասաղ գետի աջ կողմում, սարահարթի մոտքի մոտ, ընդարձակ քառակուսի տարածքի վրա մ. թ. ա. III–II-րդ հազարամյակներից գոյատևած հզոր պաշտպանական բերդ-բնակավայր էր՝ Ձկնավաճառ անունով: Դրանից աջ ձերմակ վանք⁵⁷ բնակավայրի մոտ, եղել են 4–5 հազար տարեկան բնակավայր և միջնադարյան բերդ-դղյակ: Պաշտպանական հզոր կառույց է եղել Արագած սարի արևելյան ստորոտին, սարի գագաթից սկսվող ու մինչև ստորոտ իջնող ձորի միջնամասում: Արագած սարի հյուսիսային լեռնամոտքի մոտ, Քասաղ /Ապարան/ քաղաքի արևմտյան կողմի ելուստներից մեկի վրա, Քասաղ գետի ձախ կողմի բարձրադիր հատվածում, ինչպես գիտենք, եղել է շուրջ հինգ հազար տարի անընդմեջ գոյատևած հզոր բերդաքաղաք:

Այդ միջավայրում բոլոր կողմերից պաշտպանված տարածքում, Քասաղ գետի հոսքի աջ կողմում, Արագած սարի ստորոտին, Արայի լեռան դիմաց, Արագածից իջնող լեռնազանգվածի գոգավոր ելուստների բարենպաստ հատվածներում, հազարամյակներ առաջ բնակավայր է հիմնվել: Գյուղը միջնադարում ունեցել է Վարդենիս⁵⁸ անունը, որի բնակելի թաղամասերը ձևավորվել են հարմարավետ բլրակների վրա: Այդ բնակավայրում էլ Քուրդ Ա իշխանաց իշխանը 1238 թ. սկսել է հիմնել իր նոր ուստանը: Գյու-

⁵⁷ Ներկայիս Քուրդի գյուղը, որը գտնվում է Ապարանի տարածաշրջանում:

⁵⁸ Վարդենիս գյուղի բոլոր կողմերում մասրենու թփեր են, որոնք գարնանը ծաղկում են՝ վարդագույն երանգ ստանալով: Դրա արդյունքում էլ տեղի բնակիչները տարածքին տվել են Վարդենիս (վարդի տեղ) անունը:

ղը երկու մասի բաժանող ձորով հոսող Վարդենիս գետակի հոսքի ճախակողմյան բարձրադիր հատվածում սկսվել է դղյակի և այն պաշտպանող բերդապարսպի կառուցումը: Ծարտարապետը դղյակը հիմնել է ելուստի վրա հյուսիս-հարավ ուղղությամբ: Ծակատամասը շարվել է մուգ գույնի սրբատաշ տուֆաքարով⁵⁹: Դղյակից մոտ 50 մ արևելք՝ ձորի ափից սկսած հարավ-հյուսիս ուղղությամբ, կառուցվել է պարիսպ, որի վրա երեք կիսակլոր բուրգեր են եղել, ինչպես Անբերդի վերակառուցված ճակատամասում: Տեղանքի առանձնահատկությունից ելնելով պարիսպը շարունակվել է արևելք, ապա կրկին թեքվել դեպի հյուսիս մոտ 50 մ: Այդտեղ կառուցվել է մեծ բուրգ, որի ստորին մասը մոտ 7 մ բարձրությամբ հարմարեցված էր տեղանքին, իսկ դրա վերնամասում ընդարձակ կլոր, սնամեջ բուրգ էր, որի կտուրը ծածկված էր, ներսատարածքը սվաղված էր անջրաթափանց սվաղով: Արևմտյան պատի վրա ուներ փոքր մուտք: Ամենայն հավանականությամբ, օգտագործվել է որպես պահեստարան: Հենց այդ բուրգի մոտ է գտնվում ժայռաքարերի տակից հոսող Լուսաղբյուրը, որի սառնորակ, քաղցրահամ ջուրը պարսպի տակով հոսել և ջրվեժի տեսքով թափվել է ներքև ու ձախ կողմից խառնվել Վարդենիս գետակին: Բերդապարիսպը մոտ 250 մ ձգվել է արևելք, ապա թեքվել է հյուսիս, ձվաձև շրջագծով գնացել արևմուտք, իր մեջ առել երկու բնակելի թաղ և շրջվելով դեպի արևմուտք՝ հասել է ձորաբերանին, ամբողջացրել բերդատարածքը, ընդհանուր շրջապարսպելով մոտ 5 հա տարածք: Դղյակը բավականին մեծ, ընդարձակ կառույց է եղել՝ աղնվական ապրելակերպի բոլոր հարմարավետություններով, որի հարկայնության մասին դժվար է դատողություն անել: Այն կարող էր Անբերդի դղյակի նման լինել եռահարկ, Վարդենուտի դղյակի նման լինել կրկնահարկ: Հաստատապես ունեցել է նկուղային մաս, որը երևում էր հետագայում կառուցված դպրոցի՝ շենքի շարունակությունը կազմող փոսից և նկուղային հարկից⁶⁰: Բերդն ունեցել է երեք մուտք: Մեկը գտնվել է արևմուտքում: Այդ դռնից սկսվող ճանապարհը 2 կմ միացել է Արագածի ստորոտով անցնող Դվին-Լոռե բերդ-Վիրք պողոտային: Երկրորդ մուտքը գտնվել է մեծ բուրգի և Լուսաղբյուրի մոտ ու ճանապարհ էր դեպի Քասաղ գետ և շրջակա բնակավայրերը: Այն միացել է Արայի լեռան աջակողմով Արարատյան դաշտից եկող և դեպի Ապարան, այնտեղից Լոռե բերդ գնացող պողոտային: Երրորդ դուռը բերդի հյուսիսային կողմում էր և այդտեղից սկսվող ճանապարհը գնացել է դեպի Քասաղ (Ապարան) բնակավայրը:

Գյուղը երկու մասի բաժանող ձորի աջակողմյան բարձրադիր տարածքում երեք կողմից դժվարամատչելի բարձրության գլխամասում, դղյակը կառուցելուն զուգահեռ, կառուցվել է բերդ-ամրոց: Տեղանքի շուրջ 1,5 հա հնգանիստ շրջանաձև տարածքը պարսպապատվել է: Պարիսպները շարված են մի կողմից տաշած, ինչպես նաև՝ անմշակ տեղական որձաքարով: Որոշ

⁵⁹ Ապարանյան կարծիք, բայց լավ մշակվող տուֆաքարերի հանքերը մոտ էին և լավագույնս ծառայել են շինարարության համար: Մի քանի տարի անց նույն հանքաքարով կառուցվել են Եղիպատրուշի, Աստվածընկալի կաթողիկե եկեղեցիներն ու գավիթները, Սաղմոսավանքի գրատունը:

⁶⁰ Տ. Պետրոսյանց. Նիգ-Ապարանի պատմաճարտարապետական հուշարձանները, էջ 52-53:

Հատվածներում պարիսպն ունեցել է 3–4 մ հաստություն: Ամրոցի միակ մուտքը եղել է հյուսիսարևելյան կողմից, որի դիմաց բավական ընդարձակ տարածք ևս ամրացվել է կրկնապարսպով: Ամենայն հավանականությամբ, այս ամրոցը կառուցվել է փոխարքայի թիկնապահ զնդերի համար, որի ներսում եղել են տարբեր կառույցներ, իսկ դիմացը՝ բավականին ընդարձակ բնակելի թաղամաս:

Նոր իշխանանիստի հոգևոր պահանջները բավարարելու համար, դղյակից արևելք՝ ձորակի մեջ՝ Լուսաղբյուրից հոսող առվակի աջ կողմում, կառուցվել է միախորան եկեղեցի: Բերդատարածքից դուրս են մնացել Յոթվերքի աղբյուրաշարի մոտ եղած Աղբերակք թաղը, դղյակի հյուսիսային կողմում գտնվող թաղը, արևելյան կողմում՝ բլրագլխի եկեղեցու շրջակայքի թաղ, Լուսաղբյուրի առվակի ձախ կողմում գտնվող թաղը, հին և նոր եկեղեցիների միջև գտնվող թաղը, արհեստական առվի մոտ գտնվող թաղը, արհեստական առվի վրա գտնվող ջրաղացի շրջակա թաղը⁶¹: Գյուղի թաղամասերը իրար հետ կապվել են 7–8 քայլ լայնությամբ ճանապարհներով, որոնք առայսօր գործում են:

Վարդենիս գյուղի բնակիչները զբաղվել են հողագործությամբ, անասնապահությամբ, մեղվապահությամբ: Բարենպաստ, անձրևոտ տարիներին հացահատիկի երկու տարվա բերք են ստացել, անասունների նախիրներն ու ոչխարի հոտերն ամբողջ ամառ կերակրվել են Արագած սարի, Ծաղկունյաց լեռնաշղթայի բարեբեր մարգագետիններում: Գյուղացիները զբաղվել են վայրի կենդանիների որսով, ձկնորսությամբ⁶²:

Վարդենիսը Նիգ գավառի կանաչապատ գյուղ է եղել և կա: Դրան նպաստել են գյուղի կողքով հոսող Քասաղ գետը, գյուղի միջով հոսող Վարդենիս և Յոթվերք գետակները, Լուսաղբյուրի առվակը, խոր հնադարում փորված Քասաղ գետից սկիզբ առնող, գյուղի կողքի բլուրները գոտևորող, հոսանքի միջնամասում մի քանի քարով ջրաղաց աշխատեցնող առուն, Յոթվերքի աղբյուրաշարից սկիզբ առնող և Վարդենիս գետակի մեջ թափվող առուն: Գետերի, գետակների, առուների երկու կողմերի ափերին տնկվել են ուռի, բարդու ծառեր: Բարդիների պուրակներ են եղել նոր եկեղեցու թաղում, Յոթվերքի աղբյուրների վերին ու ներքին հատվածներում, Վարդենիս գետակի կենտրոնական հատվածում:

Վարդենուտ գյուղում պահպանված հույժությունները

Շուրջ 150 տարի առաջ Յովհաննես եպիսկոպոս Շահխաթունեանցը Արագած սարի հարավարևելյան ստորոտին գտնվող Վարդենուտ բնակավայրի արևմտյան կողմի բարձրադիր հարթության կենտրոնական հատվածի բնական բլրակի գագաթի մասում մի շինություն է նկարագրել. «... ի բարձր տեղում է ամրոցիկ ինչ յորձաքար կուսակուփի վիմաց և ի չորեսին անկիւնան չորք հաստատուն բրգունք կրածոյք ... զի ոչ այնքան ասի ամ-

⁶¹ Նույն տեղում, էջ 52–53: Տե՛ս նաև Տ. Պետրոսյանց. Վաչուտյաններ, Երևան, 2001, էջ 149, նույնի՝ Վարդենիս. Հանրագիտարան, Երևան, 2009, էջ 33 (ամրոցի հատակագիծը տեղադրված է 139-րդ էջում):

⁶² Քասաղ, Վարդենիս, Զորագլուխ գետերում առատ ձուկ կար: Վարդենիսից 1,5 կմ հարավ գտնվող բնակավայրը հայտնի է Ձկնավաճառ անունով:

րոց, որքան պալատ կամ ապարան իշխանաւորի ուրումն, քանցի չորեք-կուսի ընդարձակութի/ւն/ նորա չէ աւելի քան ինն հարիւր քառակուսի գազ պարսից և բացի չորից բրգանցն՝ տարածութի/ւն/ միջին տեղւոյ նորա լեալ է յառաջագոյն կամարայարկ երկբաժին: Եւ գտանին տակաւին հիմունք սա-լաթուոցն կամարաց ընտիր տաշածու ի նոյն յորձաքար վիմացն և սեամբքն մտից դրան ընդ արևելս»⁶³: Այդ կառույցը հետագա տարիներին ծածկվել է հողի շերտով և մոռացվել:

Վարդենուտ գյուղի դպրոցի տնօրեն նշանակվելուց հետո՝ 1985 թ., հնագիտական տարածքի հետազոտություններ ենթադրեցի՝ հողի տակ կարող են համալիր շինություններ լինել և հնարավոր է, որ այդ շինությունները կարող են լինել Քուրդ Ա Վաչուտյանի Վարդենիս դղյակը⁶⁴: 1986/87 թթ. ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի դաշտային արշավախումբը պեղել է տարածքը⁶⁵, բայց շինությունների փոխարեն բացվեց 11 x 11 մ չափերի ընդամենը մեկ դահլիճ: Պատերի պահպանված հատվածներից երևում էր, որ շինությունը ներսից ու դրսից շարված է եղել տեղական որձաքարի մշակված խոշորաչափ քարերով: Պահպանված երկու, որոշ տեղերում երեք շարք պատերի յուրաքանչյուր շարքի բարձրությունը 65–75 սմ էր, պատերի հաստությունը՝ 1,7 մ: Դահլիճի գրեթե կենտրոնում մնացել էին քառակուսի հիմքով (1,40 x 1,40 մ) երկու սյունահիմքեր, որոնք կրել էին երկրորդ հարկի ծածկը (ըստ Յովհ. Շահխաթունեանցի): Տարածքում պահպանվել են փոքրիկ ամրոցի որոշ մանրամասներ՝ մի քանի մետր երկարության պարսպապատ և մի փոքրիկ կիսազլանաձև բուրգ, որը մեր օրերում հարևան տան բնակիչը օգտագործում է այլ նպատակով: Դահլիճի արևելյան մասում XIX դ. կեսերից սկսած՝ թաղումներ են կատարվել, տապանաքարերի համար օգտագործվել են շինության մուտքի ձևավոր եզրաքարեր, հեծաններ, որոնց վրա մնում են քարե դռան համար փորված անցքեր:

Դեռևս Յովհ. Շահխաթունեանցն է նկատել, որ դահլիճը ոչ թե բերդ կամ ամրոց է, այլ փոքրիկ երկհարկանի (°) ապարանք, որի առաջին հարկը երկու սյունահիմքերի և ջրի ամբարի գոյությունը այլ նպատակների էջը կարող ծառայել⁶⁶: Դահլիճի հնարավորությունները սահմանափակ են, չըջապատում օժանդակ այլ կառույցներ չկան:

Եզրակացություն

Պատմիչ Կիրակոս Գանձակեցին և զորավար Սմբատ Սպարապետն իրենց երկերում Այրարատի կողմնակալության-փոխարքայության Նիգ (Ապարան) գավառի տարածքում հիշատակել են Վարդենիս-Վարդենի անունով

⁶³ Յովհ. Եպիս. Շահխաթունեանց. Ստորագրություն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատոյ, Էջմիածին, 2014, էջ 319–320:

⁶⁴ Տ. Պետրոսյանց. Քուրդ Վաչուտյանի իշխանանիստ Վարդենիս գյուղը, էջ 53–56:

⁶⁵ Պեղումները ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի առաջատար գիտաշխատող Գ. Կարախանյանը:

⁶⁶ Յովհ. Եպիս. Շահխաթունեանց. նշվ. աշխ., էջ 319:

բնակավայր: Այն եղել է կողմնակալության-փոխարքայության իշխանանիստը, որտեղ կողմնակալ (փոխարքա) քուրդ Ա իշխանաց իշխանը հյուրընկալել է Կիլիկիան չայաստանի արքային:

Տեղում պահպանված հնագիտական նյութերը բացառում են Վարդենուտ բնակավայրի նույնացումը Վարդենիս-Վարդենիի հետ, քանի որ Վարդենուտն իր հնարավորություններով իշխանանիստի ապրելակերպի որևէ պայման չուներ:

Տիգրան Պետրոսյանց – Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական գրադարանի տնօրեն, Մոսկվայի Ազգային անվտանգության հիմնախնդիրների միջազգային ակադեմիայի դոկտոր, Բնութիցի և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս: Գիտական հետաքրքրությունները՝ XII–XIV դդ. հայոց պատմություն, Զաքարյան չայաստանի ժամանակաշրջան, հայ զինվորականության պատմություն, Հայկական իշխանական գիւնանչանների պատմություն: Հեղինակ է 63 գրքի ու գրքուկի և շուրջ 100 հոդվածի: tigranhayazn@mail.ru

REFERENCES

- Aanie et Jean-Pierre Mahe, Histoire de L’Arme’nie des origins a nos jours. Perrin, 2012
- Alishan Gh. Ayrarat, Venetik, 1890 (In Armenian).
- Alishan Gh. Hayapatum, Venetik, 1901 (In Armenian).
- Babayan L. H. Hayastani sotsial-intesakan ev kaghakakan patmutyune XIII–XIV darerum, Yerevan, 1964 (In Armenian).
- Barseghyan B. Hetum A arkan` midjnadari hanjaregh divanagete, Ejmiadsin, 2009 (In Armenian).
- Divan hay vimagrutyun, pr. 3, Eghegnadzori ev Azizbekovi shrjanner, kazm.` S. G. Barkhudaryan, Yerevan, 1967; pr. 5, Artsakh, kazm.` S. G. Barkhudaryan, Yerevan, 1982 (In Armenian).
- Eremyan S. T. Hayastane est “Ashkharhatsuyts”-i: (Pordz VII dari haykakan kartezi verakazmutyan zhamanakakits kartezagrakan henki vra), Yerevan, 1963 (In Armenian).
- Ghafadaryan K. Hovhannavanke ev nra ardzanagrutyunnere, Yerevan, 1948 (In Armenian).
- Ghafadaryan K. Haghpat. jartarapetakan karutsvadsknere ev vimakan ardzanagrutyunnere, Yerevan, 1963 (In Armenian).
- Hay zhoghovrdi patmutyun, h. III, Hayastane zargatsads feodalizmi darashrdjanum (IX d. keserids minchev XIV d. kesere), Yerevan, 1976 (In Armenian).
- “Haykakan hamarot hanragitaran”. Kurd A Vachutyun, h. 4, Yerevan, 2003 (In Armenian).
- “Haykakan sovetakan hanragitaran”. Kurd A Vachutyun, h. 11, Yerevan, 1985 (In Armenian).

- Hakobyan T. Kh., Melik-Bakhshyan St. T., Barseghyan H. Kh. Hayastani ev harakits shrdjanneri teghanunneri bararan, h. 4, Yerevan, 1998 (In Armenian).
- Hayazn (Petrosyants) T., Petrosyants H. 200 hay zoravarner: Shahshah A Zakaryan, Yerevan, 2011 (In Armenian).
- Havakumn patmutean Vardanay vardapeti, Venetik, 1862 (In Armenian).
- Hayazn T. Tiknayk papkasun Hayots ashkharhi, girk A, Yerevan, 2005 (In Armenian).
- Hayeren dzeragreri ZhE dari hishatakaranner (1601–1620 tt.), h. A, kazm.՝ V. Hakobyan, Ash. Hovhannisyan, Yerevan, 1974 (In Armenian).
- Khachatryan H., Petrosyants T. Haykazunk: Hay zoravarner, razmakan, petakan gordsichner, divanagetner: Kurd A Vachutyani, Yerevan, 2002 (In Armenian).
- Kirakos Gandzaketsi. Patmutivn hayots, ashkhat. K. Melik-Ohanjanean, Yerevan, 1961 (In Armenian).
- Manucharyan A. Kurd A Vachutyani erku ardzanagrutyani verdsanutyun.– YSU.am/files/03A_Manucharyan.pdf (In Armenian).
- Manukyan M. Hayastani Hanrapetutyani marzere, kaghaknern u gyughere: Vardenis, Yerevan, 2013 (In Armenian).
- M. Mashtotsi anvan matenadaran, dzer. 2180, 416 b tert (In Armenian).
- Mikael Chamchyan. Patmutivn Hayots i skzbane ashkhari minchev tsam tearn 1784, Venetik, 1786 (In Armenian).
- Mikaelyan G. G. Istoriya Kilikiiskogo armyanskogo gosydarstva. Yerevan, 1952 (In Russian).
- Patmutivn Sebeosi, ashkhat. G. V. Abgaryani, Yerevan, 1979 (In Armenian).
- Patmutivn Gevondeats Medzi Vardapeti hayots, , S. Peterburg, 1887 (In Armenian).
- Patmutivn Yovhannu katoghikosi, Erusaghem, 1867 (In Armenian).
- Petrosyants T. Teghenyants vanke vorpes mshakutayin kentron.– PBH, 1982, № 1 (In Armenian).
- Petrosyants T. Nig-Aparani patmajartarapetakan hushardzannere, Yerevan, 1988 (In Armenian).
- Petrosyants T. Teghenyants vanqe ev nra aradjnordnere.– “Ejmiadsin”, 1977, E (In Armenian).
- Petrosyants T. Vachutyanneri ishkhakanakan tan ekeghetsashinakan gordsuneutyune.– “Ejmiadsin”, 1977, T–Zh (In Armenian).
- Petrosyants T. Kurd Vachutyani ishkhakanist Vardenis gyughe .– “Sovetakan mankavarzh” (Yerevan), 1987, № 6 (In Armenian).
- Petrosyants T. Vachutyanner, Yerevan, 2001 (In Armenian).
- Petrosyants T. Vardenis. hanragitaran, Yerevan, 2009 (In Armenian).
- Petrosyants T. Astvadsenkali vanke.– “Ejmiadsin”, 1978, G (In Armenian).
- Petrosyants T. Mravyan gyughi Astvadsadsin ekeghetsin ev ardzanagrutyunnere .– PBH, 1981, № 3 (In Armenian).
- Petrosyants T. Saghmosavank .– “Ejmiadsin”, 1981, D (In Armenian).
- Petrosyants T. Saghmosavanki gratsutsaki grvelu dzamanake.– HKhSH GA “Lraber hasarakakan gitutyunneri”, 1981, № 1 (In Armenian).

- Petrosyants T. Givghn, vor kochi Vardenis i Nig gavari, Yerevan, 2018 (In Armenian).
- Petrosyants T. Anberd amrotse .– “Haykakan banak”, 2018, tiv 1–2 (In Armenian).
- Petrosyants T. Anberdi azatagrume.– Khachatur Abovyani anvan НРМН “Hayagitakan handes”, 2018, tiv 2 (In Armenian).
- Shahkhatuneants Yovh. epis. Storagrutivn Katoghike Ejmiadsni ev hing gavaratsn, Ejmiadsin, 2014 (In Armenian).
- Smbat Sparapet. Taregirk, Venetik, 1956 (In Armenian).
- Zakaria Kanakertsi. Patmutivn: Kondak Surb ukhtin Yohannu vanits, ashkhat. Armen Virabyani, Yerevan, 2015 (In Armenian).
- Zhamanakakits hayots lezvi batsatrakan bararan, h. II, Z – Ds, Yerevan, 1972; h. III, K–M, Yerevan, 1974; h. IV, Y–F, Yerevan, 1980 (In Armenian).

КНЯЖЕСКАЯ РЕЗИДЕНЦИЯ ВАРДЕНИС
НАМЕСТНИКА КУРДА I ВАЧУТЯНА

ТИГРАН ПЕТРОСЯНЦ

Р е з ю м е

Ключевые слова: княжеская резиденция Варденис, Вачутяны, Курд I, царь Хетум I, Каракорум, Мангу-хан.

Весной 1254 года царь Киликийского армянского государства Хетум I, отправляющийся на переговоры с императором Монголии Мангу-ханом в столицу монгольского государства Каракорум, переодетый в слугу, с малочисленной группой сопровождающих, преодолев множество трудностей, пересек почти всю Малую Азию и добрался до Карса. Там он встретился с наместником монгольского императора военачальником Бачу, его высокопоставленными военными и оттуда направился в село Варденис провинции Ниг (Апаран) царя царей Курда I, наместника Айраратского наместничества.

Изучение письменных источников, топографической и археологической среды села Варденис-Вардени провинции Ниг позволяет установить его местоположение и сделать вывод, что упомянутое село – это нынешнее село Варденис Апаранского района.

Тигран Петросянц – директор научной библиотеки АГПУ им. Х. Абовяна, доктор Московской международной академии по проблемам национальной безопасности, академик Международной академии наук о природе и обществе. Научные интересы: история Армении XII–XIV вв., Армения в эпоху Захарянов, история армянского воинства, история армянских княжеских гербов. Автор 63 книг и брошюр, около 100 статей.
tigranhayazn@mail.ru

PRINCE RESIDENCE VARDENIS OF VICEROY KURD I VACHUTYAN

TIGRAN PETROSYANTS

Summary

Key words: prince residence Vardenis, Vachutyans, Kurd I, King Hetum I, Karakorum, Möngke Khan.

In the spring of 1254, the King of the Cilician Armenian state, Hetum I, leaving for negotiations with the Emperor of Mongolia Möngke Khan to Karakorum, the capital of the Mongolian state, disguised as a servant and accompanied by a small group of accompanying people, overcoming many difficulties, crossed almost all of the Asia Minor and reached Kars. There he met with the Viceroy of the Mongol Emperor – military leader Baichu, his high-ranking military men, and from there he went to the Vardenis village of Nig (Aparan) province of the King of Kings Kurd I – the Viceroy of Ayrarat Viceroyalty.

The study of written sources, topographic and archaeological environment of the village of Vardenis-Vardeni of Nig province, allows us to establish its location and conclude that the mentioned village is the current village of Vardenis of Aparan region.

Tigran Petrosyants – Director of the Scientific Library of the ASPU after Kh. Abovyan, Doctor of the Moscow International Academy on National Security Issues, Academician of the International Academy of Sciences on Nature and Society. Scientific interests: history of Armenia in the 12th-14th centuries, Armenia in the era of the Zakaryans, the history of the Armenian army, the history of the Armenian princes' coats of arms. Author of 63 books and brochures, about 100 scientific articles. tigranhayazn@mail.ru

ԿԵՂԾԱՆՈՒՆ, ԾԱԾԿԱՆՈՒՆ, ՄԱԿԱՆՈՒՆ
ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ*

ՓԱՌԱՆՁԵՄ ՄԵՅԹԻԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ հատկանվանագիտություն, անձնանվանագիտություն, անձնանուն, կեղծանուն, ծածկանուն, մականուն, Հր. Աճառյան, Բ. Հովակիմյան, Էդ. Աղայան, Հ. Պետրոսյան, բառարան, բառարանագրություն, անուն-մականուն, անուն-կեղծանուն, գրական անուն:

Նախաբան

Անձնանվանական համակարգի (անուն, ազգանուն, տոհմանուն, հայրանուն, մականուն, կեղծանուն) քննությունն արդի լեզվաբանություն կարևոր ու առանցքային հարցերից է: Մարդիկ անվանակոչվել են բոլոր ժամանակներում, բայց ինչպե՞ս, ի՞նչ ազդեցությունների ներքո, և ի՞նչ ճանապարհ է անցել հատկանվանագիտությունը (օնոմաստիկա)՝ մասնավորապես անձնանվանագիտությունը (անտրոպոնոմիկա) ընդհանրապես համաշխարհային ու ազգային դիտանկյունից: Այս հարցադրումներից ելնելով տարբեր ժողովուրդներ ուսումնասիրություններ են կատարել ու կատարում իրենց անվանման համակարգի բնութագրման համար և հասել են նկատելի ձեռքբերումների: Բացառություն չենք նաև հայերս. հատկանվանաբանության ոլորտում հայագիտական ուսումնասիրությունները կարևոր դերակատարում ունեն ազգային ու համաշխարհային անվանարանների պատմահամեմատական, զուգադրական քննություններ և եզրահանգումներ կատարելու առումով:

Հայ հատկանվանաբանության ուսումնասիրման լուրջ հաջողությունները նախևառաջ պայմանավորված են բառարանագրության ոլորտում կատարված հսկայական աշխատանքով, որի արդյունքում ընթերցողի սեղանին են դրվել բավական ներկայանալի բառարաններ¹: Թերևս տեղին է հիշել լեզվաբան Վ. Նիկոնովի գնահատականը: Նա Հր. Աճառյանի բա-

* Ներկայացվել է 11. VIII. 2020 թ., գրախոսվել է 28. X. 2020 թ., ընդունվել է տպագրության 03. XI. 2020 թ.:

¹ Դրանցից են Մխիթար Աբբայի «Բառգիրք հայկազգեան լեզուի» (հ. 2, Վենետիկ, 1769), «Բառարան Սուրբ Գրոց հանդերձ պատկերօք, աշխարհացուցօք եւ տախտակօք» (Կ. Պոլիս, 1881), Ն. Ճիւղանեանի «Առձեռն բառարան յատուկ անուանց» (Կ. Պոլիս, 1879), Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան» (այսուհետ՝ ՀԱԲ) (հ. 1–5, Երևան, 1942–1962), Տ. Ավետիսյանի «Հայոց ազգանունների բառարան» (Երևան, 2004), Փ. Մեյթիխանյանի «Աստվածաշնչի և հայոց սուրբ անվանց բառարան (ըստ V–XX դարերի հայ բանաստեղծություն)» (Երևան, 2001) և էլի մի շարք փոքր ու մեծ բառարաններ:

ուարանը համարում է «Կովկասի անձնանվանագիտության գլխավոր իրադարձությունը»²:

Հր. Աճառյանն իր բառարանի առաջաբանում գրում է. «Իմ այս աշխատությունում ես մեր բանասերներին տալիս եմ մի պատրաստի Տեղեկատու, որ նրանց սեղանի անհրաժեշտ գիրքը պիտի լինի և նրանց ամենօրյա խորհրդատուն ... Աշխատությունս պիտի միջոց տա նաև կատարելու բազմաթիվ նորանոր ուսումնասիրություններ ... Վերջապես ամեն մի անուն կարող է նյութ հայթայթել մի ամբողջ մենագրություն կազմելու»³: Եվ, իսկապես, վերջին տասնամյակներում բազմաթիվ ուսումնասիրություններ՝ մենագրություններ, բառարաններ, հոդվածներ են գրվել խարսխված մեծ լեզվաբանի բառարանային հսկայածավալ նյութի վրա:

Հանդիպում են նաև նեղ բնույթի որոշ աշխատանքներ, ինչպես՝ Կ. Դուրգարյանի «Անվանագիրք»-ը⁴, որում ուսումնասիրված են այժմ գործածվող ու տարածված անուններ. դրանց մի մասի ծագումն ու ստուգաբանությունը վերանայված են, հանգամանորեն բացատրված են նաև նոր ու նորագույն այն անձնանունները, որոնք չկան Հր. Աճառյանի բառարանում, Մեհրուժան Բաբաջանյանի «Անունդ ինչ է. աստվածաշնչյան անունների բառարան»-ում⁵, որտեղ բավական հետաքրքիր խորագրերի տակ (Անունդ թող չլքի քեզ մահվանից հետո նույնպես, Անձնանունների խորհրդաբանությունը, Հեթանոսական անվանակոչումներ, Անձնանունների թվային արժեքը, Անունը՝ որպես մարդու կյանքի ուղեցույց, Անունների բույրը և այլն) ընթերցողին ներկայացվում է հետաքրքիր նյութ, Ռուբեն արեղա Զարգարյանի ու Շահեն արեղա Անանյանի «Ավետարանների գործող անձինք» գիրքը, որը, հեղինակների բնութագրմամբ, կարող էր նաև կոչվել «Նոր Կտակարանի անձնանունների բառարան»⁶: Հետաքրքիր աշխատանք կարելի է համարել Մանվել սարկավազ Սարգսյանի «Հայ հոգևորականների պատմանունների և մականունների բացատրական բառարան»-ը, որտեղ տրվում են բոլոր ժամանակների հայ հոգևորականների մականուններն ու պատմանունները: Ծածկանունների մեծ ծավալ է ներկայացնում Բախտիար Հովակիմյանի «Հայոց ծածկանունների բառարան»-ը⁷, որտեղ, չնայած կատարված հսկայական աշխատանքին, մականունների, պատմանունների ու կեղծանունների տարանջատում չենք տեսնում: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև Ռ. Գևորգյանի «Հայոց ծածկանունների, կեղծանունների բառարան»-ը⁸:

² В. Н и к о н о в. Состояние и задачи ономастических исследований Кавказа. — «Вопросы языкознания» (М.), 1975, № 4, с. 111.

³ Տե՛ս Հր. Աճառյան. ՀԱԲ, հ. Ա, Երևան, 1942 թ., էջ XV–XVI:

⁴ Կ. Դուրգարյան. Անվանագիրք, Երևան, 1981:

⁵ Մ. Բաբաջանյան. Անունդ ինչ է. աստվածաշնչյան անունների բառարան, Երևան, 2012:

⁶ Ռուբեն արեղա Զարգարյան, Շահեն արեղա Անանյան. Ավետարանների գործող անձինք, Սբ. Էջմիածին, 2010:

⁷ Բ. Հովակիմյան. Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005:

⁸ Ռ. Գևորգյան. Հայոց ծածկանունների, կեղծանունների բառարան, Երևան, 2002:

Հայ ընթերցողը հիմնականում չի տարբերում մականունը կեղծանունից, և կամ արդյոք հավասարաբեք են կեղծանունն ու ծածկանունը, գրողի և արվեստագետի գրական անունը կարելի՞ է արդյոք կեղծանուն կամ ծածկանուն համարել:

Կեղծանուն (ռուս.՝ псевдоним, լատ.՝ pseudonymos): Անհատի կողմից (հիմնականում՝ գրողներ, արվեստի գործիչներ) ընտրված կամայական անուն, որով տվյալ անձը ներկայանում է հանրությանը, ինչպես նաև՝ ծածկանուն, գրչանուն, գրական անուն⁹:

Ավելի հաճախական գործածություն ունի ծածկանուն տերմինը (օտար անվանումը նույնանում է կեղծանուն տերմինի օտար անվանումներին). այդ են վկայում հատկապես XX դ. հրատարակված բառարանների վերնագրերը՝ Խ. Բարսեղյանի¹⁰, Բ. Տավուշեցու¹¹, իսկ XXI դարակցքին լույս տեսած Ռ. Գևորգյանի¹² բառարանները: Փորձենք ներկայացնել կեղծանուն և ծածկանուն տերմինների ընդհանրություններն ու տարբերությունները. հնարավոր է դրանք դիտարկել որպես առանձին տերմիններ և կամ, հակառակը, ընդամենը համանիշ կամ նույնանիշ:

Այս տերմինների բնութագրման առումով լեզվաբանական գրականության մեջ հակասություններ կան: Անդրադառնանք դրանց:

Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարան»-ում այս տերմիններն առանձին գլխաբառերով ներկայացված չեն, այլ միայն Հատուկ անուն գլխաբառի տակ, որտեղ հեղինակը գրում է. «Անձնանունների մեջ ուրույն շերտ են կազմում կեղծանունները՝ ծածկանունները, մականունները» և ապա հավելում է. «Կեղծանունը կամ ծածկանունը հնարված անձնանուն է (ընդգծումները մերն են – Փ. Մ.), որը այս կամ այն հանգամանքով պայմանավորված փոխարինում է անձի կամ բաղադրյալ անվանը»¹³: Ակնհայտ է, որ հեղինակի համար այս երեք տերմինները նույնական են, և դա երևում է նաև իր բերած օրինակներից, ինչպես՝ Նար-Դոս, Բաֆֆի, Պերճ Պոռչյան, Դանիել Վարուժան, Նաիրի Զարյան, Հովհաննես Շիրազ, Գամառ-Քաթիպա ու այլն:

Նաև չի կարելի համաձայնել այն կարծիքին, որ կեղծանունն անձնանուն է: Ինչ խոսք, կան կեղծանուններ, որոնք ինչ-որ անձանց անուն են եղել, ինչպես՝ Լեո> գրական հերոսի անձնանուն, բայց դա չի նշանակում, որ Լեո-ն Առաքել Բաբախանյանի համար դառնում է երկրորդ անձնանուն, այլ ընդամենը՝ պայմանական անուն, որը կոչվում է կեղծանուն, և այն բնորոշ է ոչ միայն մեզ՝ Հայերիս, այլև շատուշատ այլ ժողովուրդների:

⁹ Որպես տերմին դիտարկելիս այս խմբում պետք է առանձնացնել գրական անունը:

¹⁰ Տե՛ս Խ. Բ ար ս ե ղ յ ան. «Մշակի» ծածկանունների բառարան, Երևան, 1962:

¹¹ Տե՛ս Բ. Տ ա վ ու շ ե ճ յ ի. Նահատակ մտավորականների ծածկանուններ. – «Էջմիածին», 1965, Ժ, էջ 31–36, 1966, Բ, էջ 52–57:

¹² Տե՛ս Ռ. Գ և ո Ր գ յ ան. նշվ. աշխ.:

¹³ Տե՛ս Հ. Պ ե տ Ր ո ս յ ան. Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 61–62:

Ըստ էջ. Աղայանի բացատրական բառարանի՝ կեղծ և ծածուկ բառերը չունեն իմաստային ընդհանրություններ. ծածուկ-ն ունի թաքուն, գաղտնի, քողարկված, չհայտնաբերված, իսկ կեղծ-ը՝ խաբեություն պարունակող, ճշմարտությունը խեղաթյուրող, ոչ իսկական և մի քանի այլ իմաստներ: Ինչպես տեսնում ենք, համեմատության ոչ մի եզր: Որքանով են այս իմաստները պահպանվում այս բառերով բաղադրված ծածկանուն և կեղծանուն տերմիններում: Նորից դիմենք բառարանի օգնությունը. «Կեղծանուն, գ. Կամայական անուն (ուշադրություն դարձրեք անուն, ոչ թե անձնանուն – Փ. Մ.), որով հանդես է գալիս գրողը՝ գործիչը՝ արվեստագետը ևն»¹⁴: «Ծածկանուն, գ. մականուն, որով հաճախ հանդես են գալիս գրողները՝ հրապարակախոսները ևն»¹⁵: Այս դեպքում արդեն, կարծում ենք, որ ամեն ինչ ավելի խճճվեց: Այսինքն՝ ըստ հեղինակի, եթե կեղծանունը կամայական անուն է, ապա ծածկանունը մականուն է: Ոչ միայն բառարանագրի, այլև շատերի մոտ թյուրըմբռնում կա կեղծանվան որպես տերմինի մասին, և որ շատ շատերի համար մականունն ու կեղծանունը միևնույն երևույթն են արտահայտում:

Կարծում ենք՝ հստակ տարանջատելի է կեղծանունը մականունից. դրանք տարբեր տերմիններ են և տարբեր իրողություններ են անվանում, այնպես որ հեղինակների մոտեցումը՝ տվյալ դեպքում կեղծանունը մականուն համարելու, չի համապատասխանում դրանց էությունը:

Մինչդեռ կեղծանունն ու ծածկանունը, անկախ դրանց բաղադրիչ արմատների՝ կեղծ, ծածուկ, տարբերություններից, ունեն շփման եզրեր և, ինչպես կտեսնենք ստորև բերվող օրինակներից, այս տերմինները կարող են փոխարինել մեկը մյուսին:

Կեղծանվան առաջացման հիմնական պատճառը երկար կամ անբարեհունչ անվան փոխարեն կարճ ու բարեհունչ անուն ունենալու և հանրության չըմբռնում այդ անվամբ հայտնի դառնալու ցանկությունն է:

Կեղծանունը կարող է կամ նոր բառ լինել՝ տվյալ անձի ընտրությունով, կամ իր անվանման ամբողջ բաղադրիչներից ստացված նոր տարբերակ, կամ անուն-ազգանվան սկզբնատառերով և այլն:

Կեղծանունը հիմնականում միաբաղադրիչ անվանում է, բայց հանդիպում են նաև երկբաղադրիչ կեղծանուններ, ինչպես՝ Պերճ Պոռոյան (Հովհաննես Առաքելյան), Վոլտեր (Ֆրանսուա-Մարի Արուե), Մաքսիմ Գորկի (Ալեքսեյ Պեչկով), Մերիլին Մոնրո (Նորմա Բեյքեր), Շեր (Շերիլին Սարգսյան), Լեռ Կամսար (Արամ Թովմազյան)¹⁶:

Ու քանի որ այս դաշտում ամենաներկայանալին Բ. Հովակիմյանի բառարանն է, ուստի խոսենք ծածկանուն տերմինի մասին՝ համեմատության եզր ընդունելով տվյալ բառարանում ներառված կեղծանունների օրինակները: Բառարանը բավական տարողունակ է. ութ հազար հեղինակի քսանհինգ հազար ծածկանուն է ներկայացվում այստեղ, ընդգրկում է ժամա-

¹⁴ Տե՛ս էջ. Աղայան. Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Երևան, 2014, էջ 636:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 571:

¹⁶ Լեռ Կամսարը հայտնի է նաև Կարապետ Կայեն և Արա Մասյան կեղծանուններով:

նակային հսկայական սահման՝ XVI դարից մինչև իր ապրած օրերը (XXI դարասկիզբ), ավելի քան 1600 պարբերականի նյութ տպագրված աշխարհի տարբեր անկյուններում, ուստի այն իբրև կեղծանունների վերաբերյալ համապարփակ փաստական աղբյուր լինելու առումով, անշուշտ, ունի բավական մեծ կարևորություն: Բայց կեղծանունների հավաքման ու բացատրման առումով այս բառարանը հեռու է բավարար լինելուց: Ոչ ոք չի կարողանա պարզել, թե ինչպես է ստեղծվել տվյալ ծածկանունը, ում կողմից, ինչ հանգամանքներում և այլն, քանի որ բառարանում ընդամենը տրված են ծածկանունները, և թե որտեղ ու երբ են դրանք կիրառվել, այսինքն՝ աղբյուրը:

Ներածություն մեջ հեղինակը ծածկանունների դերի մասին հայտնում է հետևյալը. «Ծածկանունների գործածություն հիմնական նպատակը եղել է իրականությունից ծածկել, թաքցնել իսկական անձնավորության ով լինելը»¹⁷ ու նշում դրա պատճառները՝ հասարակական-քաղաքական, անձնական և այլն: Տեսականորեն այս բնութագիրը ճիշտ է, բայց գործնականում չի համապատասխանում իր իսկ բառարանում բերված բազում ծածկանուն օրինակներին, քանի որ դրանք իրականում մականուններ են կամ գրական անուններ, որոնց համար կարելի է ուրիշ, ավելի հաջող տերմին գտնել, բայց ոչ ծածկանուն կամ կեղծանուն: Բերենք օրինակներ. որ Ալազան, Սարմեն, Ատրպետ, Համաստեղ, Մուրացան, Բաֆֆի, Երվանդաղե, Սայաթ-Նովա, Լեո, Փանթալիո (Արշակ Չոպանյան) անունները կեղծանուններ են, դա ոչ ոք չի կարող վիճարկել, բայց եթե ասում ենք Եղիշե Չարենց, Հովհաննես Երազ, Վահան Տերյան, Ակսել Բակունց, Համո Սահյան, Նաիրի Չարյան, Շառլ Ազնավուր և այլն, ապա որո՞նք են այստեղ կեղծանունները կամ ինչպե՞ս կարող են այս ձևերը համարվել լինել վերը բերված կեղծանուններին: Ո՞վ չգիտի, որ Եղիշե Չարենցը Եղիշե Սողոմոնյանն է, որն իրեն մականուն է ընտրել Չարենց ձևը, և որի մեկնաբանման մասին կան մի քանի տեսակետներ¹⁸: Խոսքն այս դեպքում այն մասին է, թե որն է տվյալ մականվան բացատրության հնարավորինս ճիշտ տարբերակը¹⁹, այլ այն՝ ստորև բերված օրինակներից և ոչ մեկը չի կարող կեղծանուն համարվել: Այդ անվանումներում ընդգծված բաղադրիչներն մականուն են՝ Չարենց, Երազ, կամ անուն-ազգանվան ավելի բարեհունչ տարբերակներ, ինչպես՝ Վահան Տերյան, Նաիրի Չարյան, կամ միայն ազգանվանակերտ հիմքը՝ ինչպես՝ Ազնավուր, Չոհրապ առանց-յան-ի, ինչպե՞ս կարող են կեղծանուն համարվել:

Խոսենք մականվան և կեղծանվան մի քանի տարբերակիչ հատկանիշների մասին:

¹⁷ Տե՛ս Բ. Հովակիմյան. նշվ. աշխ., էջ 5:

¹⁸ Հետագայում Չարենցն այս մականունը իր համար դարձրեց պաշտոնական ազգանուն. նրա դուստրերը հենց այդ ազգանունով էլ ներկայանում են՝ Արփենիկ Չարենց և Անահիտ Չարենց:

¹⁹ Կարծում ենք՝ ուսանողների՝ իրեն ուղղված հարցի պատասխանը, այն, որ ստեղծագործ մարդը, մտնելով աշխարհ, կոչված է աշխարհը փոխելու, աշխարհին նայում է նոր հայացքով, և նրանք մերժվում են հանրության կողմից, չար են կոչվում: Մանրամասն տե՛ս Հետահայաց. — armenpress.am

Մականունը տվյալ անձը կարող է ունենալ իր իսկ ապրած ժամանակահատվածում՝ Տրգրան Մեծ, Գարեգին Նժդեհ, Հովհաննես Երրազ, Եղիշե Չարենց, ինչպես նաև՝ իր մահից հետո, ասենք թագավորների կամ կաթողիկոսների կարգահամարները՝ Արտավազդ Բ, Վազգեն Առաջին, Գարեգին Երկրորդ։ Ընդգծվածներից և ոչ մեկը չի կարող իբրև կեղծանուն ներկայացվել, որովհետև կան մի քանի գործոններ, որոնցով սրանք տարանջատվում են։

Մինչդեռ անհատը գիտակցաբար ինքն է իրեն կեղծանուն ընտրում, և ընտրում իր ճաշակով, ասենք՝ Բաֆֆի, Երվանդաղե կամ Սայաթ-Նովա, թեև բացառված չէ ուրիշի խորհրդով կեղծանուն վերցնելը։ Կեղծանունը անուն-ազգանվան հետ կապ ունի միայն սկզբնատառերի՝ իբրև կեղծանուն հանդես գալու դեպքում, ինչպես՝ Ա. Բ. > Առաքել Բաբախանյան։ Բայց ոչ մի կապ չունի Լեոն իր անուն-ազգանվան հետ։

Կարծում ենք՝ ճիշտ չէ կեղծանունն անվան հետ միասին գրելը կամ արտաբերելը, ինչպես՝ Ալեքսանդր Երվանդաղե²⁰։ Եթե անվանման կադապրում անունն առկա է, ուրեմն այն չի կարող կեղծանուն դիտարկվել։ Ուրեմն սխալ է Ալեքսանդր Երվանդաղե ասելը. պետք է լինի կամ Երվանդաղե, առանց Ալեքսանդրի, կամ Ալեքսանդր Մովսիսյան։ Դա նույնն է, որ սկսենք ասել Միքայել Նար-Դոս կամ Հարություն Սայաթ-Նովա։ Ցավոք, համացանցը հեղեղված է այս կարգի սխալագրություններով, անգամ՝ դասագրքերում, իսկ բառարաններում՝ առավել մեծ չափերով, ճիշտ տարանջատում կատարված չէ։ Դարձյալ հղում կատարենք Բ. Հովակիմյանի բառարանին, որտեղ տրված են անուն-ազգանվան սկզբնատառերը՝ իբրև կեղծանվան մի դրսևորում, ասենք՝ Ա. Մ., որն իր իսկ կողմից բացված է Ալեքսանդր Երվանդաղե²¹։ Միանշանակ սխալ է այն պետք է բացել Ալեքսանդր Մովսիսյան։ Թե չէ՝ ուր մնաց կեղծանվան արժեքը։ Եթե Երվանդաղե, ապա միայն առանձին գրությամբ, այլապես խախտվում են կեղծանվան բոլոր տեսական բնութագրիչները։ Ի դեպ, նշենք, որ գրողի բոլոր գործերը 1880–1930-ական թվականներին տպագրվել են միայն Երվանդաղե կեղծանվամբ, հանդեսներում և ամսագրերում հանդիպում է նաև Երվանդաղե կեղծանվան միայն առաջին տառով Ե., հրապարակումներ։ Կեղծանվան դերն այն է, որ նա հենց թաքուն պահի բուն հեղինակին, այստեղից էլ գալիս է կեղծանուն կամ ծածկանուն տերմինը։ Ժամանակին այդպես ստեղծվեց Գամառ-Քաթիպան։ Իսկ եթե անվան հետ ենք արտաբերում կամ գրում կեղծանունը, ուրեմն այն պետք է դիտարկվի իբրև մականուն, ինչը թյուրըմբռնումների տեղիք կտա։ Ինչո՞ւ ենք ասում Աչոտ Երկաթ, որովհետև բոլորին է հայտնի՝ պատերազմում անպայման հաղթանակի հասնելու նրա երկաթյա կամքը, նա իրավացիորեն վաստակել է այդ պատվանունը, ինչո՞ւ ենք

²⁰ Ցավոք, այդպես է տրված Երվանդաղեի երկերի հինգհատորյա ժողովածուն (Ա. Երվանդաղե. Երկեր հինգ հատորով, Երևան, 1986–1988)։ Մինչդեռ 50–60-ական թվականների հրատարակություններում և անգամ դրանցից շատ առաջ տրվում է միայն Երվանդաղե. տե՛ս ն ու յ ն ի՝ Արտիստը, Երևան, 1959, ն ու յ ն ի՝ Ո՞րն է մայրը, Երևան, 1963։

²¹ Տե՛ս Բ. Հովակիմյան. նշվ. աշխ., էջ 28։

ասում Եղիշե Չարենց, որովհետև յուրաքանչյուրս գիտի այն տեսակետները, ըստ որոնց՝ Եղիշե Սողոմոնյանը դարձել է նաև Եղիշե Չարենց, ասել է թե՛ նա ունի անվանման երկու բանաձև՝ անուն-ազգանուն և անուն-մականուն, բայց չունի կեղծանուն, նույնը Հովհաննես Երրազի դեպքում, Դանիել Վարուժանի: Ասենք ավելին. կան դեպքեր, երբ միայն մակ-անվամբ հնարավոր է նորոշել տվյալ անհատին, ինչպես իմաստունի դեպքում: Առանց անվան, ոչ ոք չի կարող տարբերակել Սողոմոն Իմաստունին իրկար Իմաստունից, կամ միայն երկաթ ասելով ոչ ոք Աշոտ Երկաթ չի ընկալի:

Գրական կեղծանունները գուցե և հետաքրքրական են, այնուամենայնիվ, տաղանդի հետ որևէ առնչություն չունեն, ինչպես՝ Երվանդադե > Երվանի որդի: Կեղծանվան ամենատարածված տեսակը միաբաղադրիչ կեղծանուններն են, ինչպես՝ Ծերենց, և այդ բառը որևէ կապ չունի նրա անուն-ազգանվան հետ: Հակոբ Մելիք-Հակոբյանի երկերի տասնհատորյակը տպագրված է միայն Բաֆֆի կեղծանվամբ, Առաքել Բաբախանյանի երկերը՝ Լեո կեղծանվամբ, և այդ նույն ձևով՝ Մուրացան, Նար-Դոս, Սայաթ-Նովա, որը, կարծում ենք, արտահայտման միանգամայն ճիշտ ձևն է:

Եթե գրողն իր անուն-ազգանունը ենթարկել է որոշակի փոփոխություն՝ այն ավելի գրական ու բարեհունչ դարձնելու համար, դա չի նշանակում, որ նա ստեղծել է իր համար կեղծանուն, ինչպես՝ Վահան Տերյանը կամ Համո Սահյանը: Այս դեպքում ունենք տվյալ գրողի գրական անունը, որը չի կարելի նույնացնել նրա անուն-ազգանվանը, առավել ևս համարել կեղծանուն կամ մականուն:

Կեղծանուն չէ և ոչ էլ մականուն, երբ գրողն իր ազգանվան -յանը հանում է, ինչպես Ղևոնդ Ալիշան/Ալիշանյան, Ծառ Ազնավուր/Ազնավուրյան: Այս դեպքերում ուղղակի ունենք գրական անուն՝ գրական բառի՝ գրականություն մեջ գործածվող նշանակությունը, երբ հեղինակն իր անուն-ազգանունն որոշակի փոփոխություններով դարձնում է ավելի գրական: Բայց ահա այս օրինակներում՝ Ազատ Վչտունի > Կարապետ Մամիկոնյան, Լեո Կամսար > Արամ Թովմաղյան, Պերճ Պոռչյան > Հովհաննես Տեր-Առաքելյան հստակ ունենք երկբաղադրիչ կեղծանուններ:

Կեղծանուններն ունեն ստեղծման անհատական դրսևորում և համակարգվում են որոշակի խմբերում: Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

1. Անուն-ազգանվան, միայն անվան կամ միայն ազգանվան, մակ-անվան, նույնիսկ կեղծանվան սկզբնատառը կամ տառերը, ինչպես՝ Դ. > Խաչիկ Դաշտենց, Դ. > Դերենիկ Դեմիրճյան, Ե. > Եահե արք. Աճեմյան, Ա. Ի. > Արամ Ինճիկյան, Ա. Չ. > Արչակ Չոպանյան, Յ. Յ. > Հակոբ Հակոբյան և այլն²²: Հանդիպում են կեղծանուններ նաև այլ դասավորությամբ, ինչպես՝ Պերճ Պոռչյան > Ճ. Յ., այսինքն՝ վերջին տառերով, կամ էլ բնավ պարտադիր չէ, որ այդ տառը կամ տառերը կապ ունենան կամ մասամբ կապ ունենան նրա իրական անուն-ազգանվան հետ, ինչպես՝ Ա. Ա. > Մանուկ Աբեղյան, Ա. Ա. > Քերովբե Չրաքյան և այլն:

²² Այս ձևերը մեզ համար կեղծանուն են՝ վերապահությամբ:

2. Կեղծանվան ստեղծման մյուս տարբերակն անվան և ազգանվան կրճատումից ստացված կեղծանունն է, ինչպես Գառզու > Գառնիկ Զուլումյան, Սարմեն > Արմենակ Սարգսյան: Այս տարբերակը կապ չունի վերևում ասված և բերված օրինակների հետ: Ինչո՞ւ. այն պարզ պատճառով, որ ընթերցողը կարող է չիմանալ տվյալ անձի իսկական անուն-ազգանունը, և հեղինակի անուն-ազգանվան ներկայացման տվյալ ձևը նրա համար միանշանակ ընկալելի է դառնում որպես կեղծանուն: Բայց բառարանում իբրև կեղծանուն են ներկայացվում նաև անուն-ազգանվան մի բաղադրիչը՝ կամ ամբողջական անուն, կամ վանկ տարբերակով, ինչպես՝ Գինո > Շաղգամյան Գինո, Գմբեթ > Գմբեթյան Արտաչես, Դան > Դանիելյան Սերոբ և այլն:

3. Տվյալ անհատը վերցնում է իրեն դուր եկած ինչ-որ մի բառ՝ ծաղկի, դաշտի անուն, տվյալ բառի նշանակությունը և այլն, ինչպես՝ Դարդունի > Տեր-Հարությունյան Գարեգին, Դև > Դարբինյան Մաթևոս, Լինչ > Կարինյան Արտաչես, Խան > Աֆթանդիլյան Միսաք, Սիլլա > Աբգար Պայազատ, Ծերենց > Հովսեփ Շիշմանյան, Ինտրա > Տիրան ձրաքյան, Սիպիլ > Զապել Ասատուրի Խանճյան, Մուրացան > Գրիգոր Տեր-Հովհաննիսյան, Հավասի > Արմենակ Մարկոսյան և այլն:

Բերենք մի քանի հայտնի անձանց կեղծանունների օրինակներ.

* Ալազան > Վահրամ Մարտիրոսի Գաբուզյան: Հայ սովետական գրող, հասարակական-քաղաքական գործիչ, որը սկզբնական շրջանում տպագրվել է Հորձանք և Վահրամ գրական անուններով, այնուհետև հիշելով Գևորգ Բաշինջաղյանի հոդվածը՝ «Ալազանի դաշտավայրում», հավանում է Ալազան անունն ու վերցնում իբրև գրական կեղծանուն:

* Նար-Դոս > Հովհաննիսյան Միքայել Ղազարի: «Նոր դար» թերթի քարտուղար Մելքոն Դանազյոզյանը դիմում է Միքայել Հովհաննիսյանին, որ նրա համար մի լավ կեղծանուն գտնեն: Բառարանները երկար նայելուց հետո կանգ են առնում Նարդոս ծաղկանվան վրա, և «Նունես» վրպակը լույս է տեսնում Նար-Դոս կեղծանուն ստորագրությամբ:

* Լեո > Առաքել Բաբախանյան: Մեծ պատմաբանը Ֆրիդրիխ Շպիլ-հազենի հայտնի վեպի՝ «Մեկը գինվոր չէ դաշտում» հերոս Լեոյի անունը դարձրել է իր կեղծանունը:

* Սայաթ-Նովա (Սեյաթ-Նեվա) > Հարություն (Արութին) Սայադյան: Կեղծանունը տարբեր կերպ է մեկնաբանվել. պարսկերենից թարգմանված՝ երգի, ձայնի որսորդ, սիրահար կամ պարզապես՝ երգի որսորդ (սայադ > որսորդ, նովա > երգ), մեկ այլ վարկածի համաձայն՝ Սայաթի թոռ, հավանաբար, պապի անունից:

* Բաֆֆի > Հակոբ Մելիք-Հակոբյան²³: Հայ նշանավոր վրպասան Հակոբ Մելիք-Հակոբյանի կեղծանունը, որն այժմ գործածական է իբրև անձնանուն: «Մշակ» թերթի երրորդ համարից արդեն Հակոբ Մելիք-Հակոբյանը ընթերցողին ներկայանում է Բաֆֆի կեղծանվամբ: Բաֆֆի բառի ծագման շուրջ բացված բանավեճին մասնակցել է նաև հայտնի իրանագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռ. Աբրահամյանը, որը գտնում

²³ Ի դեպ, բացի Բաֆֆի կեղծանունից, Հակոբ Մելիք-Հակոբյանը հանդես է եկել նաև Փավստոս կեղծանվամբ:

էր՝ սա արաբական Rafi անունից է, որ նշանակում է վսեմ, բարձր, բարձրագույն, և որ հենց այդ նշանակությամբ շոյել է վիպասանին իր գրավիչ իմաստությունը:

Գրական այս կեղծանունը վերցնելու ևս մի քանի տարբերակներ են չըջանառվում:

– ըստ Լեոյի՝ Բաֆֆի-ն վերցվել է արաբերենից, և որ 60-ական թվականներին Թիֆլիսի իտալական օպերայի դերասանուհիներից մեկի ազգանունն էր Բաֆֆի:

– Բաֆֆու կենսագիրներից մեկի կարծիքով՝ սա արաբերենից պարսկերենին անցած բառ է և մեկն է այն տիտղոսներից, որ տրվում էին պարսից բարձրաստիճան անձանց պետությունը՝ մատուցած ծառայությունների համար:

– Մեկ այլ բանասերի կարծիքով՝ սա ասորական բառ է, նշանակում է ըաբբի, այսինքն՝ վարդապետ: Վիպասանի եղբոր որդին՝ Սողոմոն Տեր-Հակոբյանն այս տարբերակն է համարում հավանական՝ նկատի ունենալով, որ Բաֆֆին կոչված էր հայ կյանքի մեջ նոր գաղափարների վարդապետը կամ քարոզիչը լինելու:

– Կա նաև մի ժողովրդական ավանդություն, ըստ որի՝ Բաֆֆին Պարսկաստանում ճանապարհորդելիս տեսնում է մի բարձր լեռ և բացականչում է. «Որքա՛ն բարձր սար է»: Ուղեկիցները նրան պատասխանում են՝ այո՛, բարձր սար է, և այդ պատճառով էլ կոչվում է Բաֆֆի: Անունը դուր է գալիս վիպասանին, և նա այն դարձնում է իրեն կեղծանուն²⁴:

4. Անհատը դիմում է գանազան հնարքների և ստանում ինքնատիպ տարբերակ, ինչպես՝ Նոր-Այր > Հարությունյան Նորայր, Սե-Դա > Խանոյան Սարգիս, Սեդ-Սուր > Սուրբայան Սեդրակ և այլն: Բերենք մեկ-երկու հայտնի մարդկանց այդ կարգի կեղծանվան օրինակներ.

* Համաստեղ > Կելենյան Համբարձում Հովհաննեսի: Վերցրել է իր և երկու եղբայրների անունների առաջին վանկերը՝ Համ-Աստ(վածատուր)-Եղ(իս):

* Զիվանի > Բենկոյենց Սերովբե Ստեփանեսի: Գարեգին Լևոնյանը գրում է, որ Սերովբեի հայրը դեռ կենդանի ժամանակ որդուն Զիվանի է կանչել, և այդպես մինչ օրս նրան անվանում են Զիվանի՝ կրճատելով վերջին կ-ն:

5. Մեր մատենագրության մեջ գործածված բազում անուններ կեղծանուններ ենք համարում, քանի որ չգիտենք տվյալ անձի իսկական անուն-ազգանունը կամ թեկուզ միայն անունը, ինչպես՝

Փրիկ > անվան նշանակությունն է՝ Կրակի վրա խանձված դեռահաս ցորեն:

Եվ մի կարևոր նկատառում ևս: Ի վերջո, կեղծանունը միայն տեսականորեն է մնում իբրև կեղծանուն, որովհետև հանրությունը ժամանակի ընթացքում (երբեմն շատ արագ) բացահայտում է կեղծանվամբ հանդես եկողի իրական անունը, և նրան արդեն ընդունում է և՛ անվամբ, և՛ կեղծանվամբ:

²⁴ Տե՛ս Ե. Պետրոսյան. Բաֆֆի, Երևան, 1959, էջ 117–118:

XVI դարից սկսած՝ XIX դարում շատ մեծ կիրառություն ունեցող կեղծանուններ մեր օրերում գրեթե բացակայում է՝ հիմնականում տեղի տալով անուն-մականուն կաղապարին:

Եզրակացություն

Այսպիսով անձնանվանագիտության տերմինային համակարգում որոշակի դերակատարում ունեն կեղծանուն, մականուն, ծածկանուն, գրական անուն տերմինները, և եթե կեղծանունն ու ծածկանունը նույնանում են և կարող են հանդես գալ մեկը մյուսի փոխարեն, ապա այդպես չէ կեղծանուն և մականուն տերմինների դեպքում. դրանք արդեն տարբեր դրսևորումներ ու բնութագրեր ունեն: Լայն առումով՝ սրանք բոլորը միգուցե և կարելի է գրական անուններ համարել, երբ խոսքը գնում է գրողի, բանաստեղծի մասին, բայց անպայման պետք է նկատի ունենալ, որ նեղ առումով գրական անունը գրողի կողմից որոշակի փոփոխման ենթարկված իր անուն-ազգանունն է:

Փառանձեմ Մեյթիխանյան – բ. գ. դ., ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի Հայոց լեզվի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Աստվածաշնչի հատկանվանաբանություն, ժամանակակից Հայոց լեզվի ուղղագրություն, Հայոց լեզվի դասավանդումը դպրոցներում: Հեղինակ է 2 մենագրության, 3 դպրոցական դասագրքի, 3 բառարանի և 50 հոդվածի: parandzem9524@gmail.com

REFERENCES

- Aghayan Ed. Ardi hayereni ardzern bacatrakan bararan, Yerevan, 2014 (In Armenian).
- Ajaryan Hr. Hayots andznanunneri bararan, h. 1–5, Yerevan, 1942–1962 (In Armenian).
- Avetisyan T. Hayots azganunneri bararan, Yerevan, 2004 (In Armenian).
- Babajanyan M. Anund inch e. astvadsashnchyan anunneri bararan, Yerevan, 2012 (In Armenian).
- Bararan Surb Grots handertz patkerok, ashkharhatsutsok ev takhtakok, K. Polis, 1881 (In Armenian).
- Barseghyan Kh. “Mshaki” dsadskanunneri bararan, Yerevan, 1962 (In Armenian).
- Gevorgyan R. Hayots dsadskanunneri, keghdsanunneri bararan, Yerevan, 2002 (In Armenian).
- Durgaryan K. Anvanagirk, Yerevan, 1981 (In Armenian).
- Hovakimyan B. Hayots dsadskanunneri bararan, Yerevan, 2005 (In Armenian).
- Jivanyan N. Ardzern bararan yatuk anuants, K. Polis, 1879 (In Armenian).
- Meytikhanyan P. Astvadsashnchi ev hayots surb anvants bararan (est V–XX dareri hay banasteghdzutyanyan), Yerevan, 2001 (In Armenian).
- Mkhitar Abba. Bargirk haykazeanyan lezui, h. 2, Venetik, 1769 (In Armenian).
- Shirvanzade Al. Erker hing hatorov, Yerevan, 1986–1988 (In Armenian).
- Shirvanzade Al. Artiste, Yerevan, 1959 (In Armenian).
- Shirvanzade Al. Vorn e mayre?, Yerevan, 1963 (In Armenian).

- Petrosyan H. Hayerenagitakan bararan, Yerevan, 1987 (In Armenian).
 Petrosyan E. Raffi, Yerevan, 1959 (In Armenian).
 Ruben abegha Zargaryan, Shahen abegha Ananyan. Avetaranneri gordsogh andzink, Sb. Edjmiadzin, 2010 (In Armenian).
 Tavushetsi B. Nahatak mtavorakanneri dsadskanunner. – “Edjmiadzin”, 1965, Zh, 1966, B (In Armenian).
 Nikonov V. Sostoyanie i zadachi onomasticheskikh issledovaniy Kavkaza. – “Voprosy yazykoznania” (M.), 1975, № 4 (In Russian).

ВОКРУГ ТЕРМИНОВ ПСЕВДОНИМ, ПРОЗВИЩЕ

ПАРАНДЗЕМ МЕЙТИХАНЯН

Резюме

Ключевые слова: ономастика, антропонимика, личное имя, псевдоним, прозвище, Гр. Ачарян, Б. Овакимян, Эд. Агаян, Г. Петросян, словарь, лексикография, имя-прозвище, имя-псевдоним, литературное имя.

Изучение системы личных имен (имя, фамилия, отчество, родовое имя, псевдоним, прозвище) является одним из важных и ключевых вопросов современной лингвистики.

Армянский читатель в основном не различает псевдоним и прозвище, и в разных языках один и тот же псевдоним выражается на армянском языке разными эквивалентными терминами. Кроме того, можно ли литературное имя писателя или художника считать псевдонимом? В описании этих терминов существуют противоречия даже в лингвистической литературе (Эд. Агаян, Г. Петросян).

Сравнение многочисленных примеров псевдонимов, прозвищ, литературных имен, включенных в словарь Б. Овакимяна, позволяет выявить причины возникновения псевдонимов и их отличие от прозвищ. Псевдонимы имеют индивидуальные истории возникновения и координируются в конкретных группах – имя-фамилия, псевдонимы, образованные от сокращения имени и фамилии, любое слово, которое понравилось человеку и т. д. Когда же писатель меняет свое имя, чтобы сделать его более литературным и благозвучным, то это не псевдоним, а литературное имя, как *Ваан Терьян* или *Амо Сагиян*.

Парандзем Мейтиханян – д. филол. н., доцент кафедры армянского языка филологического факультета ЕГУ. Научные интересы: библейская ономастика, орфография современного армянского языка, преподавание армянского языка в школах. Автор 2 монографий, 3 школьных учебников, 3 словарей и 50 статей. parandzem9524@gmail.com

ON THE TERMS OF PSEUDONYM, NICKNAME

PARANDZEM MEYTIKHANYAN

Summary

Key words: Onomastics, anthroponymy, proper name, nickname, pseudonym, Hr. Acharyan, B. Hovakimyan, Ed. Aghayan, G. Petrosyan, dictionary, lexicography, name-nickname, name-pseudonym, literary name.

The examination of the system of personal names (name, surname, patronymic, nickname, pseudonym) is one of the key issues in modern linguistics.

The Armenian reader basically does not distinguish between a nickname and a pseudonym, and in foreign languages, the equivalent of pseudonym is expressed in Armenian in different terms that are identical. And rather, are the pseudonym and the nickname equal? Is the literary name of a writer or an artist a pseudonym? This research is dedicated to these issues. There are contradictions in the description of these terms even in the linguistic literature (Ed. Aghayan, H. Petrosyan), which we have referred to in our work.

And since the most presentable in this field is B. Hovakimyan's dictionary, so we examine the terms pseudonym, nickname, literary name, using the examples included in that dictionary. The work discusses in detail the causes of pseudonyms, examines their differences from nicknames, basing on numerous examples. Pseudonyms have an individual history of appearance and are coordinated into specific groups – name and surname, pseudonyms, derived from the reduction of the name and surname, any word that the person liked, etc. When a writer changes his name to make it more literary and eloquent, then it is not a pseudonym but *literary names*, such as *Vahan Teryan* or *Hamo Sahyan*.

Parandzem Meytikhanyan – Doctor of Sciences in Philology, Associate Professor of the Chair of Armenian Language at the YSU Faculty of Philology. Scientific interests: Biblical definition, orthography of the modern Armenian language, teaching the Armenian language in schools. Author of 2 monographs, 3 textbooks, 3 dictionaries and 50 articles. parandzem9524@gmail.com

**-Ռ -ՈՎ ՎԵՐՁԱՑՈՂ, -Ն ՎԵՐՁԱԾԱՆՑՈՎ ԿԱԶՄՎԱԾ
ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ
(Ստուգաբանական վերլուծություններ)***

ՊԵՏՐՈՍ ԲԵԴԻՐՅԱՆ

Բանալի բառեր՝ ստուգաբանված, բնիկ հայկական բառ, փոխառյալ, ծագումով անհայտ, ածանցյալ բառեր, հոլովում, խոնարհում:

Նախաբան

-Ն մասնիկը ցարդ ստուգաբանված մի երկու օրինակում է հիշվում նի-
ձևով իբրև նախածանց (նայիմ < հայիմ, նեցուկ < յենում, նիւթ < հիւթ –
Արմ. բառ., հ. III, էջ 427): Բայց այն, իբրև վերջածանց, ուրույն դրսևո-
րումներով է հանդես գալիս ոչ միայն -Ռ-ով, այլև ուրիշ բաղաձայններով
վերջացող, հնդեվրոպական ծագումով թե դեռևս չստուգաբանված բառե-
րում (մատն, հարսն, սերմն, ստեղն, եղէգն ...): Այդ յուրահատկությունը
երևում է բառերի ինչպես հոլովաձևերում, այնպես էլ գրաբար → աչ-
խարհաբար պատմական փոփոխություններում, ածանցյալ բառերում:

-Ն վերջածանցի բառակազմական դերը

-ռ-ով վերջացող բառերի մեջ 64-ը -ն վերջածանցով են կազմված և
ստուգաբանական տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում¹:
Դրանցից 38-ը ստուգաբանված են և մեծ մասամբ բնիկ հայկական
(հնդեվրոպական) են, մյուսները (26-ը)՝ ծագումով դեռևս անհայտ²:

Վերոհիշյալ կազմությունն ունեցող բառերն ի՞նչ յուրահատկու-
թյուններ են դրսևորում.

ա) 46-ը գոյականներ են և անկախ իրենց հայտնի կամ անհայտ ծա-
գումից՝ ճնշող մեծամասնությամբ պատկանում են Ա ներքին, մասամբ՝
Ի-Ա ներքին հոլովման: Բերենք դրանցից ամենատարածված գործա-
ծություն ունեցողները.

* Ներկայացվել է 20. III. 2020 թ., գրախոսվել է 12. VI. 2020 թ., ընդունվել է տպագրության 17. VI. 2020 թ.:

¹ Տե՛ս Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիւր-
մէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան. Նոր բառգիրք հայկազեան
լեզուի, հ. Ա-Բ, Վենետիկ, 1836–1837, Հայր Մկրտիչ Աւգերեան եւ
Հայր Գրիգոր Ճէլալեան. Առձեռն բառարան հայկազեան լեզուի,
Վենետիկ, 1865:

² Տե՛ս Հ. Աճառեան. Հայերէն արմատական բառարան, հ. I–IV, Երևան,
1971–1979: Բոլոր ստուգաբանությունները՝ ըստ այս հատորների:

- ամառն (ամռան // ամրան³) < Հնիւ. som-
- ձմեռն (ձմերան) < Հնիւ. g¹hiyōm-
- դուռն (դրան) < Հնիւ. dhur-
- թիթեռն (թիթռան) // թիթեղն (թիթեղան) < Հնիւ. pter-
- ծիծառն (ծիծ[ա]ռան // ծիծեռն < Հնիւ. g¹ār-
- սիսեռն (սիսեռան) < Հնիւ. k¹oi k¹er-
- բեռն (բեռին, բեռանց) < Հնիւ. bherno-
- գառն (գառին, գառանց) < Հնիւ. vārēn-, vrrēn-
- թոռն (թոռին, թոռանց) < Հնիւ. tor-
- ձեռն (ձեռին, ձեռանց) < Հնիւ. g¹her-, g¹hers-
- մատուռն (մատրան) < հուն. μαρτύριον
- փուռն (փռան) < հուն. φοῦρνος
- գուռն (գռան) < ասոր. gūrā-
- սեռն «անվի առանցք» (սեռին, սեռանց) < ասոր. sarnā-
- փանդիռն (փանդռան) – փոյուզիական փոխառութիւն

Ծագումով անհայտ բառերից՝

բուռն (բռան), եղեռն (եղեռան, եղերան), լիսեռն (լի[ի]սռան), կուռն (կռան), ճպուռն (ճպռան), նուռն (նռան), ոլուռն // ոլեռն (ոլռան // ոլեռան), լեռն (լերին, լերանց), ծոռն (ծոռին, ծոռանց), մառն «մշուշ» (մառին, մառամբ) ...

բ) Ածականներ՝ սառն (նաև գոյական է եղել՝ սառին, սառանց) < Հնիւ. k¹ar-, խառն // խուռն (նաև գոյական՝ «բազմութիւն» – խռան), դառն (նաև գոյական՝ դառին, դառանց), յախուռն, սեռն «պարզ, հստակ»:

Այս երկու կետերում մեջբերված բառերի հետ կապված հույժ ուշագրավ մի հանգամանք կա. հնդեվրոպական նախալեզվի պայմանական սկզբնաձևերի հետ աղերս ունեցող հայերեն առհասարակ բաղաձայնահանգ + -ն-ով վերջացող 41 բառերից միայն 7-ը ցեղակից լեզուներում ու ունեն⁴: Դա նշանակում է, որ -ն-ն հայերենի առանձնահատուկ վերջածանցն է: Իսկ փոխատու հունարենում և ասորերենում -ն-եր կան: Նշանակում է՝ մատուռն, փուռն, գուռն, սեռն և նման ծագումով բառերում -ն-ի առկայութիւնը պետք է արդեն յուրահատուկ տառադարձութեան հետևանք համարել և ոչ թե անցանցան:

Հայերենի բառակազմութեան համար հատկանշական է, որ աշխարհաբարում -ն վերջածանցը կորցրած կամ այն -ը-ով փոխարինած բառերն իրենց անցյալներում -ն-ն վերականգնում են. դուռ – դռնակ, դռնապան, դռնփակ, դռնբաց, դռներ (արևմտ. դուռեր), թիթեռ – թիթեռնիկ, թիթեռնալող, թիթեռներ, թոռ – թոռնիկ, թոռնուհի, թոռներ, ծոռ – ծոռնուհի, ծոռներ (արևմտ. ծոռեր), նուռ – նռնենի, նռներ (բայց

³ Գրաբարի հնչյունափոխական օրենքով թեք ձևերում -ն-ից հեռանալու դեպքում ու-ը հերթագայութիւն է տեղի ունենում (հմտ. ձմեռն – ձմերան, դուռն – դրան, լեռն – լերին, լերանց): Արևմտահայերենն այս հերթագայութիւնը ավանդաբար պահում է:

⁴ Տե՛ս Հ. Ա. ճ ա ո յ ա ն. Հայոց լեզվի պատմութիւն, մաս I, Երևան, 1940, էջ 34–80:

նաև՝ նուռեր), լեռ – լեռնային, լեռնագագաթ, լեռնալանջ, լեռնցի, լեռներ (արևմտ. լեռեր), ձմեռ – ձմեռնամուտ, ձմեռները (բայց՝ ձմեռել)⁵, խակց. կուռ – կոնատակ, սառը (սառն) – սառնարյուն, սառնարան, սառնուկթյուն, խառը (խառն) – խառնարան, խառնշտկել, խառնամբոխ, խառնիճաղանջ, դառը (դառն) – դառնահամ, դառնուկթյուն, դառնանալ ... Այս տեսակետից յուրահատուկ է ձեռքը (ձեռն) – ձեռնտու, ձեռնհաս, ձեռներեց, ձեռնոց, ձեռնափայտ, ձեռնամարտ, ձեռնունայն, ձեռքեր // ձեռներ: Յուրահատուկ կազմութիւններ են ձեռագործ, ձեռագիր, փռապան, մառախուղ⁶:

Հատկանշական է, որ վերեւում հիշատակված այն բառերում, որոնցից բայեր են կազմվում, -ն-ն աշխարհաբարում որպես բայածանց (սոսկածանց) չի ընկալվում, ուստի անցյալ կատարյալի հիմքում (աորիստում) չի ընկնում. բեռնել – բեռնեցի, բեռնել (եմ), բեռնած, բեռնի՛ր (արևմտ. բեռնէ՛), բռնել – բռնեցի, բռնել (եմ), բռնած, բռնի՛ր (արևմտ. բռնէ՛), խառնել – խառնեցի, խառնել (եմ), խառնած, խառնի՛ր (արևմտ. խառնէ՛):

դ) Գրաբարում (և աշխարհաբարում) բայական կազմութիւններում -ն-ն արդեն որպես սոսկածանց է ընկալվում, ուստի և անցյալ կատարյալի հիմքում է ընկնում. առնում («առնել, վերցնել») – առի, (է)առ ... (աշխ. առա / առի ...) < հնիւ. ar-, առնեմ («անել / ընել») – արարի⁷, հրամ. արա՛ ... (աշխ. արեցի / ըրի, արա՛ / ըրէ՛...) < հնիւ. ar-, բառնամ («1. վերացնել 2. [գետնից] վերցնել») – բարձի, (ե)բարձ, հրամ. բարձ ... < հնիւ. bhrǵ¹h-, դառնամ – դարձայ, հրամ. դարձի՛ր ... < հնիւ. dhrg¹h-, յառնեմ («բարձրանալ») – յարեայ, հրամ. արի՛ ... < հնիւ. r-, er-, or-, ընթեռնում – ընթերցայ, հրամ. ընթերցի՛ր ... < հնիւ. ter-:

Վերոշարադրյալը պարզ վկայում է, որ՝

ա) հայերենը դեռ նախագրային շրջանից ունեցել է (և ունի) բառակազմական մի ուրույն՝ -ն ածանց,

բ) սրանով կազմված բառերը մեծ մասամբ գոյականներ են,

գ) աշխարհաբարն այդ բառերի ուղիղ ձևում եթե -ն-ն չի էլ պահել, ապա ածանցյալ կազմութիւններում այն թողել է (գրբ. մասն → աշխ. մաս → մասնատել, մասնավոր, բարեմասնութիւն, մասնակից, մասնաբաժին ...),

դ) բառակազմական այս ածանցը որոշակիորեն տարբերվում է -ն բայածանցից (սոսկածանցից) թեկուզ նրանով, որ այդ ածանցն ունեցող բայերի անցյալ կատարյալի հիմքում այն չի ընկնում (հմմտ.՝ բռնն → բռնել → բռնեցի և գրբ. առնում → առ-ի, աշխ. առնել → առ-ա ...),

⁵ Արևելահայերեն ամառային, ձմեռային բառերի դիմաց արևմտահայերենն ունի ավանդական օրենքով կազմված ամառնային, ձմեռնային:

⁶ Բառակազմական նույն կարգը գործում է նաև -ն վերջածանցով ուրիշ բառերի ածանցյալներում, ինչպես՝ մատ (մատն) – մատնեմատ, մատնոց, մատնահետք, մատնել..., սերմ (սերմն) – սերմնացան, սերմնագտիչ, սերմնատեսակ... (բայց՝ սերմեր), եզ (եզն) – եզնասայլ, եզներ (արևմտ. եզեր)...

⁷ Ռ-Բ հերթագայութիւն մասին տե՛ս թիվ 3 ծանոթագրութիւն մեջ:

ե) *-ն* սոսկածանց ունեցող բայերը գրաբարում շատ չեն. եղածներն էլ մեծ մասամբ ՈՒ խոնարհման են պատկանում (առնում → առ-ի, ցասնում → ցաս-եայ, հարթնում «խրտնել» → հարթ-եայ ...): Աշխարհաբարում են *-ն* սոսկածանցավոր բայերն ավելացել՝ շնորհիվ այն բանի, որ գրաբարի *-ան-ի* նախաչեչտ թույլ *-Ա-*վանկարարը, պատմական փոփոխություններից սղվել է (գտ-ան-եմ → գտ-ն-ել, իջ-ան-եմ → իջ-ն-ել, բուս-ան-իմ → բուս-ն-ել ...):

Եզրակացություն

Այսպես. փաստորեն ունենում ենք *-ն* բառակազմական ու *-ն* ձևաբանական հոմանուն մասնիկներ: Եվ դեռ կա Յ-րդ հոմանունը՝ մի քանի բառերի գրաբար հոլովման եզակի սեռական-տրականի, մեկ էլ տրականից կազմված բացառականի *-ն-ն*. այր-եզ ... սեռ... -տր. առն, տեառն, բացառ. յառնէ, ի տեառնէ:

Պետրոս Բեդիրյան – ք. գ. դ., պրոֆ.: Գիտական հետաքրքրությունները՝ ընդհանուր լեզվաբանական ու հայագիտական հարցեր, բառագիտություն, ստուգաբանություն, դարձվածաբանություն, գրաբար, արևմտահայերեն, բառարանագրություն: Հեղինակ է 33 գրքի և շուրջ 200 հոդվածի: petros.bediryani@gmail.com

REFERENCES

- Acharyan H. Hayeren armatakan bararan, h. I–IV, Yerevan, 1971–1979 (In Armenian).
 Acharyan H. Hayots lezvi patmutyun, mas I, Yerevan, 1940 (In Armenian).
 Hayr Gabriel Avetikean, Hayr Khachatur Siurmelean, Hayr Mkrtich Avgerean. Nor bargirk haykazean lezvi, h. A–B, Venetik, 1836–1837 (In Grabar).
 Hayr Mkrtich Avgerean ev Hayr Grigor Jelalean. Ardzern bararan haykaznean lezvi, Venetik, 1865 (In Grabar).

ОБ АРМЯНСКИХ СЛОВАХ, ОКАНЧИВАЮЩИХСЯ НА *-н*, С СУФФИКСОМ *-н* (Этимологические анализы)

ПЕТРОС БЕДИРЯН

Резюме

Ключевые слова: этимологизированное, исконно армянское слово, заимствованное, с неизвестной этимологией, производные слова, склонение, спряжение.

38 из 64 армянских слов, оканчивающихся на *Ռ* и с суффиксом *Ն*, этимологизированы и преимущественно являются существительными исконно армянского (индоевропейского) происхождения: *ամառն* [амарын] «лето», *ձմեռն* [ձյւմէրն] «зима», *բեռն* [բէրն] «груз», *գառն* [գարն] «ягненок», *թոռն* [տորն] «внук», *ծիծեռն* // *ծիծառն* [տսիտսէրն, տսիտսարն] «ласточка». В родительном падеже они, в большинстве своем, имеют *Ա* перед *Ն* (*ամառնԱն*, *ամրԱն*), *դուռն* [ժուրն] «дверь» – *դրԱն*, иногда *Ի-Ա* (ед. *գառնԻն*, мн. *գառԱնց*), *լեռն* [լյարեն] «гора» – ед. *լերԻն*, мн. *լերԱնց*.

Весьма знаменательно, что лишь в 7 из 41 исконно армянских слов индоевропейского происхождения, оканчивающихся на согласный + суффикс *Ն* (*ամառն* и пр.) встречается *Ն* в родственных языках. Это значит, что суффикс *Ն* – сугубо армянский.

В новоармянском (в ашхарабаре) слова вышеуказанной конструкции выступают без суффикса *Ն*, однако он (суффикс) восстанавливается в производных словах: *բեռն* → *բեռ* – *բեռՆառար* (бэрнатар) «грузовик», *բեռՆառարողություն* (бэрнатарогутюн) «грузоёмкость», *բեռՆել* (бэрнэл) «грузить», *բեռՆեր* (бэрнэр) «грузы», *դուռն* → *դուռ* – *դուՆփակ* [дырынтак] «за закрытой дверью», *դուՆապան* [дырнапан] «швейцар», *դուՆեր* [дырнэр] «двери».

Петрос Бедирян – д. филол. н., проф.. Научные интересы: общие вопросы языкознания и арменоведения, лексикология, этимология, фразеология, грабар, западноармянский язык, лексикография. Автор 33 книг и около 200 статей. petros.bediryan@gmail.com

ON WORDS ENDING IN *Ռ*, WITH THE SUFFIX *Ն* (Etymological analyses)

PETROS BEDIRYAN

Summary

Key words: Etymologized, original Armenian word, borrowing, with unknown etymology, derived words, inclination, conjugation.

38 out of 64 Armenian words ending in *Ռ*, with the suffix *Ն*, are mainly nouns of Indo-European origin: *ամառն* [amaren] “summer”, *ձմեռն* [dzemerēn] “winter”, *բեռն* [berēn] “burden, load”, *գառն* [garen] “lamb”, *թոռն* [toren] “grandchild”, *ծիծեռն* // *ծիծառն* [tsitsēren, tsitsaren] “swallow”... Before *Ն*, they have *Ա* or, rarely, *Ի-Ա* in genitive case: *դուռն* [duren] “door” - *դրԱն* [deran], *ձմեռն* – *ձմեռԱն*, *ձմրԱն*, *գառն* (sing. *գառնԻն*, pl. *գառԱնց*), *լեռն* [learen] “mountain” – sing. *լերԻն*, pl. *լերԱնց*...

It is quite significant that in 7 cases only out of 41 Armenian words of Indo-European origin ending in a consonant + the suffix *Ն* (*ամառն* etc.), *Ն* exists in related languages. It means that the suffix *Ն* is a purely Armenian one.

In Modern Armenian (Ashkharhabar), the words mentioned above appear without the suffix Ն, however this suffix recovers in derivative words: բեռն → բեռ – բեռնատար [bernatar] “truck”, բեռնատարողութիւն [bernataroghutyun] “capacitance”, բեռնել [bernel] “load”, բեռներ [berner] “burdens”, դուռն → դուռ – դռնփակ [derenpak] “behind closed doors”, դռնապան [dernapan] “doorkeeper”, դռներ [derner] “doors”...

Petros Bediryan – Doctor of Sciences in Philology, Professor. Scientific interests: issues of general linguistics and Armenology, lexicology, etymology, phraseology, Classical Armenian (Grabar), Western Armenian, lexicography. Author of 33 monographs and over 200 articles. petros.bediryan@gmail.com

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉԸ. ԼԵՎՈՆ ԱԹԱԲԵԿՅԱՆ
(Ծննդյան 145-ամյակի առթիվ)

Հայտնի իրողություն է, թե մեր ժողովրդի կյանքում սերնդեսերունդ՝ մինչև մեր օրերը, նշանակալի ինչ խոշոր դեր են խաղացել Ղարաբաղից սերված անձինք: Այդ մասին խոսուն տողեր ունեն նաև օտարները: Այստեղ թեկուզև վերհիշենք Հայ ժողովրդի ազնիվ ու անկաշառ բարեկամ, ուսև անվանի բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ և հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկու չափազանց հետաքրքիր դիտարկումները: Ղարաբաղի և, ընդհանրապես, Հայ ժողովրդի պատմության ճակատագրական տարիներին ու, մասնավորապես, 1919 թ. մարտի 23-ին նրա գրած «Ղարաբաղ» վերնագրով ուշագրավ հոդվածում կարդում ենք. «Հայաստանի ազգային հիշողությունը պետք է հիշի դարաբաղցիների բավական շատ հռչակավոր անուններ: Չկա մի մարդ, որտեղ նրանք դրսևորած չլինեն իրենց նախաձեռնողականությունն ու տաղանդը: Քաղաքականություն, գրականություն, հասարակական գործունեություն, առևտուր. այս ամենը նրանց համար աշխատանքի ասպարեզ են եղել»¹: Այնուհետև Ս. Գորոդեցկին թվարկում է անվանի որոշ դարաբաղցիների, «որոնց անունները բոլորին հայտնի են»: Հասարակական գործիչներից՝ Արամ փաշա (Մանուկյան), Սաքո Սահակյան, գինվորականներից՝ գեներալ Լազարև, գրական գործիչներից՝ Լեո, Մոսկվայում «Армянский вестник»-ի հրատարակիչ Ամիրով և շատ ուրիշներ:

Մեր կողմից էլ ավելացնենք. XX դարասկզբի Հայ հասարակական-քաղաքական, գրական-մշակութային անվանի գործիչների թվում իր ուրույն տեղն ունի Հայ սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության՝ էսէռների ղեկավար, ճանաչված բժիշկ, բանաստեղծ, թարգմանիչ Լևոն Աթաբեկյանը (1875–1918): Նրա բանավոր ու գրավոր խոսքի ուժը բարձր են գնահատել Ալ. Մյասնիկյանը, Ն. Տերտերյանը, Շիրվանզադեն, Ավ. Իսահակյանը, Աշ. Գրաչին: Այս շարքում առանձնանում է Լ. Աթաբեկյանի հայրենակից, Հայ իրականության երևելի դեմքերից Դավիթ Անանունի՝ «Լևոն Աթաբեկյան (կյանքը և հասարակական-գրական գործունեությունը)» վերնագրով ուշագրավ, ծավալուն հոդվածաշարը [«Հառաջաբան», «Կյանքի հանգամանքները», «Ո՞վ է հայը (թյուրքահայ դատ)», «Ազգություն և դասակարգ», «Ո՞վ է հայը (հասարակական հարաբերությունները Անդրկովկասում)», «Սոցիալիզմ», «Ապստամբ միտքը», «Անձնական հիշողություններ», «Լ. Աթաբեկյանի տեղը Հայ մտավորականության երամակում» ենթախորագրերով], որը տպագրել է Երևանում հրատարակվող «Հայաստանի կոոպերացիա» երկաթաթաթերթի 1920 թ. մի շարք համարներում: Լ. Աթաբեկյանը զոհվել է 1918 թ. Բաքվի մարտ-

¹ Ա. Զ ա ք ա Ր յ ա ն. Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Երևան, 2010, էջ 110–111, ն ու յ ն ի՝ Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье. Ереван, 2015, с. 127.

յան իրադարձությունների վերջին օրը՝ մարտի 20-ին / ապրիլի 2-ին, երբ հաշտարար պատվիրակի առաքելություն կատարելիս, սպիտակ դրոշը ձեռքին՝ գնացել էր «Մուսաֆաթի» դիրքերը և ընկել թշնամու տմարզի գնդակից:

Հավերժ փառք մեր հին ու նոր նահատակներին ...

Ստորև ներկայացնում ենք Դ. Անանունի հոգևածաշարից Լ. Աթաբեկյանի կենսագրականը, Շիրվանզադեի «Լևոն Աթաբեկյան» վերնագրով հիշատակի խոսքը, Ավ. Իսահակյանի «Նամակ Հայպետհրատի դիրեկտորին», Աշ. Գրաշու «Լևոն Աթաբեկյանի քնարը» վերնագրերով նյութերը, նաև Լ. Աթաբեկյանի “Nostalgia” բանաստեղծությունը:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

– 1 –

ԼԵՒՈՆ ԱԹԱԲԵԿՅԱՆ

(Կեանքը և հասարակական-գրական գործունեությունը)

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Իմ խղճի վրայ ծանրացած մի խոստում կայ – գրել Լևոն Աթաբեկյանի կեանքի և հասարակական-գրական գործունեության մասին: Այդ խոստումը ես տուել եմ այն տխուր օրը, 1918 թ. մարտի 25-ին, երբ Բազում բազմահազար ժողովրդի ուղեկցությամբ Լ. Աթաբեկյանի անշունչ դին մենք պահ էինք տալիս հողին: Այդ օրը «Բանուր» թերթի էջերում (№ 9, 1918 թ.) ես հետևեալ տողերն էի նւիրել նահատակին. «Մարտի 20-ին Բազուի քաղաքացիական կուռում իբրև հաշտարար պատգամաւորութեան անդամ նահատակել է Լևոն Աթաբեկյանը: Նա թուրք և ռուս պատգամաւորների հետ ճիգեր է եղել գործադրելիս՝ վերջ տալու աւերիչ ռազմական գործողութիւններին: Պարգևը եղել է հերոսական մահ պարտականութեան դիրքում: Ֆիզիքապէս նա մահացել է իբրև գործիչ, բայց իր կատարածով, իր վեհ խոհերով անմահացել: Ահա մահ, որ բիւր կեանքեր արժէ: Մահ՝ յանուն տառապող մարդկութեան, մահ՝ յանուն սրտագին դրացիութեան: Լ. Աթաբեկյանի մահը՝ իբրև հայ, թուրք և ռուս ազգերի եղբայրութեան ճամբին կատարւած ողջակէզ՝ արժանի է, որ պատմուի սերունդից սերունդ և անկեղծ դաշինքի ամուր շաղախ դառնայ:

Լ. Աթաբեկյանը պայծառ դէմք էր հայ հասարակական գործիչների ու մտաւորականների ոչ-ստուար շարքի մէջ: Նա նոյնպէս փայլուն անուն էր Անդրկովկասի միջազգային սօցիալիստական բանակում, մի անուն, որի հետ ամենքը հաշի էին նստում և որը մէջտեղ էր գալիս, երբ անհրաժեշտ էր դատուում կարգաւորել մեր ծայրերկրի այս կամ այն ծանրակշիռ խնդիրը: Նա տաղանդաւոր հռետոր և հակաճառող էր. խոհուն և նուրբ հրապարակախօս, բանաստեղծի աւիւնով օծուած գրող, մի դէմք, որի խառնուածքը վարդապետական էր լաւագոյն իմաստով և որի գործն ու խօսքը նպատակ ունէին սպասաւորելու հայ աշխատաւոր բազմութեան բարօրութեանը ու հոգեւոր զարգացմանը: Լ. Աթաբեկյանը այն դէմքերից էր, որոնք անդադրում հոգեւոր գանձ են փնտրում, չեն ընդարմացնում իրանց

սիրտն և ուղեղը մի բարեմասնութեան բեռնան տակ, այլ խոյանում են դէպի իմացութեան նոր եզրեր, դէպի մտքի նոր նուաճումներ: Նա սօցիալիստ էր լայն ըմբռնումներով ու մտքի թափով: Նա պատկանում էր սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան, բայց հաւասարապէս ընտանի մարդ էր նաև հայ սօցիալ-դեմոկրատներին: Նա այն համոզմունքին էր, որ հայ սօցիալիստական սակաւաթիւ բանակին վերապահուած է մեծ դեր կատարելու մեր միջավայրում և գտնում էր, որ հայ սօցիալ-դեմոկրատն ու սօցիալիստ-յեղափոխականը պարտաւոր են բազմաթիւ հարցերում միասին լինել և միասին գործել:

Ես այժմ գուրկ եմ հնարաւորութիւնից այստեղ պատմելու Լ. Աթաբեկեանի կեանքը և բնոյթագծելու նրան իբրև հասարակական գործչի և գրողի: Այդ աշխատանքը անհրաժեշտ է անել և ես ձեռնամուխ կլինեմ դրան, եթէ բարդացած հասարակական պայմանները երաշխաւորեն որևէ անդորրութիւն և ապահովութիւն մեր ապաբախտ ժողովրդի համար: Լ. Աթաբեկեանը պատկանում է ամբողջ հայ ժողովրդին, բայց պատմել նրա «կեանքի գործերը» – այդ ընկնում է ամենից առաջ ինձ վրայ: Նա մի ասացուածք յաճախ էր կրկնում, թէ արեւակցութիւնը մեծ ոյժ է: Կարծում եմ, որ նոյնքան մեծ ոյժ է հայրենակցական, բարեկամական և գաղափարական կապը, որ պիտի հրահրէ անմոռաց պահէլ նահատակի անունը:

Մնաս բարով, Լևոն»:

Այս տողերը գրել են Բագրի Հայոց Ազգային Խորհրդի դիւանատանը շուարման և շփոթութեան միջնորդութեամբ: Հայ ժողովրդի լայն խաւերը՝ հակառակ իրանց կամքի շարտուել էին պայքարի մէջ, որի դրօշակը առաջինն էր պարզել աղբբէջանական գիշակեր «Մուսաֆաթ» կուսակցութիւնը: Ազգային Խորհուրդը իբրև պատասխանատու մարմին միջոցներ էր որոնում խուսափելու ազգային ընդհարումներից ու պառակտումներից: Այս տողերը լոյս են տեսել մի օր, երբ թնդանօթներն էին գոռում Բագրի շրջակայքում և ուռմբերն էին սաստում Դաղստանի որդիներին և նրանց պարագլուխ իմամ Գոցինսկուն, հռչակելով նրա յոխորտանքը «պատժելու հայերին» տկարամիտ մարդու սպառնալիք, որը չի ըմբռնում մարտեան դէպքերի իմաստը և ազգային բաղխումներ է փնտրում մի տեղ, ուր բորբոքւել էր պարզ քաղաքացիական կոբւ:

Երկու տարի է անցել այս տողերը գրելուց յետոյ: Բարդացած հասարակական պայմանները վերջնականապէս դեռ չեն երաշխաւորել մեր ապաբախտ ժողովրդին անդորրութիւն և ապահովութիւն: Սակայն հայութիւնը հրաժեշտ է տալիս իր փոշիացած վիճակին և դա գրաւական է, որ պայծառ կամար պիտի կապուի մեր գլխին: Պէտք է հաշուել կորուստները, գնահատել նրանց և իբրև խորին յարգանք նրանց շիրիմներին ու յիշատակին՝ ձեռնամուխ լինել շինարար աշխատանքի: Խառն ժամանակների մեծ կորուստներից է Լ. Աթաբեկեանը և ես իմ խոստման համաձայն՝ ձեռք եմ գարկում պատմելու նրա «կեանքի գործը»: Շատ նիւթեր են պակասում այդ նպատակի համար, բայց դժուար է նախատեսել այն օրը, երբ մեր կեանքի այս ընթացքի մէջ կարելի կլինի ասել, թէ ստեղծուել են պայմաններ լիուլի սպառելու որևէ խնդիր: Դրա համար էլ ես չեմ յետաձգում իմ մտադրութիւնը: Լ. Աթաբեկեանի ստուերը դժգոհ չի մնալ իր բարեկամից, եթէ պակաս լրութեամբ լինի պարզուած նրա գործի այս կամ այն մանրամասնութիւնը:

Երևան, 1920 թ. Յունւարի 27.

Դ. Ա.

I

ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Լևոն Աթաբեկեանը ծնուել է Շուշում 1875 թ.² սեպտեմբերի 3-ին: Ծագումով նա ազնուական էր, Աթաբեկեան մելիքական տոհմից, որը բնակութիւն ունի Ջրաբերդ գաւառի Կուսապատ գիւղում: Ղարաբաղի հայ ազնուականութիւնը առհասարակ չի կարող հպարտանալ իր կուլտուրականութեամբ, բայց Աթաբեկեանի ծնողները պատկանում էին երջանիկ բացառութիւնների շարքին: Նրա հայրը, Նիկողայոս Աթաբեկեան, պետական պաշտօնեայ էր (դատաստանական քննիչ, յետոյ նոտար), գաւառական լաւ մտաւորական, օժտւած հասարակական անմար բնագոյներով: Մայրը, տիկին Գայիանէ, այն կանանցից է, որոնք հասարակական ջերմութիւն են տարածում իրանց շուրջը, կենտրոնական անձն դառնալով բոլոր ինքնօգնութեան ու բարեգործական ձեռնարկների մէջ: Այսպիսով Լ. Աթաբեկեանը ծնուել ու մեծացել է մի ընտանիքում, ուր օրնիբուն անպակաս են եղել հասարակական գործը, խօսքն ու գրոյցը: Սա մի նպաստաւոր միջավայր էր, որ մանկութիւնից նրան տոգորում էր հասարակական բնագոյներով:

Իր նախնական կրթութիւնը Լ. Աթաբեկեանը ստացել է Շուշուայ ընտանական դպրոցում, որը աւարտել է 1893 թ.: Նոյն թուականին իր մօր հետ նա ճանապարհւում է արտասահման և մտնում Լայպցիգի համալսարանը, ընտրելով հասարակական գիտութիւնների բաժանմունքը: Լայպցիգից նա անցնում է Միւնխէնի, ապա Տիւբինգէնի համալսարանը, իսկ 1897 թ.՝ փոխելով իր ընտրած մասնագիտութիւնը՝ տեղափոխւում է Բերլին և մտնում այդ քաղաքի համալսարանի բժշկական բաժանմունքը: Այստեղ էլ նա վերջնականապէս չի հաստատւում: Որոշ ժամանակից յետոյ տեղափոխւում է Ցիւրիխի համալսարանի համապատասխան բաժանմունքը: 1901 թ. ձմեռը նա ունենդրում է Հայդէլբերգի համալսարանում, ապա վերադառնալով Ցիւրիխ՝ իր բժշկական ուսումը աւարտում 1903 թուականին: Նոյն թուականին նա վերադառնում է Ռուսաստան և պետական քննութիւն բռնում Կազանի համալսարանում (օգոստոս): Այսպիսով Լ. Աթաբեկեանի արտասահմանեան կրթութիւնը շարունակւում է 10 տարի, մի ժամանակամիջոց, որը հնարաւորութիւն է տալիս նրան ոչ միայն հիմնովին հմտանալու իր ընտրած մասնագիտութեանը, այլև լսելով հռչակաւոր պրօֆեսորներ Ռօշերին, Բիւխէրին, Բրենթանօյն և միուսներին ձեռք բերելու ընդարձակ տեղեկութիւններ քաղաքատնտեսութիւնից և առհասարակ հումանիտար գիտութիւններից:

² Լ. Աթաբեկեանի ծննդյան այս թվականն է նշված «Հայկական սովետական հանրագիտարան»-ում (հ. 1, Երևան, 1974, էջ 125), իսկ «Հայկական համառոտ հանրագիտարան»-ում (հ. 1, Երևան, 1990, էջ 68), «Հայկական հարց. հանրագիտարան»-ում (Երևան, 1996, էջ 19), «Ով ով է. 234 հայեր (կենսագրական հանրագիտարան)»-ում (հ. 1, Երևան, 2005, էջ 38), «Հանրագիտական բառարան»-ում (հ. 1, Երևան, 2016, էջ 38) նշված է 1857 թվականը: Բոլոր հանրագիտարաններում ծննդյան վայր է նշված Կուսապատ գյուղը (Ելիզավետպոլի նահանգի Ջիվանչիք գավառ, այժմ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան):

1903 թ. աշնանից Լ. Աթաբեկեանը իբրև բժիշկ հաստատուում է Բագուում, զբաղմունք ունենալով քաղաքային և մասնաւոր հիւանդանոցներում: 1904 թ. ապրիլին նա անցնում է Լայպցիգ և մի քանի ամիս աշխատում պրոֆ. Զօլտմանի կլինիկայում: Լայպցիգից վերադառնում է դարձեալ Բագու և 1904 թ. աշնանից անձնատուր լինում բժշկութեան: 1905 թ. յունիսից նա հաստատուում է Շուշում, ուր զբաղւում է թէ բժշկութեամբ և թէ հասարակական-յեղափոխական գործունէութեամբ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերում: Նրա Շուշայ կեանքի շրջանը շարունակւում է մօտ մէկ տարի: Այդ ժամանակամիջոցում Լ. Աթաբեկեանը նստակեաց մարդ է: Նա ստէպ-ստէպ բացակայում է Շուշից, այցելում է գաւառները, նահանգական Գանձակ քաղաքը, ապա Թիֆլիսը, Բագուն և Երևանը: Այդ ժամանակ նա մտահոգւած էր հայ-թուրքական ընդհարումներից բղխող ինքնապաշտպանութեան հարցերով, պայքար էր մղում մեր կեանքում ծնունդ առած մարքսիզմի դէմ և աշխատում էր ճոխացնել Հ. Յ. Դաշնակցութեան հոգևոր բովանդակութիւնը: Իբրև դաշնակցական գործիչ 1906 թ. ամառը նա Դիզակի շրջանից ընտրւում է պատգամաւոր Էջմիածնի Կենտրոնական Ժողովի, որը կաթողիկոսի կոնդակով գումարեց այդ թւականի օգոստոսի 17-ին և նպատակ ունէր կարգաւորել եկեղեցական-կուլտուրական խնդիրները: Կենտրոնական Ժողովը կառավարութեան կարգադրութեամբ փակեց օգոստոսի 30-ին և Լ. Աթաբեկեանը ի թիւս միւս պատգամաւորների ստորագրութիւն տուեց թողնել Էջմիածինը և այլևս չփորձել նոր հաւաքումներ կատարելու յարուցած խնդիրների շուրջը: Ստորագրութիւն տւողները միաժամանակ բողոքում էին կառավարութեան արարքի դէմ, համարելով նրա ձեռնարկած միջոցը սոսնահարումն խօսքի ու գումարումների ազատութեան, ինչպէս և ազգի իրաւունքների, որը միայն կոչւած է անկաշկանդ վարելու իր ազգային-կուլտուրական գործերը: 1906 թ. աշնանից Լ. Աթաբեկեանը վերջնականապէս հաստատուում է Բագուում: Նա այստեղ թէ ընդարձակ ընդունելութեան տէր բժիշկ է և թէ մէկը այն սակաւաթիւ հայ մտաւորականներից, որը իր մտաւոր պաշարին հաղորդակից է անում բանւոր դասակարգին:

Իր գիտակցական կեանքի սկզբում Լ. Աթաբեկեանը քննադատական վերաբերմունք ունէր դէպի Հ. Յ. Դաշնակցութեան գործելակերպը, բայց այդ հանգամանքը արգելք չհանդիսացաւ, որ 1904–1907 թուականներին նա դառնայ յիշեալ կուսակցութեան եռանդուն և խիստ ազդեցիկ անդամը: Աշխատելով ազդել հայ ժողովրդական մասսայի վրայ, դաստիարակել նրան դաշնակցական գաղափարներով Աթաբեկեանը ինքը ազդեց մասսայի պահանջներից և սկսեց տատանւել իր դաւանանքի մէջ: 1905 թ. համառուսական յեղափոխութիւնը, հայ-թուրքական տնաւեր ընդհարումները, հայ մարքսիստների կրքոտ քննադատութիւնը և այլն արագացրին նրա հոգեկան բեկումը: Նա մի շարք ուրիշ երիտասարդ գործիչների հետ միասին ընդդիմադիր գիծ բռնեց Հ. Յ. Դաշնակցութեան ծոցում: Այդ երևոյթը յայտնի է «Երիտասարդ դաշնակցականների շարժում» անունով: Երիտասարդները համոզւած սօցիալիստներ էին, կանգնած դասակարգային պայքարի հողի վրայ: Նրանք սկզբում կարծում էին, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը կձուռի դէպի իրանց դաւանած սկզբունքները, բայց նկատելով, որ դա դիւրին կատարւելու գործ է, թողին կուսակցութեան շարքերը, ամփոփւե-

ցին իբրև սօցիալիստ-յեղափոխական կազմակերպություն և կապ Հաստատեցին Համառուսական նոյնանուն կուսակցության հետ: Այդ անջատումը տեղի ունեցավ 1907 թ. օգոստոսին, որ ժամանակից սկսած Լ. Աթաբեկեանը ճանաչված սօցիալիստ յեղափոխական էր:

Քննադատական շարժում սկսելով Հ. Յ. Դաշնակցության դեմ՝ բնական է, որ Լ. Աթաբեկեանը դառնար յարձակումների ենթակայ և այլևս չգտնէր անվերապահ բարեկամական վերաբերմունք դաշնակցականորէն դաստիարակված մասսայի մէջ: Այն բանտրությունը, որ առաջ պատրաստ էր անսխալական համարել նրա իւրաքանչիւր խօսքը, այժմ երես էր դարձնում նրանից և նոյնիսկ աշխատում էր մի երկու նաւթարդիւնաբերական ձեռնարկություններում գրկել նրան բժշկի պաշտօնից:

Լ. Աթաբեկեանը տաղանդաւոր հոգեւոր էր: Նրա խօսքը ճուշտ էլէր, այլ հատուկ, պարզ և սրամիտ: Իբրև հակաճառող՝ նա կորովամիտ էր, հեգնանքի խոշոր ձիրքով օժտւած: Զարմանալի չէ, որ նա ամենուրեք բազմաթիւ ունկնդիրներ էր գտնում: Բանաւոր խօսքը ուժեղ գէնք էր նրա ձեռքին: Գրչին նա յաճախ էր դիմում: Թէ բժշկական զբաղմունքն էր խանգարում դրան և թէ նստակեցութեան պակաս սէրը: Մինչև 1907 թուականը գրիչը առանձին դեր էլէր կատարում նրա հասարակական գործունէութեան մէջ: Մի երկու յօդւած և ոտանաւորներ ունէր տպագրած զանազան պարբերականներում և միայն այդքանը: Իր հասարակական գործչի հոչակը նա ստացել էր յեղափոխական և լուսաւորական աշխատանքով: 1908 թ. նա մասնակցեց սօց-յեղափոխականների համառուսական համագումարին Ֆինլեանդիայում: 1907 թուականից սկսած նրա բանաւոր խօսքին միացաւ գրաւորը: Այդ թուականին նա գրեց և հրատարակեց երկու գրքոյկներ. «Ինչու ենք անջատուում Դաշնակցությունից» և «Ազգություն և դասակարգ»: Այդ աշխատությունները լոյս տեսան Բիխարդ կեղծանունով: 1908–1909 թուականներին սօցիալիստ-յեղափոխականների հայ կազմակերպությունը հրատարակեց մի շարք շաբաթաթերթեր («Անիւ», «Շեփոր», «Զնդան» և «Առաւօտ»), որոնց ղեկավարն էր Լ. Աթաբեկեանը: Նա գետեղեց այդ պարբերականներում Բիխարդ, Սմբատ Սմբատեան կեղծանուններով և իր իսկ ստորագրութեամբ բազմաթիւ յօդւածներ: 1908 թ. լոյս տեսաւ նոյն կազմակերպութեան հրատարակութեամբ «Վերագնահատումներ» ժողովածուն, որի մէջ Լ. Աթաբեկեանը գետեղել է «Սօցիալիստական պրօբլեմներ» վերտառութեամբ մի խոշոր ուսումնասիրություն: Այս շրջանի բեղուն գրական գործունէությունը երաշխիք էր, որ Աթաբեկեանը ջերմ կերպով փարել է գրչին և այս ասպարիզում պիտի թողնի խոշոր հետքեր: Սակայն կառավարական հալածանքը եկաւ վախճան դնելու նրա գործունէութեան: 1909 թ. յունիսի սկզբին Լ. Աթաբեկեանը ձերբակալեց, մեղադրելով Դաշնակցություն կուսակցություն պատկանելիութեան մէջ:

«Հայաստանի կոոպերացիա» (Երևան), № 7, Բ տարի, ապրիլ 15, 1920, էջ 222–227:

II

Լ. Աթաբեկեանը բանտ նետուեց այն հարիւրաւոր մտաւորականների ու հասարակ հայ մարդկանց հետ, որոնց գործունէութիւնը յանցաւոր էր նկատուել ոռւս կառավարութեան աչքում: Հայ մտաւորականութեան դէմ մղած այդ հալածանքը, որ յայտնի է «Դաշնակցութեան գործ» անունով, վարում էր խանգարած հոգեւորով մի դատաստանական քննիչ³, որը օրէնքի պահանջին խառնել էր իր քմահաճոյքը և մղձաւանջի պէս ծանրացել ողջ ազգաբնակչութեան կրծքին: Շչեղրինի գրչին արժանի այդ դատաւորը չկամեցաւ ոչ մի բանով մեղմացնել Լ. Աթաբեկեանի բանտի պայմանները, մերժեց ամեն մի երաշխաւորութիւն ու դիւրութիւն: Դաշնակցութեան գործի բուն դատավարութիւնը սկսեց Սենատի պետական յանցանքների քննութեան յատուկ ատեանում, 1912 թւի յունւարի 17-ին և վերջացաւ նոյն թւականի մարտին: Լ. Աթաբեկեան > Բագւի, Գանձակի, Ռոստովի, Նովոչերկասկի և Պետրոգրադի բանտերում մնաց երկու տարի 10 ամիս: Ի՞նչ մեղադրանք էր բարդւում նրա վրայ:

Որ 1905–1907 թւականների ընթացքում նա միւսների հետ եղել է պարագլուխ Շուշայ Դաշնակցական կազմակերպութեան: Այդ կազմակերպութիւնը կատարել է հետեւեալ հակապետական գործերն ու ահաբեկումները. տեղական բնակիչներից ժողովել է տուրքեր, կազմակերպել է գինւորական խմբեր կուելու ոռւս կառավարութեան դէմ, ձեռք է բերել զէնք և զինամթերք, կատարել է դատաստանական քննութիւններ և վճիռներ է արձակել քրէական ու քաղաքացիական վէճերի նկատմամբ, որ ծագել են տեղական բնակիչների միջև, հրատարակել է պարտադիր որոշումներ և 1904–1906 թւականների ընթացքում մահւան պատժի է ենթարկել մի հարկային տեսչի, մի պրիստաւի օգնականի, մի պրիստաւի, մի գաւառապետի օգնականի, մի ժանդարմի, մի ոստիկանական գործակալի, մի կալւածատիրոջ և նրա կնոջը (Հախումեաններ), մի հայ կնոջ, որը ամուսնացել էր ոռւսի հետ և ընդունել ոռւսադաւանութիւն և այլն:

Այս մեղադրանքին Լ. Աթաբեկեանը տւել է բացասական պատասխան: Նա իրան մեղաւոր չի ճանաչել և մատնանչել է բազմաթիւ վկաներ, որոնք պիտի վկայէին նրա ոչ-դաշնակցական լինելը: Այդ վկաներին աւելացել էին կառավարական պաշտօնեաներն ու գործակալները: 24 հոգի իրանց վկայութիւնն են տւել նրա մասին: Այդ վկաների մեծամասնութիւնը հայ էր, բայց նրանց մէջ կային նաև վրացի, ոռւս և լեհ: Հետաքրքրական է, որ հայերից աննպաստ վկայութիւն են տւել Դաշնակցութեան գործի կենտրոնական հերոսը (Միհրան), մի լուսանկարիչ, որին Աթաբեկեանը որակում է իբրև դրամաշորթի, մի վարդապետ, որը նրա կարծիքով հոգեկան հիւանդ է, ապա աննպաստ բովանդակութիւն ունի Շուշայ երկու քաղաքացիների կողմից գրւած անստորագիր նամակը, որի մէջ վերը յիշւած մեղադրանքներից զատ յիշւում էր նաև այն, որ Լ. Աթաբեկեանը բռնութեամբ Շուշայ

³ Խոսքը Նովոչերկասկի նահանգային դատարանի հատուկ կարևորության գործերի քննիչ Նիկոլայ Լիժնի մասին է, ով հայտնի էր իր անհավասարակշիռ պահվածքով և քաղաքական շինծու գործեր սարքելու վարպետութամբ:

Հարուստների մէկից ստացել է 10,000 ռուբլի և որ նրա հակակառավարչական գործունէութիւնը յայտնի էր դեռևս 1905 թ., երբ գեներալ Տակաշչիլին կամեցաւ նրան ձերբակալել, բայց սպառնալիքի տակ հրաժարեց այդ մտքից: Աննպաստ վկայութիւն տւողների շարքումն են գտնուում 3 ժանդարմ, մի ոստիկանական ծառայող, մի բանդապետ, էջմիածնի Սինոզի դատախազը և Գանձակի նահանգապետը, բոլորն էլ ուսաներ կամ ուսացածներ:

էջմիածնի Սինոզի դատախազ Լէօնիդ Ֆրէնկէլը վկայում է, որ էջմիածնի Կենտրոնական ժողովում Լ. Աթաբէկեանը առաջինն արտասանեց խիստ ոճով ճառ, ուղղւած հոգևորականութեան և կառավարութեան դէմ, նա էր, որ պահանջում էր բաժանել եկեղեցին պետութիւնից, խլել եկեղեցական կալւածքները և կապ էր գտնում ուսական ու կովկասեան յեղափոխութեան մէջ:

Գանձակի նահանգապետ Կովալեովը վկայում է, որ Լ. Աթաբէկեանը կուսակցութեան աչքի ընկնող անդամներից մէկն էր, կոմիտէի կողմից կապ էր պահպանում արտասահմանեան գործիչների հետ և կուսակցական գործերով ուղարկւում ժրնէ:

Ի նպաստ Լ. Աթաբէկեանի վկայութիւն են տւել 14 հոգի, հայեր և օտարազգիներ: Հետաքրքրական է, որ վկայ բժ. Պ. Լարիօնովը (յայտնի վիրաբոյժ Բագում, այժմ հանգուցեալ) այն կարծիքն է յայտնում, թէ Աթաբէկեանը աւելի շուտ իր համոզմունքներով պահպանողական մարդ պիտի լինի:

Սենատում Լ. Աթաբէկեանին պաշտպանում էր Ալէքսանդր Կերենսկին: Ինքը մեղադրուող արտասանեց փայլուն պաշտպանողական ճառ, որ խոր տպաւորութիւն թողեց դատաւորների վրայ: Նա իր օգտին խօսեցնել էր տալիս այն հանգամանքը, որ 1905–1906 թւականներին թուրքական խաւար ամբոխը ոտքի էր կանգնել սրբելու կեանքն ու քաղաքակրթութիւնը հայ շրջաններում և նա իբրև հայ մարդ պարտաւոր էր խօսքով ու գործով նպաստել իր ցեղի ինքնապաշտպանութեան: Սենատը անպարտ հռչակեց Լ. Աթաբէկեանին: Դա ուշացած արդարադատութիւն էր, որովհետև 3 տարւայ նախական բանտարկութիւնը արդէն ծածկում էր ենթադրուող պատիժը:

Լ. Աթաբէկեանը բանտից ելաւ խախտւած առողջութեամբ, բայց առաւել ևս խախտւած նիւթականով: Մօտ վեց ամիս նա անկարող եղաւ անձնատուր լինել առտնին զբաղմունքների: Եւ դեռ չհանգստացած՝ 1912 թ. աշնանից նորից վերսկսեց իր բժշկի ընդունելութիւնները, միաժամանակ ղեկավար հրաւիրւելով թոքախտի դէմ մաքառող ընկերութեան ամբուլատորիային:

Բանտարկութիւնից առաջ էլ Լ. Աթաբէկեանը իր ոյժերը փորձել էր բանաստեղծական արւեստի մէջ, գրել էր մի երկու ինքնուրոյն և թարգմանել մի քանի ոտանաւորներ: Բանտային պարապութիւնը խթանեց այդ որոնող մարդուն երգի դիմել: Բանտում նա շարադրեց մի շարք ոտանաւորներ և գաղտնի ուղիներով ուղարկեց բարեկամներին: Այդ ոտանաւորներից մի քանիսը 1911 թ. նրա անւան և ազգանւան գլխագիրներով լոյս տեսան մեր խմբագրութեամբ հրատարակող «Նոր Կեանք» հանդէսում, իսկ երբ նրանց հեղինակը ազատեց բանտից՝ նա շտապեց հրատարակել իր բանաստեղծութիւնների ժողովածուն (Բագու, 1913 թ.): 1909 թ. յունիսից սկսած մինչև 1917 թ. յեղափոխութիւնը հայ սոցիալիստ-յեղափոխականները չունէին իրենց մամուլը: Այսպիսով, Լ. Աթաբէկեանը, որ այդ հոսանքի կառկառուն

ներկայացուցիչը և ճանաչված հրապարակախոսն էր, տեղ չունէր արտա-
յայտելու: Միայն 1913 թ. «Բագրի Ձայն» թերթում նա տպագրեց մի երկու
յօդված, որոնք շօշափում էին հայ լեզվի զարգացման պայմանները և
բանավէճ էին մեր մի յօդվածի առիթով: 1914 թ. «Մշակում» նա տպագրեց
մի յօդված՝ նւիրւած հայ մտաւորականութեան նկարագրին: Այդ նոյն
թերթում 1916 թ. հրատարակեց մի ուրիշ յօդված, որի մէջ խարազանում էր
հայ ուսանողների պակասութիւնները: Այդ շրջանում, 1913 թ. աշնանը և
1914 թ. գարնանը, Բագրի գրական գեղարուեստական ակումբում նա կար-
դաց երկու դասախօսութիւն հայ լեզվի և մտաւորականութեան մասին,
որոնց արձագանքը եղան վերը յիշած յօդվածները: Ձոյգ դասախօսութիւն-
ներն էլ ունեցան հակայական յաջողութիւն և յարուցին սուր բանաւոր և
գրաւոր վէճ Բագրում ու Թիֆլիսում: Ի՞նչ էր ասում Լ. Աթաբեկեանը:

Հայ լեզուն պետական չէ: Պետական և հասարակական հաստատու-
թիւնները զօրավիզն չեն կանգնում նրա զարգացման: Նա վտարում է
դպրոցից, առևտրա-արդիւնաբերական ասպարէզից, իրանց կրթւած համարող
ընտանիքներից և, առհասարակ, լայն գործառնութիւններ ունեցող հաստա-
տութիւններից: Նա աղքատանում է, աղճատում: Այժմ նա մօտենում է ժար-
գօնի, որի մէջ տիրապետում են հայերէնն ու ռուսերէնը հաւասարաչափ, եթէ
աչքաթող անենք պարսկա-թուրքական ժառանգութիւնը: Երկու լեզուով
անհնարին է յարատեւել: Պիտի իշխէ մի լեզու: Եւ յաղթանակը, եթէ անասան
մնան քաղաքական պայմանները, վերապահւած է ռուսերէնին:

Ահա Լ. Աթաբեկեանի առաջին դասախօսութեան համառօտ բովանդա-
կութիւնը: Այստեղ յոռետեսութիւն չկայ հայ լեզվի ասպագայի նկատմամբ,
բայց կայ հարցի սուր ձևակերպում, որ պիտի խթանէր ունկնդիրներին դէպի
քաղաքական պայքար ռուսական բացարձակապետութեան դէմ:

Հայ մտաւորականութեան նւիրւած իր երկրորդ դասախօսութեան մէջ Լ.
Աթաբեկեանը մռայլ գոյներով էր նկարագրում այդ խաւի մտաւոր բոբ-
կութիւնը: Օտարացումն և խորթացումը տիրում է այդ խաւի մի բևեռում,
սեմինարիզմը և հոգու չքաւորութիւնը՝ միւս: Այստեղ դարձեալ հայ մար-
դուն կարող էր վերամկրտել քաղաքական պայքարը և ոչ դիմագրկութիւնը:

Պատերազմը, մանաւանդ երբ նա տխուր փաստ դարձաւ Թիւրքիայի և
Ռուսաստանի միջև, սնդիկի վիճակում դրեց Լ. Աթաբեկեանին: Նա հրա-
ժարեց Ֆիզիքական հանգստութիւնից և չէր մտածում հոգևոր անդոր-
րութեան մասին: Ի՞նչ վարքագիծ պիտի ընդգրկէ հայ սոցիալիստը կատար-
ող դէպքերի դիմաց: Դառնալ պարտւողական և ցանկանալ, որ յաղթէ
գերման-թիւրքական դաշնակցութիւնը, ուրեմն և Անդրկովկասը ընկնէ
Թիւրքիայի ազդեցութեան տակ, թէ ընդհակառակը՝ քար սեղմելով կրծքին՝
աջակցել Ռուսաստանին, որ նրա գորքերը մեր երկրի սահմաններից հեռու
պահեն թրքական աւերիչ բազուկը: Լ. Աթաբեկեանը իր ընկերների և հայ
սոցիալ-դեմոկրատների պատասխանատու ներկայացուցիչների հետ ընդգր-
կեց վերջին գործելակերպը: Նա ընդունեց, որ հայ սոցիալիստը պիտի մտնէ
ամենուրեք ստեղծւած Ազգային խորհուրդները և վարէ այնտեղ աշխատանք
այն իմաստով, որ պատերազմը յարակից երևոյթներով չխանգարէ Անդր-
կովկասի ժողովուրդների բարի դրացիութիւնը՝ որ հզորանայ մեր ժողովրդի
ինքնապաշտպանողական ոյժը և մաքառւի հայ ղեկավար շրջանների դիմա-
գուրկ ու ստրկական քաղաքականութեան դէմ, որով նրանք՝ գործիք դառ-

նալով ուսու բիւրօկրատիայի ձեռքին՝ արկածախնդրութեան էին մատնուած մեր ժողովրդի ճակատագիրը թէ թիւրքիայում և թէ Ռուսաստանում: Այսքանի մէջ նա համաձայն էր սոցիալ-դէմոկրատների հետ, բայց գտնուած էր նաև, որ հայ կամաւորական շարժումը պիտի ընթանայ իր առանձին ազգային հունով, որպէսզի մեր մարտիկը ազատի հանրակացարանի բթացնող մթնոլորտից և հնարաւորութիւն ունենայ իրագործելու առանձին նպատակներ:

Լ. Աթաբէկեանը այն մարդկանցից չէր, որ իմաստութիւն նւաճէր և ձեռքերը ծալած նստէր տաքուկ բնակարանում: 1915 թ. սկզբում նա ձգեց իր զբաղմունքները Բագուում և բժշկի պաշտոնով ուղևորեց ռազմաճակատ: Մօտ վեց ամիս ռազմաճակատում աշխատելուց յետոյ վերադարձաւ կերպարանափոխուած վերաբերմունքով դէպի կամաւորական շարժումը: Այժմ նա դարձել էր այդ շարժման համոզուած ժխտողներից մէկը: Միաժամանակ նա իր քննադատական խոսքով հրաւիրում էր հայ կեանքի ղեկավարներին դէպի քաղաքական զգուշաւորութիւն և զգաստութիւն: Բայց մեր բուրժուական մտաւորականութեան մի մասը և Հ. Յ. Դաշնակցութիւնը անվերապահօրէն նետուել էին ուսու քաղաքականութեան գիրկը և նրանց անսխառթ էր թւում ամեն մի շրջանկատ խօսք: Միայն թիւրքահայ ժողովրդի տւած վիթխարի զոհերը կտրեցին այդ մարդկանց ամբարտաւանութիւնը, ստիպելով նրանց ունկնդրել այլախոհ հայ գործիչներին: Բայց դա ուշացած մի գիշորութիւն էր, որ գործնականում չէր կարող փրկել տանու տւած կացութիւնը:

Լ. Աթաբէկեանին դեռ շատ վաղուց զբաղեցնում էր հայ ժողովրդի ֆիզիքական վատասեռման երևոյթը: Նա խորապէս վշտանում էր, տեսնելով հայ մարդու տեսակի մանրացումը և թուլացումը: Իբրև հասարակական գիտութիւններին քաջատեղեակ և բժիշկ՝ նա գիտէր, որ նիւթական աննպաստ պայմաններն են մեր ժողովրդի վատասեռման աղբիւրը: Կուէլ սոցիալական անարդար կարգերի դէմ՝ նշանակում է նպաստել, որ ժողովրդական մասսաները ունենան առատ սնունդ և հոգու լոյս: Իբրև սոցիալիստ՝ Լ. Աթաբէկեանը իր առօրեայ աշխատանքով նպաստում էր մեր ժողովրդի ֆիզիքական կազդուրման և հոգևոր ճոխացման: Բայց նա կամեցաւ, որ իր այդ աշխատանքը արտայայտի և բժշկական գրականութեան ծաւալման միջոցով: 1916 թ. նա հրահրեց Բագուի Հայոց Կուլտուրական Միութեանը՝ ձեռնարկելու մի հանրամատչելի բժշկական թերթի հրատարակութեան: Այդ թերթը՝ «Առողջ Կեանք» անունով սկսեց լոյս տեսնել 1917 թ. յունւարից և դադարեց յեղափոխութեան բարդացման շնորհիւ, 10-րդ համարի վրայ: Լ. Աթաբէկեանը «Առողջ Կեանքի» ղեկավարներից մէկը լինելով՝ նրա մէջ գետեղեց մի քանի յօդւած, որոնց մէջ ուշագրաւ է նրա «Ղարաբաղը նաւթաշխարհում» վիճակագրական ուսումնասիրութիւնը:

Յեղափոխութիւնը նորից տեղահան արեց այդ դադար չճանաչող և նստակեացութիւնը ատող մարդուն: Վերսկսեց նրա հրապարակախօսական գործունէութիւնը կուսակցական մամուլում («Աշխատանքի Դրօշակ» և այլն): «Գործ» ամսագրի մէջ (1917 թ. № 11–12) տպագրեց «Ապստամբութիւն» ընդարձակ ոտանաւորը: Գրաւոր խօսքին համընթաց ընդարձակ չափեր ընդունեց բանաւոր խօսքը: Յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ, 1917 թ. գարնանը, նա կենտրոնական կրողը դարձաւ այն շարժման, որ

նպատակ ունէր Բագուում ստեղծւած Հայրենակցական միութիւնների միջոցով գործիչներ մատակարարել գաւառին: Հայրենակցական միութիւնները դաշնակցելով ստեղծեցին Գանձակի նահանգի Բագուական Հայերի կազմակերպութիւն, որի խորհրդի նախագահը Լ. Աթաբեկեանն եղաւ: Այդ կազմակերպութիւնը, համաձայնութեան գալով երկրային բարձր իշխանութեան հետ (Անդրկովկասյան > Յատուկ Կոմիտէտ), հրահանգիչներ ուղարկեց գաւառները, պարտականութիւն դնելով նրանց վրայ՝ կազմակերպել տեղերում յեղափոխական իշխանութիւն, կարգաւորել պարենաւորումը, ժողովրդին պատրաստել Հիմնադիր ժողովի ընտրութիւնների համար և գաղափարական ու կազմակերպչական մօտիկութիւն ստեղծել թուրք ժողովրդի հետ:

Բագուից դուրս, 1917 թ. ամառն ու աշնանը, նա մասնակցեց Պետրոգրադում Հիմնադիր ժողովի շուրջը տարւող նախապատրաստական աշխատանքներին, եղաւ պատգամաւոր Հայոց Ազգային Համախորհրդին (հոկտեմբեր), ընտրւելով անդամ Ազգային Կենտրոնական խորհրդի, մասնակցեց կուսակցական երկրային կազմակերպութիւնների համագումարին և հռչակեց նախագահ Անդրկովկասի կազմակերպութեան, ընտրեց պատգամաւոր Համառուսական Հիմնադիր ժողովի, որով դարձաւ նաև անդամ Անդրկովկասեան Սէյմի, մասնակցեց Անդրկովկասեան երկրային Բանւորական, Զինւորական և Գիւղացիական խորհուրդների աշխատանքներին, առհասարակ, ածապարեց իր փորձաւոր ու կշռադատուած խօսքն ասել և իր խորհուրդը տալ այն բոլոր հաստատութիւններում, որոնց մէջ կուռում ու կոփւում էր յեղափոխական կամքը:

1917 թ. նոյեմբերին Լ. Աթաբեկեանը վերադարձաւ Բագու և անձնատուր եղաւ տեղական հասարակական ու կուսակցական աշխատանքներին: Բանւորական և Զինւորական խորհուրդները իրանց պետական շինարարութիւնով այլևս չէին վայելում նրա վստահութիւնը: Այդ մարմինների անհրաժեշտութիւնը նա չէր բացասում, բայց կողմնակից չէր մեծամասնական այն դաւանանքին, թէ ամբողջ իշխանութիւնը պիտի կենտրոնանայ նրանց ձեռքում: Միաժամանակ Լ. Աթաբեկեանը տեսնում էր, որ ուսական պետականութիւնը քայքայւում է և օրհասական վիճակ է ստեղծւում հայութեան համար: Եւ նա՝ հրաժարւելով խորհուրդներից՝ իր ամբողջ եռանդն ու ուշադրութիւնը կենտրոնացրեց ազգային գործերի վրայ: Սոցիալիստ-յեղափոխականների կողմից նա մտաւ Բագուի Հայոց Ազգային խորհուրդը, որ այդ ժամանակ տենդորէն զբաղւած էր ազգային գործի կազմակերպումով և առհասարակ ինքնապաշտպանութեան հոգսերով: 1917 թ. դեկտեմբերին արդէն պարզ էր բոլոր աչքաբաց քաղաքագէտների համար, որ Անդրկովկասի թրքութիւնը իր ազնւականութեան և տաճիկ գործակալների դեկավարութեամբ ապստամբութեան պատրաստութիւններ է տեսնում Ռուսաստանի դէմ:

Հայ մարդիկ չէին կարող արգելել կամ խեղդել թուրքերի դաւաճանութիւնը: Նրանց մնում էր միջոցներ ձեռք առնել, որ թրքութեան հակապետական գործողութիւնները միայն իրանց շորչոփով անհանգստացնեն հայերին, որ Անդրկովկասը ականատես չլինի ազգային բաղխումների: Բագուի Հայոց Ազգային խորհրդի կողմից Լ. Աթաբեկեանը և մի քանի ուրիշ գործիչներ բանակցութիւնների մէջ մտան Մուսուլմանական խորհրդի ներկայացուցիչների հետ: Հայերը առաջադրում էին թուրքերին ապահովել երթևեկութիւնը երկաթուղիներով և վարչական սահմանաբաժանման

ենթարկել հայ-թուրքական գաւառները: Թուրքերը չառարկելով այդ առաջադրութիւններին՝ պահանջում էին հայերից պարզել իրանց վերաբերմունքը դէպի Թիւրքիայի անձեռնմխելիութիւնը, զգացնել տալով, որ իրանք ցանկանում են Անդրկովկասի բաժանումը Ռուսաստանից: Այդ բանակցութիւնները խլեցին շատ ժամանակ, բայց արդիւնք չուրին: Միայն երկու կողմերը ճանաչեցին իրար: Թէ՛ այդ բանակցութիւնները, թէ՛ Անդրկովկասի երկաթուղու վրայ տեղի ունեցած ռուս զինւորութեան մասսայական տմարդի կոտորածն ու զինաթափութիւնը և թէ՛ հայ-թուրքական ռազմաճակատի անյաջողութիւնները մոայլ տրամադրութիւն և ջղայնութիւն էին հաղորդում Լ. Աթաբէկեանին: Նա այլևս դադար չէր ճանաչում: Հասարակական ժողովները և մտքերի փոխանակութիւնը մտերիմների հետ մխիթարական ոչինչ չէին տալիս: Գիշատիչներ էին ճախրում հայութեան գլխին և դա հիւժում էր նրան: Լ. Աթաբէկեանը սուր հարազատութեան կապ էր պահպանում ազգի հետ և վերջինիս գլխին կղզացող անզղները նախ և առաջ կտցահարում էին նրա սիրտը:

Հակառակ հայութեան բոլոր պատասխանատու խաւերի ցանկութեան 1918 թ. մարտի 18-ին տխուր իրականութիւն դարձաւ քաղաքացիական կռիւր Բագում: Լ. Աթաբէկեանը մէկն էր այն հայ հանրաժանօթ գործիչներից, որ ամեն մի ազդեցութիւն գործադրեց խափանելու եղբայրասպան կռիւր: Նա ամեն տեղ էր: Եւ Հայոց Ազգային Խորհրդում, և՛ Բանտրական ու Զինտրական Խորհրդի Գործադիր Կոմիտէում, և՛ թուրք հաշտարար պատւիրակութեան մէջ: Ամենուրեք նա մի միտք, մի ցանկութիւն էր փայփայում. վերջացած տեսնել արիւնոտ կռիւր: Այդ նպատակով էլ մարտի 20-ին (հ. տ.) երեքշաբթի, նա հաշտարար պատւիրակ գնաց դէպի պարտւած «Մուսաֆաթի» վերջին դիրքերը: Մոլեգնած մուսաֆաթականները չխնայեցին նրան և միւս պատւիրակներին: Եւ Լ. Աթաբէկեանը հնձեց իր մարդկային գերագոյն պարտականութեան կատարման ճամբին:

Լ. Աթաբէկեանի յուղարկււթութիւնը կատարեց կիրակի, մարտի 25-ին: Բագմահազար ժողովուրդ էր գնում նրա դագաղի ետեից: Եւ միայն անկեղծ ամսասանք ու վիշտ կար բոլորի դէմքին: Նահատակել էր մեծ սիրտ ունեցող մի հայ և բնական էր այդ յարգանքի ցոյցը: Օրւայ թերթերը լոյս էին տեսել սև շրջանակներով և նրա դէմքը դրւատող յղւածներով, իսկ ջրաբերդի նրա հայրենակիցները հրատարակել էին մի կոչ, որի մէջ ասւած էր. «Լ. Աթաբէկեանը նահատակել է իբրև հաշտարար, իբրև անկեղծ մարդասէր: Նրա ջերմ ցանկութիւնն է եղել ժամ առաջ վերջ տալ կռիւն և դրանով փրկել շատերի կեանքը: Նա իրան գոհ է բերել, որ այդ հերոսական միջոցով բանայ կոյրերի աչքը, խուլերի ականջը և մարդկային համակեցութիւն ստեղծէ գժտւած ու թշնամացած կողմերի մէջ: Մեծ է մեր կորուստը: Ջրաբերդը կորցնում է իր փայլուն գաւակին: Մեզ միայն մի մխիթարութիւն է մնում, որ Լ. Աթաբէկեանը իբրև պայծառ դէմք պատկանում է ողջ հայ ժողովրդին և համայն աշխատաւոր բազմութեան առանց ազգի ու ցեղի խտրութեան, և որ այսօր նրա մահը սգում են ամենքը, ով լսել է նրա ոգեշունչ խօսքը, կարդացել նրա խոհուն գրւածքները և տեսել անվեհեր գործերը:

Այս սև օրերին Գաւառական Խորհուրդը դեռ չի կարողանում հաշիւ տալ իրան, թէ ում է կորցրել և ինչպէս պիտի յաւերժացնել Լեոնի անունը: Գաւառական Խորհուրդը մի սփոփանք ունի, որ Լեոնը ինքն է հոգացել յաւերժացնելու իր անունը: Հայրենակիցներ, բոլորդ խմբեցէք նրա դագաղի

շուրջը: Բոլորս երախտապարտ ենք նրան: Եւ թող նա իր վերջին օթևանի ճամբին պարուրած լինի հայրենակիցների պատկառանքով ու յարգանքով»:

Լ. Աթաբեկյանի ածիւնը հանգչում է Բագլի գերեզմանատանը: Բայց նրա տեղը Հայաստանումն է ...

Դ. Անանուն

«Հայաստանի կոոպերացիա», № 8, Բ տարի, ապրիլ 30, 1920, էջ 275–281:

– 2 –

ԼԵՎՈՆ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆՆԵՐԸ⁴

Ես քեզ տեսել եմ ընդամենը երկու, թե երեք անգամ, այն էլ հեովից, ամբիոնի վրա, Հայոց Ազգային Համագումարում 1917 թվականին: Նիհար էիր, գունատ, նյարդային: Որքան խելացի էին քո խորը թաղված սև աչքերը, որքան շարժուն էր քո դեմքը: Ներվեր էիր ոտքից մինչև գլուխ, վերին աստիճանի նուրբ ներվեր: Եվ լերկ, միանգամայն լերկ ներվեր, ենթակա մարդկային տառապանքների ամենաթեթև հովին անգամ: Եվ խելացի, մանավանդ խելացի: Խոսում էիր անկեղծ, թե իբրև մարդ և թե իբրև հայ: Ձէիր աղավաղում քո ուղեղը և ոչ մանավանդ քո գգացմունքները դոգմաներով: Եվ դա էր, որ քեզ սիրելի դարձրեց իմ աչքում միանգամից առանց քեզ ճանչնալու: Այո, դու ունեիր լողիկա: Ապացույց, որ դու նման չէիր մեր ազգային և միջազգային թուլթակներին: Դու հայ էիր, մնալով իսկական մարդ և մարդ էիր, մնալով իսկական հայ:

Ահա ինչու համբուրում եմ քո շիրիմը:

Շիրվանզադե

«Մշակ» (Թիֆլիս), 1. IV. 1919:

– 3 –

ՆԱՄԱԿ ՀԱՅՊԵՏՆԵՐԱՏԻ ԴԻՐԵԿՏՈՐԻՆ

26/6–1957 թ.
Երևան

Ներողություն եմ խնդրում Ձեզ մի պահ զբաղեցնելուս համար:

Շատ ցանկալի կլիներ, որ Հայպետհրատը լույս ընծայեր հանգուցյալ Լևոն Աթաբեկյանի բանաստեղծություններից մի գրքույկ, մոռացության չտալու համար Լ. Աթաբեկյանի հիշատակը և մանավանդ ընդառաջելու բազմաթիվ ընթերցողների փափագին, որոնք ուզում են ունենալ նրա բանաստեղծությունները:

⁴ Ինչպես վերը նշվեց, այս խոսքը Շիրվանզադեն գրել է Լ. Աթաբեկյանի հիշատակին:

Լ. Աթաբեկյանի «Բանաստեղծությունները» առաջին անգամ հրատարակվել են Բաքու, 1913 թվին: Կառաջարկեի այդ գիրքը վերահրատարակել, անշուշտ, խմբագրական որոշ աշխատանքի ենթարկելով: Նա գրել է մի շարք լիբրիկական և խոհական քառյակներ և ապրված գեղեցիկ ոտանավորներ: Օրինակի համար՝

- 1) Հեյ, սարսարոտ իմ վաթան
 - 2) Բանտի վերա
 - 3) Քունը բանտում
 - 4) Զանգի երգը
 - 5) Քաղաքի միջով
 - 6) Բուխարիկում և ուրիշները
- Շատ գեղեցիկ են՝
 – Մոր նամակը
 – Լաց մի ինիլ
 – Չոբանն ու կարաբաշը

ոտանավորները, որոնք լավ կողորիտ ունեն և հայտնի են լայն հասարակությանը, շատերը անգիր գիտեն դրանք:

Հարգանքներով՝

Ա.Վ.ԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ⁵

Լ և ո ն Ա թ ա բ ե կ յ ա ն. Բանաստեղծություններ, Երևան, 1970, էջ 3–4:

– 4 –

ԼԵՎՈՆ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ ՔՆԱՐԸ

Կես դար է արդեն, ինչ նա այլևս չի շրջում հայրենի Ղարաբաղի գեղադիր լեռնալանջերով, բայց ինչպես մի լեգենդ Լևոն Աթաբեկյանը իր սիրալի կյանքով ու գեղեցիկ մահով, բանաստեղծությամբ ու բժշկական գործունեությամբ անցել է հարազատ երկրամասի բոլոր գյուղերով ու բոլոր հյուղերով: Լևոն Աթաբեկյանի պոեզիայի հիմնական հնչեղությունը ողբերգական քնարերգությունն է, փիլիսոփայական մտորում, որի մեջ ապրում է, տառապում, հուսալքվում ու խիզախում 20-րդ դարի մարդը: Նրա վշտագին ու լուսաթաթախ լիբրիկայում լսվում է ամբողջ մի սերնդի և՛ ճակատագրի հեկեկանքը, և՛ կիսապապանձ ձայների հունդյունը, նրա որոնումների, կորուստների ու հայտնությունների եղերերգությունը:

⁵ «Լևոն Աթաբեկյանի հանդեպ մի առանձնակի վերաբերմունք ունեն Ավ. Իսահակյանը: Այնքան որ «կողմնապահությունը» տարածվում էր ոչ միայն նրա միակ դատեր գրականագետ Մարգարիտ Աթաբեկյանի, այլև փեսայի բանաստեղծ Աշոտ Գրաշու վրա, – գրում է անվանի գրականագետ Ալմաստ Զաքարյանն ու ավելացնում. – Պոեզիայի ժողովածուներ խմբագրելիս հանձնախմբի անդամները ժպտալով գիտեին, որ Գրաշուց ընտրված նմուշները նույնությամբ պետք է մնան. հանել կամ կրճատել չի կարելի» (Ալ. Զ ա ք ա ղ յ ա ն. Եղիշե Զարենց. կյանքը, գործը, ժամանակը, գիրք 2, Երևան, 2003, էջ 97):

Ա՛խ, դեռ որքան արցունքներ կան լացելու,
 եվ դեռ որքան աղոթքներ կան ասելու,
 Քանի՛-քանի աստվածներ կան դեռ անհայտ,
 Խարխափումներ՝ խաչափայտից խաչափայտ ...

Ժամանակը, դարի շարժումները իրենց մակընթացություններով ու տեղատվություններով հեղեղորեն սուրում են Լևոն Աթաբեկյանի հայացքի առջևով, մարմնավորվելով խորիմաստ մանրապատումների մեջ: Նա ամենից առաջ մտքի, բանականության բանաստեղծ է, բանականություն, որ օրգանապես միահյուսվում է սրտի թրթիռներին: Տագնապալից ու փոթորկոտ այդ սիրտը սիրահարված է հայրենի լեռների բնաշխարհին, մայրական վշտին ու երգին և կանացի կարոտող աչքերին:

Հայ քնարերգության գողտրիկ գործերից է Լ. Աթաբեկյանի «Կարոտ»-ը, որ նրա ստեղծագործության հակիրճ համադրությունն է, այն միհատիկ տերևը, որով կարելի է ճանաչել ամբողջ ծառն իր աղմկուն կատարներով.

Կարոտել եմ քեզ, ինչպես լեռնցին սարն է կարոտում,
 Ինչպես բանտի մեջ կալանավորը հավիտենական
 Կարոտում է ջինջ հորիզոնների անսահման հեռուն:

Կարոտել եմ քեզ, ինչպես շեղվածը հայրենական տան
 Շեմքն է կարոտում, ինչպես մեռնողը հիվանդանոցում
 Իր վերջին ժամին կարոտում է մոր ձայնը դյուրթական:

Լիրիկական բանաստեղծությունների փոքրիկ մի գիրք, հրատարակված Բաքվում 1913 թվականին և «Ապստամբություն» պոեմը (1911 թիվ) նշանավորում են Լևոն Աթաբեկյանի բանաստեղծական զարմանալի ամբողջական աշխարհը: Խոսովահույզ է նրա պոեզիայի ոգին: Այն արտահայտված է գալիք հեղափոխության մարզարեական կանխազգացությունների, պոթիկումների մեջ: Սպասվում են հեղափոխական ճայթյուններ: Այդպիսին են Ռոստովի, Գանձակի, Նովոչերկասկու և Պետերբուրգի զնդաններում պոետի ստեղծած բանաստեղծությունների մոտիվները: Դեռևս 1911 թվականին Ռոստովի բանտի կալանավոր Լևոն Աթաբեկյանը գրում է իր «Այլ աղոթք» բանաստեղծությունը, որտեղ կրքոտ ներշնչանքով օրհներգում է հեղափոխության գալուստը՝

Զնդանների մեջ, խաչերի վերա դարեր շարունակ
 Մունջ ու անձանձրույթ մենք սպասել ենք Քո սուրբ
 գալստյան:

Օրհնյալ է ճամփան քո այցելության:
 Արի՛ փշրելու քաղցի ու ճնշման կրկնակի շղթան:

Այս բանաստեղծությունը յուրօրինակ մի դատավճիռ է հին աշխարհի նկատմամբ, ուր ոտնահարվում էր մարդկային արժանապատվությունը, ուր աշխատավոր ժողովրդի կյանքը տառապանքներով էր լեցուն: Այս բանաստեղծությունը հեղափոխություն արարելու կոչ է: Լևոն Աթաբեկյանի

պոեզիան հագեցված է ապագայի մտապատկերներով, լույսով, կյանքով, սրբաբանաց շարժումով:

Պոետի խոսքը դառնում է մի տեսակ բանաստեղծական օրհներգութուն, ձոնված ստեղծագործ մարդուն, կյանքի սերմնացանին ու վերափոխողին: «Եհովա» երկում նրա համար սուրբ է մարդու տառապանքի ու սխրանքի ճանապարհը և փույթ չէ, եթե հերոսի բախտի վրա փլվե խավարը, վիշտը, անգամ մահը: «Թող այդպես լինի», գոչում է մարդը՝ բանաստեղծ Լ. Աթաբեկյանը, կանգնելով պայքարի, զրկանքի, սխրանքի ու մեծագործության ուղու վրա:

Բանաստեղծը ընկավ 1918 թ. մարտին խրամատային համազարկերի տակ՝ ազգերի համերաշխության սպիտակ դրոշմը ձեռքին: Լևոն Աթաբեկյանի մասին հոգեցունց տողեր է գրել ժամանակին Ալ. Մարտունին (Ալեքսանդր Մյասնիկյանը.՝ Ա. Զ.)՝ «Նրա խոր մտքի հեռավոր թռիչքները գերեցին ինձ ամբողջովին: Տառապանքն ու կսկիծը, աշխատանքն ու ազատությունը սիրեցի նրա պես: Սիրեցի նրան ու ուզեցի տեսնել, անպատճառ տեսնել: Լեզուն հնչուն ու կոկիկ: Նրա խոսքերը զանգի զողանջներ էին, աշխատանքի ու պայքարի պատարագին հրավիրող: Քչերն են աշխարհում նրա պես ... Զուր չէ, որ աշխատավորներին հասած ծանր հարվածներից ամենաուժեղը նա իր վրա առավ՝ դա ապացույց է, որ աշխատավորությունը դեռ ունի բարեկամներ»: Ազատությունն էր բանաստեղծի դրոշմը, կոչը՝ ապստամբությունը: Լևոն Աթաբեկյանի «Ապստամբություն» պոեմը վերահաս հեղափոխության սիմֆոնիան է, գրված հեղափոխությունից շատ առաջ, 1911 թվականին, աշնանը, Ռոստովի բանտում:

Ամենագոր հողմի թափով ծառացած բնության տիտանական պատկերը, ընդվզող տարերքի կերպարը աճում է, թանձրանում և մենք ակնաստես ենք լինում պատկերների երկու զորեղ հեղեղի՝ մոլեգնած բնության ու խռովահույզ ամբոխների: Պոեմի էպիկական շունչը, հաղթական հողմը, ցասկոտ բնության վախճանի ու հայտնության պատկերը ծնունդ են տալիս երկրորդ մի տեսիլի՝ նվաստացվածներն ու նզովվածները, վիրավորվածներն ու ոտնահարվածները միաձուլվում են հողմերում, ելնում տապալելու անարդարության զառամյալ հասարակարգը՝

«Մարդկային տարրը սուրբ ատելության գոռ
Հիմնը երգեց» ...

«Ապստամբություն» մեջ ամբողջ հասակով մեկ ուրվագծվում է պոետի հոգևոր աշխարհի վսեմությունը: Բանաստեղծի կիրքը, ժամանակի նրա ըմբռնումը, բոլոր հարստահարվածների ու ճնշվածների արդար ապստամբության մասին ունեցած հասկացությունը պոեմում վերափոխվում է արվեստի ռեալականության:

Վերընթերցելով Լ. Աթաբեկյանի լիրիկան, մենք բանաստեղծի հետ բանտից բանտ ենք քշվում՝ անձրևոտ, միայնակ գիշերներին, մռայլ ու խոնավ խցում նրա կարոտի հանդեպ հառնում են սիրած ծննդավայրի տեսիլները: Մենք բանաստեղծի հետ միասին սիրով ու կարոտով դիտում ենք արևով ողողված նվիրական լեռնաշղթաները, ժայռոտ եզերքներին զարնվող փրփրակոծ գետը, հեռավոր ու հպարտ դեմքեր, հայրենի տունն ու լսում

մոր թախծալի ճայնը: Այսպես ծնվեց նրա ստեղծագործության գլխավոր թեման՝ հայրենաբաղձությունը՝ նոստալգիան, որ նրա ամենավշտոտ բանաստեղծություններին իսկ տալիս է թևեր ու արևայնություն: Լևոն Աթաբեկյանի «Nostalgia»-ն պոետի բարեկամ Ավետիք Իսահակյանի սիրած բանաստեղծությունն է: Նոստալգիան ճառագայթված է հայրենի Ղարաբաղի համապատկերով:

* * *

Լևոն Աթաբեկյանը ժամանակակիցների հուշերում պատկերվում է որպես բազմակողմանի կրթված մի մարդ, պոետ, բժիշկ, սոցիոլոգ, փիլիսոփա, հրապարակախոս, որ փայլուն կրթություն էր ստացել Գերմանիայում, Ֆրանսիայում ու Անգլիայում, տիրապետում էր եվրոպական լեզուներին, ուսանել էր շատ բան Եվրոպայի մեծարվեստ պոետներից՝ Վեդկենից ու Վերհաունից, Պետեֆից ու Գյոթեից⁶:

Ես իմ ականջով լսել եմ, թե ինչպես հարսանիքներում ու տոներին, ուրախ կամ տխուր հանդեսներում ելնում է մի ծերունի կամ պատանի ու սրտառուչ ճայնով կարդում «Մոր նամակը», «Լաց մի ինիլ» կամ «Չոբանն ու կարաբաղը»: Ուրախալի է ու ցավալի միաժամանակ, որ շատերը գտնում են, թե Լևոն Աթաբեկյանի այս ստեղծագործությունները ժողովրդի հորինած երկեր են՝ այնքան վառ է նրանցում ժամանակաշրջանի ոգին, այնքան թրթռուն ժողովրդական լեզուն, անպաճույճ ոճը: Հարազատ Ղարաբաղի ճամփեքով շենից շեն, տնից տուն, չրթից շուրթ թուն պոետի հայրենաբույր գործերը: Այս երկերում միահյուսվել են պոետի հոգին ու ժողովրդի հոգին: Պոետի ազնվությունն ու մարդկայնությունը ներծծված է ժողովրդի խղճի մաքրութամբ: Ղարաբաղի համով ու հոտով բարբառից սերված այս գրվածքների գլխավոր բովանդակությունը մի ընդհանուր ներդաշնակություն ստեղծող բարություն լույսն է, սիրո լույսը, արցունքի միջից կաթած այն լույսը, որով շողում են կերպարները:

Ղարաբաղի փրփրաբաշ գետերի ու լեռնավայրերի գեղեցկության երգիչը, իր ժամանակակիցի վեհ ու վսեմ խոհերի երգիչը, հայրենի գյուղերի դառնագին ճակատագրի երգիչը՝ Լևոն Աթաբեկյանը ստեղծել է մի հուշարձան-կոթող, որ խոյանում է ոտնահարված արժանապատվության վրա, ծվատված ու խոշտանգված ազատասիրության վրա, ազատաբաղձ անհատի մտքերի ու երազանքների վրա՝

⁶ Լ. Աթաբեկյանն այդ և նշանավոր այլ պոետների գործերից կատարել է թարգմանություններ: Այսպես, օրինակ, Պ. Վեդկենից՝ «Այն երկինքը», Շ. Պետեֆից՝ «Փառքը», Պ. Հիլլեից՝ «Սոցիալական մոտիվ»-ը (տես Լ. Աթաբեկյան. նշվ. գիրքը, էջ 75–77): Բարձր է գնահատվել հատկապես Վերհաունից կրած ազդեցությունը: Ինչպես նկատվել է՝ «Մեր գրականության մեջ միայն Լ. Աթաբեկյանն է կարողացել լավ հասկանալ Վեռհաունին, և արտահայտել նրա երգերի թե ընտրված, և թե իսկական ոգին:

Նրա «Ապստամբությունը» տալիս է իսկական Վերհաունին, մտածող և քանդակագործ Վեռհաունին ...» [Ռ. Արիստակեսյան. Գրական վավերագրեր (1920–1930-ական թվականներ), հ. 1, Երևան, 2020, էջ 164]:

Անծայր անապատ: Ավազի վրա՝ սկզբում Հաստատ ու
 վեհ քայլերի
 Խիստ շրջագծված խոր ու նուրբ հետքեր և կաթիլներով
 սառած մուգ արյուն,
 Ապա մրրկոտ, մոլեգնած վազքի ազատ փորվածքներ և
 արյան բծեր ...

 Այս անապատով մարդուց վերավոր մի արքայական
 առյուծ է անցել:

Աշոտ Գրաչի

Լ և ո ն Ա թ ա բ ե կ յ ա ն . ն շ վ . գ ի ր ք ր ք , է ջ 5-12:

– 5 –

Nostalgia⁷

*Հե՛յ, սարսարոտ
 Իմ վաթան,
 Թուխպի ծով ...*

*Ա՛յ, քարքարոտ
 Ասկերան,
 Մարմանդ հով ...*

*Մըռավասար,
 Զիլգիլան,
 Արծվի բույն ...*

*Խեղառ թարթառ
 Փրփրան,
 Դղրդյուն ...*

*Մտամուր
 Արահետ,
 Խրխնջոց ...*

*Ուր-մուր
 Զորագետ,
 Քչքչոց ...*

⁷ Ինչպես վերը նշվեց, “Nostalgia”-ն «պոետի բարեկամ Ավետիք Իսահակյանի սիրած բանաստեղծությունն է»:

*Հե՛յ, սարսարոտ
Ղարաբաղ,
Մայր ու տուն ...*

*Ա՛յ, քարքարոտ
Մուռով-դաղ,
Մանկութիւնն ...*


Ռոստով, 1914

Լևոն Աթաբեկյան. նշվ. գիրքը, էջ 48–49: Հմմտ. Լ. Աթաբեկեան. Բանաստեղծութիւններ, Բագու, 1913, էջ 19–20, նաև «Հայաստանի կոռպե-
րացիա», № 11, հունիս 15, 1920, էջ 418:

ԱՐԱՐԱՏ ՀԱՎՈՐՅԱՆ. Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը Հայոց պատմության հոլովույթում, *Երևան, «Լուսակն», 2020, 212 էջ**:

Բանալի բառեր՝ հայրենիք, Միացյալ և Անկախ Հայաստան, պետականություն, անկախություն, ազատություն, Հայ Դատ, Հայկական հարց, ծրագիր, գաղափար, մանդատ, իրավարար վճիռ, Սևրի պայմանագիր, Պողոս Նուբար փաշա, Վուդրո Վիլսոն:

1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունը պաշտոնապես ընդունեց Միացյալ Հայաստանի անկախության մասին հռչակագիրը. պետական մակարդակով ազդարարվեց հայ ժողովրդի համախմբումը Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի շուրջ: Հռչակագրի ընդունման միջազգային իրավական հիմքը 1918 թ. մայիսի 28-ին Հայք-Հայաստանի մի փոքր հատվածի վրա հայկական անկախ պետականության վերականգնումն էր:



Պ. գ. դ., պրոֆ. Ա. Հակոբյանը Միացյալ Հայաստանի անկախության մասին հռչակագրի 100-ամյակին նվիրված ներկայացվող ուշագրավ աշխատության մեջ ամփոփել է իր գիտական մտորումներն ու տեսակետները Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի պատմական ակունքների, դրա հետագա զարգացման ընթացքի, Միացյալ և Անկախ Հայաստանի մասին հայ հասարակական-քաղաքական ու պատմագիտական շրջանակների ընկալումների, այդ հիմնանպատակին հասնելու համար ձեռնարկված քայլերի և դրանց իրագործման հեռանկարների վերաբերյալ:

Մենագրությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը, խմբագիրն է պ. գ. դ. Խաչատուր Ստեփանյանը, իսկ տպագրությունն իրականացվել է «Իրօջակ»-ի թիվ 1 մատենաշարով՝ սփյուռքահայ բարերար տիկին Ալիս Պողոսյանի հովանավորությամբ:

Գիրքը սկսվում է խմբագրի կազմած «Առաջաբան»-ով, որին հաջորդում է հեղինակի «Մուտք»-ը՝ Պ. Սևակի «Անլուելի զանգակատուն» պոեմից մեջբերված խոսույն բնաբանով: Աշխատությունն ունի 18 մաս, որոնցում, ըստ ժամանակագրական հաջորդականության, ներկայացված են Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարին անմիջականորեն առնչվող պատմական իրադարձությունները: Դրանց վերաբերյալ եզրահան-

* Ներկայացվել է 21. IX. 2020 թ., ընդունվել է տպագրության 15. X. 2020 թ.:

գումներն Ա. Հակոբյանն ամփոփել է «Վերջաբանի փոխարեն» վերնագրի ներքո:

Աշխատության «Միացյալ Հայաստանի գաղափարի պատմական ակունքները» մասում Ա. Հակոբյանը ոչ միայն անդրադարձել է Միացյալ Հայաստանի գաղափարի պատմական ակունքներին, այլև ներկայացրել է Հայրենիքի հասկացությունը՝ որպես պատմական կատեգորիա: Պատմաբանը շեշտում է, որ «Աշխարհացոյց»-ում ներկայացված Մեծ Հայքի թագավորությունը, իբրև հայ էթնոսի բնօրրան՝ Հայրենիք, ֆիզիկաաշխարհագրական առումով հիմնականում նույնանում էր Հայկական լեռնաշխարհի հետ: Հին և միջին դարերում այդ պատմական տարածքում հաջորդաբար կերտված հայկական թագավորությունների պետական սահմանները գրեթե համընկել են մեր Հայրենիքի բնական սահմաններին՝ ներդաշնակորեն կազմելով հայ ազգի պետություն-Հայրենիք: Հենց այդ սահմաններում էլ հայկական պետությունն արտաքին ասպարեզում հանդես է եկել որպես միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտ: «Հագաբամյակները հայոց պատմությունը ինքնին հավաստում է, որ հայ ժողովուրդն իր հայրենիքի՝ Մեծ Հայքի պահանջատիրության հարցում ունի անվերապահ պատմական, համազգային, քաղաքական ու բարոյական իրավունք, ինչը պահանջատիրության տեսակետից նաև ուժի աղբյուր է» (էջ 11), – նշում է Ա. Հակոբյանը:

Հետագա դարերում, արտաքին ու ներքին աննպաստ գործոններով և հանգամանքներով պայմանավորված, հայերը կորցրին իրենց անկախությունը, Հայք-Հայաստանի տարածքային ամբողջականությունը, բայց՝ ոչ Հայրենիքի պատմական սահմաններում ազգային անկախ և միասնական պետականությունը վերականգնելու հույսն ու հավատը:

Մենագրության «Հայ ազգային կուսակցությունների դիրքորոշումները» մասում հեղինակը հակիրճ ներկայացրել է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարաքաղաքական զարգացման ընթացքը՝ միասնական և անկախ Հայաստանի գաղափարի արձարձումները հասցնելով մինչև նոր ժամանակներ՝ մինչև XIX դ. երկրորդ կես, երբ համաշխարհային գործընթացների ու Հայկական հարցի միջազգայնացման ազդեցությամբ օտարների կողմից նվաճված և մասնատված Հայրենիքի ազատագրման պահանջը դրվեց գործնական հիմքի վրա:

Աշխատության «Անկախության և Միացյալ Հայաստանի տեսլականը Առաջին աշխարհամարտի շրջանում (1914–1917 թթ.)» և «Հայաստանի անկախացման գործընթացը և Միացյալ Հայաստանի գաղափարը (1917–1918 թթ.)» մասերում պատմաբանի դիտարկմամբ՝ հայկական միացյալ և անկախ պետության վերականգնման համար ազատագրական պայքարը նոր փուլ թևակոխեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: 1915–1916 թթ. Օսմանյան կայսրության հայերի տեղահանությունն ու զանգվածային կոտորածները ի չիք դարձրին թուրքական պետության սահմաններում արևմտահայկական վիլայեթների ինքնավարության հույսը: Միևնույն ժամանակ Արևմտյան Հայաստանի ռուսական զինազրավման պայմաններում օրակարգային դարձան արևմտահայերի ինքնապաշտպանության զորացման, Ռուսաստանի հովանու ներքո ինքնավար ու միացյալ Հայաստանի

ստեղծման հարցերը՝ Միացյալ և Անկախ Հայաստան ունենալու հեռանկարով: Հեղինակը ուշադրավ զուգահեռներ է անցկացրել 1914–1918 թթ. Հայկական հարցում Ռուսաստանի ցարական, ժամանակավոր և բոլշևիկյան կառավարությունների վարած քաղաքականության նպատակների, սկզբունքների ու հետևանքների միջև՝ վերհանելով հայ հասարակական-քաղաքական կյանքում ընթացող բուռն տեղաշարժերն ազգային ուժերի համախմբման, ինքնակազմակերպման ուղղությամբ, արժևորելով 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի պատմական դերն ու նշանակությունը արևելահայությունը ֆիզիկական բնաջնջումից փրկելու, Արևելահայաստանի մի փոքր հողակտորի վրա հայոց անկախ պետականությունը վերականգնելու գործում:

Ա. Հակոբյանի գնահատմամբ, 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախության հռչակումը չըջաղարձ էր Հայոց նորագույն պատմության մեջ, միևնույն ժամանակ՝ այն հիմքը, որտեղից քայլ առ քայլ իրականացվելու էր Միացյալ Հայաստանի նպատակը: Գրքի «Միացյալ Հայաստանի պահանջի հիմքերը և հայ քաղաքական շրջանակների դիրքորոշումը» մասում պատմաբանը հիմնավորում է, որ 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի հաշտության պայմանագրով ՀՀ անկախության ճանաչումը Թուրքիայի կողմից, հունիսի 13-ին Հայաստանի անկախության պաշտոնական հայտարարումը, երկրում ընթացող պետականաշինության գործընթացը նախադրյալներ էին Փարիզի ինտերնացիոնալի միջազգային խորհրդաժողովում մասնատված Հայաստանի տարածքային ամբողջականության վերականգնման հարցը բարձրացնելու համար: Այս տեսանկյունից աշխատության մեջ հանգամանորեն ներկայացված են թե՛ հայ քաղաքական շրջանակների դիրքորոշումը այդ հարցի վերաբերյալ, թե՛ Փարիզի խորհրդաժողովում ՀՀ պաշտոնական պատվիրակության (նախագահ՝ Ավետիս Ահարոնյան) և Ազգային պատվիրակության (նախագահ՝ Պողոս Նուբար փաշա) միջև տարաձայնությունները «Միացյալ Հայաստան» հասկացության բովանդակության, ապագա Միացյալ Հայաստանի ղեկավար քաղաքական ուժի հարցերում: Ա. Հակոբյանի իրավացի է՝ կարծելով, որ Պ. Նուբար փաշայի և նրան աջակցող Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության (ՀՍՌԿ) ու Հայ ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) անդամների սխալը իրական Հայաստանի Հանրապետության գործոնի կարևորությունն ու առաջնայնությունն անտեսելն էր. Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծումը ՀՀ առանցքի շուրջ հայկական մնացյալ հողերի միավորմամբ ապահովելու պահանջի փոխարեն նրանք Արևմտյան Հայաստանի (Տաճկահայաստանի) հարցը կտրում էին իրատեսական հիմքից և, Միացյալ ու Անկախ Հայաստան ասելով, հասկանում էին արևմտահայկական նահանգներն ու Կիլիկիան միասին՝ կասկածի տակ առնելով ՀՀ գոյությունը: Ա. Հակոբյանի գնահատմամբ, հայկական պաշտոնական և ազգային պատվիրակությունների պահանջների ու մոտեցումների տարբերությունները հարթելուն ուղղված կարևոր քայլ էր 1919 թ. փետրվարի 12-ին Ա. Ահարոնյանի և Պ. Նուբարի կողմից հայ ժողովրդի բաղձանքներն արտահայտող Հուշագրի ստորագրումը: Դրանով Դաշնակից տերություններից պահանջվում էր ստեղծել Միացյալ և Անկախ Հայաստան՝ նրանում ներառելով արևմտահայկական

յոթ նահանգները, Հայաստանի Հանրապետությունը, Կիլիկիան՝ ելքով դեպի Սև ու Միջերկրական ծովեր: Նշելով, որ Հուլիանոսը արդյունք էր Ազգային պատվիրակության գործունեությունը չխոչընդոտելու, հայկական երկու պատվիրակությունների համատեղ գործելու մտայնությամբ ՀՀ պաշտոնական պատվիրակության նախագահի գիշումների, հեղինակը նկատում է. «Ա. Ահարոնյանի վարքագծի վրա, անշուշտ, ազդեցություն են ունեցել գաղութահայության ընդհանուր ոգևորությունն ու հոգեբանական ճնշումները, որոնց պայմաններում նա, փաստորեն, անտեսելով կառավարության անհամեմատ համեստ հրահանգները, ստորագրեց Փարիզի խաղաղության համաժողովին ներկայացվող՝ ծովից ծով Հայաստան ստեղծելու պահանջների հուշագրի տակ, որը, անշուշտ, լուրջ չեղում էր Հայաստանի կառավարության հրահանգից և իրատեսական չէր» (էջ 62):

Հայաստանի առաջին հանրապետությունն այն հիմնասյունն էր, որը հնարավորություն ընձեռեց պետական-ինստիտուցիոնալ մակարդակով օրակարգ բերել Հայաստանի երկու մասերի միավորման՝ Միացյալ և Անկախ Հայաստանի հիմնանպատակը: Այդ գաղափարի նյութականացման նպատակով 1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի կառավարությունը պաշտոնապես հռչակեց Միացյալ Հայաստանի անկախությունը և պետական ու հանրային մակարդակով ջանքեր գործադրեց այն իրականացնելու ուղղությամբ: Ա. Հակոբյանի համոզմամբ, Միացյալ Հայաստանի հիմնանպատակի իրագործումն այն ժամանակվա պայմաններում միանգամայն իրատեսական էր, եթե ՀՀ կառավարությունն ու Ազգային պատվիրակությունը և նրանց աջակցող հայ հասարակական-քաղաքական ուժերը կարողանային վեր կանգնել նեղ կուսակցական շահերից, հավանություններից և համաձայնության գալ հայկական անկախ պետության ապագա կառավարման հարցի շուրջ: Այս հիմնադրույթներն ամփոփված են գրքի «Փարիզի արևմտահայ ազգային համագումարի դիրքորոշումը», «Միացյալ Հայաստանի անկախության ակտը», «ՀՀ կառավարության և Ազգային պատվիրակության ներկայացուցիչների բանակցությունները» մասերում: Իսկ «Ներքաղաքական պայքարի սրումը» ու «Միացյալ և Անկախ Հայաստանի տեսլականի հանդեպ կուսակցությունների ծրագրային դիրքորոշումները» մասերում պատմաբանը նաև արձանագրում է՝ իրենց մարտավարական տարբեր մոտեցումներով հանդերձ, ազգային նկարագիր ունեցող հայկական կուսակցությունները հաստատակամորեն պաշտպանել են Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը: Այս տեսանկյունից նա անուրանալի է համարում Հայ հեղափոխական դաշնակցության (ՀԾԴ) դերն ազգային անկախության նյութականացման և դրա տրամաբանական շարունակությունը կազմող Միացյալ Հայաստանի նպատակն առաջ տանելու գործում անգամ ՀՀ խորհրդայնացումից հետո: Միևնույն ժամանակ հեղինակը վեր է հանում այդ ազգային կուսակցության քաղաքական հակառակորդ ուժի՝ հայ բոլշևիկների և նրանց հետևող մյուս «ձախակողմյան» կուսակցությունների՝ էսէռների, մենշևիկների հեռահար նպատակներն ու դիրքորոշումը Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի նկատմամբ:

Ուշագրավ է Ա. Հակոբյանի անդրադարձը միջազգային դիվանագիտական գործընթացներում Հայաստանի մանդատի և քրդական գործոնի հարցերին:

1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի նոյեմբերի 22-ի իրավարար վճիռը հայ-թուրքական սահմանի վերաբերյալ, Ա. Հակոբյանի գնահատմամբ, անհերքելի, անժամանցելի պատմական, իրավական ու քաղաքական փաստաթղթեր են՝ հայ ժողովրդի՝ դարերով երազած պատմական Հայրենիքի վերատիրման գաղափարի իրավապայմանագրային մարմնավորումները: Այդ փաստաթղթերի կենսագործմամբ Հայկական հարցը կլուծվի ամբողջությամբ: Այս միտքն է շեշտված մենագրություն «Միացյալ և Անկախ Հայաստանի ամրագրումը Սևրի պայմանագրում» մասում: Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է նաև 1920 թ. բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի ծավալապաշտական նկրտումներն ու քաղաքականությունը ՀՀ-ի նկատմամբ, թշնամուն դիմակայելու Հայաստանի կառավարության փորձերը, Ազգերի լիգային ՀՀ անդամակցության հարցը, թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտության աղետալի հետևանքները: Անդրադարձ կա նաև 1921–1923 թթ. Լոնդոնի և Լոզանի միջազգային խորհրդածրոյվներում Հայկական հարցի քննարկումներին:

Մեր ժամանակներում Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի նյութականացման վառ վկայություններն են հայկական երկու՝ ազատ ու անկախ հանրապետությունները՝ Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը, հետագայում Միացյալ Հայաստանի հեռանկարով: Ա. Հակոբյանի համոզմամբ, արդի ժամանակաշրջանում այդ գաղափարի կենսունակության վկայությունն է նաև շուրջ 10 միլիոնանոց Սփյուռքը: Պատմաբանը հավատում է, որ օտար ափերում հային հայ պահող, գլորալացման, ձուլման, փոշիացման ամենակուլ վտանգներից պաշտպանող Միացյալ և Անկախ Հայաստանի երազանքը վաղ, թե ուշ սփյուռքահայերին վերադարձնելու է Հայրենիք: Այդ երազանքն ու գաղափարը կենսարթուն պահելը, հեղինակի դիպուկ գնահատմամբ, նաև ազգային անվտանգության խնդիր է: Այն նաև ուղղակիորեն կապված է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հատուցման՝ հայրենատիրման հիմնահարցերի հետ: «—Յուրաքանչյուր կենսունակ ազգ-ժողովուրդ ունի պատմականորեն ձևավորված որոշակի ազգային քաղաքական իդեալ: Ազգային-հավաքական իդեալ չունեցող և դրան չձգտող ժողովուրդը ապագա չի ունենա: Նա, ի վերջո, կձուլվի ու կվերանա: Այդ տեսլականը համայն հայության համար, կարծում ենք, եղել է ու կմնա Միացյալ և Անկախ Հայաստանի հայրենատիրման գաղափարը»,— շեշտում է Ա. Հակոբյանը և եզրակացնում. «Հենց սրանում է «Միացյալ և Անկախ Հայաստանի» պատմական ակտի 100-ամյակի խորհուրդը» (էջ 209–210):

Ա. Հակոբյանի ուսումնասիրությունը գրված է գիտական հանրամատչելի լեզվով, ներկայացված պատմական փաստերն ամբողջացված են արխիվային լուսանկարների միջոցով: Աշխատանքը կշահեր, եթե դրանք ունենային համապատասխան մակագրություններ, բացատրություններ՝

Հասցեագրված ընթերցող լայն շրջանակին: Ուսումնասիրության հղումներում նկատելի են որոշ վրիպումներ: Մասնավորապես մի քանի աշխատությունների դեպքում հղումներում կրկնված են դրանց հատորին, հրատարակության վայրին և տարեթվին վերաբերող տվյալները, որոշ դեպքերում աշխատությունների տվյալների փոխարեն պետք է գրված լիներ «նույն տեղում» արտահայտությունը, իսկ նույն հեղինակի երկու և ավելի թվով աշխատությունների պարագայում «նշվ. աշխ.» արտահայտության փոխարեն ուղղակի պետք է նշված լինեին աշխատության վերնագրերը: Մենագրությունը նաև գերծ է լեզվաոճական անհարթություններից, տպագրական վրիպակներից:

Ինչևէ. Ա. Հակոբյանը կատարել է գնահատելի աշխատանք. մենագրությունն ունի գիտական և քաղաքական կարևորություն: Ցանկալի կլիներ, որ գիրքն ունենար անգլերեն և ռուսերեն ամփոփումներ՝ նաև օտարալեզու ընթերցողին հասանելի լինելու համար:


ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, պատմագրություն: Հեղինակ է 2 մենագրության, 5 գիտամեթոդական ձեռնարկի և 40 հոդվածի: lilithovannisian@yahoo.com

ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ. Արքայատոհմերն ու իշխանատոհմերը ԲուՆ Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար (Պատմա-աղբիւրագիտական քննութիւն), Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, 2020, 440 էջ, + Դ յաւելուած-ներդիր [«Ուռենի» հայագիտական մատենաշար. Բ]՝:

Բանալի բառեր՝ հայագիտութիւն, կովկասագիտութիւն, Աղուանքի պատմութիւն, Աշխարհացոյց, վիճագրագիտութիւն, թագավորական իշխանութիւն:

Գիտական հանրութեանը ներկայացված այս մենագրութիւնը նոր քայլ է կովկասյան կամ Բուն Աղուանքի և Հայոց Արեւելից կողմանց (Արցախ և Ուտիք նահանգների) պատմութեան հետազոտութեան բնագավառում: Այն հեղինակի անցած գիտական ողջ ճանապարհի հանրագումարն է: Առաջին անգամ չէ, որ քննարկվում կամ գրախոսվում են Ալեքսան Հակոբյանի հետազոտութիւնները: Դրանց մեջ առաջնեկներից է գերմանացի միջնադարագետ-բյուզանդագետ Հանս Դիտտենի և մեր կողմից “Klio” ամսագրում տպագրված ընդարձակ գրախոսութիւնը, որի հրատարակումը հնարավոր դարձավ միայն բեռլինյան պատի փլուզումից հետո¹: Գրախոսութիւնը վերաբերում էր Ա. Հակոբյանի առաջին



ուռենին մենագրութիւնը (1987 թ.), որն իր ընդգրկմամբ նոր արահետներ բացահայտեց կովկասյան Աղուանքի անտիկ և վաղ միջնադարի պատմութեան, ինչպէս նաև՝ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ի քննական հետազոտութեան բնագավառում: Ներկա մենագրութիւնը, որի երկունքը խաչաձևվել է նրա՝ գրեթէ քսանամյա բուռն հասարակական գործունեութեան և պետական կառույցներում ստանձնած աշխատանքի հետ: Գիրքը հրատարակվել է Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի և «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի մեկենասութեամբ: Հետազոտութիւնը հեղինակը նվիրել է իր «գիտական ու քաղաքական մարտակից» ընկեր և «Ուռենի»

* Ներկայացվել է 31. VIII. 2020 թ., ընդունվել է տպագրութեան 07. IX. 2020 թ.:

¹ A. Bozoyan, H. Ditten. A. A. Акопян. Албания–Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, с. 304; “Klio” (Berlin), 1990, № 1 (72), S. 347–355. Տե՛ս նաև P. D o n a b e d i a n. Une nouvelle mise au point sur l’Albanie du Caucase. – “Revue des études Arméniennes” (Paris), t. XXI, 1988–1989, pp. 485–495.

Հայագիտական մատենաշարի նախաձեռնող, ազգագրագետ, «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Համբարձում Գալստյանի հիշատակին: Իբրև բնաբան՝ աշխատությունը կցված է 1992 թ. վերջինիս հայտնած հետևյալ միտքը. «... եթե բախտ ունենամ մեկ անգամ էլ ծնունել ու մարդու տեսքով աշխարհ գալ, ապա այդ բոլոր յիմարութիւնները թողնելու եմ ու միայն պատմութեամբ եմ զբաղուելու»:

Ա. Հակոբյանն այսօրվա պատմագրության տեսանկյունից այսպես է բնութագրում ներկայացված աշխատանքի թեմատիկան և իր որդեգրած սկզբունքները. «... ներկայումս էլ չափազանց արդիական են մնում կովկասեան Աղուանքի եւ Հայոց Արևելից կողմանք երկրամասի անկողմնակալ ու խորը հետազոտութիւնները: Դա իրօք մեր օրերի Հայագիտութեան եւ կովկասագիտութեան կարեւոր բնագաւառներից մէկն է, որի ուսումնասիրութիւնն անհրաժեշտ է կատարել թէ՛ լայնութեամբ, այսինքն՝ աղբիւրագիտական նորանոր, այդ թւում՝ նորայայտ մատենագրական, վիմագրական եւ հնագիտական նիւթերի ընդգրկումով (նաեւ՝ մասսայականացումով), եւ թէ՛ խորութեամբ, այսինքն՝ այդ նիւթերի հետազոտութեան մակարդակը մշտապէս պահելով դասական եւ ժամանակակից գիտութեան տեսական մշակումների ճշմարիտ բարձրութեան վրայ» (էջ 9): Նյութի ամբողջական հետազոտության և քննարկվող հարցերի շուրջ լիակատար պատկերացում ստեղծելու միտումով հեղինակը ուսումնասիրության նյութ է դարձրել անտիկ, վաղ միջնադարի և դարգացած ավատատիրական հարաբերությունների դարաշրջանների խնդիրները, թեպետ գիտակցում է, որ պահանջվող ծավալի մեջ հնարավոր չէ անհրաժեշտ մանրակրկիտություն ապահովել հիշատակված դարաշրջանների պատմության առաջ քաշվող հիմնահարցերի համապարփակ քննության համար: Մենագրության մեջ Ա. Հակոբյանը շեշտադրում է IX–XIII դդ. ժամանակահատվածը, որն ինքնին բարդ ու տարաբնույթ հարցադրումներ պարունակող դարաշրջան է՝ լի պատմաքաղաքական, բանասիրական, լեզվաբանական, պատմաաշխարհագրական, ազգագրական, մատենագրական, վիմագրագիտական, տոհմաբանական և անգամ անձնականագիտական (պրոսոպոգրաֆիկ) հարցադրումներով, որոնց լուծումը պահանջում է հնարավորինս սպառիչ գիտական քննություն, իսկ դրանց լուծումներն ապահովում են ճշգրիտ պատկերացումներ IX–XIII դդ. Հայոց Արևելից կողմանց և հարակից երկրամասերի ավատատոհմերի վերաբերյալ (էջ 10): Հեղինակն ընդգծում է նաև, որ վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում Բուն Աղուանքի և Հայոց Արևելից կողմանց էթնոքաղաքական պատմությանն ու պատմական աշխարհագրությանը վերաբերող հետազոտություններին զուգահեռ՝ նա իր ուշադրությունը մեծապես սևեռել է մատենագրական աղբյուրների գիտաքննական բնագրերի կազմման և վիմագրական նորահայտ նյութերի վերծանության ու հրատարակման վրա: Աղբյուրագիտական հետազոտությունների այդ էապես նոր ծավալը հնարավորություն է տվել ուսումնասիրողին նորովի ընկալել ու գնահատել գրականության մեջ վաղուց արժարժվող բազմաթիվ հիմնախնդիրներ և վարկածներ, լուսաբանել Բուն Աղուանքի ու Հայոց Արևելից կողմանց իշխանատոհմերի և արքայատոհմերի մասին մեր գիտելիքները, ի հայտ

բերել ու այսօրվա պատմագրական հենքի վրա հնարավորինս մանրակրկիտ հետազոտել պահպանված պատմաաշխարհագրական և վիճակագրագիտական նյութերը:

Մենագրությունից առաջին գլուխը՝ «Բուն Աղուանքը եւ Հայոց Արցախ – Ուտիք երկրամասերը անտիկ շրջանում», սկսվում է անտիկ շրջանի հիմնահարցերի մանրամասն քննարկումով: Հեղինակը ցույց է տալիս, որ անտիկ շրջանում Աղուանքի արքայատոհմը, ըստ ամենայնի, էթնիկապես բուն-աղուանական է եղել ու մնացել այդպիսին մինչև Ք. Տ. III դար: Նա կարողացել է հաջողությամբ տեղորոշել Կլավդիոս Պտղոմեոսի և մյուս հունահռոմեական մատենագիրների երկերում թվարկված՝ Աղուանքի բոլոր գետերն ու քաղաքները (դրանց քարտեզը գրքի վերջում դրված Դ հավելված-ներդիրներից մեկն է): Ա. Հակոբյանին նաև հաջողվել է պարզաբանել, որ Կուր գետի աջափնյակի՝ հետագա Արցախ – Ուտիքի, բազմացեղ, բայց առավելապես՝ հնդեվրոպական (նախահայալեզու) բնակչությունը մասնակցել էր հայ էթնոսի կազմավորման հենց հիմնական փուլին Բիսյնական–Ուրարտական պետությունից մեջ ընթացած էթնոհամախմբմանը՝ էթնոմիքսացիայի (էթնոմիաձուլախառնման) եղանակով, որն ավարտվել էր Ք. ա. VII դ. առաջին կեսին:

Դեռևս իր նախորդ աշխատանքներում Ա. Հակոբյանը քննարկել է V դ. կեսից հետո Աղուանք հասկացության ձևաբանությունը բերած նոր իմաստը՝ համադրելով մեզ հասած անտիկ սկզբնաղբյուրների պատմաաշխարհագրական տեղեկությունները վաղ և զարգացած ավատատիրության դարաշրջանից պահպանված նյութի հետ: Ներկա աշխատանքում շեշտադրումը տեղափոխված է Բուն Աղուանքում իշխող տեղական հարստության կամ արքայական ընտանիքի ինքնություն խնդիրների վրա՝ քննարկելով նրանց Արշակունյաց կամ Սասանյան ծագում վերագրելու մասին սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների պատմաքաղաքական ակունքները: Այս հատվածում կարևոր դեր է ստանձնում IV դ. սկզբին քրիստոնեություն ընդունումը, որին բացառիկ նշանակություն է տրվում այսրկովկասյան պետությունների ու կառավարող հարստությունների գործունեությունը գնահատելու և իմաստավորելու խնդրում: Հենվելով իր իսկ կողմից մանրամասն հետազոտված «Վաչագանի վէպ»-ի վրա և վերակազմելով III–VI դդ. ընթացքում Բուն Աղուանքում հիշատակված թագավորների ցանկը՝ հեղինակը ցույց է տալիս, որ նոր կրոնի ընդունումը կապված է ոչ թե՛ Ուտնայր թագավորի, այլ՝ նրա պապ Վաչագան Քաջի գործունեության հետ (էջ 66–77): Կարելի էր, թերևս, այստեղ շեշտադրումները խտացնել իշխող հարստության կողմից քրիստոնեությանը հատկացրած դերի, Կապադակ և Չող նստավայրերում սրբացված վկաների պաշտամունքի, քաղաքացիական ու հոգևոր իշխանությունների համագործակցության խնդիրների վրա: Ա. Հակոբյանը նաև փաստարկված պարզաբանել է, որ IV դարում Հայոց Արևելից կողմանց կուսակալ իշխանությունները՝ Գարգամանացիներ, Ծավղեացիներ և Սյունիքից անջատված Գորդոկացիներ («Գարգարացիք»), Մեծ Հայքի արքայի անունից բղեչխական զինական գործառույթներ են իրականացրել Կուրի ձախափնյա Աղուանից ու Բաղասականի թագավորությունների նկատմամբ՝ կրելով

գլխավոր պատասխանատուությունը նրանց արտաքին (հյուսիսային) սահմանների պաշտպանության խնդրում: Կատարելով նուրբ պատմաբանասիրական հետազոտություն՝ հեղինակը սրբագրել է իր իսկ տասնամյակներ առաջ կատարած եզրակացությունը և վերաթվագրել Մովսես Դասխուրանցու երկում օգտագործված «Գալազանագրքի» ու «Վաչագանի վեպ»-ի շարադրման ժամանակը և Աղուանքի գլխավոր եկեղեցական աթոռի՝ Չողից (Դերբենդ) աջափնյա Պարտավ տեղափոխությունը: Հենց այդ հիմքի վրա էլ նա նշանավոր Աղուէնի ժողովը թվագրում է VI դ. երկրորդ տասնամյակի կեսով (էջ 94–111):

Առաջին գլխում հեղինակի կատարած պատմաաշխարհագրական ճշգրտումների մեջ ուշադրություն է արժանի Ստրաբոնի հիշատակած Կոմիսենե «եպարխիայի» (գավառի) տեղորոշումը կենտրոնական Արցախում ու դրա համադրումը «Աշխարհացոյցի» Մեծ Կուանք (Մեծ Կողմանք) գավառի հետ (էջ 59), ինչպես նաև ստրաբոնյան Օրխիստենե «եպարխիայի» մոտավոր սահմանների ճշտումը (էջ 58–61): Մաշտոցի և Բենիամին աղուան վարդապետի ստեղծած աղուանական գրերի և Սինայի կրկնագիր ձեռագրի մասին խոսելիս (էջ 91), կարծում ենք, արդարացիված կլիներ նաև Շառլ Ռընուի նորագույն հետազոտության եզրակացությունների հանգամանալից օգտագործումը՝ ցույց տալու համար կովկասյան երեք երկրների ծիսական գրականության սնուցման միևնույն սկզբնաղբյուրը²:

Երկրորդ գլխի՝ «Իսկ Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմունքը վաղ միջնադարում» երկրորդ բաժինն անվանված է «Արցախի եւ Ուտիքի վաղ միջնադարեան սկզբնաղբյուրների նոր գնահատականներ» (էջ 111–148): Արժեքավոր են հեղինակի դիտարկումները վաղ միջնադարի եզակի վավերագրեր «Ձորանամակի» ու «Գահնամակի» թե՛ բնագրերի վերականգնման, և թե՛ թվագրման հարցերում (էջ 126): Մինչ այժմ գիտության մեջ տարածված է եղել այն կարծիքը, թե VII դ. սկզբներին կայացած «Պարսից ժողովում» քննարկվել են միայն հոգևոր-դավանաբանական խնդիրներ: Ա. Հակոբյանը մեծացնում է այդ ժողովում արձարծված հարցերի շրջանակը՝ դրանց ավելացնելով նաև մի շարք քաղաքական խնդիրների քննարկում, ինչը նա անում է բազմաշերտ ենթադրությունների ու պատմական զարգացման սեփական սխեմայի հիմքի վրա: Թեպետ դեռ հարց է առաջանում, արդյոք եկեղեցական ժողովը կարո՞ղ էր իրեն վերապահել հիշատակված քաղաքական խնդիրների լուծումը: Մի՞թե նման հանդգնություն թույլ կտային Պարսկաստանի պաշտոնական կրոնի՝ զրադաշտականության հոգևոր առաջնորդներն ու Սասանյան տիրակալները, այս դեպքում՝ Խոսրով Բ Ապրուեզը, որը, ըստ ժամանակակից Սեբիոս պատմիչի, նախագահում էր այդ ժողովում (Վրկանի հայ մարզպան Սմբատ Բագրատունու հետ): Բնագրագիտական կարևոր նորույթներ են պարունակում նաև «Աշխարհացոյցին» և Մաշտոց եղիվարդեցի կաթողիկոսի «Պատմութեանը» նվիրված հատվածները:

² Ch. Renoux. Le lectionnaire Albanien des manuscrits Géorgiens palimpsestes № Sin. 13 et № Sin. 55 (X^e–XI^e s.). Essai d'interprétation liturgique, Brepolis, Turnhout, 2012 [Patrologia Orientalis, t. 52, fasc. 4, № 234].

Մենագրության երրորդ գլխի վերնագիրն է «Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց իշխանատոհմերը Արաբական խալիփայութեան թուլացման շրջանում» (էջ 157–222): Քննելով «Իշխան Աղուանից» հաստատության ստեղծման և «Առանշահիկ» ու «Միհրանեան» իշխանատոհմերի խնդիրը՝ հեղինակն անցնում է Խաչենի Առանշահիկների և Շաքիի Բագրատունիների հզորացման հետ կապված հարցերին: Այստեղ Ա. Հակոբյանը «տեխնիկական» սխալ է համարում Թովմա Արծրունու մոտ Շաքիի իշխան Սահլի հիշատակությունը, բանավիճում է բյուզանդագետ Կոնստանտին Ցուկերմանի հետ՝ մերժելով Շաքիի և Խաչենի ապստամբների նույնականությունը (էջ 181): Հեղինակը, այնուամենայնիվ, զարգացնում է այն միտքը, որ VIII դ. վերջին իրապես հնարավոր էր Բագրատունիների ճյուղերից մեկի հաստատումը Բուն Աղուանքում և IX դ. վերջում նրանց կողմից թագավորական իշխանության ձեռքբերումը (էջ 189): Գլխի երրորդ բաժինը վերնագրված է «Կենտրոնական Արցախի (Խաչէնի) գավառաբաժանումը վաղ եւ զարգացած միջնադարում» (էջ 193–212): Պատմաաշխարհագրական բազմաթիվ ճշգրտումներով շարադրված այս հատվածը կարելի է համարել հեղինակի ներդրումն Արցախի պատմական աշխարհագրության իմաստավորման ու ամբողջական պատկերի վերականգնման բնագավառում (գրքի ներդիր-հավելվածներից մեկը հենց նրա կազմած քարտեզն է՝ «Արցախը եւ Ուտիքը ըստ «Աշխարհացոյց»-ի»): Գլխի չորրորդ բաժինն անվանված է «Մահմեդական ամիրայութիւնների ձեւավորումը Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց առանձին հատուածներում» (էջ 212–222): Սկսելով արաբական տիրապետության հաստատման դարաշրջանից՝ հեղինակն անդրադառնում է Շիրվանի, Գանձակի, Դերբենդի ամիրայութիւնների ստեղծմանը և այս գավառներ գաղթած տարբեր ցեղախմբերի՝ շայբանի-արաբների, քրդերի ու այլոց դերին, տարածաշրջանի մյուս ժողովուրդների հարևանությունը: Այստեղ կարելի էր խոսել նաև մահմեդական ու քրիստոնյա ժողովուրդների համակեցություն մի շարք կանոնների մասին. օրինակ՝ այն, որ մահմեդականները հիմնականում բնակություն էին հաստատում դաշտավայրի քաղաքներում, իսկ քրիստոնյաները հետզհետե բարձրանում էին լեռները:

Մենագրության չորրորդ գլուխն անվանված է «Թագաւորական իշխանութիւնների հաստատումը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում Թ–Ժ դարերում» (էջ 223–249): Շաքի կենտրոնով Համամ Բարեպաշտ Բագրատունու թագավորության ձեւավորմանը նվիրված բաժնում փորձ է կատարված ի մի բերել տարածաշրջանի մասին այլալեզու բոլոր տեղեկությունները մինչև X դ. առաջին կես, իսկ հաջորդ բաժնում քննարկված է Փառխոսի թագավորության ստեղծման և նրա կարգավիճակի խնդիրը: Մեր կարծիքով, այս բաժնում տեղին է Կ. Ցուկերմանի պնդմանը վերաբերող այն դիտողությունը, ըստ որի՝ Կոստանդին Ծիրանածնի հիշատակած Աևորդիքը չի կարելի ընկալել Մեծ Հայքի սահմաններից դուրս: Այստեղ կարևորվում է նաև դեռ Ն. Ադոնցից եկող այն պնդումը, թե Դավիթ Տայեցի կյուրապաղատն է Բյուզանդական կայսրության անունից թագ ուղարկել Փառխոսի տիրակալ Հովհաննես-Սենեքերիմին (էջ 233–242): Այս գլխում խոսվում է «էթնոսեպարացիոն» (էթնոմասնատման)

գործընթացների մասին. հատկապես հետաքրքիր է Ա. Հակոբյանի կողմից նկատված Մովսես Դասխուրանցու երկի այն միտումը, ըստ որի՝ Շաքիի Համամ Բագրատունու թագավոր դառնալու հանգամանքը միջնադարյան հեղինակը հակադրում է Փառխոսի Հովհաննես-Սենեքերիմի և մյուս արցախյան իշխանությունների (Խաչեն, Գորոզու) մեջ X դ. սկսված նույնանման գործընթացներին: Երրորդ բաժնում, որն անվանված է «Գորոզուի եւ Խաչենի թագաւորութիւնների կազմաւորումը» (էջ 242–249), հեղինակը նորահայտ վիմագրական արձանագրությունների հրապարակումով փաստում է հիշյալ երկրամասերում թագավորական իշխանության գոյությունը (էջ 243): Ամփոփելով իր արժեւորած՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի Հանրապետություն) Հաղորդի շրջանի Տումի գյուղի և Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղի վիմագրերը՝ հեղինակն անդրադառնում է Գորոզուի X դ. վերջին «թագաւոր» հորջորջված իշխանաց իշխաններին:

Աշխատանքի հինգերորդ գլխում «Թագաւորութիւնների անկման շրջան»-ը, Ա. Հակոբյանը նոր վիմագիր արձանագրությունների վերծանմամբ շարունակում է Գորոզուի իշխանության մեջ մտնող Ուտիքի և Արցախի գավառների տեղադրության հետ կապված իր ճշգրտումները: Գլխի երկրորդ բաժինն անվանված է «Թագաւորութիւնների անկումը ԺԱ դարում», իսկ երրորդ բաժինը՝ «Բուն Աղուանքի արեւելեան հատուածի ամիրայութիւնները ԺԱ–ԺԲ դարերում եւ Դերբենդի հայ թագաւորների խնդիրը»: Հեղինակի եզրահանգումները Սելջուկյան շրջանում տարածաշրջանի քաղաքական միջավայրի մասին կլինեին ավելի համոզիչ, եթե նա հանգամանալից օգտագործեր տարածաշրջանի հետ կապ ունեցող ամբողջ դրամագիտական նյութը, որի մասին ժամանակին ընդգրկուն հետազոտություններ է հրապարակել նաև Տիգրան Գույումճեանը³:

Մենագրության վերջին վեցերորդ գլուխն անվանված է «Խաչենի իշխանատոհմը XII–XIII դարերում» (էջ 292–351): Այստեղ խոսվում է XII դ. Խաչենի իշխանության հզորացման գործընթացի մասին: Հեղինակն իրավացիորեն նույնացնում է Խաչեն և Խոխանաբերդ տեղանունները: Վիմագիր արձանագրությունների ընթերցման հիմքի վրա Ա. Հակոբյանը փորձում է ճշտել Մխիթար Գոչի ճանաչած Հասան Մեծ Կրոնավորյալի տոհմածառը (Խաչենի իշխանաարքայատոհմի ամբողջական տոհմածառ-

³ Տե՛ս D. Kouymjian. A Numismatic history of Southeastern Caucasus and Adherbayjān Based on the Islamic Coinage of the 5th/11th to the 7th/13th Centuries. New York: Columbia University, Doctoral Dissertation, 1969; ն ու յ ն ի՝ A Historical and Dynastic Survey of Caucasia, Eastern Anatolia and Adharbayjan from the Xth to the XIIIth Centuries, – Haigazian Armenological Review, vol. II (1971), pp. 99–122; ն ու յ ն ի՝ Three Unique Gold Coins of the Eldigūzide Athabegs of Nortwestern Iran. – Actes du 8^{ème} Congrès International de Numismatique, New York-Washington, vol. VIII (September 1973, published 1976), pp. 527–541; ն ու յ ն ի՝ A Unique Coin of the Shirvān-shāh Minūchihir II dated A.H. 555/ 1160 A.D., – Near Eastern Numismatics, Iconography, Epigraphy and History; Studies in Honor of George C. Miles. Beirut: American University of Beirut, 1974, pp. 339–346.

աղյուսակը տպագրված է գրքի ետևի կազմաստառին): Ծարի իշխանաճյուղին (Դոփյաններ) վերաբերող բաժնում հեղինակը ճշտում է նաև Հաղբատի՝ Հովհաննես անունով մի քանի առաջնորդների ինքնությունը, օգտագործելով վիմագիր արձանագրությունների նյութը՝ փորձում է հստակություն մտցնել այդ իշխանատոհմի տոհմաձառի մեջ: Ըստ նրա՝ 1214 թ. հետո Ծարի իշխանությանը միացվել էր նաև Վերին Խաչենը: Խոյղան-Աթանաս համադրմամբ էլ փորձում է լուծել Հասան Մեծի ընտանիքի մասին Դադիվանքի արձանագրության շեղումը (էջ 327): Գլխի երրորդ բաժինն անվանված է «Ներքին Խաչենի – Խոխանաբերդի իշխանաճյուղը (Հասան-Ջալալյաններ)»: Այստեղ հիմնվելով նորովի ճշգրտված-վերծանված վիմագիր արձանագրությունների վկայությունների վրա՝ Ա. Հակոբյանը լուսաբանում է Սակոեան անունով հայտնի իշխանաճյուղի հետ կապված թյուրըմբռնումը, նույնականացնում է Իվանե-Աթաբակ-Խերխանին՝ Հասան-Ջալալի որդուն (էջ 343–344), պարզաբանում նրա մոր՝ Մամքանի՝ Դսեղի Մամիկոնյանների տոհմին պատկանելը: Սպասելի էր, որ այս գլխում հեղինակն ավելի ամբողջական կենսագրի Հայոց Արևելից կողմանք եզրույթը, որի սահմանները զարգացած միջնադարում, բացի Արցախից և Ուտիքից, երբեմն ընդգրկում էին նաև Գուգարքն ու Սյունիքը, իսկ Կիլիկյան Հայոց պետականության ձևավորման հետ՝ գրեթե ողջ պատմական Այրարատ նահանգը: Խոսելով Շաքիի, Փառխոսի, Խաչենի և Գորոզուի թագավորություն-իշխանությունների մասին՝ արժեք անդրադառնալ նաև դրանց քաղաքական բովանդակությանն ու տարածաշրջանում ունեցած կշռին: Այստեղ արժեք անդրադարձ կատարել այդ արձանագրություններում «թագավոր», «իշխան», «պետություն» եզրույթների նշանակությանը, դրանց պատմական տարողությանը: Հայտնի է, որ հիշատակված եզրույթներից առաջինով վիմագիր արձանագրություններում բնորոշվում է նաև Վրաց թագավորներին ստորակա Ջաքարյանների իշխանությունը՝ ի հակադրություն այդ մասին լռող պատմագրական երկերի:

Ա. Հակոբյանի աշխատանքի ընկալմանը նպաստում են հավելվածում դրված գրչանկարները, Մովսես Դասխուրանցու երկի ձեռագրերի ճյուղագրությունը, տոհմաբանական աղյուսակներն ու քարտեզները: Ի լրումն կատարված աշխարհագրական բազմաթիվ դիտողությունների ու ճշգրտումների՝ հեղինակը հավելվածում գրել է նաև IX–XIII դդ. Բուն Աղուանքի և Հայոց Արևելից կողմանց թագավորությունների ու իշխանությունների քարտեզը, որով ավելի ընկալելի է դարձրել վերջին երկու գլուխներում քննարկման առարկա դարձած նյութը և ամբողջական պատկերացում ստեղծել տարածաշրջանի պատմաքաղաքական գործընթացների վերաբերյալ: Գրքի վերջում տրված են օգտագործված աղբյուրների և գրականության ընդարձակ ցանկը, անձնանունների, հեղինակների, տեղանունների ու ցեղանունների խնամքով կազմված ցանկերը:

Միջնադարին վերաբերող պատմաաղբյուրագիտական հետազոտությունները, որոնք պահանջում են պատմության, սկզբնաղբյուրների, ձեռագրագիտության, բարբառագիտական նյութի, աշխարհագրության, տոմարի, ծածկագրության և վիմագրագիտության գրեթե հանրագիտարանային իմացություն, ցավոք, այսօր գրավում են եզակի հետազոտողների:

այդ բուլլում է Ա. Հակոբյանը: Նա յուրաքանչյուր հարմար առիթով փորձում է ճշգրտել իր օգտագործած և այս աշխատանքի նյութ դարձած բոլոր սկզբնաղբյուրների գրութային թվականը, հեղինակին ու երկի գրութային միջավայրը, գաղափարախոսական դաշտը, շարադրված իրադարձությունների իսկությունը, հաճախ վերանվանում է իր հրատարակած և հետագոտած երկերը:

Աշխատանքը գրված է հստակ հայերենով, դասական ուղղագրությամբ, հայագիտության ու արևելագիտության հիմնական պահանջների հաշվառմամբ: Կատարված է մեծ ծավալի աշխատանք: Այս հետազոտությունն անկասկած կրացնի այն բացը, որ գոյություն ունեն հայագիտության ու արևելագիտության բնագավառի ուսումնասիրության ոլորտում: Ա. Հակոբյանը կարողացել է հասնել իր առջև դրված հիմնական խնդիրների լուծմանը: Հայագիտության կածաններով քայլողներին խորհուրդ ենք տալիս ընթերցել այս գիրքը:


Ա.ԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պ. Գ. Դ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արևելյան աղբյուրագիտության և պատմագրության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ բյուզանդագիտություն, հայագիտություն: Հեղինակ է 4 մենագրության և շուրջ 100 հոդվածի: bnazti@gmail.com

Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ պատմություն ինստիտուտ, 2019, 333 էջ*:

Բանալի բառեր՝ Վ. Բարխուդարյան, Հայ գաղթօջախներ, Սփյուռք, Հայկական կազմակերպություններ, դպրոցներ, Հայապահպանություն:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և սփյուռքի բաժնի նախաձեռնած «Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու» բացվում է ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Լևոն արքեպիսկոպոս Զեֆրյանի «Փունջ մը ծաղիկ շիրմիդ վրայ, սիրելի Վալդիա» հուշիչ ակնարկով: Անկեղծ ու անմիջական տողերում սրբազանը ներկայացնում է ակադ. Վ. Բարխուդարյանին՝ իր տասնյակ տարիների բարեկամին ու ընկերոջը՝ խոսելով նրա մարդկային, քաղաքացիական, գիտնականի դիմագծերի մասին:



«Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի ծննդավայր Աղբյուրփի գյուղի պատմություն» է նվիրված Արմեն Ասատրյանի (Պատմության ինստիտուտ) հոդվածը: Արխիվային

Հարուստ նյութի, ինչպես նաև ժամանակի պարբերական մամուլի ու լուսանկարների օգտագործմամբ, վեր է հանվել պատմական Գուգարաց աշխարհի Հայաբնակ այս գյուղի պատմությունը մինչ XX դարասկիզբ՝ միաժամանակ անդրադառնալով գյուղի տնտեսական, հոգևոր ու կրթական կյանքին:

Պ. գ. դ. Գևորգ Ստեփանյանը (Պատմության ինստիտուտ), հիմնվելով Հայ ու օտար աղբյուրների ու պատմագրության վկայությունների վրա, անդրադառնում է Կուր գետի ձախ ափի և գետի ստորին հոսանքից մինչ Կասպից ծովն ընկած տարածքներում՝ Բուն Աղվանքում ու Շիրվանում ապրող բնակչության, այդ թվում՝ Հայերի հոգևոր, էթնո-մշակութային, քաղաքական ու տնտեսական կյանքին, որն իր զարգացումը ստացավ հատկապես Հայերի կողմից քրիստոնեության ընդունումից հետո՝ մեծ ազդեցություն թողնելով տարածաշրջանային քաղաքականության և մշակույթի վրա: XVIII դարավերջում Իրանի Աղա Մուհամեդ շահի արշավանքների արդյունքում արցախահայության մի մասը գաղթեց դեպի Շիրվան (շուրջ 12.000 ծուխ)¹: Արցախի Զրաբերդ, Գյուլիստան, Խաչեն, Վա-

* Ներկայացվել է 15. VIII. 2020 թ., ընդունվել է տպագրության 06. X. 2020 թ.:
¹ Շամախիում և Շիրվանում XVI–XVIII դդ. Հայ բնակչության առկայության ու հետագա ստվարացման մասին տե՛ս նաև է. Թաղիրյանի «Կոռնեյ լը Բրիւնի»

րանդա, Դիզակ գավառներից գաղթականների մեծ մասը հաստատվեց Հայաստանի Նուբխի (Նուբխի) ու Շամախի քաղաքներում և շրջակա գյուղերում նպաստելով երկրամասի առևտրատնտեսական ու կրթամշակութային կյանքի զարգացմանը: Բաքվում վերաբնակեցված արցախահայերի ջանքերի ու ներդրումների շնորհիվ էր նաև այս քաղաքը դարձավ կարևոր առևտրատնտեսական կենտրոն, որի արդյունքում, հատկապես XIX դ. 70–80-ական թթ., անընդհատ ավելանում էր հայությունը հոսքն այստեղ: Համառուսաստանյան առաջին մարդահամարի (28. 01. 1897 թ.) տվյալներով Բաքվում բնակվում էր 45.402 հայ: Արցախահայերը լուրջ ներդրում ունեցան Բաքվի նավթարդյունաբերության զարգացման գործում:

Բ. գ. Բ. Սուսաննա Հովհաննիսյանի (Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ) հոդվածի թեման «Գաղութային գրականության թումանյանական ընկալում» է: Հովհ. Թումանյանը դեռ XX դարասկզբին «Վերնատան» ասուլիսներում և Թիֆլիսի ժողովրդական համալսարանի իր դասախոսություններում անդրադարձել է գաղթածախներում ապրող հայ գրողներին ու նրանց ստեղծագործություններին: Նա Ռ. Պատկանյանի, Ղ. Ալիշանի, Ս. Շահազիզի, Մ. Պեչիկթաշյանի գրականությունը համարել է «գաղութների, պանդխտության ու հալածանքի գրականություն» (էջ 63): Բանաստեղծի կարծիքով գաղթածախներում ստեղծագործող հեղինակները զուրկ չեն հայրենասիրական ոգու դրսևորումներից, սակայն հայ մարդու իրական կյանքն անծանոթ է նրանց: Այդուհանդերձ, Հովհ. Թումանյանը վստահ է, որ «անկախ ամեն ինչից անհրաժեշտ էր գաղթածախներում ստեղծված գրականությունը ընկալել միևնույն ազգային մշակույթի համատեքստում» (էջ 66):

Պ. գ. թ. Անի Ֆիլենկճյանը (Պատմության ինստիտուտ) իր հոդվածում անդրադառնում է Հալեպի հայ Կարմիր Խաչի ստեղծման հանգամանքներին և դրա շուրջ քսանամյա գործունեությանը (1919–1938 թթ.): Հիմնավորելով Հալեպում կազմակերպության ստեղծման անխուսափելի հանգամանքները (ցեղասպանությունից մազապուրծ հայության աննկարագրելի ծանր վիճակը, տնտեսական, առողջական, կրթական ու այլ խնդիրները) Բերիո Հայոց թեմի Ազգային Առաջնորդարանի արխիվային նյութերի, մամուլի և այլ աղբյուրների օգտագործմամբ հեղինակն անդրադառնում է այս օղակի գործունեությանը, նրա համագործակցությանը մարդասիրական ընկերությունների ու «Հայկական Կարմիր Խաչի» հետ:

Բոլոնիայի համալսարանի «Պատմության և մշակույթի ամբիոնի» վարիչ, հայագետ, պրոֆ. Աննա Շիրինյանը ժամանակագրական կարգով անդրադարձել է Հռոմի սրտում գտնվող երեք եկեղեցիներում առկա XVIII դ. երեք հայերեն-լատիներեն տապանագրերին: Դրանց վերծանությամբ և թարգմանությամբ հեղինակը փորձում է վերհանել երկու հոգևորական ու մեկ աշխարհական հայերի հուղարկավորության պատճառը լատին երեք

Ուղեգրությունը որպես հայ գաղթածախների պատմության ուսումնասիրման աղբյուր» հոդվածը («Էջեր հայ գաղթավայրերի պատմության» ժողովածու, խմբ. Վ. Բ. Բարխուդարեանի և Զ. Եկաևեանի, Երևան, 1996, էջ 126–128):

տարբեր եկեղեցիներում, այլ ոչ թե Հռոմի Հայոց սուրբ Մարիամ Եգիպտացի եկեղեցուն (այժմ՝ Temple de Fortuna Virilis) կից հանգստարանում²:

Բ. գ. թ. Արծվի Բախչինյանը (Պատմության ինստիտուտ) փորձել է պարզել Օվկիանոսքում (Օվկիանիայում) հայերի ներկայության ժամանակաշրջանը և պատճառները: Այս տարածաշրջանում հիշվող առաջին հայը Կ. Պոլսեցի Երվանդ Հակոբյանն էր (XX դ. սկիզբ), որի հետաքրքրությունների առարկան մարգարտի որսն էր ու տեղաբնիկների երաժշտական ֆոլկլորը, քանի որ տիրապետում էր պապուա լեզվին: Ա. Բախչինյանը նաև նշում է, որ Ֆրանսիական Պոլիտեխնիկում ևս փոքր թվով հայեր էին բնակվում: Ֆրանսահայատակ հայերից ոմանք զբաղեցրել են այդ նահանգի իշխանութայն բարձրագույն պաշտոնները: Իսկ Հավայան կղզիների փոքրաթիվ համայնքի գործունեությունը շնորհիվ իշխանությունները 2014 թ. ճանաչել են Արցախի Հանրապետությունը, ապա 2015-ին՝ Հայոց ցեղասպանությունը:

Ֆրանսիայի Պոլ Վալերի-Մոնպելիե համալսարանի պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ժերար Դեդեյանը անդրադառնում է Կրետեի արչավանքի ընթացքում հայ-արաբական խնդիրներին, կղզու վերաբնակեցմանը հայերով ու հույներով: Հետաքրքիր համեմատություն է անցկացվում Կրետեի և Կիպրոսի միջև՝ հայերի կողմից X դարում այս կղզիներում վերաբնակեցման առումով: Խոսվում է նաև XI–XII դդ. Կրետեի կառավարման մարմիններում պաշտոնավարող հայերի մասին: XIII դարակազմին, երբ Կրետեն անցավ Վենետիկի տիրապետության տակ, աշխուժացան Կիլիկյան Հայաստանի և Վենետիկի միջև հարաբերությունները: Անկասկած, Կիլիկյան Հայաստանի անկումից հետո բազմաթիվ հայեր ապաստանեցին ինչպես Կիպրոսում, Հոդոսում, այնպես էլ՝ Կրետեում:

Սորբոնի համալսարանի պրոֆ., պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Քլոդ Մուլթաֆյանի առաջին հոդվածը հայ-ֆրանսիական դարավոր առնչություններին վերաբերող պատմական ակնարկ է: Այն ներկայացված է չորս ժամանակաշրջանով, ուր կարճ ամփոփված են Ռուսաստանից և ԱՄՆ-ից հետո ամենամեծ հայկական համայնքն ունեցող Ֆրանսիայի դարավոր կապը Հայաստանի ու հայ ժողովրդի հետ:

Նրա երկրորդ հոդվածը Մոլդովայի հայ վոյեվոդների մասին է, ուր հեղինակը հատկապես անդրադառնում է Յոն Վոդային, ով, ըստ XVII դ. մոլդովացի ժամանակագիր Գրեգուար Ուրեկիի, հայկական ծագում ուներ: Նա վոյեվոդի պաշտոնը զբաղեցրել էր կարճ ժամանակով՝ 1572–1574 թթ., սակայն նրա իշխանության շրջանը հայտնի է եղել տեղական բոյարների, հոգևորականության և թուրք-թաթար զավթիչների նկատմամբ ծայրահեղ դաժանություններով, որոնց ձեռքով էլ, մատնության արդյունքում, մահապատժի է ենթարկվել: Լինելով ժողովրդի պաշտպանն ու սիրելին՝ Յոն Վոդան հերոսացվել է: Նրա եղբայրները ևս ունեցել են կարճատև իշխանություն: Պատմագիրների վկայությամբ Մոլդովայի մայրաքաղաքի տեղափոխումը Սուչավայից Յասսի ծրագրված է եղել Յոն Վոդայի կողմից, սա-

² Եպ. Ալեքսանդր Ասլանյանի տապանագրի նախկին հրատարակությունը տե՛ս Գրիգորիս Վրդ. Գալէմքեարեան. Կենսագրութիւն. Սարգիս արք. Սարաֆեան, Վիեննա, 1908, էջ 381–382:

կայն իրականացվել է վոյեվոդ Ալեքսանդր IV-ի օրոք՝ 1564–1568 թթ.: Նպատակը մայրաքաղաքը լեհական սահմաններից հեռացնելն էր:

Էլիզաբեթ Թաշիրյանը (Պատմության ինստիտուտ) իր «Մարկիզ Գրեգորիո դ'Ադդոլո (1707–1789)» հոդվածում անդրադառնում է ջուդազայ վաճառականներից մեկի կյանքին ու գործունեությանը: Գրեգորիո դ'Ադդոլոն XVIII դ. կեսերին երկու պատկերասրահ է ունեցել Վենետիկում և Ֆլորենցիայում: Նա, բացի հում մետաքսի առևտրից, զբաղվել է ժամանակի հայտնի նկարիչների կտավների հավաքմամբ և վաճառքով: Նրա հավաքածուի հայտնի կտավներից շատերն այժմ գտնվում են աշխարհի ամենահայտնի պատկերասրահներում: Գրեգորիո դ'Ադդոլոն մեծ ջանքեր է ներդրել Վենետիկի Հանրապետության, Սաքսոնիայի և Լեհաստանի միջև միջպետական առևտրային հարաբերությունների ստեղծման ու արտոնյալ պայմաններով դրանց պարբերաբար վերահաստատման ուղղությամբ, որը նրան հաջողվել է (1750–1786 թթ.): Նա սերտ կապեր է ունեցել Վենետիկի Մխիթարյան միաբանության և, հատկապես, Մխիթար Սեբաստացու հետ. այս մասին են վկայում նրա՝ հայերեն գրված նամակները միաբանության հիմնադրին:

Պ. գ. թ. Հովհաննես Ալեքսանյանն (Պատմության ինստիտուտ) իր հոդվածում անդրադառնում է Լեհաստանի հայ համայնքին՝ որպես հայկական Սփյուռքի եզակի դրսևորումներից մեկին՝ իր հարուստ պատմությամբ ու կարևոր դերով Լեհաստանի և Բալթյան տարածաշրջանի կյանքում: Հայերն ապրում են Լեհաստանում ավելի քան 650 տարի, և հայ համայնքը 2017-ին մեծ ոգևորությամբ նշել է հոբելյանը: Այս առիթով Լեհաստանի Սեյմը և Սենատը համապատասխան բանաձևեր են ընդունել, որով շնորհավորել են հայերին՝ ձեռքբերումների ու «լեհական մշակութթում ունեցած ներդրման, երկրի պատմության մեջ ստեղծագործական ներկայության համար» (էջ 203): Բալթյան երկրներում հայկական ավանդական համայնքներ չեն եղել: Համեմատաբար մեծ թվով հայեր են այստեղ հաստատվել խորհրդային տարիներին՝ հատկապես Սպիտակի երկրաշարժից հետո:

Պ. գ. թ. Սեդա Օհանյանը (Պատմության ինստիտուտ) «Պաղտատի քրիստոնեայ համայնքներու ազգային դպրոցները XIX դ. երկրորդ կեսին» հոդվածում, բազմալեզու հարուստ գրականության և արխիվային նյութի օգտագործմամբ, լուսաբանել է այս գաղթօջախում կրթական հաստատությունների պատմությունը: XIX դ. երկրորդ կեսին Բաղդադի բնիկ քրիստոնեական համայնքներն ունեին իրենց ազգային դպրոցները, որոնցից երկուսը պատկանում էին Հայ Առաքելական եկեղեցուն՝ հովանավորվելով և ֆինանսավորվելով հենց համայնքի կողմից՝ ժողովրդի հանգանակություններով: 1853 թ. Բաղդադում հիմնադրվում է առաջին իգական վարժարանը՝ Հայ Առաքելական եկեղեցուն պատկանող «Աղջկանց դպրոցը»: Իրաքը Օսմանյան լծից ազատագրելուց հետո Բաղդադի հայկական երկու դպրոցները միավորվել են մեկ Համակրթական հաստատության մեջ՝ հնարավորինս պահպանելով և ապահովելով հայկական ազգային ինքնությունը:

Պ. գ. թ. Վահե Սարգսյանի (Պատմության ինստիտուտ) «Ջավախահայության դիրքորոշումը 1991 թ. մարտի 17-ի ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվեի նկատմամբ» հոդվածը մի փաստաթղթի պատմությունն է, մի դրվագ հայության այդ մասնիկի պատմությունից: Հարկ էր լրջորեն

կողմնորոշվել, երբ 1990-ականներին, ԽՍՀՄ ճգնաժամի պայմաններում, միութենական և ինքնավար հանրապետությունների գերագույն խորհուրդներին, ինքնավար մարզերի ու օկրուգների պատգամավորական խորհուրդներին ուղարկվեց միութենական նոր պայմանագրի նախագիծը, որով նախատեսվում էր ԽՍՀՄ-ը վերածել ինքնիշխան խորհրդային հանրապետությունների միություն: Հեղինակը, ժամանակի մամուլի և գրականության հիման վրա հանգամանորեն անդրադառնալով պատմական ոչ պարզունակ ու բազմաշերտ իրադրությունը, քննելով օր առ օր զարգացող իրավիճակը Հայաստանում, Վրաստանում և, ինչու ոչ, ողջ տարածաշրջանում ու Խորհրդային Միությունում, հիմնավորում է Չավախահայություն համար 1991 թ. մարտի 17-ի հանրաքվեի անցկացման անհնարինությունը:

Պ. գ. թ. Վահրամ Ղարախանյանը (Պատմության ինստիտուտ) «Հայ հրեական առնչությունների հարցի շուրջ» պատմական ակնարկում անդրադարձել է այդ ժողովուրդների հարաբերությունների հազարամյա փոխշփոմների դրվագներին, որոնք, երբեմն ունենում էին ռազմական և քաղաքական դրսևորումներ, բայց դրանք հիմնականում մշակութային, առևտրատնտեսական բնույթ ունենին: Նա հիմնվելով հայ պատմագրության վրա, անդրադառնում է նաև այն հարցին, թե հրեաների Հայաստանում ներկայության հանգամանքը որքանով է նպաստել Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզչության, և քրիստոնեության տարածման գործում նրանց ունեցած հաջողության վրա: Հայ և հրեա ժողովուրդների կողմից պետականությունը կորցնելուց հետո ևս նրանց միջև առնչություններն ամենևին չեն դադարել: Թե՛ Հայաստանում, թե՛ Երուսաղեմում դրանք բավական սերտ են եղել: XVII դ. թուրք-պարսկական պատերազմների ընթացքում Շահ Աբասի իրականացրած բռնագաղթի հետևանքով Հայաստանի տարածքում հրեաներ համարյա չեն մնացել:

Սիյուռքահայ հայագետ, պ. գ. թ. Վարդան Մատթեոսյանը (ԱՄՆ) անդրադարձել է Միացյալ Նահանգների ներգաղթի քաղաքականությունն ու Լատինական Ամերիկայի հայ համայնքների ձևավորմանը: Ամերիկյան պատմության մեջ հայտնի փաստ է, որ նատիվիստ (բնիկապաշտ) և ազգայնական խմբավորումների անողոք քարոզչությունը նպաստեց ԱՄՆ Կոնգրեսի կողմից 1882–1924 թթ. ընթացքում մի շարք ներգաղթի օրենքների ընդունմանը: Այս օրենսդրությունն իրագործեց այդ խմբերի հետապնդման հիմնական նպատակը, այսպես կոչված, անցանկալի օտարերկրյա ներգաղթի գրեթե լիակատար արգելքը Միացյալ Նահանգներ, որը, ըստ էության, ուժի մեջ էր մինչև 1965 թվականը: Սակայն ժամանակի ընթացքում այդ օրենքը որոշ փոփոխությունների ենթարկելու հարկ եղավ: Հեղինակը, ուսումնասիրելով տարբեր տասնամյակների ԱՄՆ-ի օրենքներն այլ երկրներից եկող գաղթականության վերաբերյալ, դրանք հանգամանորեն համեմատել է Լատինական Ամերիկայի երկրների համապատասխան օրենսդրության հետ և այդ ետնապատկերի վրա հիմնվելով հայ ու օտար մասնագետների ժամանակի, ինչպես նաև նորագույն ուսումնասիրությունների, վիճակագրական տվյալների վրա՝ անդրադարձել է հայերի ներգաղթի հարցերին XIX դարավերջից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմին ու դրանից հետո ընկած ժամանակաշրջանին:

Պ. գ. թ. Քնարիկ Ավագյանը (Պատմության ինստիտուտ) «ԱՄՆ-ի հայերը XX–XXI դդ. հայ-ուսական քաղաքական հարաբերությունների հա-

մատեքստում» ծավալուն հոդվածում քննում է ԱՄՆ-ի հայ համայնքի շուրջ մեկդարյա երկդիմի դիրքորոշումը հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմական զարգացումների ընթացքում: Եթե նախկինում հայ-ռուսական դրական հարաբերություններն ուղիղ համեմատական էին Սփյուռք-Հայաստան դրական հարաբերություններին, ապա XX դարի համաշխարհային ասպարեզում, Ռուսաստանում ու Հայաստանում տեղի ունեցող քաղաքական և սոցիալ-տնտեսական սրընթաց գործընթացները քաղաքական խոչընդոտներ էին առաջ բերում Հայաստանի (հետևաբար, նաև Ռուսաստանի) և որոշ սփյուռքահայ (մասնավորապես՝ հայ-ամերիկյան) կազմակերպությունների հարաբերությունների միջև: Միջազգային քաղաքական ասպարեզում Ռուսաստանի կողմից արձանագրված հաջողությունները, հայ-ռուսական զարգացող առևտրատնտեսական, ռազմաքաղաքական համագործակցության խորացումը, Ք. Ավագյանի կարծիքով, կարող են բարենպաստ ազդեցություն ունենալ սփյուռքահայերի շրջանում և, մասնավորապես, ԱՄՆ-ի հայերի վրա: Հեղինակը եզրակացնում է, որ սփյուռքահայության մոտ Հայաստանի և նրա ռազմավարական դաշնակից Ռուսաստանի նկատմամբ վստահության վերականգնումն ու ամրապնդումը թույլ կտա վերանայել և վերագնահատել նրանց քաղաքական հայացքները:

«Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածուն» ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի համեստ ներդրումն է հայաշխարհի ուսումնասիրման անսպառ գործում:

ԷԼԻՋԱԲԵԹ ԹԱՋԻՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունը՝ հայ գաղթօջախների պատմություն: Հեղինակ է 2 մենագրության և 14 հոդվածի: elisetajiryan@yahoo.com

ՌՈՒԶԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ. Գրական վավերագրեր (1920–1930-ական թվականներ), 4. 1, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2020, 832 էջ*:

Բանալի բառեր՝ գրական վավերագրեր, 1920–1930-ական թվականներ, խորհրդահայ մամուլ, տեսական-քննադատական միտք, գրական-հանրային կյանք, «Դեկլարացիա երեքի», «Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա», գրական բանավեճեր, «Նոյեմբեր»:

Մ. Աբեղյանի անվան գրականությունից ինստիտուտի նորագույն շրջանի հայ գրականությունից բաժնի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Ռուզան Արիստակեսյանը ձեռնամուխ է եղել «Գրական վավերագրեր (1920–1930-ական թվականներ)» վերնագրով քառահատորյակի հրատարակությունը: Այն ներկայացնելու է խնդրո առարկա ժամանակաշրջանում խորհրդային մամուլում տպագրված գրական վավերագրերը, որոնք լուսաբանում են ժամանակի տեսական-քննադատական միտքն ու գրական կյանքը: Ընթերցողի սեղանին է դրվել քառահատորյակի 1-ին հատորը, որն ընդգրկում է 1922–1925 թվականները: Գիրքը տպագրության է երաշխավորել Մ. Աբեղյանի անվան գրականությունից ինստիտուտի գիտական խորհուրդը, գիտական խմբագիրն է Բ. Գ. Գ., պրոֆեսոր Դ. Վ. Գասպարյանը: 300 տպաքանակով մեծադիր էջերով (832 էջ) շքեղ հատորը տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ի տպարանում:

Գիրքը բացվում է «Խմբագրի խոսք»-ով, որին հաջորդում է «Առաջաբան»-ը: Այստեղ Ռ. Արիստակեսյանը հանգամանորեն շարադրել է քառահատորյակում ընդգրկվելիք նյութերի դասդասման սկզբունքները, այն է՝ «Համակարգված ներկայացվում են տվյալ ժամանակաշրջանի գրաքննական-տեսական միտքը և գրական-հանրային կյանքն արտացոլող վավերագրեր՝ գրախոսություններ, գրական դիմանկարներ, բանավիճային հոդվածներ, տեսական անդրադարձներ, գրական քաղաքականությունից վերաբերող կուսակցական որոշումներ, բանաձևեր, ելույթներ ու խմբագրականներ, գրական հանգանակներ ու պարբերականներ, ինչպես նաև գրական կյանքի անցուղարձ, բարքեր ու հարաբերություններ: Սա, ըստ էության, 1920–1930-ական թվականների գրական կյանքի յուրատեսակ հանրագիտարան է» (էջ 3):

* Ներկայացվել է 03. IX. 2020 թ., ընդունվել է տպագրության 25. IX. 2020 թ.:

Հատորում փաստագրական հսկայածավալ՝ 555 վավերագիր, նյութեր դասդասելիս Ռ. Արիստակեսյանն առաջնորդվել է ժամանակագրական սկզբունքով: Դա հնարավորություն է տվել գրապատմական փաստերն ու իրողությունները ներկայացնել զարգացման օրինաչափությունների ընթացքում, հասարակական-քաղաքական պայմանների և գրական-ստեղծագործական մոտեցումների հարափոփոխ շղթայում: Յուրաքանչյուր տարի ներկայացվում է հստակ բաժանումներով: Ահա, այսպիսիք.

1. Տեսական-քննադատական բաժին. այստեղ տեղ են գտել ժամանակի գրական-գեղարվեստական մտածողությունը ներկայացնող գրախոսություններ, գրական դիմանկարներ, տեսական անդրադարձներ և բանավեճեր: Առանձին ենթաբաժին են կազմում նաև գրական կարևոր խորհրդակցություններն ու հրապարակային քննարկումները:

2. Գրական քաղաքականություն բաժինն ընդգրկում է պաշտոնական այն բոլոր բանաձևերն ու որոշումները, որոնք պայմանավորել են գրական կյանքի ընթացքը և ուղղվածությունը, ինչպես նաև առանցքային այն հոգևածները, խմբագրականներն ու անդրադարձները, որոնք այս կամ այն կերպ առնչվել են այդ քաղաքականությանը: Բաժնում գետեղված են Հայաստանի խորհրդայնացման հրեկյանների առթիվ գրողների արձագանքները:

3. Գրական դատեր բաժին. ներկայացվում է այդ տարիներին լայն տարածում ունեցող գրական դատեր անցկացնելու փորձը:

4. Գրական հանգանակներ բաժնում գետեղված են գրական այս կամ այն պարբերականի ստեղծագործական խնդիրներն ու նպատակները ներկայացնող առաջնորդողներ, գեղագիտական-ծրագրային փաստաթղթեր («Նոյեմբեր»-ի դեկլարացիան):

5. Գրական պարբերականներ բաժնում առանձին պարբերականների ամբողջական օրինակներն են: Այստեղ հաշվի է առնվել կա՛մ դրանց առանձնահատուկ նշանակությունը («Standard», «Նոյեմբեր»), կա՛մ դրանց կապակցությամբ հնչած կարևոր արձագանքները («Կոկորդիլոս»):

6. Գրական կյանքի ժամանակագրություն. բաժնում ամփոփվում են գրական տարբեր միջոցառումներ, գրական անցուղարձին առնչվող փաստեր և հաղորդումներ:

Առանցքային այս բաժիններից բացի, հատորում կան նաև այնպիսի բաժիններ, որոնք ներկայացնում են գրական կարևոր փաստեր, առանց որոնց ժամանակի գրական կյանքի համապատկերը թերի կլիներ: Ահա այսպիսիք. «Դեկլարացիա երեքի», «Հայաստանի պրոլետարական գրողների միություն», «Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա», «Հիշողություններ և տպավորություններ» և այլն:

Փաստագրական նյութերը հավաքելիս Ռ. Արիստակեսյանն աշխատել է հնարավորինս ամբողջական ներկայացնել գրական ժամանակը՝ ուշագրությունից բաց չթողնելով գրապատմական կարևորություն ներկայացնող և ոչ մի իրողություն: Նկատենք, որ այս ամենի սկզբնաղբյուրը խորհրդահայ մամուլն է՝ Երևանում, Լենինականում (Գյումրիում), Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում հրատարակված պարբերականները: Ռ. Արիստակեսյանը հավաքել, դասդասել, համակարգել է ՀՀ Ազգային և ԳԱԱ գրա-

դարաններում, Երևանի Մատենադարանում, Ե. Չարենցի անվան գրականությունների և արվեստի թանգարանում, ՀՀ Ազգային արխիվում առկա պարբերականների հավաքածուներում եղած մեծաքանակ ու հսկայածավալ նյութերը: Հավելենք, որ դրանցից շատերը չեն դրվել գիտական շրջանառության մեջ, իսկ տպագրվածներում էլ կան բազմատեսակ վրիպումներ ու շեղումներ:

Հատորն ունի բովանդակալից «Ծանոթագրություններ»: Տվյալ հոդվածի մասին տեղեկատվությունից զատ, դրանք պարունակում են հաղորդումներ խնդրո առարկա թեմայի այլ արժարժումների, հեղինակների այլ հրապարակումների վերաբերյալ: Այս բաժնում մատնանշվում են նաև ակադեմիական հրատարակություններում ու տարբեր ժողովածուներում առկա տարատեսակ վրիպումներ (նյութերի հրատարակության ամսաթվեր, պարբերականների համարներ, ստեղծագործությունների վերնագրեր, դրանց տպագրության տարեթվեր, ուղղագրական-կետադրական անհարկի սրբագրումներ, գրության բնագրային ձևերի հետ անհամապատասխանություններ և այլն):

Գիրքն ունի նաև «Օգտագործված հապավումներ և համառոտագրություններ», «Օգտագործված պարբերականներ», «Օգտագործված ծածկանուններ», «Անձնանունների տեղեկատու» բաժիններ, որոնք լրացուցիչ տեղեկատվությամբ օժանդակում են փաստավավերագրական նյութի ամբողջացմանը:

Հիրավի, ներկայացվող հատորը 1922–1925 թթ. հայ գրական-հոգևոր կյանքի հավաքական հիշողությունն է, որի փաստավավերականությունը հնարավորություն է ընձեռում պատմավերլուծական ճշգրիտ հիմքերով ներկայացնելու մեր ազգային-հոգևոր կյանքի տարեգրությունը՝ առանց անհարկի սրբագրումների, կամայական վերագրումների և միտումնավոր աղավաղումների: Սա ժամանակի տեսական-գեղագիտական մտքի և գրական կյանքի համապատկեր-վկայագրություն է, որի նպատակն է եղել ի մի բերել, ամբողջացնել գրական կյանքն իր հարուստ բազմազանությամբ, կարևոր ու անկարևոր թվացող նյութերով, ընդունելի և այսօր արդեն ժամանակավրեպ մոտեցումներով, ժամանակի գաղափարաստեղծության կնիքը կրող գնահատականներով (էջ 6):

Ինչպես գրում է Ռ. Արիստակեսյանը, հատորը կազմելիս հարազատ է մնացել մամուլի բնօրինակին և պահպանել է գրության բնագրային ձևերը: Գիրքը խոստովանում է իր անբացահայտ զեպտիկ էությունը ու Ե. Չարենցի անվան գրականությունների և արվեստի թանգարանի պահպաններից վերցված լուսանկարներ, զանազան ազդագրեր:

Կարելի է արձանագրել. կատարվել է տարիների տքնաջան աշխատանք, որի արդյունքում հատորում զետեղված (հուսանք՝ մնացյալ 3 հատորներում ևս) նյութերը կարող են օգտակար լինել ինչպես առանձին հեղինակների և նրանց ստեղծագործությունների ուսումնասիրության, այնպես էլ նրանց ժառանգության ամբողջացման, բնագրային ճշգրտումների ու լրացումների համար, կարող են դառնալ գրականագիտական-բանասիրական տարբեր հետազոտությունների առարկա:

Անշուշտ, իրավացի է Դ. Գասպարյանը, երբ «Խմբագրի խոսք»-ում կատարված աշխատանքին տալիս է ահա այսպիսի գնահատական. «Սա բացառիկ գիրք է՝ հայ գրականության 1920–1930-ական թվականների կենդանի, իրական պատմությունը: Խոսում, պատմում են վավերագրերը, մեկնաբանում, բացատրում է հետազոտողը: Այսպիսի համապարփակ վավերապատում ստեղծելու համար անհրաժեշտ է ոչ միայն հետևողական աշխատասիրություն, ոգու կորով, համբերություն ու համառություն, այլև գրականագիտական համապարփակ իմացություն, գրապատմական իրողությունները ճշմարիտ ու անկողմնակալ տեսնելու հայեցակարգ» (էջ 1):

Հիրավի, կատարված աշխատանքի համար պետք է շնորհակալություն հայտնել Ռուզան Արիստակեսյանին:


Եվ, այդուհանդերձ, մի նկատառում ունենք. կարծում ենք՝ հատորը պետք է ներկայացվեր իբրև աշխատասիրություն՝ կատարված Ռուզան Արիստակեսյանի կողմից, կամ էլ նա պետք է հանդես գար որպես առաջաբանի հեղինակ, հատորի կազմող, ծանոթագրող ու հրատարակության պատրաստող և ոչ թե որպես հեղինակ:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բ. Գ. Դ., ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարակգբի առաջին քառորդի հայ իրականության հարցեր, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-ռուս պատմագրական կապեր: Հեղինակ է 21 մենագրության ու ժողովածուի, շուրջ 227 հոդվածների ու հրատարակումների: patmhandes@rambler.ru

ՀԵՆՐԻԿ ԷՂՈՅԱՆԻ ԳԻՏԱԲԱՆԱՍԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)*

Կյանքի ութերորդ տասնամյակը բոլորած բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ Հենրիկ Էղոյանը ոչ միայն անցյալ դարի 60–70-ական



թվականների բանաստեղծական սերնդի, այլև, ընդհանրապես, Հայ նոր գրականության ու մշակույթի ինքնատիպ դեմքերից է: Նրա թե՛ բանաստեղծական, թե՛ տեսական ընկալումները, ըմբռնումներն ու ձևաբովանդակային դրսևորումները նման չեն ոչ մեկին, միանգամայն ուրույն են և դրանով իսկ առավել ուշագրավ: Այլ խոսքով, Հ. Էղոյանն ունի իր ներքին աշխարհը, Տիեզերքը, որի մատույցներին մոտենալն անգամ որոշակի պատրաստվածություն է ենթադրում, թեև անհնարին չէ, քանզի նրա բանաստեղծական, տեսական միտքն ու խոսքը տասնամյակների մեջ մշտապես ընթացել են համաժամանակ, գիրկընդխառն՝ յուրովի լրացնելով

մեկը մյուսին: Կարելի է ասել՝ նրա հայացքները՝ սկսած առաջին «Անդրադարձումներ» (1977) ժողովածուից, փոփոխություն չեն կրել, այլ հետագա հրապարակումներում ավելի են խորացել ու հարստացել: Եվ դա պատահական չէ, որովհետև 60–70-ական թվականների բանաստեղծական երիտասարդ սերունդը գրականություն էր մտնում ստեղծագործական մտածողության նոր սկզբունքների արմատավորման նպատակադրմամբ, որը, ի դեպ, ինչպես ամեն նոր բան՝ իր օտարոտի թվացող տարրերի պատճառով, սկզբնական շրջանում համարժեք չէր ընդունվում գրական հանրության կողմից: Մինչդեռ, ինչպես հատակվեց հետագայում, այդ սկզբունքները հիմնվում էին ոչ միայն արդի համաշխարհային, այլև հայ դասական պոեզիայի որոշակի ավանդույթների վրա: Բնորոշ է, օրինակ, որ դեռևս 1981 թ. սկզբին Հ. Էղոյանի հետ տողերիս հեղինակի երկխոսությունը կրում էր հենց «Շարժում դեպի պոեզիան»¹ խորհրդանշական վերնագիրը: Ի դեպ, այդ երկխոսության, ինչպես նաև 1986-ին հրատարակված «Եղիշե Չարենցի պոետիկան» մենագրության մեջ արդեն իսկ շարադրված էին այն հիմնարար տեսակետները, որոնք առավել ամբողջական դրսևորումներ ստացան ավելի ուշ լույս տեսած «Շարժում դեպի հավասարակշռություն» (2009), «Պոեզիայի երկակի տեսողություն» (2020) հրատարակություններում: Գրական-տեսական այդ աշխատությունները հիմնվում էին նախևառաջ տարբեր ժողովուրդների հին ու նոր գրականությունների հիմնարար ուսումնասիրությամբ

* Ներկայացվել է 01. XI. 2020 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2020 թ.:

¹ «Գրական թերթ», 17. IV. 1981:

յան, եգիպտական, հնդկական, պարսկական, չինական, ճապոնական, ռուսական և այլ ազգային պոեզիաներից կատարած թարգմանությունների, գիտական ու մանկավարժական տասնամյակների աշխատանքային կենսագրության ընթացքում (1971-ից մինչ օրս ԵՊՀ-ում և ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում) ձեռք բերած փորձի ու հմտությունների վրա:

Ահա թե ինչու, Հ. Էդոյանի յուրահատուկ աշխարհ մուտք գործելու համար հարկավոր է պարզել, թե ի՞նչ է հասկանում նա՝ Արվեստ, Բանաստեղծություն, Բանաստեղծ (իր սիրած բառով Պոետ) ասելով: Դեռևս վերոհիշյալ երկխոսության մեջ նա պոեզիան բնորոշում էր որպես «ապագայի գիտություն»՝ «աշխարհի ճանաչման հզոր ձևերից մեկը», ինչը բանաստեղծին իրագործում է «անհատական ընկալման», իր ես-ի արտահայտման միջոցով՝ «պայմանով, որ այդ ես-ը հետաքրքիր լինի»: Ընդ որում՝ այդ «հետաքրքիր»-ը իր մեջ պիտի ներառի բազմաչերտության անհրաժեշտ որակը, որով միայն կկարողանա լիարժեքորեն իրականացնել իր ստեղծագործական Ֆունկցիան՝ «տվյալ ժամանակի դեռևս թաքուն, անհայտ» շերտերի «ինտուիտիվ» բացահայտումը: Բանաստեղծական արտահայտությունը՝ Պոեզիան այն է, ինչը «աստղի պես վառվում» և «բարբախում է քո կյանքի զարկերակում»²: Այդ համատեքստում գրականագետը հանգամանորեն քննում է մակրո- և միկրո- աշխարհների, վերացականի ու կոնկրետի, գիտակցականի և անգիտակցականի հարաբերությունը ոչ միայն պոեզիայի, այլև, ընդհանրապես, Արվեստի մեջ՝ բանաձևելով, որ Ստեղծագործությունը «գիտակցականի և անգիտակցականի ներդաշնակ և կատարյալ սինթեզն է, առանց կողմերից որևէ մեկի բացարձակացման»³: Հենց այդ հիմքով էլ նա Ե. Չարենցի «պոեզիայի ամբողջությունը» դիտում է «պոետական մակրոհամակարգի տեսանկյունից, ... իբրև միասնական կառուցվածք»⁴: Մի բան, որը (չնայած Ե. Չարենցի կիրառած ստեղծագործական մեթոդների բազմազանությունը) նրան հնարավորություն է տալիս այդ պոեզիան բնորոշելու իբրև «բանաստեղծական ռեպրեզմ, որի հիմքը ... իրականության բանաստեղծականացումն է»: Միաժամանակ ճշգրտելով, որ դա ամենևին էլ չի նշանակում գեղեցկացում (ինչը «բանաստեղծականի քաղքենիական և մակերեսային» պատկերացումն է), այլ «իրականության ներքին բարդությունների բացահայտումը՝ դրանց վրա խարսխված գեղարվեստական որոշակի աշխարհայացքի տեսանկյունից»: Առավել ևս, որ Հ. Էդոյանի համոզմամբ, «Ըստ էության, դա հենց այն սինթետիկ արվեստն է, որի մասին բանաստեղծը խոսել է սովետական գրողների համամիութենական առաջին համագումարի ամբիոնից»⁵: Հետագա հետազոտություններում և աշխատություններում նշված գաղափարները զարգացվում են՝ հիմնվելով հին հունական, եգիպտական, հնդկական (բուդդայական) և այլ կրոնաիմաստասիրական մտքի վերլուծության վրա՝ մակրո- և միկրո- համակարգերը դիտելով որպես համապատասխանաբար

² Հ. Էդոյան. Էլեգիկ մտորումներ, Երևան, 2019, էջ 8:

³ Հ. Էդոյան. Եղիշե Չարենցի պոետիկան, Երևան, 1986, էջ 17:

⁴ Նույն տեղում, էջ 19:

⁵ Նույն տեղում, էջ 350:

Քառսի և Կոսմոսի բարդ հարաբերություն, որտեղ «Կոսմոսը դառնում է «ճանաչելի անճանաչելի»՝ պահանջելով «հատուկ մոտեցում», ինչը հենց «արվեստն է, որով բացվում են Կոսմոսի «փակ վարագույրները», այսինքն՝ Տիեզերական Ոգին: Եվ, քանի որ «Տիեզերքի գաղտնիքը մարդն է, հետևաբար, մարդու ճանաչողությունն է, որ հասցնում է Տիեզերքի ճանաչողությանը»⁶: Սակայն դա, ըստ էության, այնքան էլ դյուրին չէ. ներկայացնելով գործընթացների ոչ միայն սինխրոն, այլև դիսխրոնիկ վիճակներ՝ այդ ճանաչողությունն անցնում է հակադրամիասնությունների միջով՝ «... շարժվելով Քառսից դեպի Կոսմոս (անկարգությունից դեպի կարգավորվածություն) այն շարժվում է նաև հակառակ ուղղությամբ՝ Կոսմոսից դեպի Քառոս, կուլտուրայից դեպի հակակուլտուրա ... »: Այնուամենայնիվ, գրականագետի կողմից «չափազանց բարդ և առեղծվածային» բնորոշված այդ հակասական Շարժումը պտտվում է որոշակի «ինֆորմացիոն կենտրոնի» շուրջ, որը «Քրիստոնեական կուլտուրայի» մաս կազմող արևմտյան գրականության մեջ «Քրիստոսի Ոգին է»։ Ահա թե ինչու «Քրիստոնեական կուլտուրայի մեջ գործող բոլոր գրականությունները (այդ թվում՝ հայ գրականությունը) ... նման են միմյանց ... »: Այդպիսով, կրոնը և կուլտուրան «անմիջականորեն կապված են իրար հետ», այդ երկուսի միջև ... կանգնած է արվեստը, մասնավորապես՝ գրականությունը: Պատկերավոր ասած՝ «մի կողմից նա կրոնի պատվիրակն է կուլտուրայի մեջ, մյուս կողմից՝ կուլտուրայի «դեսպանը» կրոնի մեջ, հետևաբար արվեստը միացնում է նրանց մի ընդհանուր, անբաժանելի ստրուկտուրայի մեջ»⁷: Այս համատեքստում դիտարկելով գրականության, կուլտուրայի (հետագայում նաև գիտության) ու կրոնի «ներքին օրգանական կապերը» պատմական զարգացման տեսանկյունից՝ գրականագետը գրականության պատմական ընթացքը բաժանում է երկու մեծ դարաշրջանների՝ Միջնադար՝ Հայրաբանությանից (Պատրիստիկայից, ավելի որոշակի՝ Ավգուստինոս Ավրելիուսից) մինչև Դանտե և Վերածնունդ: Ընդ որում՝ վերջինի ավարտը, ի տարբերություն գիտության մեջ մինչ այժմ ընդունված XVII դարի, Հ. Էդոյանը բերում է մինչև XX դար՝ հիմք ընդունելով Վերածննդի այլևս ոչ թե աստվածակենտրոն (ինչպես Միջնադարում էր), այլ մարդակենտրոն համակարգի ներքին միասնականությունը, որի մեջ մտնում են նաև «XVII–XX դդ. ուղղություններն ու ոճերը որպես նույն համակարգի տարբեր աստիճանները»: Այդպիսով, «Միջնադարի և Վերածնունդի հակադրությունը «Աստծու» և «Մարդու» հակադրություն է», իսկ «Քրիստոսը հավասարակշռում է երկու իրարամերժ կուլտուրաներն իր Կոսմիկական էության մեջ»: Մինչդեռ «ժամանակակից մարդը կանգնած է ընտրության առջև. իր ձեռք բերած ազատության մեջ նա պետք է որոշի իր ուղին ... », որի ամենաճիշտ լուծումը Շարժումն է դեպի հավասարակշռություն»⁸:

Բոլորովին վերջերս հրատարակած «Պոեզիայի երկակի տեսողությունը» աշխատության մեջ զարգացնելով իր տեսակետները՝ Հ. Էդոյանը, ըստ

⁶ Հ. Էդոյան. Շարժում դեպի հավասարակշռություն (հոգևածներ, էսսեներ), Երևան, 2009, էջ 7–8:

⁷ Նույն տեղում, էջ 9–10:

⁸ Նույն տեղում, էջ 12:

էութեան, փորձում է պարզաբանել հիշյալ հավասարակշռութեանը հասնելու ուղիներն ու հնարավորութիւնները: Քննելով, մասնավորապէս, մտադրութեան և արդյունքի, Ազգբի և Վերջի, Վերևի ու Ներքևի, Բարձր և Ցածր աշխարհների փոխհարաբերութիւնների բարդ ու հակասական երևույթը՝ նա, ի վերջո, արձանագրում է, որ «Նյութի հաղթահարման ինտենսիվութիւնից կախված է արդյունքի (վերջի) և մտադրութեան (սկզբի) ներքին հավասարակշռութեան աստիճանը»⁹: Ընդ որում՝ «... արդյունքը, իբրև կանոն, միշտ փոքր է մտադրութիւնից», քանի որ «մտադրութիւնն – ծրագիր – արդյունք եռանդամ սիստեմի մեջ ... շարժումը կատարվում է վերևից ներքև, երբ էներգիան, անցնելով «արտաքին պլանի» դիմադրողականութեան միջով, գնալով նվազում է և մինչև վերջ չի կարող մարմնավորվել նյութական ձևավորում ստացած արդյունքի մեջ»¹⁰: Այսպիսով, Կյանքը և Արվեստը ներկայացնում են «Շարժման երկու՝ իրար փոխընդդէմ ուղղութիւնները, Կյանքը՝ որպէս «Աստվածային վայրէջք» («Աստու մահ») ու Արվեստը՝ որպէս Հարութիւն: Իսկ ինչ վերաբերում է ստեղծագործող Մարդուն (արվեստագետին), ապա «Իբրև արվեստի կրող նա միակ մարդն է, որ կարող է պահպանել հավասարակշռութիւնը» երկու հակադիր աշխարհների միջև¹¹: Իսկ ի՞նչ է «Պոեզիայի երկակի տեսողութիւնը»: Ըստ գրականագետի, դա հենց «Վերևի և Ներքևի, Բարձրի և Ցածրի, արտաքինի և ներքինի» միաժամանակյա ընկալումն է «Ինտուիտիվ շողարձակման մեջ», ինչը, ի դեպ, ենթադրում է նաև «տաղանդի և հանճարի առկայութիւնը»: Հ. Էդոյանն Անհայտը բնորոշում է որպէս բանաստեղծական խոսքի «ներքին նպատակ», Հայտնին՝ «այն երկեսը, որտեղից սկիզբ է առնում խոսքը (պոետի փորձը)», որի միջոցով «անհայտը, կապվելով հայտնիին, գիտակցութեան համար դառնում է ճանաչելի և մատչելի»¹²:

Տեսական այդ հարուստ պաշարն է, որ իր յուրատեսակ հաստատումն ու դրսևորումն է գտել Հ. Էդոյանի շուրջ երկու տասնյակի հասնող բանաստեղծական ժողովածուներում՝ «Անդրադարձումներ»-ից (1977) մինչև «Էլեգիկ մտորումներ» (2019): Ահա թե ինչու, ամենևին էլ դյուրին չէ թափանցել այն աշխարհի էութեան մեջ, որտեղ ապրում է նա, որի հավերժական ջրերում «լող է տալիս» իր հոգին: Այստեղ արդեն պարտադիր է, որ ինքը էլ քիչ թե շատ, եթե ոչ բնակիչ կամ մասնակից, գոնե ծանոթ լինես այդ աշխարհի ուրույն՝ մինչև անգամ առաջին հայացքից տարօրինակ կամ անսովոր թվացող օրենքներին: Որովհետև դա մի աշխարհ է, ուր ժամանակն ու Տարածութիւնը, մարդու Կյանքը, կենսական արժեքներն այլ չափումներ ու չափանիշներ, հարաբերութիւններ ունեն: Ուր «Ոչ թե սիրտն է բաբախում ժամանակի մեջ, // այլ ժամանակն է սրտի մեջ բաբախում», քանզի ժամանակը հենց «սրտի ձև ունի»¹³: Ուր «Քո կյանքը մի օր է՝ // ծածկված

⁹ Հ. Էդոյան. Պոեզիայի երկակի տեսողութիւնը, Երևան, 2020, էջ 6:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 71–72:

¹² Նույն տեղում, էջ 129:

¹³ Հ. Էդոյան. Ընտրանի, Երևան, 2016, էջ 716 (այսուհետ սույն գրքից մեջբերվող էջերը կնշվեն տեքստում):

օրերով, ինչպես վարդի սիրտը ... » (Էջ 709), որովհետև «Դու անցնում ես վայրկյանի միջանցքով», դեպի մի տեղ, «ուր չկան թռչուններ և աստղեր, ... իսկ տիրությունը մնում է ներքևում ... » (Էջ 108): Այդ աշխարհում անասման է Տարածությունը, ուր նույնն են անդունդն ու երկինքը և մեր մոլորակն ընդամենը «Հին խրճիթ» է թվում, չափազանց նեղ ազատ ու թռչնաթև ճախրանքի համար և այդ «սեղմությունը կոչվում է երկիր» (Էջ 10): Ահա թե ինչու, այդ աշխարհի բնակիչը տենչում է պարզապես «Թողնե՛լ ամեն ինչ, հետևե՛լ թռչուններին ... » (Էջ 73): Ուրեմն և այլևս զարմանալի չէ, որ այդ աշխարհում բանաստեղծի Հոգին միանգամայն անկախ է իր Մարմնից՝ քայլում է նրա հետ, երբեմն ետ մնում կամ առաջ անցնում, «խոսում ... և լռում ... » (Էջ 678) և պատրաստ է խաղաղություն տալ յուրաքանչյուրին, ով, սակայն, օտար չէ իր «երկնային խոսքին» (Էջ 141): Իսկ այդ «խոսքին» ականջալուր բանաստեղծին շնորհվում է ապրել «ներշնչանքի հմայքով», «կատարյալ գեղեցկության» թանկ պահերով, օրում ճախրող թռչունների երազային կանչ-հրավերներով (Էջ 152):

Կարող է տպավորություն ստեղծվել, թե նման անհատը կտրված է որոշակի ժամանակից, միջավայրից, ժողովրդից ու հասարակութունից. բայց դա խաբուսիկ կլինի, քանզի Հ. Էդոյանի բանաստեղծական էություն մեջ առկա է նաև ձգտումը դեպի դուրս՝ դեպի փողոցն ու մարդիկ, միայն թե տարբեր է այդ շարժման նրա ընկալումը՝ նման «կոտրվող գիրգագի», որ կրկնվում է հավետ (Էջ 156): Ու թեև խոստովանում է՝ օրերի մեջ պարզապես սպանել է իր «օրերի կեսը՝ Գրքերը քեզ կերան», // թերթերը խժոճցին, // քայլեցիր հետ ու առաջ // միջանցքներում դեղին», բայց նաև մշտապես ունեցել է գիտակցությունը, թե «դու դատապարտված ես, // ապրիր, ելք չունես» (Էջ 320–321): Ահա թե ինչու՝ «Ինչպես գետ հոսում եմ ես // և նորից ետ եմ դառնում, // որպեսզի նորից հոսեմ// գոյության անդաստանում» (Էջ 223)՝ Սերը ունենալով որպես «միակ հսկիչ» իր ճանապարհի (Էջ 375):

Հ. Էդոյանի բանաստեղծական աշխարհը, սակայն, չի ձևավորվել դատարկ տեղում: Ինչպես ասվեց, իր արմատներով այն խորանում է մինչև հին աշխարհի բանավոր ու գրավոր ավանդույթները, որոնք միջնադարի գրական հայտնի հոսանքների և ուղղությունների՝ կլասիցիզմի, ռոմանտիզմի, սիմվոլիզմի, հայ իրականության մեջ Եղիա Տեմիրճիպաշյանի ու Տիրան Ջրաքյանի (Ինտրա) ստեղծագործության միջոցով փոխանցվել են ժամանակակից պոետին՝ նաև իրենով պայմանավորելով անվախճան ժամանակների կապը:

Քերթվածներից մեկում «Ի՞նչ է պոեզիան» հարցին Հ. Էդոյանը պատասխանել է կարճ ու սպառիչ ձևակերպմամբ՝ «Պոեզիան ուղին է փնտրում դարուփոս» (հիշենք նաև, որ բանաստեղծն անընդհատ «հենման կետ» է փնտրում ու չի գտնում), բայց նաև ... «նա մեզ տալիս է հավերժության տոմս» (Էջ 116): Իսկ թե ի՞նչ է Հավերժությունը, ժամանակն ընդհանրապես, և ո՞րն է բանաստեղծի տեղն այդ ամենի մեջ, գտնում ենք հետևյալ քերթվածի տողերում.

Դեմքով շրջվում ես անցյալին, // բայց երբ քո տեսածը

գրի ես առնում – // դու արդեն դրանով
կերտում ես ապագան, // այն, ինչ գրում ես անցյալին նայելով –
դա ինքը ապագան է, // կենտրոնում դու ես –
երկու հավերժությունների // միջև¹⁴:

Հավատացած եմ, որ դեռ երկար նավարկություն է սպասվում Հ. Էդո-
յանի՝ ինքնատիպ մարդու, գրողի ու մտածողի, «կյանք-նավակին»՝ «հա-
վերժության տոմսով» դեպի Ապագա ...

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՉՅԱՆ

Բ. Գ. Դ., Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար, ՀՀ
ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ նոր գրա-
կանության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրություն-
ները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենա-
գրության և բազմաթիվ հոդվածների: pdemirchyan@mail.ru

¹⁴ Հ. Էդոյան. Լույսը ձախ կողմից, Երևան, 2018, էջ 135:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ»
 ԵՎԻՐՎԱԾ ՀԱՅՐ ԴԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ*

Բանալի բառեր՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, միջազգային գիտա-
 ժողով, Հայր Ղևոնդ Ալիշան, հայոց պատմություն, հայ գաղթավայր, հայ
 սփյուռք, օտար աղբյուրներ, սկզբնաղբյուր, հայագիտություն, գաղութա-
 գիտություն, սփյուռքագիտություն:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և սփյուռ-
 քի պատմության բաժինը սեպտեմբերի 15–16-ին առցանց կազմակերպել



էր միջազգային գիտաժողով «Օտար աղբյուր-
 ները հայկական գաղթավայրերի մասին» խո-
 րագրով: Այն նվիրված էր հայ մեծանուն բա-
 նասեր, պատմաբան, հնագետ, աշխարհագրա-
 գետ, բանաստեղծ, թարգմանիչ, մանկավարժ,
 խմբագիր, Վենետիկի Մխիթարյան միաբանույթ-
 յան անդամ Հայր Ղևոնդ Ալիշանի (Քերովբե
 Պետրոս-Մարգարի Ալիշանյան) (1820 թ., Կ. Պո-
 լիս – 1901 թ., Վենետիկ) ծննդյան 200-ամյա-
 կին:

Գիտաժողովի տեխնիկական գործընկերն էր
 Արցախի Հանրապետության Շուշիի տեխնոլո-
 գիական համալսարանը: Մասնակցության հայտ
 էր ներկայացրել շուրջ երեք տասնյակ հետազոտող ոչ միայն Հայաստանի
 Հանրապետությունից և Արցախի Հանրապետությունից, այլև՝ աշխարհի ութ
 երկրներից՝ Իտալիայից, Ֆրանսիայից, Շվեյցարիայից, Հունգարիայից, Բուլ-
 ղարիայից, Հունաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից:

Ամենևին պատահական չէ, որ միջազգային գիտաժողովը նվիրվել է
 Հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան երկրարյա հոբելյանին: Ապրելով և ստեղ-
 ծագործելով արտերկրում՝ բազմարդյուն մտքի մշակի աշխատությունները
 հազեցած են հայագիտական, հայրենագիտական ու գաղութագիտական
 հարուստ և բացառիկ փաստերի իմացություն, շարադրված ամենայն ճշգր-
 տություն ու նախանձախնդրությամբ, հազեցած օտարությունից հնչող
 անսահման կարոտախտով, ազգային արմատներին կառչած մնալու, տար-
 բեր լեզուների տիրապետելով հանդերձ, ազգային նկարագիրն ու դիմա-
 գիծը պահպանելու և սերունդներին հայրենասիրությամբ դաստիարակելու
 անհուն ձգտումով:

* Ներկայացվել է 13. X. 2020 թ., ընդունվել է տպագրության 26. X. 2020 թ.:

Հայաստանի ու հայերի, ինչպես նաև երբեմնի անհետացած կամ կազմակերպված ու նորերս կազմակերպվող հայ գաղթօջախների և համայնքների վերաբերյալ օտար սկզբնաղբյուրների վերհանումը, բազմակողմանի ու սուսնասիրումն ու գիտական շրջանառության մեջ դնելը բացառիկ նշանակություն ունեն հայ և համաշխարհային պատմագիտության ու աղբյուրագիտության զարգացման համար:

Սեպտեմբերի 15-ին բացելով գիտաժողովը՝ Պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Գևորգ Ստեփանյանը ներկայացրեց հայ գաղթականության պատմության ուրվագիծն ու առկա գրականությունը: Անդրադառնալով հայ սփյուռքի պահպանման հրատապ խնդրին՝ նշեց. «Սփյուռքահայերի ինքնության պահպանման և ձուլման վտանգից խուսափելու միակ ճանապարհը հայրենադարձությունն է՝ հանգրվանելը Մայր Հայրենիքում»:

ՀՀ կառավարության սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանի ողջունի ուղերձն ընթերցեց Հայրենադարձության բաժնի պետ, պ. գ. թ., դոցենտ Հովհաննես Ալեքսանյանը:

Հանդես գալով բացման խոսքով՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանն անդրադարձավ արտերկրում հայերի լավագույնս ինքնադրսևորման փաստին, ինչպես նաև՝ գիտության ու մշակութի տարբեր ոլորտների զարգացման գործում նրանց բերած նպաստին:

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Հայր Լևոն արք. Զեքիյանն առանձնապես կարևորեց Հայր Դևոնգ Ալիշանի՝ որպես իր ժամանակաշրջանի «եվրոպական ուսմանտիկներին» հավասարազոր անհատ, իսկ նրա ստեղծագործությունները՝ հավաստի պատմական, այդ թվում՝ գաղութագիտական, սկզբնաղբյուր լինելու հանգամանքը:

Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, մատնանշելով Հայր Դևոնգ Ալիշանի համաշխարհային մեծություն լինելու հանգամանքը, շեշտեց նրա աշխատությունների միջոցով նորանոր բացահայտումներ կատարելու սկզբնաղբյուրային արժեքը, ինչպես նաև՝ բնօրրանում ու ապրած տարբեր երկրներում հայերի ձեռքբերումները և նպաստը օտար սկզբնաղբյուրների միջոցով ևս վերհանելու ու գիտական շրջանառության մեջ դնելու անհրաժեշտությունը:

Լիազույցար նիստում (նախագահող՝ Աշոտ Մելքոնյան) գեկուցումներով հանդես եկան Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հայր Վահան Օհանյանը («Հայր Դ. Ալիշանի նամականին որպես աղբյուր հայ գաղթօջախների պատմության») և Պատմության ինստիտուտի գիտաշխատող Էլիզաբեթ Թաշիրյանը («Հայր Դ. Ալիշանի «Եվրոպայի հայ գաղթօջախները» ձեռագիր հատորը»):

Գիտաժողովի «Հայ գաղթավայրերը հնագույն շրջանում» վերտառությունը առաջին նիստում (նախագահող՝ «Փարիզ 1» համալսարանի պրոֆ., պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Քլոդ Մուլթաֆյան) լավեցին ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Հակոբ Զուլաբյանի «Արաբական աղբյուրները Անտիոք

քաղաքի և շրջակայքի հայ հին գաղթականության մասին», Կլոդ Մուլթաֆյանի «Նախասումնայան հայ Երուսաղեմը օտար ճանապարհորդների հայացքով», Ալթենքի ազգային համալսարանի դոկտորանտ Գևորգ Ղազարյանի «VII դարում Հռոմում հայ վանականների ներկայության հարցի շուրջ» (ռուսերեն) գեկուցումները:

«Այսրկովկաս և Միջին Արևելք» երկրորդ նիստը բաղկացած էր երկու բաժնից: Առաջին բաժնում (նախագահող՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, պ. գ. դ. Քրիստինե Կոստիկյան) Պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ., պրոֆ. Ալբերտ Խառատյանը հանդես եկավ «Եվրոպական ճանապարհորդները գմյուռնահայ համայնքի մասին (XVII–XIX դդ.)», Գևորգ Ստեփանյանը՝ «Եվրոպացի և ռուս հեղինակների երկերը որպես Արևելյան Այսրկովկասի հայության պատմության սկզբնաղբյուր», Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ. Արծվի Բախչինյանը՝ «Շվեդ ճանապարհորդ Նիլս Մաթսոն Շիոփինգը Հայաստանի և Հայերի մասին (XVII դ.)», Քրիստինե Կոստիկյանը՝ «Շահ Աբբաս Ա-ի կողմից Սպահան ու Իրանի ներքին շրջաններ բռնագաղթի ենթարկված հայությունը XVII դարում ըստ պարսկական աղբյուրների», Պատմության ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ. Կարեն Մկրտչյանը՝ «Եվրոպական աղբյուրները Պարսկաստանի հայկական գաղթաշախի որոշ հարցերի շուրջ» գեկուցումներով:

Նիստի երկրորդ բաժնում (նախագահող՝ Կարեն Մկրտչյան) լսվեցին Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող, արվ. գ. թ., դոցենտ Իվետ Թաջարյանի «Նոր Զուղայի խոջայական ապարանքների հարդարանքը եվրոպացի ճանապարհորդների տեսանկյունից», Պատմության ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ. Սեղա Օհանյանի «Միջագետք (Իրաքի) հայ համայնքն ըստ օտար աղբյուրների», Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Վեներա Մակարյանի «XVIII դ. Հալեպի հայ համայնքի ընդհանուր նկարագիրը Ալեքսանդր Ռասելի «Հալեպի բնական պատմությունը» աշխատությունում», Պատմության ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ. Անի Փիչենկոյանի «Մուհամմեդ Զեմալ Պարուզի «Ժամանակակից Սիրիական Զեզիրեի ձևավորման պատմությունը» աշխատության տեղեկությունները դեպի Սիրիա հայերի գաղթի մասին (1915–1945 թթ.)», Պատմության ինստիտուտի հայցորդ Արմեն Ասատրյանի «Եվրոպացի ուղեգիրները Թիֆլիսի հայության մասին» գեկուցումները:

Գիտաժողովի երկրորդ օրը՝ սեպտեմբերի 16-ին, «ԱՄՆ-ի և Եվրոպայի հայ համայնքները» առաջին նիստում (նախագահող՝ Արծվի Բախչինյան) Պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ. գ. թ. Քնարիկ Ավազյանը հանդես եկավ «Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի սկզբնաղբյուրները գաղութային ժամանակաշրջանի Ամերիկա մեկնած առաջին հայերի մասին (XVII դ. սկիզբ – XVIII դ. առաջին կես)», Բուդապեշտի Պիտեր Պազմանի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Բալինտ Կովաչը՝ «Դոնդոնի Վարդան Ժոզեֆի «Հայերի պատմությունը» հունգարալեզու ձեռագիրը», Արցախի պետական համալսարանի ասպիրանտ Էլինա Մխիթարյանը՝ «Հարավարևմտյան Գալիցյան Ռուսիայի հայ գաղթաշախի իրավական և սոցիալ-տնտեսական կարգավիճակը Ի. Ա. Լիննիչենկոյի

աշխատություններում», «Եվրոպական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի դասախոս, պ. գ. թ. Արման Մալոյանը՝ «Հայերի թիվը Կ. Պոլսում ըստ եվրոպացի հեղինակների տվյալների (XVIII դ. վերջին քառորդ – XIX դ. սկիզբ)» գեկուցումներով:

«Հայ սփյուռքն օտար աղբյուրներում» երկրորդ նիստում (նախագահող՝ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող պ. գ. թ. Վահե Սարգսյան) լավեցին Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի Բալկանագիտության ինստիտուտի հետազոտող, պ. գ. դ. Գոհար Խնկանոսյանի «Բուլղարիայի հեղինակները Բուլղարիայի հայերի մասին», Ֆրիբուրգի (Շվեյցարիա) համալսարանի պրոֆ., փիլ. գ. դ. Աբել Մանուկյանի «Շվեյցարական վավերագրերը Ժնևի և Լոզանի հայկական գաղթօջախների մասին», Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Հովհաննես Ալեքսանյանի «Հայերի թվակազմը Ռուսաստանում 1897–2010 թթ. ըստ վիճակագրական տվյալների», Վահե Սարգսյանի «Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումները և դրանց վրա ազդող գործոնները (ըստ 1999–2009 թթ. վրացական տպագիր մամուլի նյութերի)» գեկուցումները:

Յուրաքանչյուր նիստի վերջում գեկուցողները պատասխանեցին մասնակիցների հարցերին, տեղի ունեցան քննարկումներ:

Գիտաժողովի արդյունքներն ամփոփող ելույթներով հանդես եկան Ա. Մելքոնյանը, Ա. Խառատյանը, Ա. Մանուկյանը, Գ. Խնկանոսյանը, Է. Մխիթարյանը, Կ. Մկրտչյանը, Ա. Բախչինյանը, Ք. Ավագյանը, Գ. Ստեփանյանը:

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

Պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները ԱՄՆ-ի Հայ համայնքի, Հայ սփյուռքի պատմություն: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 140 հոդվածի: lira777@yahoo.com

ՌՈՒԲԵՐՏ ՄԱՐԿՈՍԻ ԹՈՒՄԱԽՅԱՆ



83 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց Հայազիտության երախտավոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանը: Մեծ է նրա ավանդը հատկապես արդի հայերենի փորձառական հնչյունաբանության ասպարեզում:

Վանեցի ծնողների անվանի զավակը 1966 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժինը և նույն տարին էլ ընդունվել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան:

Ասպիրանտուրան հաջողությամբ ավարտելուց հետո Ռոբերտ Թոխմախյանը աշխատանքի է անցել նույն ինստիտուտի ընդհանուր լեզվաբանության բաժնի փորձառական հնչյունաբանության խմբում, որը ղեկավարում էր պրոֆեսոր Ամալյա Խաչատրյանը:

Երիտասարդ գիտնական Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանը հայազիտության մեջ մեծ հաջողությամբ կիրառել է լեզվաբանության մեջ մշակվող նորագույն փորձառական մեթոդները: Ծղգրիտ մեթոդների արդյունքների հաշվառմամբ Ռ. Թոխմախյանը փայլուն հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական՝ հետազայում դոկտորական ատենախոսությունը:

Սկսած 1966 թվականից՝ Ռ. Թոխմախյանը իր գիտական գործունեությամբ սերտորեն կապված է եղել ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ: Անվանի հայերենագետը ավելի քան կես դար դասավանդել է Հայաստանի Հանրապետության բուհերում (Երևանի պետական համալսարանում, Վ. Իրյուսովի անվ. լեզվաբանության ինստիտուտում և այլ բուհերում):

Անցյալ դարի 90-ական թվականների կեսերից շուրջ չորս տարի Ռոբերտ Թոխմախյանը աշխատել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում և ճեմարանում: Ամենուրեք նա անկեղծորեն բարձր է գնահատվել և սիրվել ուսանողության և տնօրինության կողմից: Դա վկայում է այն մասին, որ անվանի հայերենագետը ոչ միայն գիտական խորությամբ և միաժամանակ մատչելիությամբ կարողացել է մատուցել լեզվաբանության հիմունքներն ու նորագույն նվաճումները, այլև հանդես բերել հոգատար և ազնվագույն մանկավարժի հատկանիշներ:

Հայազիտության մեջ Ռոբերտ Թոխմախյանը հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների, մենագրությունների: Դրանցում դիտարկվում են հայերենագիտության նորագույն նվաճումները: Անվանի հնչույթաբանը

մեծ հաջողութեամբ մասնակցել է բազմաթիվ միջազգային լեզվաբանական գիտաժողովների և միշտ բարձր է պահել Հր. Աճառյանի անունը կրող լեզվի ինստիտուտի պատիվը: Հայերենագետը օրինակ կարող է ծառայել երիտասարդ գիտնականներին, տիրապետելով ընդհանուր լեզվաբանութեան նորագույն նվաճումներին՝ նորովի դիտարկելիս արդի հայերենի հնչյունական կառուցվածքը:

Վերջին տասնամյակում պրոֆեսոր Ռոբերտ Թոխմախյանը լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի առաջատար գիտաշխատակիցներից էր: Վերստին ուզում ենք հիշեցնել, որ նա օրինակ կարող է ծառայել երիտասարդ հայերենագետներին՝ վիճակագրական մեթոդների արդյունավետ օգտագործմամբ որակական նոր մակարդակի բարձրացնելու հայերենագիտությունը: Այդ է վկայում Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանի «Հայերենի հնչաչղթան» մենագրությունը:

«Էդիթ պրինտ» հրատարակություն 2011 թ. Ֆ. Խլղաթյանի հեղինակակցությունը լույս է տեսել «Շարահյուսություն (կապակցաբանություն): Վարժություններ և գիտական գործնական աշխատանքներ» գիրքը:

Տողերիս հեղինակի և Ռ. Թոխմախյանի հեղինակակցությունը ժամանակին լույս է տեսել «Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում» աշխատանքը՝ ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից:

Ռոբերտ Թոխմախյանը, կանոնական մակարդակին զուգահեռ, քննություն է ենթարկել արդի հայերենի արևելահայ և արևմտահայ գրական լեզուների խոսակցական ոլորտում դրսևորվող ոլորտային առանձնահատկությունները:

Անկեղծ ցավ ապրելով մեր գործընկերոջ մահվան առիթով՝ ուզում ենք նշել, որ ավելի քան կես դար մենք միասին աշխատել ենք նույն բաժնում, մշակել գիտական նորագույն բնագավառներ, հանդես եկել հեռուստատեսությունում և այլն:

Հայտնի ասույթ է. «Մարդը գնում է, գործը՝ մնում»: Ռոբերտ Թոխմախյանը մնայուն լեզվաբանական աշխատանքների հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի երիտասարդ սերունդը շատ բան ունի սովորելու Ռ. Թոխմախյանի օրինակից:

Պետք է անկեղծորեն հուսալ, որ հայոց լեզվի և մեր կենդանի խոսքի ասպարեզում եռանդուն ջատագովի համբավ ձեռք բերած Ռ. Թոխմախյանի գործը կշարունակվի և ավելի կընդարձակվի նոր սերնդի լեզվաբանների կողմից:


Մրտի խորունկ ցավով նշելով կորուստը մեր անկրկնելի ընկերոջ՝ Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանի՝ ասում ենք.

– Հիշատակն արդարոց օրհնություն է կրկնել...

ԱՐՏԵՄ ՍԱՐԳՍՅԱՆ

Պատմամանկավարժական հանրագիտություն 2020 № 3 Историко-филологический журнал

ԳՐԻԳՈՐ ԵՎԳԵՆԻԻ ԱՐԵՇՅԱՆ



Կյանքի 71-րդ տարում մահկանացուն կնքեց ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Հայաստանի ամերիկյան համալսարանի պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության նախկին պետական նախարար Գրիգոր Եվգենիի Արեշյանը:

Գրիգոր Արեշյանը ծնվել է 1949 թ. մայիսի 13-ին Երևանում: 1970 թվականին ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1970–1973 թթ. սովորել է ԵՊՀ, իսկ 1973–1975 թթ. Ս. Պետերբուրգի ասպիրանտուրայում և 1975 թ. Հաջողությամբ պաշտպանել թեկնածուականատենախոսությունը՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Նրա ղեկավարն էր հայտնի հնագետ, էրմիտաժի տնօրեն Բորիս Պրոտրովսկին: 1970–1973 թթ. աշխատել է ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնում, 1973–1980 թվականներին՝ ԵՊՀ հայագիտության կենտրոնում, որպես գիտաշխատող: 1981 թվականին Գ. Արեշյանի նախաձեռնությամբ և մասնակցությամբ ԵՊՀ-ում ստեղծվեց հնագիտական հետազոտությունների գիտական լաբորատորիան, որն էլ ղեկավարել է մինչև 1987 թվականը: 1987–1991 թթ. նա զբաղեցնում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենի տեղակալի պաշտոնը: Անկախության առաջին տարիներին Գ. Արեշյանը ներգրավվեց երկրի կառավարման գործում: 1991–1992 թթ. նա Հայաստանի Հանրապետության պետնախարար էր, ղեկավարել է ՀՀ պատվիրակությունը Ռուսաստանի հետ բանակցություններում: 1993 թ. բուժման նպատակով տեղափոխվում է ԱՄՆ, որտեղ բուժմանը զուգընթաց զբաղվում է գիտամանկավարժական գործունեությամբ: Դասավանդել է ԱՄՆ-ի տարբեր համալսարաններում և քոլեջներում, ի մասնավորի Կալիֆորնիայի, Չիկագոյի, Վիսկոնսինի համալսարաններում: Սկսած 2001 թ.՝ դասավանդել և գիտական տարբեր պաշտոններ է զբաղեցրել Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի Կոտսենի անվան հնագիտության ինստիտուտում, 2010 թ. դարձել է ինստիտուտի փոխտնօրենը:

2016 թվականին տեղափոխվեց Հայաստան, դասավանդում էր Հայաստանի ամերիկյան համալսարանում:

Մեծ է նրա ավանդը ՀՀ տարածքի հնագիտական հուշարձանների դաշտային հետազոտությունների ոլորտում: Դեռևս ուսանողական տարիներին մասնակցել է Լճաչենի, Արթիկի դամբարանադաշտերի, Կարմիր բլուրի պեղումներին: 1970–1980-ական թվականներին Գրիգոր Արեշյանը ղեկավարել է Ադաբլուրի, Մոխրաբլուրի, Նորաբացի բլուր բնակատեղիների, Բերքաբերի (Հ. Սիմոնյանի հետ), Մայիսյանի, Շամիրամի դամ-

